


Ա.Ա.ՊՈՒԵԿԻՆ

ԿԱՂԻՏԱՆԻ
ԱՂՋԻԿԸ



ՀԱՅԱՍՏԱՆԻ





СОТОДАЧАСН. ПОИМКАЛУДО
СЕРВИС

РУССКИЕ КЛАССИКИ

19 NOV 2010

Ո Ո Ւ Ս Կ Ա Ս Ի Ւ Վ Ե Ր

А. С. ПУШКИН

891.71
7-97

ար

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆ

КАПИТАНСКАЯ ДОЧКА

ԿԱՊԻՏԱՆԱՅԻ ԱԼՁԻԿԸ

ГОСУДАРСТВЕННОЕ ИЗДАТЕЛЬСТВО
ЭРИВАНЬ 1936 МОСКВА

ԳԵՍԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1936 ՄՈԽՎՃԱ

01 JAN 2007
01 JAN 2007

12-1051

23 JUL 2013

ՕՐԸ ՎՈՒ Ե

13109

Պատ. խմբ
Զափածոյի խմբ. Գ. ՍԱՐՑԱՆ
Պորտեն և նկարները
վաստ. նկ. Մ. ԱՐՈՒՏՅՈՅԱՆԻ
Տեխ. խմբ. Հ. ՔԱՐԱՄՅԱՆ
Շարեց և կապեց Ա. ՄԻՆԱՍՅԱՆ

ԳՐԱԳՐԻ ԺՈՂՈՎՐԴԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՅԱՍՏԱՆԻ

Տ 300



4701-51





Պատիվդ ջահիլութ պահիբ»

Unidad

9 L 0 h b

ԳՎԱՐԴԻԱՅԻ ՍԵՐԺԱՆՏՆԵՐԸ¹

Վաղն և եթ կըդառնար գվարդիայի կապիտանէ
«Հարկավոր» չե՝ թող նա բանակում ծառայից։
Հրաշալի՛ յե ասված — քաշի թող մի...»

Իսկ հայրն ով ե նրա.

ԿՆՅԱԺՆԻՆ 2

Հայրս՝ Անդրեյ Պետրովիչ Գրինյավը յերիտասարդ ժամանակի ծառայել եր կոմս Մինիսի մոտ և պրեմյեր-մայորի աստիճանում պաշտոնաթող յեղել 17.. թվին։ Այդ ժամանակից նա ապրում եր Սիմբիրսկի հահանգում գտնվող իր գյուղում, ուր և ամուսնացել եր այնտեղի մի աղքատ ազնվականի աղջկա՝ Ավգուստա Վասիլինա Յունի հետ։ Մենք՝ յերեխաներս իննը հոգի եյինք։ Իմ բոլոր յեղայրյաներն ու քույրերը մանուկ հասակում են մեռել։ Գվարդիայի մայոր՝ մեր մատիկ ազգական իշխան Բ.-ի վողորմածությամբ յես՝ վորպես սերժանտ գրված եյի Սեմյոնովսկի գնդում։ Մինչև ուսումն ավարտելը համարվում եյի արձակուրդի մեջ։ Այն ժամանակ մենք այժմյան պես չեյինք դաստիարակվում։ Հինգ տարեկան հասակից ինձ տվել եյին ասպանդակապահ Սավելիչի ձեռքը, վորին, շնորհիվ իր աշալուրջ վարք ու բարքի, նշանակել եյին իմ դաստիարակը։ Նրա հսկողության տակ տասներկու տարեկան հա-

² Գ վ ա ր դ ի ա — սկզբներում նեղ մտքով՝ զորամաս վորի պարտականությունն եր պահպանել զորահրամանատարի անձը — թէկնապահ զորք։ Հետագայում գվարդիան ստացավ զորքի ընտիր մասի նշանակություն։ Ռուսական գվարդիան ազնվականներից գումարված հատուկ զորքն եր և ուներ շատ արտօնություններ։ Սերժանտ — յենթասպա։

² Յա. Բ. Կոյառնին (1742—1791) — XVIII դարի ռուս դրամատուրգ:

սակում ոռւսերեն գրել՝ կարդալ սովորեցի և կարող եյի բավական առողջ դատել արագավազ քերձեյի հատկությունների մասին։ Այդ ժամանակ հայրս ինձ համար մի փրանսիացի վարձեց՝ մոսյե Բոպըրեյին, վորին Մոսկվայից բերել ավեն զինու և պլովանսի ձեթի մի տարվա պաշարով հանգերձ։ Նրա գալը թոլորովին դուր չեկավ Սավելիչին։ «Փառք աստծո, — փնթինթում եր նա քթի տակ, — կարծեմ թե յերեխայի յերեսը մաքուր ե, մազերը՝ սանրած, փորը՝ կուշտ։ Ել ի՞նչ կարիք կար ավելորդ փող ծախսել և մուսյե վարձել ի բնությունը մենք չունեյինք»։

Բոպրեն իր հայրենիքում յեղել եր պարիկմախեր, հետո՝ Պրուսիայում — զինվոր, ապա յեկել եր Ռուսաստան ու Եվրոպա այս ժամանակ այդ բառի իմաստը։ Նա խաղաղ բնավորության տեր մարդ եր, սակայն՝ թեթևամիտ և ծայրաստիճան անառակ։ Նրա գլխավոր թուլությունը գեղի գեղեցիկ սեռն ունեցած կիրքն եր. հաճախ, ի պատասխան իր քընքությունների, նա ստանում եր այնպիսի հարվածներ, վորոնցից ամբողջ որերով հառաչում եր։ Բացի այդ, նա (ինչպես ինքն եր ասում) թշնամի չեր իմ մի չքի շշին, այսինքն, (ոռւսերեն ասած) — սիրում եր չափից ավելի քցել։ Բայց, քանի վոր մեր տանը զինին միայն ճաշին եյին տալիս, այն ել՝ մի փոքրիկ թասով, ըստ վարում — դասատույին սովորաբար աչքաթող եյին անում, ուստի և իմ Բոպրեն շատ շուտով սովորեց ոռւսական թրմողուն և մինչև անգամ սկսեց գերադասել այն իր հայրենիքի գինիներից՝ վորպես ստամոքսի համար չափազանց ողտակար։ Մենք իսկ կռւյն և եթ բարեկամացնք և թեև ըստ պայմանի նա պարտավոր եր ինձ սովորեցնել ֆրանս եր են, գեր ման եր են և բոլոր գիտությունները, բայց նա գերադասեց կարճ միջոցում ինձնից մի կերպ ոռւսերեն կոտրատել սովորել և ապա մեղնից յուրաքանչյուրն արդեն իր գործով եր զրազում։ Ապրում եյինք մի սիրտ, մի հոգի։ Ուրիշ մենտոր² յես չեյի ել ուզում։ Սակայն շուտով բախտը մեզ անջատեց և ահա թե ինչ դիպվածով։

Լվացարարուհի Պալաշկան՝ հաստիկ ու չեչոտ մի աղջիկ և մի աչքը կռւյր կովապահ Ակուլ'կան ինչպես յեղավ, խոսք մեկ արած,

¹ Ուստուցիչ լինելու համար (outchitel — ոռւս. ուчитուն ե):

² Փոխարք դաստիարակ՝ վոդիսնսի վորդի Տելեմաքի դաստույի անունով։

մի որ յեկան, միասին մորս վոտներն ընկան, իոստովանեցին իրենց մեղքը և լաց ու կոծով զանդատվեցին մուսյեյից, վորը գայթակուլ եր նրանց անփորձությունը։ Մայրս չեր սիրում նման բանը հանաքի տալ ուստի և զանդատվեց հորս։ Նրա դատաստանն ել կարճ եր լինում։ Նա խկույն և եթ իր մոտ պահանջեց սրիկա ֆրանսիացուն։ Ասացին, վոր մուզյեն ինձ դաս և տալիս։ Հայրս յեկավ իմ սենյակը։ Այդ պահին Բոպրեն անմեղության քնով քնած եր մահճակալի վրա։ Յես գործով եյի զրադիված։ Հարկ և գիտենալ, վոր Մոսկվայից ինձ համար աշխարհագրական քարտեզ եյին բերել տվել։ Առանց վորնե գործածության այդ քարտեզը կախված եր պատից և վաղուց ինձ հրապուրել եր թղթի լայնությամբ ու լավորակությամբ։ Յես վճռեցի նրանից մի ողապարուկ շինել և, ոգտվելով Բոպրեյի քնից, զործի անցաւ։ Հայրս ներս մտավ հենց այն բոպեյին, յերբ յես ճիլոպից շինած պոչը հարմարեցնում եյի Բարենուսո հրվանդանին։ Տեսնելով իմ վարժությունները աշխարհագրության մեջ, հայրս քաշեց ականջս, ապա մոտ վազեց Բոպրեյին, շատ անզգույշ արթիացրեց նրան և սկսեց նախատինք թափել գլխին։ Շփոթված Բոպրեն ուզեց վեր կենա, կանգնի և — չկարողացավ. դժբախտ ֆրանսիացին թունդ հարրած եր։ Յնթը ցավին՝ մի դարման։ Հայրս բռնեց նրա ոձիքից, բարձրացրեց մահճակալի վրայից, դռներից դուրս հրեց և՝ ի մեծ ուրախություն Սավելիչի, նույն որն և եթ արձակեց պաշտոնից։ Դրանով ել ավարտվեց իմ կրթությունը։

Յես ապրում եյի իրբե թերուս տղա. աղավնիներ եյի թոցնում և աթուրմա խաղում բակի յերեխաների հետ։ Մինչ այս, մինչ այն տասնվեց տարեկան յեղա։ Այդ ժամանակ իմ վիճակը փոխվեց։

Մի անգամ աշնանը մայրս մեղրով մուրաբա յեր յեփում հյուրասենյակում, իսկ յես բերանիս ջրերը կուլ տալով, նայում եյի մուրաբայի յեռացող փրփուրին։ Հայրս պատուհանի մոտ նստած կարգում եր Պալատական Որացույցը¹, վոր ամեն տարի նա ստանում եր։ Այդ գիրքը նրա վրա միշտ մեծ աղղեցություն եր թողնում։ Նա միշտ առանձին հետաքրքրությամբ եր կարգում այն

¹ Այս որացույցի մեջ զետեղվում եյին ուզմ. և քաղաքացիական բարձրաստիճանավորների ցուցակները, պալատական ընդունելությունների տեղեկատուններ և զանազան շահեկան նյութեր ազնվականների և արքունի ազնվատեհմիների համար։

և ամեն անդամ ընթերցումը նրա մեջ առաջացնում եր մաղձի զարմանալի հուզումն: Մայրս, վոր անգիր գիտեր նրա բոլոր սովորությունները, միշտ աշխատում եր այդ դժբախտ գիրքը վորքան կարելի յե հեռու պահել և այդպիսով Պալատական որացույցը հաճախ ամբողջ ամիսներ նրա աչքին չեր ընկնում: Բայց, յերբ նա պատահաբար գտնում եր, ապա յերբեմն ամբողջ ժամեր այլևս ձեռքից բաց չեր թողնում: Յեկ այդպես, հայրս կարդում եր Պալատական որացույցը, յերբեմնակի ուսերը վեր քաղում և կիսաձայն կրկնում: «Դեներալ-պորուչիկ!... Իմ վաշտում նա սերժանտ եր... Ռուսական զույգ որդենների կավալեր²... Իսկ վազնուց ե, վոր մենք»... Վերջապես հայրս որացույցը շպրտեց բաղմոցի վրա և խորասուզվեց մտածմունքի մեջ, վոր վոչինչ լավ բան չեր գուշակում:

Հանկարծ նա գարձավ մորս. «Ավշատյա վասիլևնա, Պետրուշան քանի տարեկան եօ:

— Ահա տասնյոթի մեջն ե, — պատասխանեց մայրս: — Պետրուշան ծնվեց հենց այն տարին, յերբ մեր հորաքույր նաստայած Դերասիմսայի մի աչքը կուրացավ և յերբ դեռ...

«Լավ, — ընդհատեց հայրս, — ժամանակն ե, վոր նա զինվորական ծառայության դնա: Հերիք ե, ինչքան վազվեց սպասուհի աղջիկների սենյակներում և մաղլեց աղավատների պատերով:

Ինձնից շուտով բաժանվելու միտքն այնպես շշմեցրեց մորս, վոր նա զգալը ձեռքից բաց թողեց կաթսայի մեջ և արցունքները հոսեցին նրա յերեսով: Ըստհակառակը, դժվար և նկարագրել իմ հիացմունքը: Զինվորական ծառայության դնալու միտքն իմ մեջ խառնվում եր ազատության և Պետերբուրգի կյանքի վայելքների մասին ունեցած մտքերի հետ: Յես ինձ յերեակայում եյի զվարդիսայի սպա, վոր, իմ կարծիքով՝ մարդկային ամենամեծ յերջանկությունն եր:

Հայրս չեր սիրում վոչ փոխել իր մտադրությունները, վոչ ել հետաձգել նրանց կատարումը: Իմ մեկնելու որն արդեն նշանակ-

¹ Ուաղմական բարձրագույն աստիճաններից մեկը ուստական հին բանակում, սկսած XVII դարից:

² Կավալեր (Փր. — ձիավոր) — առաջ այսպես կոչվում եյին ասպետները, հետագայում՝ շքանշան ունեցողները: Այստեղ նշանակում ե — պարզիալորդած յերկու բարձրագույն շքանշաններով՝ «Անդրեյ Պերվոզվաննու» և «Ալ. Նեկու»:

ված եր: Նախորյակին հայրս հայտնեց, վոր մտադիր ե ինձ հետ նամակ ուղարկել իմ ապագա պետին և գրիչ ու թուղթ պահանջեց:

«Չմոռանաւս, Անդրեյ Պետրովիչ, — ասաց մայրս, — իմ կողմից ել վողջուհել իշխան Բ.-ին. գրի, թե յես հուսով եմ, վոր նա Պետրուշային չի թողնի առանց իր շնորհների»:

— Այ քեզ հիմար բան, — պատասխանեց հայրս հռնքերը կիտելով: — Ինչո՞ւ համար յես պետք ե իշխան Բ.-ին նամակ գրեմ:

«Բայց դու ասացիր, վոր կամենում ես գրել Պետրուշայի պետին»:

— Ե՛, հետո վոր ի՞նչ:

«Բայց չե՞ վոր Պետրուշայի պետը իշխան Բ.-ն ե: Չե՞ վոր Պետրուշան գրված և Սեմյոնովսկի գնդում»:

— Դրված ե: Իմ ի՞նչ գործն ե, թե գրված ե: Պետրուշան չի գնա Պետերբուրգ: Ի՞նչ պիտի նա սովորի Պետերբուրգում ծառայելով: Դրամ վատնել և անպիտանություններ անել: Վաչ, թող նա բանակում ծառայի, թող վառողի հոտն առնի, թող զինվոր գատնա և վոչ թե շամատոն²: Դրված ե գվարդիայում... Վորտեզ ե նրա պաշպորտը: Տնը ինձ:

Մայրս զտավ իմ պասպորտը, վոր պահվում եր նրա փոքրիկ մնուկի մեջ՝ իմ կնունքի շապիկի հետ և գողդոջուն ձեռքով ավեց հորս: Հայրս ուշադրությամբ կարգաց այն, դրեց իր առջեւ սեղանի վրա և սկսեց իր նամակը:

Հետաքրքրությունն ինձ տանջում եր: Յեթե Պետերբուրգ չեն ուղարկում ինձ, հապա՞ ուր են ուղարկում: Աչքս չեյի հեռացնում հորս գրչից, վոր շարժվում եր բավական՝ դանդաղ: Վերջապես նա ավարտեց նամակը, պասպորտի հետ կնքեց մի ծրարում, ակնոցները հանեց և ինձ իր մոտ կանչելով, ասաց. «Ահա քեզ Անդ-

¹ Պուշկինի նկարագրած ժամանակաշրջանում աղնվականների վորդիներին դեռևս մանուկ հասակից գրում ելին սաղմական ծառայության մեջ — վորպես հասարակ զինվորներ: Այս յեղանակով նրանք ձեւականորեն պահպանում ելին 1762 թվի կայսերական հրովարտակի կանոնները, վորոնց համաձայն սպայական աստիճան ստանալու համար պետք եր 12 տարի շարքային զինվոր լինել: Փաստողն, աղնվականների վորդիները վոչ մի սաղմական ծառայության մեջ չկինցելով հանդերձ, տանը նստած նորանոր բարձր աստիճաններ ելին ստանում է չափահաս տարիքում արդեն համարվում ելին սպա:

² Անգործ մարդ գտարկապորտ, թեթևառկեկի:

բեյ Կարլովիչ Ռուխն՝ իմ վաղեմի ընկերոջն ու բարեկամին հանձնելու նամակը: Դու գնում ես Որենքուրդ՝ նրա հրամանատարության տակ ծառայելու:

Յեվ այսպես, իմ բոլոր փայլուն հույսերը խորտակվեցին: Պետք բուրդի ուրախ կյանքի փոխարեն ինձ սպասում եր ձանձրույթը հետավոր ու խուլ մի վայրում: Զինվորական ծառայությունը, վորի մասին մի բոպե առաջ մտածում եյի այդպիսի ցնծությամբ, ինձ թվաց վորպես մի ծանր դժբախտություն: Բայց հակածառելն անմտություն եր: Մյուս որն առավոտ տան դռան մոտեցրին ճամբորդական կիրտեկան¹, մեջը դրին մի չեմոդան, մի արկղ՝ թեյի սարք ու կարգով և կապոցներ՝ մեջը բլիթներ ու կարկանդակներ — տնային փայտայանքի վերջին նշանները: Ծնողներս որհնեցին ինձ: Հայրս ասաց. «Գնաս բարով, Պյանտր: Հավատարիմ ծառայի նրան, ում յերդում կտաս. մեծերիդ լսիր, նրանց փաղաքշանքների հետեւց ընկնես, ծառայության մեջ մի քծնի, ծառայությունից չեռուսափես և հիշիր առածը. շորդ նոր պահիր, իսկ պատիվդ՝ ջահիլությ»: Մայրս արտասուքն աչքերին ինձ խնդրեց պահպանել առողջությունս, իսկ Սավելիչին պատվիրեց հոգալ յերեխայի մասին: Նապաստակի մորթուց կարած մի մուշտակ հազցրին ինձ, իսկ վրայից՝ աղվեսենու քուրք: Սավելիչի հետ նստեցի կիրտեկայի մեջ և ճանապարհ ընկա, հորդ արցունքներ թափելով:

Նույն զիշերն և եթ հասա Սիմբիրսկ, ուր պիտի մնայի մի որ՝ անհրաժեշտ իրեր գնելու համար, վոր հանձնարարված եր Սավելիչին: Իջևանեցի պանդոկում: Սավելիչն առավոտյան գնաց խանությները: Զանձրանալով պատուհանից նայել ցեխոտ փողոցին, յես գնացի թափառելու պանդոկի բոլոր սենյակներում: Բիլյարդանոց մտնելուս պես մի բարին տեսա՝ յերեսունհինդ տարեկան, յերկար, սե բեղերով, խալաթը հագին, կիյը² ձեռքին և ծխամորճը տատանելով բռնածքով բռնածք: Նա խաղում եր մարկորիչ³ հետ, վորը յերբ տանում եր խաղը, մի գավաթ ողի յեր խմում, իսկ տանուլ տալիս պետք և չորեքթաթ մտներ բիլյարդի տակը: Սկսեցի դիտել

նրանց խաղը: Վորքան յերկար եր տեսում այն, այնքան չորեքթաթ արկող զբոսանքները հաճախակի եյին դառնում, մինչև վոր վերջապես մարկորը պառկած մնաց բիլյարդի տակ: Բարինը¹ միքանի թունդ խոսքեր ասաց նրա հասցեյին՝ վորպես դամբանական և ինձ առաջարկեց հետը բիլյարդ խաղալ: Յես հրաժարվեցի՝ խաղալ չիմանալու պատճառով: Բատ յերեսութին այդ նրան ոտառութի թվաց: Ասես ցավակցությամբ նա ինձ նայեց, սակայն՝ լուսացինք: Պարզվեց, վոր նրան կոչում են իվան իվանովիչ Զուրին, վոր նա ** հուսարական² գնդի ոռոմիստրն³ ե և Սիմբիրսկ ե յեկել ոեկրուտներ⁴ ընդունելու գործով, իսկ իջևանել ե պանդոկում: Զուրինն ինձ հրավիրեց իր հետ ճաշել — աստված ինչ վոր տվել ե, զինվորավայել: Յես հաճույքով համաձայնվեցի: Նստեցինք ճաշի: Զուրինը շատ եր խմում և ինձ ել հյուրախրում եր, ասելով, վոր պետք ե սովորել զինվորական ծառայությանը: Նա ինձ պատմում եր բանակային այնպիսի անեկդոտներ, վոր ծիծաղից թուլցած, քիչ եր մնում թե վայր ընկնեմ, և մենք ճաշից վեր կացանք վորպես կատարյալ բարեկաներ: Այն ժամանակ նա առաջարկեց ինձ բիլյարդ խաղալ սովորեցնել: «Թա, — ասում եր նա, — անհրաժեշտ ե մեղ պես ծառայող մարդկանց համար: Արշավանքի ժամանակ, ասենք թե, հասար մի վորեե հետ ընկած տեղ. ասա ինդրեմ, ինչնիվ պիտի զբաղվես: Հո միշտ ջնուդներին չպիտի՞ ծեծես: Ուղեսչուզես կզնաս պանդոկ և կսկսես բիլյարդ խաղալ, իսկ դրա համար պետք ե խաղալ իմանալու: Յես միանգամայն համոզվեցի և մեջ յեռանդով սկսեցի սովորել: Զուրինը բարձր ձայնով խրախուսում եր ինձ, զարմանք եր հայտնում՝ տեսնելով իմ արագ առաջադիմությունը և մի քանի դասերից հետո առաջարկեց փողով խաղալ, մի-մի վրոշ դնելով, վոչ թե տանելու համար, այլ հենց այնպես, միայն, վորպեսզի դատարկ տեղը չխազանք, վոր նրա սաելով, ամենավատ սովորությունն ե: Յես դրան ել համաձայնվեցի, իսկ Զուրինը հրաժայեց պունչ տալ մեղ և համոզում եր ինձ փորձել այն, կրկնելով, վոր պետք ե վարժվել

¹ Տեր, պարոն, ազնվական, նաև՝ մհծարանքի տիտղոս — Շաղա:

² Հուսարներ — թեթև հեծելազորի մի տեսակը:

³ Ռուսմիստր — հեծելազոր:

⁴ Ռեկրուտներ — նորարարութիւններ:

¹ Վերեկց քաթանով կամ թաղիքով ծածկված սայլակ:

² Կիյ — բիլյարդի յերկարավուն ձողը:

³ Մարկոր — բիլյարդին սպասարկող, խաղի ժամանակ հաշիվը պահող:

զինվորական ծառայությանը, իսկ առանց պունջի ծառայելն ինչ քան ե վոր: Յես լսեցի նրան: Խաղը շարունակվում եր: Ինչքան հաճախ եյի խմում իմ բաժակից, այնքան համարձակ եյի դառնում: Բիլյարդի գնդերը ամեն բողեք դուրս եյին թռչում սեղանի յեղրերից, յես տաքացել եյի, հայնոյում եյի մարկորին, վորը, աստված գիտե, թե ինչպես եր հաշվում, ժամ առ ժամ ավելացնում եյի խաղաղումարը, — մի խոսքով ինձ պահում եյի վորպես կապը կտրած մի տղա: Ժամանակն անցավ աննկատելի: Մեկ ել Զուրինը ժամացույցին նայեց, կիյը ցած դրեց և հայտնեց ինձ, վոր տարպել եմ հարյուր ոռւրի: Դա մի փոքր շփոթեցրեց ինձ: Իմ բոլոր դրամը Սավելիչի մոտ եր: Սկսեցի ներողություն խընդրել: Զուրինն ընդհատեց ինձ. «Ի սեր աստծո, բնավ մի անհանգստանա: Յես կարող եմ սպասել, իսկ առայժմ՝ գնանք Արինուշկայի մոտ»:

Ի՞նչ կհրամայեք: Այդ որը յես վերջացրի նույնքան թեթևամիտ, վորքան և սկսել եյի: Մենք ընթրեցինք Արինուշկայի մոտ: Զուրինն ամեն բողեք լցնում եր իմ գավաթը, կրկնելով, վոր պետք ե վարժվել զինվորական ծառայությանը: Սեղանից վեր կհնալով յես հաղիվ եյի կանգնում վոտքի վրա. կես դիշերին Զուրինը կառքով ինձ տարավ պանդոկ:

Սավելիչը մեզ դիմավորեց տան մուտքի մոտ: Տեսնելով դեպի ծառայությունն ունեցած իմ ջանախրության աներկրա նշանները, նա ախ քաշեց: «Ես ի՞նչ որի յես, տեր իմ, — ասաց նա վողբալի ձայնով: — Եղ վիրտեղ ես եղակես խմել: Ա՛խ, աստված իմ, յերբեք ես տեսակ բան չեր յեղել:» — Զայնդ կտրի, ծերուկ, — հաղիվ կապելով բառերը պատասխանեցի նրան. — յերեկի դու հարսած ես, գնա քննելու... ինձ ել պառկեցրու:

Մյուս որը յես դարթնեցի զլիացավով. աղոտ հիշում եյի յերեկվա անցքերը: Իմ խորհրդածություններն ընդհատեց Սավելիչը, վորը մի բաժակ թեյ ձեռքին մտավ սենյակ: «Շնուտ ես սկսում, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա գլուխը ճոճելով, — շուտ ես սկսում քեֆ անել: Ախը դու մեմ ես քաշել: Կարծեմ թե վոչ հայրդ, վոչ ել պատդ խմողներ չեն յեղել: մորդ մասին խոսելն անդամ պվելորդ ե. նրանք իրենց որում բացի կվասից բերաններն ուրիշ խմիչք չեն առել: Իսկ հի ես բոլորի մեղավորը: Անիծյալ մուսյեն: Պատահում եր, վոր, մեկ ել տեսար վաղեց Անտիպենայի մոտ.

«Մաղամ, ժե վու պըի, արաղ»¹: Այ քեզ ժե վու պըի: Ի՞նչ եմ ասել շնորհք եր սովորեցնում եղ շան վորդին: Ասա ինչներին եր պետք բասուրմանին² վերակացու վարձել, կասես մեր բարինը իր մարդիկը չուներ»:

Յես ամաչեցի: Յերեսս շուռ տվի և ասացի. «Թուրս գնա, Սավելիչ, յես թեյ չեմ ուզում»: Բայց դժվար եր Սավելիչին լուեցնել, յերը նա, պատահում եր, վոր սկսում եր իր քարոզը. «Այ, տեսնում ես, Պյոտր Անդրեյիչ. Ինչ ասել ե կոնծել: Համ գլուխդ ե ծանրացել, համ ել ուտել չես ուզում: Խմոր մարդն ինչացու յե... Սրի գու վարունգի թթվաջուր խմիր մեղրով, իսկ ամենից լավն ե, մի կես բաժակ թրմողի... ի՞նչ կասես, բերեմ»:

Այդ ժամանակ մի տղա ներս մտավ և ինձ տվեց ի. ի. Զուրինի տոմսը: Թուղթը բացի և կարդացի հետեյալ տողերը.

«Սիրելի Պյոտր Անդրեևիչ, խնդրում եմ իմ տղայի հետ ուղարկես հարյուր ոռւրին, վոր գու յերեկ ինձ տանուլ տվիր: Դրամի սաստիկ կարիք ունեմ:

Պատրաստ ծառայելու՝ Իվան Զուրին»:

Ճար չկար: Անվրդով տեսք տալով դեմքիս և դառնալով Սավելիչին, վորը և՛ դրամի, և՛ սպիտակեղենի, և՛ իմ գործերի խնամակալ ալն եր ի խնամակալն եր, հրամայեցի հարյուր ոռւրին տալ այդ տղային: «Ի՞նչպես, ինչու համար», — հարցը ապշած Սավելիչը: — Պարտք եմ նրան, — պատասխանեցի յես վորքան կարելի յես սառն: «Պարտք եմ, — առարկեց Սավելիչը, վոր քանի զնում այնքան ավելի յեր ապշում: — տեր իմ, եղ յերբ ել դու կարողացար պարտքի տակ ընկնել: Զե, եղտեղ մի ինչ վոր ոյին կամքը քոնն ե, համա՝ յես փող տվողը չեմ»:

Յես մտածեցի, վոր յեթե այդ վճռական բոպեյին չկոտրեմ համառ ծերունուն, ապա հետազում այլես դժվար կլինի ինձ գուրս գալ նրա խնամակալությունից, ուստի և հպարտ նայելով նրան, ասացի. «Յես քո տերն եմ, իսկ դու՝ իմ ծառան: Դրամը իմն ե: Յես տանուլ եմ տվել այդ զումարը, վորովհետեւ քեֆս այդպես ե ուղել, իսկ քեզ խորհուրդ եմ տալիս խելքիդ զոր չտաս և անես այն, ինչ հրամայում են քեզ»:

¹ Տիկին, խնդրում եմ, արաղ:

² Բասուրման մասն այլակրոն՝ վոչ ուղղափառ:

Սավելիչն այնպես եր ապշած իմ խոսքերից, վոր զարմանքից ձեռքերն իրար զարկեց և քարացավ, «Դեհ, ի՞նչ ես կանգնել», — զոռացի յես բարկացկոտ: Սավելիչը լացեց: «Տեր իմ, Պյոտր Անդրեյիչ, — արտասանեց նա դողդոջուն ձայնով, — ինձ մի մեռցնի վշտից: Աչքիս լույսը, լսիր ինձ ծերուկիս. գրիր եղ ավազակին, վոր մենք եղ տեսակ գումարներ իսկի չունենք: Հարյուր ոռւրլի՛: Վողորմած աստված: Ասա, վոր ծնողներս շատ խիստ պատվիրել են ինձ՝ միայն ընկույզով խաղալք... — Հերիք ե ստեր ասես, — ընդհատեցի յես խստությամբ. — գեսը տուր փողը, թե չե վզակոթիդ տալով կարձակեմ:

Սավելիչն ինձ նայեց խորին թախիծով և գնաց պարտքս բերելու: Յես մեղքացա խեղճ ծերունուն, սակայն ուղում եյի աղաւովել և ապացուցել վոր յես այլևս յերեխա չեմ: Դրամն ուղարկվեց Գուրինին: Սավելիչը շտապեց ինձ դուրս բերել անիծյալ պահովկից: Նա յեկավ հայտնելու, թե ձիերը պատրաստ են: Անհանդիսավոր իսպանով և լուռ զղջումով յես դուրս յեկա Սիմբիրսկից, առանց հրաժեշտ տալու իմ ուսուցչին և չմտածելով, թե այլևս յերբեն կտեսնեմ նրան:

ԳԼՈՒԽ II

Ա. Մ. Զ Ն Ո Ր Դ Ը Լ

Իմ յերկիր, յերկիր իմ,
Յերկիր անծանոթ.
Յես չեմ, վոր յեկել եմ քո հողը ահա,
Չիս չե, վոր բերել ե ջահել տղիս.
Ճարտարությունը ջահել կտրիչի,
Արկությունը, մեկ ել գինետան
Գինաբուքն ե բերել—լինձ ջահել տղիս:
Հնավանդ յերգ

Ճանապարհի խորհրդածություններս այնքան ել հաճելի չեյին: Իմ տանուլ տված գումարը այն ժամանակվա գներով քիչ բան չեր: Հոգուս խորքում յես չեյի կարող չհամաձայնվել, վոր Սիմբիրսկի պանդոկում իմ արածը հիմարություն եր և ինձ հանցավոր եյի գոգում Սավելիչի առաջ: Այդ բոլորն ինձ տանջում եր: Ծերունին մոայլ նստած եր կիրիտկայի առջեմի մասում՝ յերեսը ինձնից շուռ տված և լուռմ եր, յերբեմն միայն հառաչելով: Յես անպատճառ ուղում եյի հաշտվել նրա հետ և չգիտեյի ինչից սկսեմ: Վերջապես ասացի նրան. «Դե, դե, Սավելիչ, հերիք ե, հաշտվենք, ներողություն. ինքս եմ տեսնում, վոր մեղավոր եմ: Յերեկ յես զժություն արի և քեզ ել իդուր տեղը վիրավորեցի: Խոստանում եմ սրանից հետո խելոք պահել ինձ և լսել քեզ: Դե, մի բարկանա, հաշտվենք»:

— Ե՛ն, տեր իմ Պյոտր Անդրեյիչ, — պատասխանեց նա խորհոց հանելով: — Բարկանալը վոր ասում ես, ինքս ինձ վրա յեմ բարկանում. բոլոր մեղքն իմն ե: Ասա թե յես ի՞նչպես քեզ մենակ թողի պանդոկում: Ինչ պիտի անես, մեղքի մեջ ընկա. խելքիս փշեց, ասի՛ գնամ տիրացույի կնոջը՝ սանամօրս տեսնեմ: Եսպես. են եր, վոր կար — սանամօրս տեսա ու՝ ջուխտ վոտքով բանտ ընկա:

Փորձանք եր, ուրիշ վոչ մի բան. ել ի՞նչ յերեսով յերեամ իմ տերի աչքին. ի՞նչ կասեն նրանք, յերբ իմանան, վոր յերեխան խմում ե և զումար խաղում:

Խեղճ Սավելիչին մթիթարելու համար յես նրան խոսք ավի առաջիկայում առանց նրա համաձայնության վոչ մի կոպեկի ձեռք չտալ: Քիչքիչ նա հանդարտվեց, թեև ելի նորից մեկմեկ վնթինթում եր քթի տակ, գլուխը ճոճելով. «Հարյուր ոռորդի, հեշտ բան ե»:

Յես մոտենում եյի իմ նշանակման վայրին: Շուրջս տարածվում եյին տխուր տափաստանները, տեղտեղ բլուրներով ու ձուրերով կտրատված: Ամեն ինչ ձյունով եր ծածկված: Արել մայր եր մտնում: Կիրիտկան ընթանում եր մի նեղ ճանապարհով, կամ ավելի ճիշտ՝ գեղջկական սահնակների թողած հետքով: Հանկարծ կառապանս սկսեց մի կողմ նայել. նայեց, նայեց և վերջապես գլխարկը հանելով դարձավ ինձ ու ասաց. «Բարին, արդյոք չեք հրամայի վերադառնալ»:

— Ի՞նչո՞ւ վոր:

«Ժամանակը ձախ ե. քամին սկսում ե կամաց-կամաց ուժեղանալ: տեսնում ես, թե ինչպես ե սրբում ձյունափոշին»,

— Ե, մեղ ինչ մնաս:

«Բա չես տեսնում, թե ինչ ե ենտեղ»: (Կառապանը մտրակը դեպի արևելք ուղղեց):

— Բացի ճերմակ տափաստանից և պարզ յերկնքից ուրիշ վոչինչ չեմ տեսնում:

«Ե՛յ, հրեն — հրեն. են փոքրիկ ամպը»:

Իսկապես, յերկնքի յեղին մի փոքրիկ, սպիտակ ամպ տեսա, վորը սկզբում ինձ թվաց վորպես հեռավոր մի բլրակ: Կառապանը բացատրեց, վոր այդ ամպը բուք ե նախագուշակում:

Յես լսել եյի այդ կողմերի ձյունախառն փոթորիկների մասին և գիտեյի, վոր գեպքեր են յեղել, յերբ ամբողջ սայլախմբեր թաղվել են ձյան տակ: Սավելիչը, համաձայնվելով կառապանի կարծիքին, խորհուրդ տվեց վերադառնալ: Սակայն քամին ինձ այնքան ել ուժեղ չերեսաց. յես հույս ունեյի ժամ առաջ հասնել հետևյալ կայարան և հրամայեցի ավելի արագ քշել:

Կառապանը քշեց, բայց միշտ դեպի արևելք եր նայում: Զիերը վազում եյին համբնթաց: Այնինչ, քամին ժամ առ ժամ սաստկա-

ցավ: Ամպիկը դարձավ մի ահազին սպիտակ ամպ, վոր դանդաղ բարձրանալով մեծացավ և աստիճանաբար բռնեց յերկնքի յերեսը: Մանր ձյուն յեկավ և հանկարծ՝ թափեց առատառատ փաթիւներով: Քամին վոռնաց, բուքն ընկավ: Մի ակնթարթում մութ գիշերը խառնվեց ձյան ծովի հետ: Ամեն ինչ կորավ: «Դեն, բարին, — գոռաց կառապանը, — բաններս բուրդ ե, բուք-բորանն ընկավ...»

Յես գուրս նայեցի կիրիտկայից — խավար եր և մրրիկ: Քամին փշում եր այնպիսի ուժեղ վոռնոցով, վոր սահս շնչավոր եակ լիներ. ձյունը ծածկում եր ինձ ու Սավելիչին. ձիերը համրաքայլ առաջ եյին գնում և շուտով կանգ առան: «Ի՞նչո՞ւ չես գնում», — անհամբեր հարցը յես կառապանին: — Վ՞նց գնամ, — պատասխանեց նա նստած տեղից իջնելով. — հայտնի չե, թե ես ուր յեկանք. ճանապարհ չկա և չորս կողմը թանձր մշուշ ե: — Սկսեցի նախատել նրան: Սավելիչը նրա կողմը բռնեց: «Ասա ի՞նչ խելք եր՝ չլսեցիր նրան, — խոսում եր նա բարկացած. — կվերադառնայիր իջնանատուն, թեյ կիմեյիր, առոք-փառոք կքնեյիր մինչև լույս, բուքը կթաղաղվեր՝ կշարունակեյինք ճանապարհը: Յեվ ուր ել շտապում ենք. են ելի մի բան եր, թե հարսանիք գնայինք»: — Սավելիչն իրավ եր: Ճար չկար: Զյունը գալիս եր, հա գալիս: Կիրիտկայի մոտ արդեն ձյան ահազին կույտ եր գոյացել: Զիերը կանգնել եյին գլուխները խոնարհած և յերբեմն ցնցվում եյին: Կառապանը պտտվում եր շուրջը, պարապությունից լծասարքը կարգի բերելով: Սավելիչը փնթփնթում եր. յես նայում եյի ամեն կողմ՝ հուսալով բնակատեղի կամ ճանապարհի գոնե մի նշան տեսնել, սակայն՝ բացի բուքի խոլական պտույտներից, վոչինչ չկարողացա զանկարծ ինչ վոր սև բան տեսա: «Ե՛յ, կառապան, — կանչեցի յես. — տես, ի՞նչ ե այնտեղ սեին տալիս: Կառապանն սկսեց ուշի-ուշով դիտել: — Աստված գիտի, բարին, — ասաց նա իր տեղը նստելով. — բեռ ասեմ՝ բեռ չե, ծառ ասեմ՝ ծառ չե. համա կասես շարժվում ե: Յերեկի — կամ գել ե, կամ՝ մարդ:

Յես հրամայեցի քշել դեպի անձանոթ առարկան, վոր իսկույն և եթ սկսեց դեպի մեղ շարժվել Յերկու բուռեյից հետո մենք հավասարվեցինք մի մարդու հետ: «Ե՛յ, բարի մարդ, — ձայն տվեց նրան կառապանը: — Ասա, չգիտե՞ս ուր ե ճանապարհը»:

— Ճանապարհը հենց եստեղ ե. յես ամուր գետնի վրա յեմ կանգնած, — պատասխանեց ճամբորդը, — բայց ի՞նչ ոգուտ:



— Կաիր, շինական, — ասացի յես նրան. — դու այս կողմերին ծանրթ ես: Կհամաձայնվես արդյոք ինձ մի ոթեան հասցնելու:

— Ես տեղերն ինձ ծանոթ են, — պատասխանեց ճամբորդը. — փառք աստծո, ենքան ենք դես ու դեն գնացել վոր: Համա չես տեսնում, թե ինչ յեղանակ ե. շատ շուտ կծովես ճանապարհից: Լավ ե եստեղ մնանք ու սպասենք: Կարելի յե թե բուքը հանգարտի և յերկինքը պարզվի. են ժամանակ ճանապարհը աստղերով կդունենք:

Նրա սառնարյունությունն ինձ սիրտ տվեց: Յես արդեն վորոշել ելի ինձ աստծու կամքին հանձնելով գիշերել բաց տափաստանում, յերբ հանկարծ ճամբորդն արագ շարժումով բարձրացավ, նստեց կիրիտկայի առջեի մասում և ասաց կառապանին. «Ե՛, փառք աստծու, բնակատեղը հեռու չի, ձիերի գլուխն աջ շուր տուր ու քշիր»: — «Իսկ ինչի՞ աջ քշեմ, — հարցրեց կառապանն անբավական: — Եղ վորտեղ ել դու տեսար ճանապարհը: Քեզ ինչ կա. վոչ ձին ե քոնը, վոչ ձիու սարքը. քեզանից ինչ ե զնում — քշի, հա քշի»: — Ինձ թվաց, վոր կառապանն իրավացի յե. «Իսկապես, — ասացի յես. — ինչու յես կարծում, վոր բնակատեղը հեռու չի»: — «Նրա համար, վոր քամին են կողմից փշեց, — պատասխանեց ճամբորդը, — և յես ծխի հոտ առա. ասել ե թե զյուղը մոտիկ եա: Նրա ուշիմությունն ու նուրբ հոտառությունն ինձ ապշեցրեց: Կառապանին հրամայեցի քշել: Խոր ձյան միջով ձիերը դժվարությամբ եյին քայլում: Կիրիտկան հանդարտ առաջ եր գնում մերթ բարձրանալով ձյունակույտերի վրա, մերթ՝ փոսերն ընկնելով և մեկ այս, մեկ այն կողմը շրջվելով: Դա նման եր ալեկոծ ծովում նավի լողալուն: Սավելիչը ախ ու վախ եր քաշում, ամեն բռպե իմ կողերին բախվելով: Յես ցած թողի կիրիտկայի ծածկոցը, փաթաթվեցի քուրքի մեջ և սկսեցի նիրեկ՝ փոթորկի յերդի և դանդաղ յերթի որորով:

Մի յերազ տեսա, վոր հետո յես յերեք չկարողացա մոռանալ և վորի մեջ մինչև հիմա յել ինչ վոր մարդարեական բան եմ տեսնում, յերբ նրա հետ համեմատում եմ իմ կյանքի տարորինակ հանգամանքները: Ընթերցողն ինձ կների, քանի վոր հավանորեն ինքն ել փորձով զիտե, վոր մարդ կարող ե անձնատուր լինել սնահավատության, չնայած դեպի նախապաշարումներն յեղած ամեն տեսակի արհամարհանքը:

Յես գտնվում եյի զգացմունքների և հոգու այն վիճակում, յերբ իրականությունը տեղի տալով ցնորդներին, նրանց հետ ձուլվում է անուրջների աղոտ տեսինների մեջ: Ինձ թվաց, վոր բուքը դեռ շարունակվում է և մենք դեռևս խարիսափում ենք ձյունոտ անապատում... Հանկարծ մի դարպաս տեսա և կիրիտկան մտավ մեր ագարակի բակը: Առաջին միտքս այն յերկյուղն եր, վոր չլինի՞ թե հայրս բարկանա ինձ վրա՝ իմ կամքի հակառակ հայրենական հարկի տակ վերադառնալուս համար և չլինի՞ թե դա ընդունի վորպես դիտավորյալ անհնազնդություն: Անհանգստառությամբ դուրս ցատկեցի կիրիտկայից և տեսնեմ՝ տան շեմքի մոտ ինձ դիմավորում է մայրս խորին վշտի արտահայտությամբ: «Սնա կաց, — ասում ե նա ինձ, — հայրդ մահամերձ հիվանդ ե և ցանկանում է հրաժեշտ տալ քեզ»: — Յերկյուղը սրտիս մեջ՝ նրա հետ քայլում եմ դեպի ննջարան: Տեսնեմ՝ սենյակը աղոտ լուսավորված ե, անկողնի մոտ մարդիկ են կանգնած տիուր դեմքերով: Կամացուկ մոտենում եմ անկողնուն, մայրս փոքր ինչ բարձրացնում է ծածկոցը և ասում: «Անդընյ Պետրովիչ, Պետրուշան յեկավ. լսելով վոր դու հիվանդ ես, նա վերադառնել ե. որհնիր նրան»: Յես ծունկ չոքեցի և աչքերս սևեռեցի դեպի հիվանդը: Յեվ ինչ... Հորս փոխարեն, տեսնեմ՝ անկողնում պառկած ե մի սեամորուք մուժիկի և ուրախառուրախ ինձ ե նայում: Տարակուսանքի մեջ դառնում եմ մորս, ասելով նրան. — «Այս ինչ ե նշանակում: Սա իմ հայրը չե: Յեկ ինչնւ պետք ե յես մուժիկի որհնությունը խնդրեմ»: — «Միենառյն ե, Պետրովչա, — պատասխանում ե մայրս, — նա քո հարսանեհյըն ե, համբուրի նրա ձեռքը և նա թող որհնի քեզ»... Յես չեյի համաձայնվում: Այն ժամանակ մուժիկը վեր թուավ անկողնից, զոտկից դուրս քաշեց կացինը և սկսեց ոդի մեջ ամեն կողմ պատեցնել: Ուզում եյի փախչել... և չկարողացա, սենյակը լցվեց մեռած մարմիններով. Գրանց դիպչելիս յես սայթաքում եյի և վոտքս սահում եր տեղտեղ լճացած արյան մեջ... Սարսափելի մուժիկը սիրալիր ինձ իր մոտ եր կանչում, ասելով: «Մի վախի, արի որհնեմ քեզ»... Սոսկումն ու տարակուսանքը պատեց ինձ... Յեվ այդ ըստեյին զարթնեցի: Ճիերը կանգնել եյին. Սավելիչը բռնել եր ձեռքս, ասելով: «Դուրս արի, տեր իմ. տեղ հասանք»:

¹ Մոյկիկ — գեղջուկ, շինական:

— «Ուր հասանք», — հարցրի յես աչքերս տրորելով: — «Իջևանատուն. աստված ոգնեց մեղ, յեկանք, հենց ցանկապատին դեմ առանք: Դուրս արի, տեր իմ, շնուտ, և տաքացիր»:

Յես դուրս յեկա կիրափակայից: Բուքը դեռ շարունակվում եր, թեմա ավելի նվազ ույժով: Այնպես մութն եր, վոր աչք աչքի չեր տեսնի: Իջևանատերը մեղ դիմափարեց դարպասի մոտ, լապտերը փեշի տակ բռնած և ինձ առաջնորդեց վերնատուն, ուր նեղվաճք եր, սակայն՝ բավական մաքուր. մարդի մի ձողիկ լուսավորում եր այն: Պատից կախված եր մի հրացան և կաղակի բարձրադիր գլխարկը:

Իջևանատերը՝ ծագումով Յաիցկի կաղակ¹, վաթսուն տարեկան մի մուժիկ եր, դեռևս թարմ ու առույգ: Ինձնից հետո ներս մտավ Սավելիչը, իր հետ բերելով մեր փոքր արկղը. նա կրակ պահանջեց, վորպեսզի թեյ պատրաստի, վոր յերբեք այնքան հարկավար չթվաց ինձ, վորքան այդ պահին: Իջևանատերը գնաց պատրաստություն տեսնելու:

— Իսկ մեր մնաց մեր առաջնորդը, — հարցրի յես Սավելիչին: «Եստեղ եմ, ձերդ բարեծննդություն», — լսվեց նրա ձայնը վերեկց:

Յես վեր նայեցի և բարձրադիր թախտի վրա մի սև մորուք տեսա և մի զույգ փայլուն աչքեր: — «Հը, ի՞նչ ե, մըսեցի՞ր»: — «Մարդ ի՞նչպես չմըսի ես հին արմյակի² մեջ: Քուրքունեյի, համամեղքս ինչ պահեմ, — յերեկ իրիկուն ողեվաճառի մոտ գրավ դրի. ասի թե ցուրտը ենքան ել խիստ չի»: Այդ ըոպեյին ներս մտավ իջևանատերը յեռացող ինքնայեռը ձեռքին, Մի բաժակ թեյ առաջարկեցի մեր առաջնորդին. մուժիկը ցած իջավ թախտից: Նրա արտաքինն ուշագրավ յերեաց ինձ: Կիհներ քառասուն տարեկան, միջահասակ եր, նիհարավուն և լայնաթիկունք: Նրա սև մորուքի մեջ տեղատեղ սպիտակ մաղեր եյին յերեռում: Մեծ և ժիր աչքերն ահընդիատ շարժման մեջ եյին: Դեմքը բավական հաճելի, սակայն խորամանկ արտահայտություն ուներ: Մազերը խուզված եյին

¹ Յաիցկի կաղակները — Յաիկ գետի ափերին ապրող կաղակներն եյին, վորոնք իրենց հատուկ զորական կաղմակերպությունն ունեյին, այսպես կոչված Յաիկյան զորքը: Պուգաչովի ապստամբությունից հետո Յաիկը վերանվեց Ուրալ գետի:

² Լայն փեղերով գեղջկական շալե վերնազգեստ:

բոլորակ. հազին մի պատառոտված արմյակ ուներ և թաթարական շալվար: Մի բաժակ թեյ տվի նրան: Նա համն առավ և դեմքը կնձուեց: «Զերդ բարեծննդություն, շնորհ արեք՝ հրամայեք՝ մի բաժակ արագ տան ինձ. թեյը կազակների սիրած խմիչքը չե»: Յես հաճույքով կատարեցի նրա ցանկությունը: Իջևանատերը փոքրիկ պահարանից հանեց շտոֆը և բաժակը, մոտեցավ նրան և յերեսին նայելով. «Եհե, — ասաց նա, — ելի՞ դու յերեացիր մեր կողմերում: Վարտեղից եղպես, աստուծով»: — Առաջնորդը խորհրդավոր աչքով արեց նրան և առածով պատասխանեց. «Բանջարանոցում թոշում, կանեփի եյի կացում, տատիկը քար նետեց, համաչկպավ: Ե՛, ձերոնք ի՞նչ հալի յեն»:

— «Մերոնց ի՞նչն ես հարցնում, — պատասխանեց իջևանատերը, շարունակելով այլարանական խոսակցությունը: — Են ե, ուզում եյին իրիկնաժամմի զանդերը տան, համայ յերեցկինը չի թողնում. տերտերը հյուր և գնացել, սատանաները գերեզմանոցում են»: — «Սուս կաց, քեռի, — առարկեց իմ շրջմոլիկը, — անձրե վոր գա, սունկ ել կլինի, իսկ վոր սունկ յեղավ՝ կլինի և կողովը: Իսկ հիմա՝ (այստեղ նա նորից աչքով արեց) կացինդ գոտիկդ խրի — անտառապահնը ման և գալիս: Զերդ բարեծննդություն՝ ձեր կենացը»: — Այդ խոսքերն ասելով նա վերցրեց բաժակը, խաչակնքեց և մի շնչով խմեց: Հետո ինձ զլուխ տվեց ու վերադաշտ իր տեղը:

Գողերի լեզվով արած այդ խոսակցությունից այն պահին յես վոչինչ չկարողացա հասկանալ, սակայն հետո արդեն գլխի ընկա, վոր խոսքը Յաիցկի զորքի մասին եր, վորը այդ ժամանակ նոր եր խաղաղվել 1772 թվի բունտից¹ հետո: Սավելիչը մեծ անբավականությամբ եր լսում նրանց: Կասկածանքով նա մեկ իջևանատիրոջն եր նայում, մեկ՝ առաջնորդին: Իջևանատունը, կամ այնտեղի լեզվով՝ ու մետը, ճանապարհից դուրս եր, տափաստանում, ամեն տեսակ զյուղից հեռու և շատ նման եր ավագականոցի: Սակայն ճարներս ի՞նչ եր: Ճանապարհը շարունակելու մասին մտածել անգամ չեր կարելի: Սավելիչը անհանգստությունն

¹ Խոսքը չքավոր կաղակների ապստամբության մասին ե, վորի ժամանակ գեն. Տրառեցնը զորքի զլուխ անցած կառավարչական զորամասը խսպառ բնաջնջեց ապստամբների ձեռքով: Շարժումը ձնշվեց ամենադան կերպով և կազակներց իլվեցին նրանց բոլոր զորական արտոնությունները:

ինձ մեծ զվարճություն եր պատճառում: Մինչ այս, մինչ այն՝ յես պատրաստվեցի գիշերելու և պառկեցի յերկար նստարանի վրա: Սավելիչը քաշվեց վառարանի վրա, իջևանատերը պառկեց հատակին: Շուտով ամբողջ խրճիթում խոմփոցն ընկալ և յես մեռելի քուն մտա:

Սուպուայան բավական ուշ դարթնելով յես տեսա, վոր փոթորիկը հանդարտվել ե: Արևը փայլում եր: Անծայրածիր տափաստանի վրա ձյունը փայլիլում եր շացնող շղարշով: Զիերը լծել ելին: Յես վճարեցի իջևանատիրոջը, վորը մեղնից այնպիսի չափավոր վարձ վերցրեց, վոր մինչև իսկ Սավելիչը չվիճեց նրա հետ և իր սովորության համաձայն չսկսեց սակարկել ու նրա յերեկով կասկածներն իսպառ փարատվեցին: Յես մոտ կանչեցի առաջնորդին, շնորհակալություն հայտնեցի նրա ոգնության համար և Սավելիչին հրամայեցի կես-մանեթ տալ նրան՝ վորպես արագի փող: Սավելիչը հոնքերը կիտեց: «Կես-մանեթ արագի համար, — ասաց նա, — եղ ինչ խարար ե: Նրա համար, վոր դուքարեհամեցիր նրան հետդ մինչև իջևանատիրուն հասցնել: Քո կամքն ե, տեր իմ, համա մենք ավելորդ կես-մանեթանոցներ չունենք: Ամենքին վոր արագի փող տանք, եղանես ինքներս շուտով սոված կմնանք»: Յես չեյի կարող վիճել Սավելիչի հետ: Համաձայն իմ խոստման, բոլոր գրամը լիովին դառնվում եր նրա անորինության տակ: Սակայն յես անբավական եյի, վոր չեմ կարողանում յերախտահատուց լինել մի մարդու, վորը ինձ փրկեց յեթե վոչ փորձանքից, ապա համենայն դեպս մի շատ անհաճո կացությունից: Լավ, — ասացի յես սառնարյուն. — յեթե չես ուղում կես-մանեթ տալ, ապա հանիր իմ շորերից մի վորեե բան: Նա շատ թեթև և հագնված: Տնտը նրան իմ նապաստակի մուշտակը:

«Տեր վողորմյա, Պյոտր Սնդրեյիչ, — ասաց Սավելիչը: — Նրա ինչին ե պետք քո նապաստակի մուշտակը: Նա շան նման առաջին պատհաճ կաբակում¹ արագի կտա»:

— Ծերուկ, եղ մեկն արդեն քո ցավը չի, — ասաց իմ շրջմուլիկը, — կեմեմ թե չե: Նորին բարեծննդությունն ինձ նվեր ե տալիս իր հագի մուշտակը, նրա մեծունական քեփն եղան և ուղում, իսկ քո ծառայական գործն ե՝ չվիճել և լսել նրան:

¹ Խմիչքների խանութ ցարական Թուսաստանում, Շմիկիտանա:

«Դու աստծուց չես վախենում, ավազակ, — պատասխանեց նրան Սավելիչը բարկացկոտ ձայնով: — Տեսնում ես, վոր յերեխի խելքը բան չի կտրում, իսկ դու ոգտվելով նրա միամտությունից, ուրախ ես նրան պլոկելու: Քու ինչին ե պետք մեծունական մուշտակը: Գու զոռով ել չես կարա վրա քաշի բո եղ անիծյալ ուսերիդո»:

— Խնդրում եմ խելքիդ չզուխես, — ասացի յես իմ վերակացույին. — իսկույն և եթ մուշտակը բեր եստեղ:

«Տեր իմ աստված, — հառաչեց իմ Սավելիչը: — Նապաստակի մուշտակը համարյա թե բոլորպին նոր ե: Գլուխը քարը, մւր եր, թե մի լավ մարդու եյինք տվել և վոչ թե ես հարբեցող տկլորին»:

Այնուամենայնիվ նապաստակի մուշտակը հայտնվեց: Գեղշուկը տեղնուտեղն սկսեց իր վրա չափել այն: Յեկ իսկապես մուշտակը, վոր ինձ արդեն փոքը եր գալիս, նրա համար մի քիչ նեղ եր: Սակայն, նա մի կերպ հնար դատավ և հադավ այն, կարերը տրաքացնելով: Քիչ մնաց, թե Սավելիչը վոռնար, լսելով թե թելերն ինչպես են ճայթում: Շրջմոլիկը չափազանց գոհ եր իմ նվերից: Նա ինձ մինչև կիրիտկա ճանապարհ դրեց և խոնարհ գլուխ տալով ասաց. «Շնորհակալ եմ, ձերդ բարեծննդություն: Ձեր լավության համար աստված ձեղ հատուցի: Հավիայան չեմ մոռանա ձեր շնորհները»: — Նա դնաց իր ճամպով, իսկ յես իմ ուղին շարունակեցի, ուշք չգարենելով Սավելիչի վրա և շուտով մոռացա թե նախորդ որվա բուքը, թե իմ առաջնորդին և թե նապաստակի մորթուց կարած մուշտակը:

Որենքուրդ հասնելով յես ուղղակի ներկայացա գեներալին: Յես տեսա բարձրահասակ մի տղամարդ, վորը սակայն ծերությունից արդեն կորացած թիկունք ուներ: Նրա յերկար մազերը բոլորովին ձերմակ եյին: Հին ու խամրած համազգեստը հիշեցնում եր Աննա Իոանովայի¹ ժամանակի ուղմիկներին, իսկ նրա խոսակցական լեզվի մեջ վորոշակի նկատելի յեր գերմանական առողանությունը: Յես նրան հանձնեցի հորս նամակը: Նրա անունը լսելով նա արագ ինձ նայեց. «Ասքաց իմ, — ասաց նա: — Կասես թե յերեկ եր, վոր Սնդրեյ Պետրովիշը քո տարիքի մարդ եր, իսկ հիմա տես, թե ինչ մի կտրիշ տղա ունի: Ա՛խ, շամանակ, շամանակ: — Նա բացեց նամակը և սկսեց կիսաձայն կարգաւ, իր

¹ Ռուս թագուհի, գահակալել ե 1730—1740 թ.:

Նկատողություններն անելով. «Վողորմած տեր Անդրեյ Կարլովիշ, հուսով եմ, վոր ձեր գերապատվությունը» սա ինչ ցևականություն ե: Թու, չի յել ամաչում: Իհարկե, դիսցիպլինան առաջին բանն ե, բայց միթե այսպիս են գրում հին կոմուպին¹... «Ճերդ գերապատվությունը չի մոռացելք... հմ... և... յերբ... հանդուցյալ ֆելմարշալ Մին...² արշավանքի... ինչպիս և... Կարլինկային... եհե, բրուդեր³. նա դեռ հիշում ե մեր հին չար աճ ճիռ թյունն երը: «Հիմա գանք գործին... Զեղ մոտ իմ փոքր վորդունա... հմ... ապահ եք վոսնու ձեռնոցն երումաց... Ի՞նչ ասել ե վոսնու ձեռնոցները: Դա յերեկ ուսական առած ե... Ի՞նչ ասել ե ապահել վոսնու ձեռնոցներում» — կրկնեց նա ինձ դառնալով:

— Դա նշանակում ե, — պատասխանեցի յես նրան վորքան կարելի յե անմեղ դեմքով. — նետս սիրալիր վարվել՝ վոչ այնքան լիստ, վորքան կարելի յե աղատ թողնել ինձ, — այդ ե նշանակում պահել վոզնու ձեռնոցներում:

«Հմ, հասկանում եմ. «Ա նրան աղատ չթողնել... չե, յերեւում ե՝ վոսնու ձեռնոցները ուրիշ բան են նշանակում: «Սրա հետ և... նրա պասպորտը»... Հապա ուր ե պասպորտը: Ահա, սա յե... «Գուրս գրել Սեմյոնովսկի գնդից»... Լավ, լավ, ամեն ինչ կարվի... «Ինձ թույլ կատա առանց աստիճանի դանազանության դրկել քեզ և... հին ընկերն ու բարեկամը» — ամ, վերջապես դիմի ընկավ... և այլն, և այլն... — «Ե, սիրելիս, — ասաց նա նամակը կարդալուց հետո և մի կողմ զնելով իմ պասպորտը, — ամեն ինչ կանենք. սպայի աստիճանով դու կտեղավորվես *** գունդը և վորովեսզի ժամանակ չկորցնես, ապա վաղն և եթ մեկնիր Բելոգորսկի բերդը, ուր դու կլինես կապիտան Միրոնովի՝ մի բարի և աղնիվ

¹ Kamerad (գերմ.) — ընկեր:

² Մինիս, Բուրխարդ-Քրիստոֆոր (1683—1767) — պետական գործիչ, վորմեծ ազդեցություն ուներ Անսա Խոաննովսյան որով: Մասնակցել ե մի շաբք պալատական հեղաշրջումների: 1741 թվին աքսորված ե յեղել Պետր, վորտեղից նրան վերադարձել ե Պյոտր III-ը: Վերջինիս գահընկեցությունից հետո ժառայել ե Յեկատերինա II-ի արքունիքում:

³ Bruder (գերմ.) — յեղբայր:

⁴ Պահպանված ե բնագրի գարձագածքը՝ «держать в ежевых руках», վոր նշանակում ե — մեկի նկատմամբ իիստ հոկողություն ունենալ, մեկին իր բռում պահել:

մարդու զորախմբում: Այնտեղ դու իսկական ծառայության մեջ կլինես, կվարժվես դիսցիպլինային: Որենքուրդում դու զործ չունես անելու. թերև գալը վաս ե յերիտասարդ մարդուն: Իսկ այսոր, ինձ մոտ ճաշելու համեցեք»:

«Քանի գնաց բանս ձախողվեց, — մտածում եյի յես. այ թե ուր բերեց ինձ այն, վոր յես համարյա թե մորս արգանդում արդեն գվարդիայի սերժանտ եյի: Ո՞ւր հասցրեց դա ինձ: *** գունդը և կիրգիզ-Կայսացկի¹ տափաստանների սահմանի վրա գտնվող մի խուլ բերդ...» Յես ճաշեցի Անդրեյ Կարլովիչի մոտ. յերեքով եյինք, կար և նրա ծեր աղյուտանտը: Գերմանական խիստ խնայողությունն եր իշխում նրա սեղանի վրա և յես կարծում եմ, վոր բերդապահ զորքի մեջ շապա ուղարկելու պատճառը մասամբ և այն եր, վոր նա չեր սիրում յերբեմնակի ավելորդ հյուր տեսնել իր՝ մենակյացի սեղանին: Մյուս որը յես հրաժեշտ տվի գեներալին և մեկնեցի իմ նշանակման վայրը:

¹ Կիրգիզ — կայսար կի տափաստանները — այսպէս եյին կոչում Ուրալ գետից արևելք ընկած հարթությունները (այժմյան Կաղախտանի սահմաններում):

ԳԼՈՒԽ III

Բ Ե Ր Դ Ը Լ

Մենք ամրոցում ենք ապրում,
Հաց ենք ուտում, ջուր խմում.
Հենց վոր գաժան թշնամին
Գա աչք դցի մեր հացին —
Հյուրին ինչույք կսարքենք՝
Կարտեչով¹ թոփ կը լցնենք:
Զինվորների յիրզ

Հնավանդ մարդիկ եյին, հայր իմ
«Նեղորոսւլ»²

Բելոգորսկի բերդը գտնվում էր Որենքուրգից քառասուն վերստի
վրա: Ճանապարհն ընկած եր Յակիկի զառիվայր ափով: Գետը դեռ
ևս չեր սառել և նրա կապարագույն ալիքները տիտուր սեխն եյին
տալիս սպիտակ ձյունով պատած միանման ափերին: Գետի այն
կողմը տարածվում եյին Կիրգիզյան տափաստանները: Յես խո-
րացա մտքերիս մեջ, մեծ մասամբ՝ տիտրալի: Կայազորային կյանքը
քիչ գրավչություն ուներ ինձ համար: Յես ջանում եյի պատկե-
րացնել կապիտան Միրոնովին, իմ ապագա պետին և տեսնում
եյի նրան վորպես խիստ, ցասկոտ մի ծերունի, վորը բացի իր
ծառայությունից, այլ բան չգիտե և պատրաստ ե ամեն մի չնչին
առիթով ինձ կալանքի յենթարկել, կապելով հաց ու ջրի: Մինչ
այս, մինչ այն՝ սկսեց մթնել: Մենք բավական արագ եյինք ըն-

¹ Հրետանու ոռւմք, մեջը կլոր գնդակներով լցված, վորոնք նույնպես կար-
առ են կոչվում:

² «Նեղորոսւլ» — կատակերգություն XVIII-րդ դարի նշանավոր ոռւս գրող
Ֆ. Ի. Ֆոնվիդինի (1745—1792):

թանում: «Բերդը հեռայ յե, — հարցրի յես իմ կառապանինք: —
«Մոտիկ ե, — պատասխանեց նա: — Հրեն, արդեն յերևում ե»: —
Յես նայեցի ամեն կողմ, ակնկալելով տեսնել ահարկու բաս-
տիոնները¹, աշտարակներն ու պարիսպը, բայց վոչինչ չտեսա,
բացի մի փոքրիկ դյուղից, վոր շրջապատված եր գերանահյուս
ցանկապատով: Դյուղի մի ծայրին յերեք թե չորս խոտաղեղեր
կային, կիսով չափ ձյունով ծածկված, մյուս կողմը՝ մի ծոմոված
քամաղաց, ծույլ կախված անշուք թևերով: «Հապա բերդը մւր ե», —
հարցրի յես զարմանքով: — «Հրեն, ելի», — պատասխանեց կառա-
պանը, ցույց տալով դյուղակը, և այդ խոսքերի հետ մենք մտանք:
Բերդի գոների մոտ մի հին, թուջե թնդանոթ տեսա. փողոցները
նեղ եյին և ծուռումուռ, խրճիթները ցած և մեծ մասամբ հարդով
ծածկված: Յես հրամայեցի քշել գեպի բերդապետի տունը և մի
րոպեյից հետո մեր կիրիտկան կանգ առավ փայտե տնակի առաջ,
վոր շինված եր բարձր տեղում, իր նման փայտաշեն յեկեղեցու մոտ:

Ինձ վոչ վոք չդիմավորեց: Յես գնացի գեպի հաշտը և բաց
արի նախասենյակի գուռը: Մի ծեր ինվալիդ, սեղանին նստած,
կապույտ կառըից կարկատան եր ձգում իր կանաչ համազգեստի
արմունկին: Յես հրամայեցի նրան զեկուցել իմ մասին: «Մտիր,
տեր իմ, — պատասխանեց ինվալիդը: — մերոնք տանն են: Յես
մտա մի մաքուր սենյակ, կահավորված հին յեղանակով: Անկյու-
նում ամանեղենի պահարանն եր. պատից կախած եր սպայական
դիպլոմը՝ ապակու տակ և շրջանակի մեջ: Նրա մոտ աչքի եյին
ընկնում եծանագին նկարներ, վոր պատկերում եյին կիստրինի:
և Ոչակովի առումը², ինչպես և հարսնացու ընտրելն ու կատվի
թաղումը³: Պատուհանի մոտ նստած եր մի պառավ կին՝ հագին
քաթիպա, զլիկն թաշկինակ կապած: Նա հետ եր տալիս թելի
կծիկը, վոր ձեռքերին ողակած պահում եր սպայական համա-
զգեստ հազած մի աչքը կույր ծերունին: «Ի՞նչ կկամենայիք,
տեր իմ», — հարցրեց պառավը շարունակելով իր քրծը: Յես պա-

¹ Բերդի, ամրոցի բուրգ:

² Կ իստրին՝ կյուսուրին, իր ժամանակ հայտնի բերդ եր Պրուսիայում:
Ոչակովի առումը տաճկական բերդ եր Սկ ծովի ափերին. ֆելդմարշալ Մինիլը այն
գրավել եր 1737 թ:

³ «Մկները թաղում են կատվին» — քաղաքական բովանդակություն ունե-
ցող ամենատարածված նկարներից մեկը. ուղղված եր Պյոտր I-ի դեմ:

տասխանեցի, վոր ծառայության եմ յեկել և ըստ իմ պարտավորության ներկայանում եմ իմ պարոն կապիտանին և այդ խոսքերի հետ այն և ուզում եյի գիմել միաչքանի ծերուկին, կարծելով թե բերդապետը նա յե, սակայն տանտիրուհին ընդհատեց իմ անգիր արած ճառը: «Հիվան Կուզմիչը տանը չե, — պատասխանեց նա. — հյուր և գնացել հայր Գերասիմի մոտ. ասենք, միենույն ե, տեր իմ, — յես նրա տիրուհին եմ: Խնդրեմ, բարով յեկար, հազար բարի: Նստիր, տեր իմ»: Նա ձայն տվեց աղջկան և նրան հրամայեց կանչել ուրյադնիկին: Ծերուկն իր միակ աշքով հետաքրքրությամբ դիտում եր ինձ: «Համարձակվում եմ հարցնել, — ասաց նա. — դուք վ՞որ գնդում եք հաճել ծառայել»: Յես բավարարեցի նրա հետաքրքրությունը: «Համարձակվում եմ հարցնել, — շարունակեց նա, — իսկ ինչո՞ւ հաճեցիք գվարդիայից դուրս գալ և մտնել բերդապահ զորքի մեջ»: Յես պատասխանեցի, վոր այդպես եր իմ պետի կամքը: «Յերեկի թե գվարդիայի սպային անվայել արարմունքների համմրա, — շարունակեց անխոննջ հարցու փորձ անողը: — «Ճերիք և գատարկ դուրս տաս, — ասաց նրան կապիտանի կինը. — դու տեսնում ես, վոր յերիտասարդը ճանապարհին հոգնել ե, նա զլուխ չունի քեզ հետ խոսելու... (ձեռքերդ ուղիղ բռնիր...): Իսկ դու, տեր իմ, — շարունակեց նա ինձ գառնալով, — մի տիրի, վոր քեզ նետել են մեր այս խուլ տեղերը: Դու վոչ առաջինն ես, վոչ՝ վերջինը: Կամքերես, կոռվորես: Շվարբին, Ալեքսեյ Իվանիչը ահա հինգ տարի յե, վոր տեղափոխված ե մեզ մոտ—մարդասպանության համար: Աստված ե իմանում, թե ինչ մեղք ե նրա միտքը պղտորել. նա, գիտես, քաշաքից դուրս ե գնում մի պորուչիկի հետ. հա, թրերն ել հետներն են վերցնում ու մեկ ել՝ սկսում են միմյանց ծակոտել, իսկ Ալեքսեյ Իվանիչը թրով սպանում ե պղուչիկին, այն ել՝ յերկու վկաների ներկայությամբ: Ինչ պիտի անես, մարդ աչքը բաց արած շարած, մեկ ել տեսնում ե, վոր մեղքի մեջ ե ընկել»:

Այդ բոպեյին ներս մտավ ուրյագնիկը՝ յերիտասարդ ու բարեկազմ մի կազակ: «Մակսիմիչ, — ասաց նրան կապիտանի կինը: — Պարոն սպային տար բնակարան հատկացրու, միայն թե՝ քուրը»: «Ասում եմ, Վասիլիսա Յեկորովնա, — պատասխանեց ուրյագնիկը: — Արդյոք լավ չե՞մ լինի նորին բարեծննդությանը տեղափորել Իվան Պալեժակի մոտ: — «Չայնդ, Մակսիմիչ, — ասաց կա-

պիտանի կինը. — Պալեժակի մոտ առանց այն ել նեղվածք ե. դե նա իմ կնքահայրն ե և գիտե, վոր մենք իր պետերն ենք: Պարոն սպային տար... Ի՞նչպես ե ձեր անուննայրանունը, տեր իմ»: — «Պյուտր Անդրեյիչ»: — «Պյուտր Անդրեյիչին տար Սեմյոն Կուզովի մոտ: Սրիկան իր ձին մեր բանջարանոցն եր թողել: Հմ, Մակսիմիչ, ամեն ինչ բարեհաջող ե»:

— Ամեն ինչ, փառք աստծո, խաղաղ ե, — պատասխանեց կաղակը. — միայն թե կապրալ¹ Պրոխորովը բաղնիքում կռվել ե Ուստինյա Նեգուլինայի հետ մի աման տաք ջրի համար:

«Իվան Իգնատիչ, — ասաց կապիտանի կինը մի աչքով կռւյր ծերուկին: — Քննիր Պրոխորովի և Ուստինյայի գործը՝ ով ե արդար, ով՝ մեղավոր և յերկուսին ել պատժիր: ԴԵԿ, Մակսիմիչ, գնա, աստված քեզ հետ: — Պյուտր Անդրեյիչ, Մակսիմիչը ձեզ կտանի ձեր բնակարանը»:

Յես հրաժեշտ տվի: Ուրյագնիկն ինձ տարավ գետի բարձր ափին կանգնած, բերդի հենց ծայրին գտնվող խրճիթը: Խրճիթի կեսը բռնել եր Սեմյոն Կուզովի ընտանիքը, մյուս կեսն ինձ հատկացրին: Դա մի բավական մաքուր սենյակ եր, միջնորմով կիսած: Սավելիչը սկսեց կարգի բերել մեր իրերը, յես սկսեցի դուրս նայել նեղլիկ պատուհանից: Իմ առջև ընկած եր տխուր տափաստանը: Շեղակի կանգնած եյին մի քանի խրճիթներ, փողոցում մի քանի հավեր եյին ման գալիս: Մի պառավ կին տան առաջ տաշտի մոտ կանգնած, կանչում եր խոզերին, վորոնք նրան պատասխանում եյին ուրախ խանչյունով: Ահա թե ինչ տեղում եյի յես դատապարտված անցկացնել իմ յերիտասարդությունը: Թախիծը ինձ պատեց. յես հեռացա պատուհանից և առանց ընթրիքի պառկեցի քնելու, ուշագրություն չփարձնելով Սավելիչի հորդորանքներին, վորը սրտաբեկ ձայնով կրկնում եր. «Ճեր իմ աստված. վոչինչ չի ուզում ուտել... Հապա ինչ կասի տիրուհին, յեթե յերեխան հիվանդանա»:

Մյուս որը առավոտյան յես նոր եյի սկսել շորերս հագնել, յերբ իմ սենյակը մտավ մի յերիտասարդ սպա, հասակով վոչ բարձր, թուխ և խիստ տգեղ, բայց՝ չափազանց կենդանի դեմքով: «Ներեցեք ինձ, — ասաց նա քրանսերեն, — վոր յես առանց ձե-

¹ Կրտսեր յենթասպա:

վականության յեկել եմ ձեղ հետ ծանոթանալու։ Յերեկ իմացա ձեր գալը. մարդկային զեմք տեսնելու ցանկությունն ի վերջո այնպես գրավեց ինձ, վոր յես չհամբերեցի։ Այս վիճակը դուք կհասկանաք, յերբ մի առ ժամանակ կապրեք այստեղ։ Յես գլխի ընկա, վոր նա մենամարտի հետեանքով գվարդիայից դուրս գրված սպան ե։ Մենք իսկույն և եթ ծանոթացանք։ Շվարբինը այնքան ել հիմար չեր։ Նրա խոսակցությունը սրամիտ եր և հետաքրքիր։ Մեծ աշխուժով նա ինձ նկարագրեց բերդապետի ընտանիքը, նրա շրջապատը և վայրը, ուր ինձ բերել, հասցրել եր իմ ճակատագիրը։ Յես անկեղծ սրտով ծիծաղում եյի, յերբ ներս մտավ այն ինվալիդը, վոր բերդապետի նախասենյակում իր համազգեստն եր կարկատում, և Վասիլիսա Յեգորովնայի անունից ինձ ճաշի հրավիրեց նրանց մոտ։ Շվարբինը ցանկություն հայտնեց ինձ հետ միասին գնալու։

Եերդապետի տանը մոտենալիս փոքրիկ հրապարակի վրա մենք տեսանք քսանի չափ ծեր ինվալիդներ — յերկար ծամերով և յեռանկյունի գլխարկներ ծածկած։ Նրանք ճակատ եյին կազմել։ Առջեւում կանգնած եր բերդապետը՝ մի առույգ և բարձրահասակ ծերունի, գլխին թասակ և հադին դեղնավուն խալաթ։ Մեզ տեսնելով նա մոտեցավ, մի քանի սիրալիր խոսքեր ասաց ինձ և նորից սկսեց հրամաններ տալ։ Մենք կանգ առանք, վոր դիմենք վարդությունը, սակայն նա ինդրեց մեզ գնալ Վասիլիսա Յեգորովնայի մոտ, խոստանալով մեր հետեից ինքն ել գալ։ «Իսկ այստեղ, — ավելացրեց նա, — նայելու բան չունեք»։

Վասիլիսա Յեգորովնան մեզ ընդունեց պարզ ու սրտաբաց և ինձ հետ վարվեց վորպես վաղեմի ծանոթ։ Ինվալիդը և Պալաշկան սեղանն եյին ծածկում։ «Այս ի՞նչ ե, իմ իվան կուզմիչն այսոր խելքը ուսումի յե տվել, — ասաց բերդապետի կինը։ — Պալաշկա, բարինին ճաշի կանչիր։ Խակ Մաշան ուր ե»։ — Այդ բոպեյին ներս մտավ տասնութ տարեկան մի աղջիկ, կլոր, կարմիր յերեսով, բացշիկահեր մազերով՝ կոկ սանրված ականջների յետել, վարոնք ասես վառվելիս լինեյին։ Առաջին հայացքից նա ինձ այնքան ել դուր չեկավ։ Յես նրան նայում եյի կանխակալ կարծիքով։ Մաշային Շվարբինն ինձ նկարագրել եր վորպես մի կատարյալ հիմար աղջիկ։ Մարիա Իվանովնան նստեց անկյունում և սկսեց կար անել։ Մինչ այս, մինչ այն՝ մեզ ըշչի մատուցին։

Վասիլիսա Յեգորովնան ամուսնուն չտեսնելով, Պալաշկային յերկը ըորդ անգամ ուղարկեց նրա հետեւից։ «Բարինին կասես, վոր ախր հյուրերը սպասում են, կերակուրը կսառչի. վառք աստծո, ուսուցումը ձեռքից չի փախչի. դեռ այնքան գոռա վոր»։ — Կապիտանը շուտով հայտնվեց միահջանի ծերուկի ուղեկցությամբ։ «Սա ի՞նչ բան ե, այ մարդ, — ասաց նրան կինը։ — Ճաշը վաղուց դրել ենք, համա քեզ կանչել չի լինում»։ «Լսում ես, Վասիլիսա Յեգորովնա, — պատասխանեց Իվան կուզմիչը, — ծառայությունով եյի գրադված, դինվորներին վարժեցնում եյի»։

«Ե՞», հերիք յեղավ, — առարկեց կապիտանի կինը։ — Հենց մի գլուխ այն եմ լսում, վոր զինվորներին վարժեցնում ես։ Վոչ նրանք ծառայություն սովորող են, վոչ ել դու մի բան ես հասկանում դրանից։ Լավ եր, թե տանը նստեյիր և աստծուն աղօթք անեյիր, այդպես ավելի լավ կլիներ։ Թանկագին հյուրեր, համեցեք նստեք»։

Նստեցինք ճաշի։ Վասիլիսա Յեգորովնան չեր լուսմ և վոչ մի րոպե ու հարցերի տարափ տեղաց գլխիս. ովքի՞ր են իմ ծնողները, կենդանի՞ յեն արդյոք, վիրտեղ են ապրում նրանք և ի՞նչ հարստության տեր են. Լսելով, վոր հայրս յերեք հարյուր զյուղացիներ ունի՝ «հեշտ ե, — ասաց նա. — այ թե հարուստ մարդիկ կան աշխարհում։ Խակ մենք, տեր իմ, ունենք-չունենք մի աղջիկ ունենք՝ Պալաշկան, բայց դե փառք աստծու, քիչ-միչ ապրում ենք։ Ցափ այն ե — Մաշան մարդու տալու յե, խակ ունեցած ոժիտն ի՞նչ ե — մի խիտ սանր, ավելն¹. ու մեկ ել մի մանեթ փող (մեղաք քեզ աստված) — բաղանիք գնալու համար։ Լավ ե, թե գտնվի մի բարի մարդ, թե չե՝ հավիտյան տանը կմնա իբրև հարսնացու։ Յես նայեցի Մարիա Իվանովնային. նա ամբողջովին կարմրեց և մինչև խակ արցունքներ գլորվեցին նրա ափսեյի մեջ։ Յես խճացի նրան և շտապեցի խոսակցությունը փոխել։ «Լսել եմ, — ասացի յես բավական անտեղի, — վոր բաշկիրները պատրաստվում են հարձակում գործել ձեր բերդի վրա»։ — «Այդ ումից ես լսել, տեր իմ», — հարցըց Իվան կուզմիչը։ «Որենքուրդում ինձ այդպես ասացին», — պատասխանեցի յես։ «Դատարկ խոսքեր են, — ասաց

¹ Ուռաները հիմա յել բաղանիքներում ոգտվում են ցարասենու (կեչու) բարակ ճյուղերից կապած տերեւախիտ ավելով. քրտնասենյակի տախտակամածը բարձրացած, նրանք այդ ավելով հարվածներ են տեղում շողեպատ մարմիններին։

բերդապետը: — Մեզանում վաղուց ե, վոր վոչինչ չի լսվում: Բաշ-
կիրները վախկոտ ժողովուրդ են, կիրգիզներին ել լավ դաս ենք
տվել: Յերեկի թե վրա չտան. իսկ թե վրա տան, մի այնտեսակ
սասան տամ նրանց, վոր տաս տարով խաղաղվենք: — «Իսկ դուք
չեք վախենում, — շարունակեցի յես, դիմելով կապիտանի կնոջը, —
մալ այսպիսի վտանգների յենթակա բերդումք: — «Ծովորություն ե
դարձել, տեր իմ, — պատասխանեց նա: — Քսան տարի կլինի, վոր
մեզ գնդից տեղափոխել են այստեղ և աստված գիտե, թե ինչպես
եյի վախենում այդ անիծյալ անհավատներից: Պատահում եր, հենց
վոր տեսնում եյի լուսանի մորթուց կարած նրանց գդակներն ու
լսում եյի նրանց ճղճղոցը, հավատում ես, յեղբայր, սիրան փորս
եր ընկնում: Բայց հիմա այնպես եմ սովորել, վոր տեղիցս ել չեմ
շարժվի, յեթե գան մեզ ասեն, թե չարագործները վխտում են
բերդի մոտերքում:

«Վասիլիսա Յեղորովնան քաջարի կին ե,— ծանր-ծանր նկատեց
Շվաբրինը: — Իվան Կուզմիչը կարող է հաստատել այդ:

«Այն, գիտե՞ս, — ասաց իվան Կուզմիչը. — իմ կինը վախկոտներից եք»:

«Իսկ Մարիա Իվանովսկան, — հարցը ի յես. — նա յիշլ ձեզ նման պահ կեց:

«Մաշան արի, — պատասխանեց նրա մայրը: — Վոչ, Մաշան վախկոտ ե, մինչև հիմա յել նա չի կարողանում լսել հրացանի կրակոցը. հենց իսկույն կդողա: Իսկ յերբ յերկու տարի առաջ իմ անվանակոչության որը բան հնարեց իվան Կուղմիչը՝ կրակեր մեր թնդանոթը, իմ աղավնյակս քիչ եր մնում վախից այն աշխարհը գնար: Այդ սրից մենք չենք կրակում անիճյալ թնդանոթը».

Մենք վեր կացանք: Կապիտանն ու նրա կինը գնացին քնելու, իսկ յես գնացի Շվաբրինի մոտ, վորի հետ և անցկացրի ամբողջ յերեկոն:

ΦΛΗΤΗ ΙV

U b i u r u s L

— ԴԵՒ, խնդրեմ պահիր դու պոզիտուլան¹.
Տես՝ ինչպես կծակեմ քո Փիզուլան:

ԿՆՅԱԺՆԻՆ

Անցավ մի քանի շաբաթ և իմ կյանքը Բելոգորսկու ըերդում դարձավ վոչ միայն տանելի, այլ և հաճելի։ Բերդապետի տանն ինձ քննունում եյին վորպես մի հարադարի։ Այս ու կին ամենաահարգելի մարդիկն եյին։ Իվան Կուզմիչը, վոր զինվորի վորդի լինելով սպայության աստիճանին եր հասել, մի անուսում ու պարզ մարդ եր, սակայն՝ շատ աղնիվ և բարի։ Կին եր կառավարում նրան, և դա հարմարվում եր նրա անհոգության հետ։ Վասիլիսա Յեղորովնան ծառայության գործերին ել այնպես եր նայում, ինչպես իր տնտեսության գործերին և բերդը կառավարում եր ճիշտ այնպես, ինչպես իր տնակը։ Կարճ միջոցից Մարիա Խվանովնան դադարեց ինձնից քաշվել։ Մենք ծանոթացանք։ Նա ինձ յերեաց վորպես մի խոհեմ և զյուրազգաց աղջիկ։ Աննկատելի կերպով յես կապվեցի այդ բարի ընտանիքի հետ, մինչեւ իսկ Խվան Խգնատիչի՝ միաշքանի կայազորային պորութիկի² հետ, վորի մասին Շվաբրինը հնարել եր, թե իբր նա անթույլատրելի կապ ունեցել Վասիլիսա Յեղորովնայի հետ, վոր ճշտության ստվեր անդամ հռւներ. սակայն — դա Շվաբրինի հոգը չեր։

Ինձ տվին սպայի աստիճան։ Մառայությունն ինձ չեր նեղում։
Աստիճան պահպանած այս բերդում փոչ զորատեսեր կային, փոչ՝

¹ Մարմնի դիրքը սուսեռամբարահի ժամանակ:

² Սպայական կրասեր առահճան:

3 Կապիտանի աղքիկը

վարժություններ, վոչ ել պահակային հսկողություն։ Բերդապետն
իր անձնական ցանկությամբ յերբեմն վարժեցնում եր զինվորնե-
րին, բայց դեռ չեր կարողացել սովորեցնել, վոր նրանք բոլորն
ել իմանային, թե վորն և աջ կողմը, վորը՝ ձախ։ Շվարրինի
մոտ մի քանի ֆրանսերեն գրքեր կային։ Յես սկսեցի կար-
դալ և իմ մեջ արթնացավ սեր դեպի գրականությունը։ Առա-
վոտները յես կարդում եյի, վարժվում թարգմանությունների,
հաճախ և բանաստեղծություններ եյի շարադրում։ Համարյա միշտ
ճաշում եյի բերդապետի մոտ, վորտեղ և անց եյի կացնում որվա-
նացորդը և ուր յերեկոները յերբեմն գալիս եր հայր Գերասիմը
իր կնոջ՝ Ակուլինա Պամֆիլովայի հետ, վորը առաջին համբավա-
րեր կինն եր ամբողջ թաղում։ Հասկանալի յե, վոր Ալեքսեյ Իվա-
նովիչ Շվարրինի հետ յես տեսնվում եյի ամեն որ, սակայն քանի
գնում նրա զբույցն ինձ տհաճ եր դառնում։ Նրա ամենորյա կա-
տակները բերդապետի ընտանիքի հասցեյին ինձ բոլորվին դուր
չեյին գալիս, մանավանդ նրա կծու նկատողությունները Մարիա
Խվանովայի մասին։ Բերդում ծանոթների այլ շրջան չկար,
բայց յես ուրիշը չեյի ել ուզում։

Զայած նախագուշակումներին, բաշկիրները չեյին հուզվում։
Խաղաղություն եր իշխում մեր բերդի շուրջը։ Սակայն այդ խա-
ղաղությունը խզվեց հանկարծակի յերկպառակությամբ։

Յես արդեն ասացի, վոր պարապում եյի գրականությամբ։ Իմ
այս փորձերը այն ժամանակվա համար նշանակալից եյին և Ալեք-
սանդր Պետրովիչ Սումարոկովը¹ մի քանի տարի անց չափից գուրս
գովեց գրանք։ Մի անգամ ինձ հաջողվեց մի փոքրիկ յերդ գրել
վորից յես շատ գոհ եյի։ Հայտնի յե, վոր գրողները հաճախ խոր-
հուրդներ ունենալու պատրվակով բարեհաճ լսողներ են փնտրում։
Յեվ այդպես, յերգո արտադրելուց հետո յես այն տարա Շվարրինի
մոտ։ ամբողջ բերդում միայն նա կարող եր գնահատել բանա-
ստեղծի գործը։ Կարճ առաջաբանից հետո գրպանից յես հանեցի
իմ տեսարը և կարդացի նրան հետեյալ տողերը։

¹ Ա. Գ. Սումարոկով (1718—1777) — բանաստեղծ, աղնվականների
գրականության հիմնադիրներից մեկը, առաջին ոսւմ գրամատուրդը և արիս-
տոկրատիկ պոեզիայի այսպես կոչված կլասսիցիզմի ամենափայլուն ներկայա-
ցուցիչը, վորի ստեղծագործությունները մեծ համբավ են ունեցել մասնավո-
րապես ժամանակի արտօնյալ դասերի մեջ։

Յես իմ սիրային մտքերս այրելով,
Զանում եմ սիրուն դեմքն այն մոռանալ.
Յեվ մի, Մաշայից յես խուսափելով,
Աղատություն եմ խորհում ստանալ։
Սակայն աչքերը, վոր ինձ գերեցին,
Աչքիս առջն են ամեն մի ըսպե.
Յեվ խոռվել են նրանք իմ հոգին,
Յեվ իմ հանգիստն են նրանք խորտակել։
Զախորդությունն իմանալով իմ,
Ա՛լի, Մաշա, գթա, խոհա ինձ վրա,
Տնանելով վիճակն իմ այս դառնագին,
Յեվ վոր քեզնով եմ գերված յես ահա։

— Հավանո՞ւմ ես, — հարցրի յես Շվարրինին, նրանից գովա-
սանք սպասելով, վորպես մի տուրք, վորն ինձ անպայման հաս-
նում ե։ Սակայն ի մեծ տհաճություն իմ, միշտ ներողամիտ Շվար-
րինը վճռականապես հայտնեց, վոր իմ յերդը լավը չե։

— Ինչո՞ւ համար, — հարցրի յես տհաճությունս թաքցնելով:
«Նրա համար, — պատասխանեց նա, — վոր այդպիսի բանա-
ստեղծությունները արժանի յեն իմ ուսուցիչ Վասիլի Կիրիլիչ
Տրեղյակովսկուն¹ և ինձ շատ են հիշեցնում նրա սիրային կուպ-
ւետները»։

Այս ասելով նա ինձնից առավ տեսրակը և սկսեց անողորմա-
բար վերլուծել ամեն մի տունը և ամեն մի բառը, ամենակծու-
յեղանակով ինձ ծաղրելով։ Յես չհամբերեցի, նրա ձեռքից խեցի
տեսրակս և ասացի, վոր այլևս յերբեք նրան ցույց չեմ տա իմ
ստեղծագործությունները։ Շվարրինը ծաղրեց և՝ այդ սպառնա-
վիքը։ «Ճեսնենք, — ասաց նա, — խոսքդ կապահես թե չե. բանա-
ստեղծներին ունինդիր ե պետք, ինչպես Իվան Կուզմիչին ողու-
փոքրիկ գրափինը՝ ճաշից առաջ։ Իսկ ով ե այդ Մաշան, վորին
դու քննույշ կիրք և սիրային տանջանք ես բացատրում։ Զլինի՝
թե Մարիա Իվանովան ե»։

¹ Վ. Կ. Տրեղյակով (1703—1769) — պոետ, քննադատ և թարգմա-
նիչ, վորը Լոմոնոսովի հետ միասին համարվում է XVIII դարի ոսւմ գրակա-
նության հիմնադիրներից մեկը։ Նրա բանաստեղծությունները աչքի ելին ընկ-
նում ծայրահեղ ծանր ու ճոռոմ վոճով, վոր և Տրեղյակովսկուն դարձրել ե ժա-
մանակակիցների և հետնորդների մշտական ծաղրանքի առարկան։

— Քո գործը չե, — ասացի յես հոնքերս կիտելով, — թե ով ե այդ Մաշան: Յես վոչ քո կարծիքն եմ ուզում, վոչ ել քո յենթադրությունները:

«Ոհո՛: Ինքնասեր բանաստեղծ և համեստ սիրելան, — շարուշակեց Շվաբրինը ինձ ավելի ու ավելի գրգռելով. — բայց լսիր բարեկամական խորհուրդս. յեթե ուզում ես նպատակիդ հասնել, խորհուրդ եմ տալիս գործել վոչ թե յերգերով»:

— Այդ ի՞նչ ե նշանակում, պարհն: Խնդրեմ բացատրություն տաս:

«Հաճույքով: Դա նշանակում ե, զոր յեթե դու ուզում ես, զոր Մաշա Միրոնովան իրիկնամտին քեզ մոտ գա, ապա քնքույշ գուվասանքների փոխարեն նրան մի զույգ գինդեր նվիրիս:

Արյունս յեռաց: «Իսկ ինչո՞ւ համար դու նրա մասին այդպիսի կարծիք ունես», — հարցը յես, դժվարությամբ զսպելով իմ դայընութեւ:

«Նրա համար, — պատասխանեց նա դժոխային քմծիծաղով, — վոր փորձով գիտեմ նրա վարքն ու բարքը»:

— Ստում ես, գարշելի, — գոռացի յես կատաղած, — դու ստում ես ամենաամոթ կերպով:

Շվաբրինի դեմքն այլայլվեց: «Այս մեկը դու չես մարսի, — ասաց նա թես սեղմելով: — Դուք ինձ սատիսֆակցիա¹ կտաք»:

— Խնդրեմ, յերբ ուզում ես, — պատասխանեցի յես ուրախացած: Այդ բովային յես պատրաստ եյի հոշոտել նրան:

Յես իսկույն և եթ գնացի իվան Իգնատիչի մոտ և նրան տեսա թերասեղը ձեռքին. բերդապետի կնոջ հանձնաբարությամբ նա սունկ եր շարում թելի վրա, ձմեռվա համար չորացնելու նպատակով: «Ա», Պյուտր Անդրեյիչ, — ասաց նա ինձ տեսնելով. — բարով յեկաք: Բարի լինի գալներդ, համարձակվում եմ հարցնել՝ ի՞նչ գործով»: Յես կարճառոտ պարզեցի նրան, վոր ընդհարվել եմ Ալեքսեյ իվանիչին հետ, իսկ նրան՝ իվան իգնատիչին խնդրում եմ, վոր իմ սեկունդանտը² լինի: Իվան իգնատիչը ուշագրությամբ լսեց ինձ, յերեսիս չոելով իր միակ աչքը: «Դուք հրամմեցիք

¹ Սատիսֆակցիա (լտ.) — բավարարումն, սատիսֆակցիա պահանջնել — ներսություն խնդրել տալ հասցրած վիրափորանքի համար կամ պահանջնել, վոր հակառակորդը մենամարտի դուրս գտ:

² Մենամարտողներից մեկի միջնորդը և վկան:

ասել, — դարձավ նա ինձ, — վոր ուզում եք Ալեքսեյ իվանիչին սրախողիսող անել և կամենում եք, վոր յես դրան ներկա լինեմ: Այնպես չե, համարձակվում եմ հարցնել»:

— Իսկ և իսկ:

«Ի սեր աստուծո, Պյուտր Անդրեյիչ: Այդ ի՞նչ եք հնարել: Դուք և Ալեքսեյ իվանիչը իրար մի թեթև հայհոյել եք, ի՞նչ մեծ բան ե յեղել վոր, հո աշխարհը չքանդվեց: Նա ձեզ հայհոյեց, դուք ել նրան մի պինդ ուշունց տվեք. նա ձեր քիթ ու մոռւթին տվեց, դուք ել նրա ականջին, մի ուրիշ տեղին տվեք և բաժանվեք, իսկ մենք արդեն ձեզ կիաշտեցնենք: Թե չե, ի՞նչ մի բարի գործ ե իր մերձակից մարդուն սրախողիսող անելը, համարձակվում եմ հարցնել: Լավ ե, յեթե դուք նրան սրախողիսող անեք, աստված նրա՝ Ալեքսեյ իվանիչի հետ. յես ել նրան այնքան չեմ սիրում: Հապա յեթե նա ինքը ձեզ ծակեց: Ինչի՞ նման կլինի դա: Ո՞վ կիարվի, համարձակվում եմ հարցնել»:

Խոհեմ պորուչիկի գատողություններն ինձ չխրատեցին: Իմ դիտավորությունն անխախտ մնաց: «Ինչպես կուզեք, — ասաց իվան իգնատիչը. — արեք այն, ինչ խելքներդ կկտրի: Համար յես ինչո՞ւ համար պետք ե այնտեղ վկա լինեմ, ինչի՞ց դրդված: Մարդկի կովում են. ի՞նչ մի չտեսնված բան ե վոր, համարձակվում եմ հարցնել: Փառք աստծո, շվեդների դեմ ել կոփի եմ գնացել, թուրքերի յել. այնքան բան եմ տեսել, վոր կշատցել եմ նայելուց»:

Յես մի կերպ սկսեցի բացատրել նրան սեկունդանտի պարտականությունը, սակայն իվան իգնատիչը ամենեին չկարողացավ հասկանալ ինձ: «Զեր կամքն ե, — ասաց նա: — Յեթե յես պետք ե միջամտեմ այդ գործին, ապա լավ կլինի գնամ իվան Կուզմիչի մոտ և ըստ որինի ծառայության՝ տեղեկացնեմ նրան, վոր փորտեցիայի մեջ չարագործություն ե նյութվում ընդեմ պետական շահերի. բերդապետն արդյոք չլի բարեհաճի պատշաճ միջացներ ձեռք առնել»...

Յես վախեցա և սկսեցի իվան իգնատիչին խնդրել, վոր նա վոչինչ չափ բերդապետին. զուսով համոզեցի նրան. նա ինձ խոսք տվեց և յես վճռեցի ձեռք քաշել նրանից:

Իմ սովորության համեմատ յերեկոն յես անցկացրի բերդապետի մոտ: Յես ջանում եյի ուրախ և հանգիստ յերեալ, վորպեսզի վոչ մի կասկած չհարուցեմ և խուսափեմ ձանձրալի հարցերից,

բայց իսոստովանում եմ, վոր չունեյի այն սառնասրտությունը, վորով միշտ հպարտանում են նրանք, ովքեր իմ վիճակումն են դտնվել: Այդ յերեկո յես տրամադրված եյի քնքշանքով ու գորովանքով: Մարիա իվանովան ինձ դուր եր գալիս սովորականից ավելի: Այն միտքը, վոր մի գուցե նրան վերջին անգամն եմ տեսնում, — նրան իմ աչքերում ինչ վոր հուզիչ պատկեր եր տալիս: Շվարբինն ել յեկավ այնտեղ: Յես նրան մի կողմ տարձա և տեղեկացրի իվան իգնատիչի հետ ունեցած իմ խոսակցության մասին: «Մեր ինչին են պետք սեկունդանտները, — ասաց նա ինձ սառնությամբ. — առանց նրանց ել կարող ենք»: Մենք պայմանավորվեինք մենամարտել բերդի մոտ գտնվող դեղերի այն կողմում և այնտեղ լինել հաջորդ որը առավոտյան ժամը յոթին: Հստ յերեվութին մենք այնքան սիրալիր եյինք խոսում, վոր իվան իգնատիչն ուրախությունից բերանից թոցրեց. «Ա՛յ, ապրեք, — ասաց նա ինձ գոհունակ դեմքով, — վատ հաշտությունը լավ և բարի վեճից, թեպետ և անպատիվ ե, բայց՝ վողջ-առողջ կմնաս»:

«Ի՞նչ, ի՞նչ, իվան իգնատիչ, — ասաց բերդապետի կինը, վորը անկյունում նստած խաղաթղթերով ֆալ եր բացում. — յես լավ չլսեցի»:

Իվան իգնատիչը նկատելով իմ անբավականության նշանները և հիշելով իր խոստումը, շփոթվեց և չգիտեր ինչ պատասխանի: Շվարբինը նրան ոգնության հասավ:

«Իվան իգնատիչը, — ասաց նա, — գովում ե մեր հաշտվելը»:
— Իսկ այդ ժամ հետ ես դու կովել, տեր իմ:

«Մենք՝ քիչ մնաց, վոր բավական թունդ կովեյինք Պյոտր Անդրեյիչի հետ»,
— ինչի համար վոր:

«Մի դատարկ բանի պատճառով. մի յերդի պատճառով, Վասիլիսա Յեգորովինա»:

— Դուք ել բան եք դտել իրար հետ կովելու: Մի յերդի համար... Ախր այդ ի՞նչպես պատահեց:

«Ահա թե ինչպես. Պյոտր Անդրեյիչը վերջերս մի յերդ եր հնարել և այսոր յերգեց ինձ, յես ել իմ սիրած յեղանակն սկսեցի:

Աղջիկ կապիտանի,
Կես գիշերին զբոսանք մի անի:

Գժտությունն սկսվեց: Պյոտր Անդրեյիչը քիչ եր մնում բարկանար, բայց հետո միտք արեց, վոր ամեն վոք աղատ և յերգել այն, ինչ իր քեզը տալիս ե: Դրանով ել բանը վերջացավ:

Քիչ մնաց, վոր Շվարբինի անամոթությունն ինձ կատաղեցներ, սակայն բացի ինձանից վոչ վոք չհասկացավ նրա կոպիտ ակնարկները, համենայն դեպս վոչ վոք դբանց վրա ուշադրություն չգարձեց: Յերգերից ել պրծնելով, խոսակցությունն անցավ բանաստեղծներին և բերդապետը նկատեց, վոր նրանք բուլորն ել անուղղելի ու թունդ հարբեցող մարդիկ են և բարեկամաբար ինձ խորհուրդ ավեց թողնել վոտանավորներ գրելը, վորպես ծառայության գործին ընդդեմ և վոչ մի լավ բանի չհասցնող գրաղմունք:

Շվարբինի ներկայությունն ինձ համար անտանելի յեր: Յես շուտով հրաժեշտ տվի բերդապետին և նրա ընտանիքին: Տուն գալով յես գննեցի իմ սուսերը, փորձեցի նրա ծայրը և պառկեցի քնելու, Սավելիչին հրամայելով արթնացնել առավոտյան ժամը վեցն անց:

Մյուս որը նշանակված ժամին յես արդեն կանգնել եյի դեղերի այն կողմը, սպասելով իմ հակառակորդին: Շուտով նա յել յերեաց: «Կարող են մեզ տեսնել» — ասաց նա ինձ. — պետք և շտապելու: Մենք հանեցինք համազգեստները, մասցինք միայն կամզոլներով¹ և մերկացրինք սուսերները: Այդ ըոպեյին գեղերի յետեցից հանկարծ հայտնվեց իվան իգնատիչը և հինգ հոգի ինվալիդներ: Նա պահանջեց, վոր գնանք բերդապետի մոտ: Դժկամությամբ հնացանդվեցինք. զինվորները մեզ շրջապատեցին և մենք դեպի բերդն ուղղվեցինք. Իվան իգնատիչի հետեցից, վորը մեզ հանդիսավորությամբ տանում եր, քայլելով դարմանալի հապրտությամբ:

Մենք մտանք բերդապետի տունը: Իվան իգնատիչը դուռը բացեց, հանդիսավոր հայտարարելով. «Բերեցի»: Մեր դիմավորեց Վասիլիսա Յեգորովինան: «Ա՛յս, դուք իմ սիրելիները: Սա ինչի նման ե, ի՞նչպես, ի՞նչ — մեր բերդում մարդ սպանել: Իվան կուղմիչ, իսկույն և եթ սրանց ձերբակալիք: Պյոտր Անդրեյիչ, Ալեքսեյ Իվանիչ, դեսը տվեք, ձեր սուսերները. տվեք, տվեք: Պալաշկա, այս սուսերները տալ նկուղ: Պյոտր Անդրեյիչ, այսպիսի բան յես չեյի

¹ Տղամարդու շոր առանց թերերի (հնում):

սպասում քեզանից: Ամոթ չե՞ քեզ: Լավ, ասենք թե Ալեքսեյ Իվանիչը մարդասպանության համար համ գվարդիայից և դուրս գրված, համ ել նա աստծուն չի հավատում. հապա դու, դու յել նույնն ես ուզում անել:

Իվան Կուզմիչը միանգամայն համաձայն եր իր կնոջ հետ և մեջընդ մեջ խոսում եր, ավելացնելով. «Հա, լսում ես, Վասիլիսա Յեգորովնան ճիշտ և ասում: Մենամարտերը ձեականորեն արգելված են դինվորական արտիկուլով¹⁾: Այդ միջոցին Պալաշկան մեղնից առավ մեր սուսերները և տարավ նկուղ: Յես անկարող յեղա ծիծաղս զսպել: Շվարբինը պահեց իր լրջությունը: «Դեպի ձեղ տածածած իմ բոլոր հարգանքով հանդերձ, — սառնարյուն կերպով ասաց նա Վասիլիսա Յեգորովնային, — չեմ կարող չնկատել, վոր դուք իդուր եք կամենում անհանգստանալ մեղ ձեր դատաստանին յենթարկելով: Այդ դուք թողեք Իվան Կուզմիչին, դա նրա գործն ես: — Եթէ, իմ սիրելիս, — առարկեց բերդապետի կինը: — բա միթե մարդ ու կին մի հոգի և մի մարմին չեն: Իվան Կուզմիչ, ինչ ես կանգնել: Իսկույն և եթ սրանց դատաղատ բանտ նստացրու միայն հաց ու ջուր տալով, վոր լելքները գլուխները դա. մեկ ել՝ թող հայր Գերասիմը նրանց վրա ապաշխարտնք դնի, վոր աստծուց թողություն ինդրեն և զղջան մարդկանց առաջ:

Իվան Կուզմիչը չգիտեր, ինչ վճռեր: Մարիա Իվանովնան սաստիկ դունատ եր: Փոթորկիը մի քիչ հանդարտվեց. բերդապետի կինը հանգստացավ և ստիպեց մեղ համրուել միմյանց: Պալաշկան բերեց մեր սուսերները: Բերդապետի տնից մենք դուրս յեկանը ըստ յերեսույթին հաշտված: Իվան Իգնատիչն ուղեկցում եր մեղ: — Ամոթ չե՞ ձեղ, — ասացի յես նրան զայրացած, — մեր մասին տեղեկացնել բերդապետին այն բանից հետո, յերք դուք ինձ խոսք տվիք չանել այդ: — «Աստված վկա, վոր այդ մեկը յես չեմ առել Իվան Կուզմիչին, — պատասխանեց նա. — Վասիլիսա Յեգորովնան ամեն ինչ ուղարկում եր առավարդում: Այս որհնըը ձեականորեն պահել եր իր ույժը մինչեւ Պուշկինի ժամանակները, սակայն անհամեմատ մեղմ պատիժներով:

¹⁾ Բազմական որենքների ժողովածու, վորով 18-րդ դարի սկզբից մինչև 19-րդ դարի կեսերը կառավարվում եր ուռու միավետական բանակու: Կիրառվում եր և քաղաքացիական արդարադատության մեջ: «Զինվորական արտիկուլ»-ով «խոստագույն» արգելված ելին» մենամարտերը, մասնակցողներին մահապատիժ. (կախաղան) եր սպառնում: Այս որհնըը ձեականորեն պահել եր իր ույժը մինչեւ Պուշկինի ժամանակները, սակայն անհամեմատ մեղմ պատիժներով:

Նա կարգադրեց առանց բերդապետի գիտության: Ասենք, վաստածո, վոր ամեն ինչ այսպես վերջացավ: Այդ խոսքերն ասելով նա շրջվեց դեպի տուն, իսկ Շվարբինը և յես մնացինք մենակ: — Մեր դործը սրանով վերջանալ չի կարող, — ասացի յես նրան: — «Ինարկե, — պատասխանեց Շվարբինը. — դուք ձեր արյունով ինձ պատասխան կտաք ձեր հանդգնության համար. բայց, հավանորեն մեղ կսկսեն հետեւել: Մի քանի որ մենք պետք ե ցույց տանք, թե հաշտ ենք: Ցտեսություն: — Յեվ մենք բաժանվեցինք, կարծես թե վոչինչ չեր յեղել:

Վերադառնալով բերդապետի տունը յես, ըստ իմ սովորության, նստեցի Մարիա Իվանովնայի մոտ: Իվան Կուզմիչը տանը չեր. Վասիլիսա Յեգորովնան տնային գործերով եր զրադված: Մենք խոսում եյինք կիսաձայն: Մարիա Իվանովնան քնքությամբ կըշտամրում եր ինձ այն անհանգստության համար, վոր պատճառել եր բոլորին իմ վեճը Շվարբինի հետ: «Իմ շունչը կտրվեց, յերբ մեղ ասացին, վոր դուք մտադիր եք սուսերներով կռվել: Ի՞նչ տեսակ մարդիկ կան: Մի խասքի պատճառով, վոր մի շաբաթ հետո յերեկի թե կմոռանային, նրանք պատրաստ են միմյանց սրակուոր անել և զոհել վոչ միայն իրենց կյանքը, այլև իդին ու բարորությունը նրանց ովքեր... բայց յես հավատացած եմ, վոր վեճը սկսողը դուք չեք: Իրոք մեղավոր և Ալեքսեյ Իվանիչը»:

— Իսկ ինչի՞ յեփ դուք այդպես կարծում, Մարիա Իվանովնա:

«Ճենց այնպես... նա այնտեսակ խեղկատակն ե: Յես չեմ սիրում Ալեքսեյ Իվանիչին. անչափ զգվում եմ նրանից, բայց տարորինակ ե, ինչ ել տալու լինելին, յես չեյի կամենա, վոր յես ել նրան այդպես դուր չգայի: Դա ինձ սաստիկ անհանգստություն կալատճառեր»:

— Իսկ ինչ եք կարծում, Մարիա Իվանովնա. դուք արդյոք դժուր եք գալիս նրան, թե վոչ:

Մարիա Իվանովնան կարկամեց ու կարմրեց: «Ինձ թվում ե, — ասաց նա, — յես կարծում եմ, վոր դուր եմ գալիս»:

— Իսկ ինչի՞ յե ձեղ այդպես թվում:

«Վորովհետեւ նա խնդրել եր իմ ձեռքը»:

— Խնդրել եր: Նա ինդրել եր ձեր ձեռքը: Այդ յերը:

«Անցյալ տարի: Ձեր գալուց յերկու ամիս առաջ»:

— Յեվ դուք չգնացիք նրան:

«Ինչպես տեսնում եք: Ալեքսեյ Խվանիչն իհարկե, թե խելք մարդ ե, թե լավ ընտանիքից ե և թե հարուստ. բայց, յերբ մտածում եմ, թե պետք ե պատկի տակ բոլորի ներկայությամբ նրանետ համբուրվել... Վո՞չ մի դեպքում և վո՞չ մի յերջանկության համար»:

Մարիա Խվանովսայի խոսքերն աչքերս բաց արին և ինձ շատ բան պարզեցին: Յես հասկացա այն համառ չարախոսությունը, վորով Շվարբինը հետապնդում եր նրան: Հավանողեն նա նկատել եր մեր փոխադարձ մտերմությունը և աշխատում եր մեղ հեռու պահել միմյանցից: Մեր վեճին առիթ տվող խոսքերը հիմա առավել ևս զագրելի թվացին ինձ, յերբ կոպիտ և անվայել ծաղրանքի փոխարեն դրանց մեջ յես տեսա միտումնավոր բամբառանքը: Հանդուդն չարախոսին պատժելու ցանկությունն իմ մեջ ավելի ուժեղացավ և յես անհամբեր սպասում եյի հարմար առիթի:

Շատ չսպասեցի: Մյուս որը, յերբ յես զբաղված եյի ելեղիա¹ դրելով և հարմար հանգի սպասելով գրիչն եյի կրծում, Շվարբինը բաղիւց իմ պատուհանը: Յես զրիչը վայր զրի, սուսերս վերցրի և դուրս յեկա: «Ինչո՞ւ հետաձգենք, — ասաց ինձ Շվարբինը. — մեղ չեն հետեւում: Իջնենք գեղի գետը: Այստեղ վոչ վոք մեղ չի խանդարի»: Մենք լուս քայլեցինք: Զառիվայր արահետով իջնելով, հենց գետեղը կանգ առանք և մերկացրինք մեր սուսերները: Շվարբինն ինձնից վարպետ եր, սակայն յես՝ ավելի ուժեղ և համարձակ եյի և monsieur² բոպեն, զորը յերբեմն զինվոր եր յեղել, ինձ սուսերամարտի մի քանի դաս եր ավել, զորոնցով և յես ողտվեցի: Շվարբինը չեր սպասում հանձինս ինձ գտնել այդքան վտանգավոր հակառակորդի: Յերկար ժամանակ մենք չեյինք կարողանում միմյանց վորեե մաս հասցնել. վերջապես, նկատելով, զոր Շվարբինը թուլանում ե, յես սկսեցի յեռանդուն կերպով հարձակվել նրա վրա և համարյա մինչև գետը քշեցի նրան: Հանկարծ յես լսեցի իմ անունը՝ արտասանված բարձր ձայնով: Յես շրջվեցի և տեսա Սավելիչին, զոր լեռնային արահետով գեղի ինձ եր վազում... Հենց այդ ժամանակ աջ ուսից ներքեւ կրծքիս մեջ ուժեղ ծակոց զգացի. յես ընկա և կորցրի գիտակցությունս:

¹ Ելեղիա (հուն.) — յեղերերգ՝ տիուր, թախծալի յերգ:

² Monsieur (ֆր.) — պարոն:

ԳԼՈՒԽ V

Ս Ե Բ Ը

Ա՛յ, դու աղջեկ, սիրուն աղջիկ,
Զահել-ջահել մարդ մի առնի,
Հարցում արա հորբդ, մորբդ,
Հորբդ-մորբդ, աղդ ու տոհմբդ,
Խելքը գլուխը հավաքի,
Ու քո ոժիտը կուտակի:
Ժողովրդական յերգ

Թե զոր ինձնից լավին գտնես՝ կմոռանաս ինձ,
Ցեթե ինձնից վատը գտնես, — զու կիշես ինձ:
Նույնը

Ուշքի գալով յես մի առ ժամանակ չկարողացա սթափվել և չեյի հասկանում, թե ինձ ինչ և պատահել: Ինձ անձանոթ մի վերանատան մեջ յես պառկած եյի թախտի վրա և սաստիկ թուլություն եյի զգում: Իմ առջե կանգնած եր Սավելիչը, մոմը ձեռքին: Մի ինչ վոր մարդ զգուշությամբ քանդում եր վիրակապելը, վորոնցով փաթաթված եյին իմ կուրծքն ու ուսը: Քիչքիչ մտքերս պարզվեցին: Յես հիշեցի իմ մենամարտը և գլուխ ընկա, զոր վիրավորվել եմ: Այդ բոպեյին դուռը ճոռաց: «Հը, ինչպես ե», — շուկով հարցը ձայնը, զորից յես թպրտացի: — Միշտ նույն վիճակումն ե, — պատախանեց Սավելիչը հոգոց հանելով. — բոլոր ժամանակ ուշքը վրան չե, արդեն հինգ որ ե: — Յես ուզում եյի շրջվել, բայց չկարողացա: — «Վո՞րտեղ եմ յես, ով կա այստեղ», — ասացի յես գժվարությամբ: Մարիա Խվանովսան մոտ յեկավ իմ մահճակալին և կրացավ գեղի ինձ: «Ի՞նչ ե, ինչպես եք ձեզ զգում», — ասաց նա: — Փառք աստծո, — պատախանեցի յես նվազած ձայնով: — Այդ դժւք եք, Մարիա Խվանովսա. ասացեք ինձ... —

յես այլես ույժ չունեցա շարունակելու և լոեցի: Սավելիչը ախ քաշեց: Նրա դեմքին ուրախություն յերեաց: «Ուշքի՞ յեկավ, ուշքի՞ յեկավ, — կրկնում եր նա: — Փառք քեղ տեր: Համա թե վակեցրիր ինձ, տեր իմ, Պյոտր Անդրեյիչ. հեղշտ բան ե, եսոր հինգ որ ե...» Մարիա իվանովսան ընդհատեց նրան: «Ետա մի խոսի հրա հետ, Սավելիչ, — ասաց: — Նա դեռ թույլ ե: Մարիա իվանովսան զուրս յեկավ և կամացուկ ծածկեց դուռը: Մաքերս ալեկոծվեցին: Յեվ այսպես, յես բերդապետի տանն եյի, Մարիա իվանովսան գնում-գալիս եր ինձ մոտ: Յես ուղում եյի Սավելիչին մի քանի հարցեր տալ, սակայն ծերուկը գլուխն որորեց և ականջները խցկեց: Դժկամելով յես աչքերս փակեցի և շուտով քնով անցա:

Զարթնելով, յես մոտ կանչեցի Սավելիչին և նրա փոխարեն իմ առջև տեսա Մարիա իվանովսային. ինձ վողջունեց նրա հրեշտակային ձայնը: Չեմ կարող նկարագրել այն քաղցր զգացումը, վոր պատեց ինձ այդ բոպեյին: Յես բռնեցի նրա ձեռքը և յերեսիս դրի ու խանդաղատանքի արցունքներով թրջեցի այն: Մաշան ձեռքը չեր քաշում... և հանկարծ նրա շրթունքները հովեցին իմ այտին և յես զգացի նրանց ջերմ ու թարմ համբույրը: Մարմնով կրակ անցավ: «Իմ սիրելի, բարի իմ Մարիա իվանովսա, — ասացի յես նրան, — յեղիր իմ կինը, յերջանկացրու ինձ: — Նա սթավիվեց: «Ի սեր աստծո, հանգստացեք, — ասաց նա ձեռքը ինձնեց իւկելով: — Դուք դեռևս վտանգի մեջ եք, վերքը կարող ե բացվել: Պահպանեցեք ձեզ գոնե ինձ համար»: Այս խոսքերի հետ նա դնաց, թողնելով ինձ հրձանքի արքեցման մեջ: Յերջանկությունն ինձ հարություն տվեց: Նա իմը կինի, նա ինձ սիրելու ե: Այս միաքը համակեց իմ վողջ եյությունը:

Այդ բոպեյից ժամ առ ժամ դրությունս լավացավ: Ինձ բժշկում եր գնդի վարսավիրը, քանի վոր բերդում ուրիշ բժիշկ չկար և փառք աստծո՝ նա այնքան ել խելքին չեր զորում: Յերիտասարդությունս և ինքը բնությունը արագացրին իմ առողջանալը: Բերդապետի ամբողջ ընտանիքը խնամում եր ինձ: Մարիա իվանովսան ինձնից չեր հեռանում: Հասկանալի յե, վոր առաջին իսկ հարմար առիթով յես վերսկսեցի ընդհատված բացատրությունը և Մարիա իվանովսան ավելի համբերատար եր լսում ինձ: Առանց վորեւ սեթեսթության նա խոստովանեց ինձ իր սրտի հակումը



և ասաց, վոր իր ծնողները, ի հարկե՛ իր յերջանկությանն ուրախ կլինեն: «Բայց դու լավ մտածիր, — ավելացրեց նա. — քո ծնողների կողմից արդյոք չե՞ն լինի արդելքներ»:

Յես մի փոքր մտածեցի: Իմ մոր քնքշության մասին յես կասկած չունեյի, բայց իմանալով հորս բնավորությունն ու մտածելակերպը, յես զգացի, վոր իմ սերը այնքան ել չի հուզի նրան և նա այդ կհամարի վորպես յերիտասարդ մարդու քմահաճություն: Յես այդ անկեղծորեն խոստովանեցի Մարիա Խվանովնային և սակայն վորոշեցի՝ վորքան կարելի յե մի պերճախոսնամակ գրել հորս, խնդրելով նրա ծնողական որհնությունը: Նամակը յես ցույց տվի Մարիա Խվանովնային, վորը այնքան համոզիչ և սրտաշարժ գտավ այն, վոր չեր կասկածում նրա հաջողությունը և յերիտասարդության ու սիրո վողջ դյուրահավատությամբ անձնատուր յեղավ իր քնքույշ սրտի զգացմունքներին:

✓ Շվարըինի հետ յես հաշտվեցի առողջանալուս առաջին որերը: Խվան Կուզմիչը հանդիմանելով ինձ մենամարտի համար, ասաց «Ե՛ն, Պյոտր Անդրեյիչ, այ թե քեզ քանտարկել եյի. ասենք դու առանց դրան ել պատժված ես: Իսկ Ալեքսեյ Խվանիչը հենց մի դլուխ նստած և հացատանը, պահակի հսկողության տակ, իսկ նրա սուսերը Վասիլիսա Յեգորովնան կողպերի տակ և դրել: Թողինքն իրեն խելքի դա ու զղջա»: — Յես չափազանց յերջանիկ եյի, վորպեսզի կարողանայի սրտիս մեջ թշնամական զգացմունք պահել: Յես սկսեցի խնդրել Շվարըինի մասին և բարի բերդապետը, իր ամուսնու համաձայնությամբ վճռեց ազատել նրան: Շվարըինն յեկավ ինձ մոտ. նա խոր ափսոսանք հայտնեց այն մասին, ինչ պատահել եր մեր միջն և խոստովանեց, վոր բոլոր մեղքը իրենն և ինձ խնդրեց մոռանալ տեղի ունեցածը: Բնությունից անհիշաշար լինելով, յես անկեղծությամբ ներեցի նրան թե մեր վեճը և թե վերքը, վոր յես ստացել եյի նրանից: Նրա զրպարտության մեջ յես տեսնում եյի վիրավորված ինքնասիրության և մերժված սիրո զայրույթը և մեծահոգաբար ներեցի իմ դժբախտ ախոյանին:

Շուտով յես առողջացա և կարողացա տեղափոխվել իմ բնակարանը. Անհամբեր սպասում եյի իմ ուղարկած նամակի պատասխանին, չհամարձակվելով հույս ունենալ և ջանալով իմ մեջ խլացնել ախուր նախազգացումը Վասիլիսա Յեգորովնայի և նրա ամուսնու հետ դեռ չեյի բացատրվել, սակայն իմ առաջարկու-

թյունը նրանց չպետք եւ զարմացներ: Վոչ յես, վոչ ել Մարիա Իվանովսան չեյինք աշխատում նրանցից թաքցնել մեր զգաց- մունքները և մենք առաջուց արդեն հավատացած եյինք, վոր համաձայն են:

Վերջապես մի անդամ առավոտյան Սավելիչը մտավ իմ սեն- յակը, ձեռքին մի նամակ: Դողդողալով խլեցի այն: Հասցեն հորս ձեռքով եր զրված: Այդ նախապատրաստեց ինձ մի ինչ վոր կա- րեոր բանի, քանի վոր սովորաբար մայրս եր ինձ նամակներ գրում, իսկ հայրս վերջում ավելացնում եր մի քանի տող: Յեր- կար ժամանակ յես չեյի բացում ծրարը և նորից ու նորից կար- դում եյի հանդիսավոր մակագրությունը: «Իմ վորդի Պյոտր Անդ- րեյիչ Գրինյովին, Որենքուրդի նահանգում, Բելոգորսկի բերդում»:
✓ Ես ջանք եյի թափում ձեռագրից իմանալ այն հոգեկան տրա- մադրությունը, վորով դրված եր նամակը: Վերջապես վճռեցի բանալ այն և առաջին իսկ տողերից տեսա, վոր ամեն ինչ խոր- տակվում ե: Նամակի բովանդակությունը հետեւյալն եր.

«Վորդի իմ Պյատր,

Քո նամակը, վարով դու ինդրում ես մեղ տալ մեր ծնողական որհնությունն ու համաձայնությունը՝ Միրոնովի աղջիկ Մարիա Իվանովսայի հետ ամուսնանալու համար, մենք ստացանք սույն ամսի 15-ին և վոչ միայն մտադիր չեմ քեզ տալ վոչ իմ որհնու- թյունը, վոչ ել իմ համաձայնությունը, այլև գեռնս պատրաստ- վում եմ գալ այդտեղ և քո այդ չարաճճիությունների համար քեզ մի լավ դաս տալ ինչպես փոքրիկ տղային են խրատում, առանց ուշք դարձնելու քո սպայական աստիճանին, վորովհետեւ դու ապացուցեցիր, վոր գեռնս արժանի չես սուսեր կրելու, վորը քեզ տրված ե հայրենիքը պաշտպանելու և վոչ թե քեզ պես թոկից փախաճների հետ մենամարտելու: Անհապաղ պիտի գրեմ Անդրեյ Կարլովիչին, խնդրելով, վոր նա քեզ Բելոգորսկի բերդից տեղա- փոխի գորմե այլ վայր, վորպեսդի այնտեղ քո հիմարությունն անցնի: Մայրիկդ, իմանալով քո մենամարտի մասին և այն, վոր դու վիրավորված ես, վշտից տկարացավ և հիմա պառկած ե: Արդյոք ինչ մարդ կդառնաս դու: Աղոթում եմ աստծուն, վոր դու ուղղվես, թեպետ և չեմ համարձակվում հուսալ նրա մեծ փողո- մածությանը:

Հայր քո՞ Ա. Գ.»

Նամակի ընթերցումն իմ մեջ առաջացրեց զանազան զգացում- ներ: Այն խիստ արտահայտությունները, վոր հայրս չեր զլացել գործածել, խորապես վիրավորեցին ինձ: Արհամարհանքը, վորով հա հիշում եր Մարիա Իվանովսայի մասին, ինձ այնքան անվա- յել թվաց, վորքան և անիրավացի: Բելոգորսկի բերդից տեղա- փոխվելու միտքը ինձ սարսափեցրեց, բայց ամենից շատ ինձ վշտացնում եր մորս հիվանդության լուրը: Յես չարացած եյի Սավելիչի վրա, չկասկածելով, վոր իմ մենամարտը ծնողներիս հայտնի յե յեղել նրա միջոցով: Հետ ու առաջ քայլելով իմ նեղ սենյակում, յես կանգ առա նրա դիմաց և ասացի, խստությամբ նրան նայելով: «Յերեսում ե՝ քեզ համար քիչ ե, վոր յես քո յերեսից վիրավորվել եմ և մի ամբողջ ամիս վոտքս գերեզմանի դուռն եր. այժմ ել մժրս ես ուղում մեղցնել»: Սավելիչը ապուշ կտրեց, ասես շանթահարեցին նրան: «Վաղորմիր, տեր իմ, — ասաց նա և քիչ մնաց հեկեկար, — այդ ինչ հրամայեցիր ասել: Յես եմ պատճառը, վոր դու վիրավորվել ես: Աստված գիտի, վոր յես վաղեցի իմ կրծքով քեզ պաշտպանելու Ալեքսեյ Իվանիչի սու- սերից: Անիծյալ ծերությունը խանգարեց: Հապա մայրիկիդ ինչ եմ արել»: — «Ինչ ես արել» — պատասխանեցի յես: — Ո՞վ եր քեզ խնդրում իմ մասին տեղեկություններ գրես, միթե քեզ լրտե- սելու համար են ուղարկել ինձ հետ»: — «Յես քո մասին տեղե- կություններ եմ գրել, — պատասխանեց Սավելիչը արցունքը աշ- քերին: — Աստված, յերկնային թագավոր: Դե, հրամեցիր կար- դալու, թե բարին ինչ ե գրում ինձ. կտեսնես, թե ինչպես եմ լրտեսել քեզ»: Այս ասելով նա դրապանից հանեց նամակը և յես կարդացի հետեւյալը.

«Ամոթ քեզ, քափթառ շուն, վոր դու, չնայած իմ խիստ հրա- մաններին, ինձ չես տեղեկացրել իմ վորդի Պյոտր Անդրեևիչի մասին և վոր կողմանակի մարդիկ են հարկադրված հայտնել ինձ նրա ստահակությունները: Այդպես ես դու կատարում քո պաշ- տօնը և տերունական կամքը: Յես քեզ, քափթառ շուն, իսզ արածացնելու կուղարկեմ, վոր իսկությունը թաքցրել ես ինձնից և յերես ես տվել յերիտասարդ տղային. նամակս ստահալուդ պես հրամայում եմ անմիջապես գրել ինձ, թե հիմա ինչպես ե նրա առողջությունը, վորի մասին ինձ գրում ես, թե լավացել ե, նաև թե վիրատեղից ե վիրավորվել և արդյոք լավ են բժշկել»:

Ակներե եր, վոր Սավելիչը իմ հանդեպ իրավ եր և վոր յես իզուր վիրավորեցի նրան հանդիմանությամբ և կասկածանքով: Յես ներողություն խնդրեցի նրանից, սակայն ծերունին անմիտար եր: «Ա՛յ թե ինչ որի հասա յես, — կը կնում եր նա. — այ թե ինչ վողորմությունների արժանացա իմ տերերից: Յես համ քափթառ շուն եմ, համ ել յես եմ քո վերքի պատճառը: Զե, տեր իմ Պյոտր Անդրեյիչ, վոչ թե յես, այլ անիծյալ մուսյեն և մեղավորը. այդ նա քեզ սովորեցրեց յերկաթե շամփուրներով իրար ծակուել ու վոտքերով դոփովել. կասես՝ այդպիսով չար մարդուց ապահով կմնաս: Ինչներիս եր պետք մուսյե վարձել և ավելորդ փող ծախսել:

Բայց մվ եր նեղություն կրել հորս տեղեկացնելու իմ վարքի մասին: Դեներամը: Սակայն նա, թվում եր թե իմ մասին այնքան ել հոգ չի տանում. իսկ իվան Կուզմիչը կարսոր չեր համարել նրան տեղեկացնել մեր մենամարտի մասին: Գլուխս կորցրել եյի յենթագրություններից: Կասկածներս ընկան Շվաբրինի վրա: Միայն նա շահ ուներ տեղեկացնելուց, վորի հետևանքը կարող եր լինել իմ հեռացումը բերդից և անջատումը բերդապետի ընտանիքից: Յես գնացի այս բոլորի մասին Մարիա Իվանովսային հայտնելու: Նա ինձ դիմավորեց տան դուանը: «Այդ ի՞նչ և պատահել, — ասաց նա ինձ տեսնելով: — Ի՞նչպես գունատ եք դուքք: — Ամեն ինչ վերջացած ե, — պատասխանեցի յես և ավի հորս նամակը: Իր հերթին նա յել գունատվեց: Նամակը կարդալուց հետո նա այն վերագրածրեց դողացող ձեռքով և ասաց դողդոջուն ձայնով. «Յերեվում ե՝ յես բախտ չունեմ... Զեր ծնողները չեն ուզում ինձ իրենց ընտանիքն ընդունել: Թող ամեն բանում տիրոջ կամքը լինի. աստված մեղնից լավ գիտե, թե մեղ ինչ և պետք: Ինչ անենք, Պյոտր Անդրեյիչ, գոնե դուք բախտավոր յեղեք...» — «Այդ չի լինի, — գոչեցի յես նրա ձեռքը բռնելով. — դու ինձ սիրում ես, յես պատրաստ եմ ամեն ինչի: Դնանք, ընկնենք քո ծնողների վոտքերը, նրանք պարզ մարդիկ են և վոչ թե խստասիրա գոռողներ... Նրանք մեղ կորհնեն, մենք կասակվենք, իսկ հետո, կզաժամանակ, յես հավատացած եմ, վոր համոզենք իմ հորը: Մայրս մեր կողմը կրոնի, նա կների ինձ...» «Վոչ, Պյոտր Անդրեյիչ, — պատասխանեց Մարիա Իվանովսան. — առանց քո ծնողների որհնության յես չեմ ամուսնանա քեզ հետ: Առանց նրանց որհնու-

թյան դու բախտ չես ունենա: Հնազանդվենք աստծու կամքին: Թե վոր գտնես քեզ վիճակվածին, թե վոր սիրես ուրիշին — աստված քեզ հետ, Պյոտր Անդրեյիչ. իսկ յես ձեր յերկուսի համար...» Այս խոսքերի հետ նա լացեց և հեռացավ ինձնից. յես այն ե, ուզում եյի նրա հետեւ սենյակ մտնել, սակայն զգացի, վոր ի վիճակի չեմ ինքս ինձ պահել և վերադարձա տուն:

Խորին մտատանջության մեջ նստած եյի, յերբ հանկարծ Սավելիչն ընդհատեց իմ մտածմունքները: «Ահա, տեր իմ, — ասաց նա, ինձ տալով լին զրված մի թերթ թուղթ. — տես, թե յես արդյոք լրտեսություն արել եմ և միթե յես աշխատում եմ հայր ու վորդի գժտեցնել միմյանց հետա: Նրա ձեռքից յես վերցրի թուղթը. դա Սավելիչի պատասխանն եր իր ստացած նամակին: Ահա նա՝ բառ տոքառ: «Տեր իմ, Անդրեյ Պետրովիչ, մեր վողորմած հայր.

Զեր վողորմածիկ գրությունը յես ստացա, վորի մեջ հրամմել ես բարկանալ ինձ՝ ձեր ձորտի վրա, վոր իրը ամոթ ե ինձ չկատարել տերունական հրամանները. — իսկ յես քաֆթառ շուն չեմ, այլ ձեր հավատարիմ ծառան, լսում եմ տերունական հրամանները և միշտ ձեզ պարտաճանաչ ծառայել և հասել եմ մինչև որ ծերության: Դե յես Պյոտր Անդրեյիչի վերքի մասին ձեզ վոչինչ չգրեցի, վորպեսզի իզուր չվախեցնեմ ձեզ և հիմա իմանում եմ, վոր տիրուհին, մեր մայր Ավգուստա Վասիլենան առանց իմ զրելու յել վախից հիմանդացել ե և յես պետք ե աղոթք անեմ նրա առողջության համար: Իսկ Պյոտր Անդրեյիչը վիճակորված եր աջ ուսիտակ՝ կրծքից, վոսկորի հենց տակը, մեկ ու կես վերշոկ խորությամբ և նա պառկած եր բերդապետի տանը, ուր մենք նրան գետափից տարանք և նրան բժշկում եր այստեղի վարսավիր Ստեղապան Պարամոնովը, և Պյոտր Անդրեյիչը հիմա, փառք աստծու, առողջ ե և նրա մասին բացի լավից ուրիշ զրելու բան չկա: Մեծավորները, ինչպես իմանում եմ, գոհ են նրանից, իսկ Վասիլիսա Յեղորովսայի տանը նա կասես հարազատ վորդի լինի: Իսկ թե ինչպես յեղավ, վոր այդտեսակ փորձանք պատահեց, ապա յեղածն անցած ե, մեր յերիտասարդը մեղը չունի. ձին վոր ձի յե, չորս վոտքով ելի սայթաքում ե: Յեկ հրամմել եք գրել, վոր ինձ կուղարկեք խոզ արածացնելու. այդ ել ձեր տերունական կամքը գիտի: Յեկ ընդ այսմ վողջունում եմ խոնարհաբար:

Զեր հավատարիմ ձորտ՝ Արխիպ Սավելեվ:

Բարի ծերունու գրությունը կարդ ալիս յես չեյի կարող մի քանի
անգամ չժպտալ: Յես ի վիճակի չեյի պատասխանել հորս, իսկ մորս
հանգստացնելու համար Մավելիչի նամակն ինձ բավարար թվաց:

Այդ ժամանակից սկսած իմ գրությունը փոխվեց: Մարիա Խվա-
նովսան համարյա թե չեր խոսում ինձ հետ և ամեն կերպ աշխա-
տում եր խուօսափել ինձնից: Բերդապետի տունը ինձ համար պաս
դռառավ: Հետզինեան յես սովորեցի տանը մենակ նստել: Մկղբում
Վասիլիսա Յեղորովսան այդ քանի համար հանդիմանում եր ինձ,
սակայն տեսնելով իմ համառությունը, ինձ հանգիստ թողեց:
Խվան Կուզմիչի հետ հանդիպում եյի միայն ըստ ծառայության
պահանջի: Շվարբինին հազվագեպ եյի հանդիպում և ակամա,
քանի վոր նրա մեջ յես նկատում եյի դեպի ինձ ուղղված թաքուն
թշնամանք, վոր և հաստատում եր իմ կասկածները: Իմ կյանքն
անտանելի դարձավ ինձ համար: Յես ընկա մոայլ մտածմունք-
ների մեջ, վոր արդյունք եր մենակության և անդործության:
Սերս բոլբոքվեց առանձնության մեջ և քանի գնաց դրությունս
ծանրացավ: Յես կորցը ընթերցանության և գրականության
սերը: Հոգիս ընկճվեց: Յես վախենում եյի, թե կամ կիսելագար-
վեմ, կամ կսկսեմ անառակ կյանք վարել: Անակնկալ դեպքերը,
վոր կարենոր ազդեցություն ունեցան իմ ամքողջ կյանքի վրա,
հանկարծ իմ հոգուն մի ուժեղ ու բարերար ցնցում տվին:

ԳԼՈՒԽ VI

Պ Ո Ւ Գ Ա Զ Ո Վ Շ Զ Ի Ն Ա 1

Դնեք, ջահել տղերք, լսեցեք մեզ,
թե մենք՝ ծերերս ինչ կպատմենք:
Յերգ

Նախքան անցնեմ նկարագրելու արտասովոր գեպքերը, վորոնց
ինքս ականատես յեղա, յես պետք ե մի քանի խոսք ասեմ այն
դրության մասին, վորի մեջ գտնվում եր Որենբուրգի նահանգը
1773 թվի վերջին:

Սույն լայնարձակ և հարուստ նահանգում բնակվում եյին
բաղմաթիվ կիսավայրենի ժողովուրդներ, վորոնք միայն վերջերս
եյին ճանաչել ուսւական թագավորների գերիշխանությունը:
Նրանց մշտական խոռվությունները, որենքներին և քաղաքա-
ցիական կյանքին անսովոր լինելը, թեթևամտությունն ու դա-
ժանությունը անընդհատ հսկողություն եյին պահանջում կա-
ռավարության կողմից՝ նրանց հնազանդության մեջ պահելու
համար: Բերդերը շինված եյին հարմար վայրերում և բնակեցված
եյին մեծ մասամբ կազակներով՝ Յահիկի ափերի վաղեմի տերերով:
Բայց Յահիկի կազակները, վորոնք պետք ե պահպանեյին այս
յերկրի անդորրությունն ու անվտանգությունը, մի առ ժամանակ
հետո իրենք դարձան կառավարության համար անհանգիստ ու
վտանգավոր հպատակներ: 1772 թվին խոռվություն առաջացավ
նրանց գլխավոր քաղաքում: Դրա պատճառն այն խիստ միջոց-
ներն եյին, վոր ձեռնարկել եր գեներալ-մայոր Տրաուբենբերզը,

1 Յահական միապետությունը Պուգաչովի անունից կազմած այս արգա-
հատելի բառով ե վորակել 1773—75 թթ. զյուղացիական մեծածավալ հեղափո-
խական ապստամբությունները Ուսւաստանի մի շարք նահանգներում:

վորպեսզի պատշաճ հնազանդության բերի զորքին։ Հետևանքն յեղել եր Տրասւբենքերգի բարբարոսական սպանությունը, կտուավարման ինքնակամ փոփոխությունը և վերջապես բունտի խաղաղացումը կարտեչով և դաժան պատիմներով։

Այս գեպքը պատահել եր իմ՝ Բելոգորսկի բերդը գալուց մի քանի ժամանակ առաջ։ Ամեն ինչ արդեն հանդարտ եր կամ թվում եր թե այդպես ե. իշխանությունը չափազանց հեշտ հավատաց նենդ խոռովարաների կարծեցյալ զղման, վորոնք թաքուն դավեր ելին նյութում և հարմար առիթի սպասում՝ անկարգությունները վերսկսելու համար։

Վերադառնում եմ իմ պատմությանը։

Մի անգամ յերեկոյան (1773 թվի հոկտեմբերի սկզբին եր այդ) յես միայնակ նոտած եյի տանը, աշնանային քամու վոռնոցը լսելով և պատուհանից դիտելով լուսնի մոտով փաթչող ամպերը։ Յեկան և ինձ կանչեցին բերդապետի անունից։ Յես իսկույն գնացի։ Բերդապետի մոտ յես տեսա Շվարբինին, իվան իգնատիշն և կազակների ուրյադնիկին¹։ Մենյակում չկար վոչ վասիլիսա Յեգորովսան, վոչ ել Մարիա Խվանովսան։ Բերդապետն ինձ բարեց մտահոգ դեմքով։ Նա դուռը փակեց, բոլորին նստեցրեց, բացի ուրյադնիկից, վորը կանգնած եր դրսերի մոտ, — ապա գըրպանից մի թուղթ հանեց և ասաց մեզ։ «Պարոնայք սպաներ, կարևոր նորություն։ Լսեցեք, թե ինչ ե գրում դեներալը»։ Այդ խոսքերի հետ նա ակնոցները դրեց և կարդաց հետեւյալը։

«Բելոգորսկի բերդի պարոն բերդապետ կապիտան Միլոնովին։

Գաղտնի

Այսու հայտնում եմ, վոր պահակային հակողությունից փախած Դոնի կազակ և հերձվածող Յեմելյան Պուգաչովը աններելի հանդինությամբ իր վրա ընդունելով հանգուցյալ արքա Պյոտր III-ի² անունը, չարագործների խումբ և հավաքել իր շուրջը և խոռովություն հարուցել Յաիկի գյուղերում և արդեն գրավել ու ավերել ե

¹ Յենթասպա՝ կազակներից կազմված զորամասերում։

² Պյոտր III (1728—1762) — ռուսաց կայսր, վորին, մոտ մի տարի թագորելուց հետո — 1762 թ. գահընկեց արեց իր կինը՝ հետագայում Յեկանաբինա Ա-ը և կարձ ժամանակից հետո սպանեցին վերջինիս համալորները։

մի քանի բերդեր, ամեն տեղ կողոպւտներ և սպանություններ կատարելով։ Վասն վորո, սույն գրությունն ստանալով, պարոն կապիտան, անհապաղ պետք ե պատշաճ միջոցներ ձեռք առնեք հիշյալ չարագործին և ինքնակոչին հետ մղելու, իսկ թե հնարավոր ե՝ նրան իսպառ վոչնչացնելու, յեթե նա կշարժվի գեպի ձեր հոգացությանն հանձնված բերդը։

«Պատշաճ միջոցներ ձեռք առնել, — ասաց բերդապետը ակնոցները հանելով և թուղթը ծալելով։ — Լսմամ ես, ասելն ե հեշտ։ Զարագործը, ինչպես յերեսում ե՝ զորեղ ե, իսկ մենք ունենք ընդամենը հարյուր յերեսուն մարդ, չհաշված կազակներին, վորոնց վրա հույս դնել չի կարելի, յերեսիդ չեմ ասում, Մակսիմիչ։ (Ուրցադնիկը քմծիծաղ տվեց)։ Բայց ձար չկա, պարոնայք սպաներ։ Ճշտապահ յեղեք, պահակներ ու գիշերագետներ նշանակեք. իսկ հարձակման դեպում դարպանները ծածկեք և ղինվորներին դուրս բերեք։ Դու, Մակսիմիչ, ուշիռուշով հետեւիր քո կազակներին։ Թնդանոթը կարդի բերեք ու մի լավ մաքրեք։ Իսկ վոր ամենից կարեսըն ե, այս բոլորը զաղանի պահեք, վորպեսզի բերդի մեջ վոչ վոր այդ մասին ժամանակից շուտ չիմանա։

Այս հրամանները տալով իվան կուզմիչը մեզ արձակեց։ Յես դուրս յեկա Շվարբինի հետ միասին, խոսելով մեր լսածի մասին։ «Ի՞նչ ես կարծում, սա ինչո՞վ կվերջանա», — հարցըրի յես նրան։ «Աստված դիտե, — պատասխանեց նա. — տեսնենք։ Առայժմ առանձին կարեսը վոչ մի բան չեմ տեսնում։ Իսկ յեթե...» Այդ ասելով նա մտածմունքի մեջ ընկալ և անփույթ կերպով սկսեց սուլել ֆրանսիական մի արիա¹։

Չեայած մեր բոլոր նախազգուշություններին, Պուգաչովի յերեան գալու լուրը տարածվեց բերդում։ Թեպետ և իվան կուզմիչը չափազանց հարցում եր իր ամուսնուն, սակայն վոչ մի գեպում նրան չեր հաղորդի այն գաղտնիքը, վոր իրեն հավատացել եյին ըստ ծառայության։ Դեներալից նամակն ստանալուն պես նա բավական հմուտ ճանապարհ եր գրել վասիլիսա Յեգորովսային, ասելով նրան, թե իրը հայր Գերասիմը Որենքուրդից ինչ վոր խիստ զարմանալի տեղեկություններ ե բերել, վոր պահում ե վորպես մեծ գաղտնիք։ Վասիլիսա Յեգորովսան իսկույն

¹ Ա. թիա — մեղեդի։

և եթ ցանկացել եր հյուր գնալ յերեցկնոջ մոտ և իվան Կուղմիշի խորհրդով իր հետ վերցրել եր Մաշային, վորպեսզի նա միայնակ մնալով չձանձրանա:

Իվան Կուղմիշը մնալով տան կատարյալ տերը, իսկույն և եթ ուղարկել եր մեր հետեւից, իսկ Պալաշկային փակել եր նկուղում, վորպեսզի նա չկարողանա լսել մեր խոսածը:

Վասիլիսա Յեգորովիսան տուն և վերադառնում, չկարողանալով վորեւ բան իմանալ յերեցկնոջից և տեղեկանում ե, վոր իր բաժակայության ժամանակ իվան Կուղմիշի մոտ խորհրդակցություն ե յեղել և վոր Պալաշկայի վրա դուռը կողպել են: Նա զլիի յի ընկնում, վոր ամուսինն իրեն խարել ե և սկսում ե հարց ու փորձ անել: Բայց իվան Կուղմիշը պատրաստվել եր հարձակման: Նա բնավ չի շիռթվում և յեռանդուն կերպով պատասխանում ե իր հետաքրքրասեր կենակցին. «Խումբ ես, այ կին, մեր կնանոց խելքին փշել ե վառարանները հարդով վառել և քանի վոր դրանից կարող ե դժբախտություն առաջանալ, ուստի յես խիստ հրաման տիի, վոր սրանից հետո կնանիք վառարանները հարդով չվառեն, այլ վառեն ցախ ու խոփվա:—«Հապագու ինչու համար ես Պալաշկային փակել, — հարցնում ե բերդապետի կինը: — Ինչու համար ե խեղճ ազջիկը նկուղում նստել մինչեւ մեր դալը»: — Իվան Կուղմիշն անպատրաստ ե լինում այդ հարցին. Նա կմկմում ե և ինչ վոր անկապ խոսքեր քըթմնջում: Վասիլիսա Յեգորովիսան տեսնում ե իր ամուսնու խարդավանքը, սակայն լավ իմանալով, վոր նրանից վոչինչ չի իմանա, ընդհատում ե հարց ու փորձը և խոսք ձգում աղած վարունգների մասին, վոր Ակուլինա Պամֆիլովիսան պատրաստել եր միանգամայն առանձնատուկ յեղանակով: Ամբողջ գիշերը Վասիլիսա Յեգորովիսան չի կարողանում քնել և վոչ մի կերպ զլիի չի ընկնում, թե տեսնես ամուսնու մտքուն ինչ կար, վոր ինքը չպիտի իմանար:

Մյուս որը, պատրապից վերադառնալիս նա տեսնում ե իվան Իգնատիչին, վորը թնդանոթի միջից դուրս եր հանում փալաւներ, մասրիկ քարեր, տաշեղներ, փայտի կտորներ և ամեն տեսակ, աղբ, վոր յերեխաները խցկել ելին թնդանոթի մեջ: «Արդյոք ինչ կարող են նշանակել այս ռազմական նախասպատառությունները, — մտածում ե բերդապետի կինը: — չլինի՞ հարձակում ե սպասվում կերպիցների կողմից: Բայց միթե իվան Կուղմիշն ինձ-

նից կթաքցներ այդտեսակ չնչին բաները: Նա ձայն ե տալիս իվան Իգնատիչին, հաստատ դիտավորություն ունենալով նրանից դուրս կործել այն գաղտնիքը, վոր տանջում եր նրա կանացի հետաքրքրությունը:

Վասիլիսա Յեգորովիսան նրան մի քանի նկատողություն ե անում տնտեսության վերաբերյալ ինչպես մի դատավոր, վորը քննությունն սկսում ե կողմնակի հարցերով, վորպեսզի նախ թմրեցնի պատասխանողի զգուշությունը: Հետո, մի քանի բոպելուով, նա խոր հոգոց ե հանում և ասում գլուխն որորելով. «Տեր իմ ասաված. տես թե ինչ նորություններ կան: Սրա վերջն բնչ կլինի»:

— Ե՛, մերը, — պատասխանում ե իվան Իգնատիչը: — Աստված վորորմած ե. բավական զինվորներ ունենք, վասողը՝ շատ, թնդանոթն ել յես մաքրեցի: Գուցե թե դիմադրություն ցույց տանք Պուդաչովին: Աստծու պահած դառը գայլը չի ուտի:

«Իսկ ինչ մարդ ե այդ Պուդաչովը», — հարցնում ե բերդապետի կինը:

Այդտեղ իվան Իգնատիչը նկատում ե, վոր բերանից խոսք ե թոցրել և կծում ե լեզուն: Բայց արդեն ուշ եր, Վասիլիսա Յեգորովիսան նրան հարկադրում ե ամեն ինչ խոստովանել, խոսք տալով վոչ վոքի չպատմել այդ մասին:

Վասիլիսա Յեգորովիսան պահում ե իր խոստումը և վոչ վոքի վոչ մի բառ չի ասում, բացի յերեցկնոջից, այն ել միայն այն պատճառով, վոր նրա կովը տակավին տափաստան եր գնում արածելու և կարող եր ընկնել չարագործների ձեռքը:

Շուտով բոլորը խոսեցին Պուդաչովի մասին: Տարբեր լուրեր ելին լսվում: Բերդապետը ուրյադնիկին հանձնարարությամբ ուղարկեց հարեան գյուղերն ու բերդերը՝ ամեն ինչի մասին մի լավ հետախուզելու: Ուրյադնիկը վերադարձավ յերկու որից և հայտնեց, վոր բերդից վաթսուն վերստի վրա նա բաղմաթիվ կրակներ և տեսել և բաշկիրներից լսել ե, վոր անհայտ ույժ և գալիս: Բայց զրական վոչինչ նա չկարողացավ հայտնել, վորով հետեւ վախեցել եր ավելի հեռուն գնալ:

Բերդում, կազակների մեջ նկատելի յեր մի անսովոր հուզում. բոլոր փողոցներում նրանք խումբ-խումբ հավաքվում ելին, ցած ձայնով խոսում միմյանց հետ և ցրվում — վորենք դրագուն կամ

կայազորային զինվոր տեսնելով: Նրանց մոտ լրտեսներ ուղարկվեցին: Յուլայը՝ մկրտված կալմիկը բերդապետին մի կարևոր տեղեկություն հայտնեց: Յուլայի ասելով ուրյադնիկի ցուցմունքները սուտ եյին. հետախուզությունից վերազառնալուն պես նենդամիտ կազակը հայտարարել եր իր ընկերներին, վոր նա յեղել ե խոռվարաների մոտ, ներկայացել ե նրանց ամենագլխավոր առաջնորդին, վորը նրան իր աջն ե տվել և յերկար խոսել ե նրա հետ: Բերդապետն անմիջապես պահակների հսկողության տակ դրեց ուրյադնիկին, իսկ Յուլային նշանակեց նրա տեղ: Այս նորությունը կազակներն ընդունեցին ակնհայտ անբավականությամբ: Նրանք բարձրագույն արտունչներ եյին հայտնում և Իվան Իգնատիչը՝ բերդապետի կարգադրությունը կատարողը, իր ականջով լսել եր, թե ինչպես նրանք ասել են. «Սպասիր, տես թե քեզ ի՞նչ կանենք, բերդի մուկա: Բերդապետն ուզում եր հենց նույն որն և եթի հարցաքննել կալանավորին, սակայն ուրյադնիկը փախավ պահակների ձեռքից, — հավանորեն իր համախոների ոգնությամբ:

Մի նոր հանգամանք ուժեղացրեց բերդապետի անհանգստությունը. բռնվել եր մի բաշկիր, հետն ել՝ վրդովեցուցիչ թոռուցիկներ: Այս առիթով բերդապետը մտադիր եր նորից հավաքել իր սպաներին և դրա համար ուզում եր մի վորեն բարետես պատրվակով նորից հեռացնել Վասիլիսա Յեղորովսային: Բայց քանի վոր Իվան Կուզմիչը շատ պարզասիրտ և ճշմարտախոս մի մարդ եր, ուստի այլ յեղանակ չգտավ, քան մի անդամ արդեն գործադրածը:

«Լսեմ ես, Վասիլիսա Յեղորովսա, — ասաց նա հաղալով: — Ասում են հայր Գերասիմը քաղաքից ստացել ե...» — «Հերիք ե սուտ խոսես, Իվան Կուզմիչ, — ընդհատեց բերդապետի կինը. — իմանում եմ, դու ուզում ես խորհրդակցություն գումարես և առանց ինձ խոսեք Յեմելյան Պուգաչովի մասին, բայց ինձ չես խարիս: — Իվան Կուզմիչը աչքերը չուեց: «Ե՞ն, այ կնիկ, — ասաց նա, — յեթե գու ամեն ինչ արդեն դիտես, ապա լավ ե մնաս. մենք քո ներկայությամբ ել կիսունք»: — «Այդպես, — պատասխանեց կինը. — քո թնչ գործն ե խօրամանկություն բանացնել. դեհ, մարդ ուղարկիր սպաների հետեւից»:

Մենք նորից հավաքվեցինք: Իվան Կուզմիչը կնոշ ներկայությամբ կարդաց Պուգաչովի կոչը, գրված մի վորեն կիսազրագետ կա-

զակի ձեռքով: Ավազակը հայտարարում եր իր մտադրության մասին՝ անհապաղ հարձակվել մեր բերդի վրա. կազակներին և զինվորներին հրավիրում եր իր հրոսակախմբի մեջ, իսկ հրամանատարներին հորդորում եր չգիմադրել, հակառակ գեպքում՝ մահապատիժ սպառնալով: Կոչը գրված եր կոպիտ, սակայն խիստ արտահայտություններով և պետք ե վտանգավոր տպավորություն թողներ հասարակ մարդկանց մաքերի վրա:

«Տես, ինչ սրիկան ե, — բացականչեց բերդապետի կինը, — վոր դեռ համարձակվում ե առաջարկություն անել մեզ: Նրան դեմ զուրս գալ և նրա վոտքերի տակ դնել դրոշակները: Շնէն շան վորդի: Այսր միթե նա չգիտի, վոր մենք ահա քառասուն տարի յե ծառայության մեջ ենք և փառք աստծո, ամեն ինչ տեսել ենք: Միթե կպտնվեն այնպիսի հրամանատարներ, վորոնք կլսեն այդ սրիկային»:

— Կարծեմ՝ չպետք ե լինեն, — պատասխանեց Իվան Կուզմիչը: — Բայց ասում են չարագործն արդեն շատ բերդեր և գրավել:

«Յերեւում ե, վոր նա իրոք ուժեղ ե», — նկատեց Շվաբրինը:

— Այ, հիմա կիմանանք նրա իսկական ույժը, — ասաց բերդապետը: — Վասիլիսա Յեղորովսա, տուր ինձ ամբարի բանալին: Իվան Իգնատիչ, հապա մի այստեղ բեր բաշկիրին, և Յուլային ել հրամայի՝ մտրակներն առնի նա:

«Կաց, Իվան Կուզմիչ, — ասաց բերդապետի կինը տեղից վեր կենալով: — Թող յես Մաշային տնից մի տեղ տանեմ. թե չե կլսի աղաղակը և կվախենա: Ասենք յես ել, ճիշտն ասած, գլուխ չունեմ հարցաքննության: Բարնլ մնաք»:

Տանջելով հարց ու փորձ անելը հնումն այնպես եր արմատացած դատավարության սովորություններում, վոր այն վոչնչացնող բարերար հրովարտակը յերկար ժամանակ մնում եր առանց վորեն աղդեցության: Կարծում եյին, վոր հանցավորի անձնական խոստովանությունն անհրաժեշտ եր նրա մեղքը լիովին ապացուցելու համար, — մի միտք, վոր վոչ միայն անհիմն ե, այլև միանգամայն հակառակ իրավաբանական առողջ դատողության, քանի վոր յեթե դատապարտյալի ժխտումը չի ընդունվում գորպես ապացուց նրա անմեղության, ապա նրա խոստովանությունն առավել ևս չպետք ե ապացուց լինի նրա մեղավորության: Մինչեւ իսկ հիմա յել ինձ առիթ ե լինում այդ մասին լսել ծեր դատա-

վորներից, վորոնք ափսոսում են բարբարոսական սովորության վերացումը։ Մեր ժամանակ սակայն, վոչ վոք չեր կասկածում տանջելով հարցաքննելու անհրաժեշտության մեջ, վոչ դատավորները, վոչ ել դատապարտյալները։ Յեվ այդպես, բերդապետի հրամանը մեղնից վոչ վոքի չզգարմացը և չանհանդստացը եց։ Իվան Իգնատիչը դնաց բաշկիրի հետեւից, վորին ամբարում փակել եր բերդապետի կինը, և մի քանի բոպեյից հետո կալանավորին բերին նախասենյակի։ Բերդապետը հրամայեց, վոր նրան ներկայացնեն իրեն։

Բաշկիրը դժվարությամբ քայլեց շեմքից (նրա վոտքերը կոճղի մեջ ելին) և հանելով իր յերկար գլխարկը, կանգ առավ դռների մոտ։ Յես նայեցի նրան և ցնցվեցի։ Յերբեք չեմ մոռանա այդ մարդուն։ Յոթանասունից անց կլիներ։ Վոչ քիթ ուներ, վոչ ականջներ։ Գլուխը մաքուր ածիլած եր. մորուքի փոխարեն ցցված ելին սպիտակ մազեր. կարճահասակ եր, վախտ ու կորցած, սակայն նեղլիկ աչքերում դեռևս կրակ եր փայլում։ «Ենէ, — ասաց բերդապետը, արտաքին սոսկալի նշաններից ճանաչելով 1741 թվին պատժած խոռվարներից մեկին¹։ — Բանից դուրս ե գալիս, վոր դու՝ հին դայլ, յեղել ես մեր թակարդներում։ Ասել ե, թե դու առաջին անգամը չե, վոր ապստամբում ես, քանի վոր այդտեսակ ունդել են քո գլուխը։ Մի մոտ արի տեսնեմ. ասա, ով ե քեզ ուղարկել այս կողմերը։»

Մեր բաշկիրը լուռ եր և կատարյալ անմտությամբ նայում եր բերդապետին։ «Ե՞նչ ես լուել, — շարունակեց Իվան Կուզմիչը։ — Հինգի թե ոռուերեն վոչ մի խոսք չես հասկանում։ Յուլայ, հապա մի ձեր լեզվով հարցըրու նրան, թե ով ե նրան ուղարկել մեր բերդը։»

Իվան Կուզմիչի հարցը Յուլայը կրկնեց թաթարների լեզվով, բայց բաշկիրը նրան նայում եր նույն արտահայտությամբ և վոչ

¹ Հեղնակը նկատի ունի բաշկիրների ապստամբությունը, վոր տեսեց 1735 թ., մինչև 1741 թ.։ Բաշկիրները IX դարից բնակություն ելին հաստատել Մերձուրալյան յերկարամասում և դիմացքելով սուսական զաղութացմանը, մի շաբա ապստամբություններ բարձրացրին, վորոնք միշտ ել ճնշվում ելին ամենադաժան յեղանակներով։ Մասնավորապես 1740—1741 թ.թ. ապստամբությունը ճնշելու մեջցին հրաճարակ յեղավ 696 դուռ, մոտ 30 հազար բաշկիրներ մահապատճի յենթարկեցին և կամ բռնությամբ ստրուկներ դարձան։ Սարսափ տարածելու նպատակով ուռն կառավարությունը կտրել տվեց շարժման գործոն մասնակիցների (301 հոդու) քթերն ու ականջները։

մի բառով չպատասխանեց։ «Յախշի, — ասաց բերդապետը. — Քեզ դեռ կխոսացնենք։ Տղերք, հապա հանեք սրա զոլավոր խալաթը և մեջը մի լավ շուլալեք։ Քեզ տեսնեմ, Յուլայ, նրան մի լավ...»

Յերկաւ ինվալիդներ սկսեցին հանել բաշկիրի շուրերը։ Թշառականի գեմքը անհանդստություն եր արտահայտում։ Յերեխաների ձեռքն ընկած փոքրիկ գազանի պես նա իր շուրջն եր նայում։ Իսկ յերբ ինվալիդներից մեկը բռնեց նրա ձեռքերից՝ մատեցնելով իր վկին և ձերունուն շալակն առավ, իսկ Յուլայը մարակը տարավշբերեց՝ այն ժամանակ բաշկիրն սկսեց հառաչել թույլ ու աղեղոսու ձայնով և գլուխը շարժելով բացեց բերանը, ուր լեղվի փոխարեն մսի մի կարճ կտոր եր շարժվում։

Յերբ հիշում եմ, վոր այս դեպքը պատահեց իմ կյանքում և վոր հիմա յես յեկել հասել եմ Ալեքսանդր արքայի¹ խաղաղ թագավորության որերը, չեմ կարող չզգարմանալ լուսավորության արագ նվաճումների և մարդասիրության կանոնների տարածման վրա։ Յերիտասարդ, յեթե իմ այս գրությունները կընկնեն քո ձեռքը, հիշիր, վոր լավագույն և ամենահաստատ փոփոխությունները միայն նրանք են, վորոնք առաջ են գալիս բարքերի բարելավումից, առանց վորմե բռնի ցնցումների։

Բոլորը ապշած մնացին։ «Ե՞ն, — ասաց բերդապետը. — յերեսում ե, վոր սրանից մենք բան չենք կարող իմանալ։ Յուլայ, բաշկիրին տար ամբարը։ Իսկ մենք, պարոնայք, գեռ խռուիլիք ունենք։»

Մենք սկսեցինք քննության առնել մեր գրությունը, յերբ հանկարծ վասիլիսա Յեղորովնան սենյակ շնչառապ և արտակարգ հուզված տեսքով։

«Եղ ինչ ե քեզ պատահել», — հարցրեց ապշած բերդապետը։

— Միերելիներս, անբախտություն... — պատասխանեց Վասիլիսա Յեղորովնան։ — Նիմնեռությունի բերդը վերցրել են այսոր առավատու։ Հայր Գերասիմի գործավորը հենց հիմա վերադարձավ այնտեղից։ Նա տեսել ե, թե բերդն ինչպես են վերցրել։ Բերդապետին յենթարկեց յենթարկեց կախել են։ Բոլոր զինվորներին զերի յեն վերցրել։ Արի տես, վոր չարագրածներն այստեղ ել կգան։

Անսպասելի լուրն ինձ սաստիկ ցնցեց։ Նիմնեռությունի բերդի պետը, մի խաղաղ ու համեստ յերիտասարդ, ծանոթ եր ինձ. դրաւ

¹ Ալեքսանդր I-ը թագավորել է 1801—1825 թ.։

Նից յերկու ամիս առաջ նա իր յերիտասարդ կնոջ հետ յեկավ Որենբուրգից և իջևանեց իվան կուզմիչի տանը: Նիժնեողերնի քերդը գտնվում եր մեղնից քսանհինդ վերստի վրա: Ժամ առ ժամ մենք պետք ե սպասելինք Պուգաչովի գրոհին: Մարիա իվանովսայի վիճակը վառ կերպով պատկերացավ ինձ և սիրատ այնպես ճմլվեց:

— Լսեք, իվան կուզմիչ, — ասացի յես բերդապետին: — Մեր պարտքն ե պաշտպանել բերդը մինչև վերջին շունչը. այս մասին խոսելն անգամ ավելորդ ե: Բայց պետք ե մտածել կանանց անվտանգության մասին: Նրանց Որենբուրգ ուղարկեցեք, յեթե ճանապարհը դեռևս աղատ ե, կամ մի հեռավոր, ավելի վստահելի քերդ, ուր չարագործները չկարողանային հասնել:

Իվան կուզմիչը դարձավ իր կնոջն ու ասաց նրան.

«Լսում ես, այ կին. իսկապես վոր, ձեզ հեռու չուղարկենք՝ մինչև մենք դատաստան անենք խոռվարաների գլխին»:

— Ե՛ս, դատարկ բան ե, — ասաց բերդապետի կինը: — Ո՞ւր ե այստեսակ բերդ, վորտեղ գնդակները չեն հասնում: Բելոզորսկի քերդն ինչնի և անհուսալի: Փառք ասածու, ահա քսաներկու տարի յե, վոր ապրում ենք այստեղ: Բաշկիրներին ել ենք տեսել, կերդիդներին ել. յերեխ Պուգաչովից ել զլուխներս պրծացնենք:

«Լավ, — առարկեց իվան կուզմիչը. — հոժար եմ, մնա, քանի վոր վստահ ես մեր բերդի վրա: Բայց Մաշային ինչ անենք: Լավ ե, յեթե ասենք դիմացանք կամ դրսից սիկուրս¹ հասավ. իսկ յեթե չարագործները բերդը վերցնեն»:

— Դեհ, այն ժամանակ... — Այդ խոսքերի հետ Վասիլիսա Յեկորավսան կարմրեց և լոեց սաստիկ հուզմունքից:

«Վհաչ, Վասիլիսա Յեկորավսա, — շարունակեց բերդապետը, նկատելով, վոր իր խոսքերը թերևս առաջին անգամ նրա կյանքում ազդեցություն ունեցան կնոջ վրա: — Միտք չունի Մաշային այստեղ թողնել: Յեկ, նրան Որենբուրգ ուղարկենք իր սանամոր մոտ, այստեղ ե՛ բավական զորք ու թնդանոթ կա, ե՛ պարիսպն ե քարից: Քեզ ել խորհուրդ կտայի նրա հետ այնտեղ գնայիր. շատ ել թե դու պառակ ես, բայց թե ինչ կլինի քու որը, յեթե փորտեցիան² հարձակմամբ վերցնեն»:

¹ Ո կուրս (18-րդ դարի ռազմական տերմին) — ոգնության ուղարկող գորք: Ֆրանսերեն secours — սեկուրս բառի աղճատված ձևն ե:

² Յուր տեց իս — ամրոց, ամրություն:

— Լավ, — ասաց բերդապետի կինը, — թող քո ասածը լինի. Մաշային ուղարկենք: Իսկ ինձ մաքովդ անդամ չանցկացնես խնդրելու. չեմ գնա: Հարկ չկա այս հասակիս քեզնից բաժանվել և ոտար վայրերում միայնակ գերեզման փնտրել. միասին ապրել ենք, միասին ել կմեռնենք:

«Այդ ել խելքի բան ե, — ասաց բերդապետը: — Դեհ, կարիք չկա դանդաղելու: Գնա Մաշային պատրաստիր ճանապարհի համար: Վաղը առավոտ լուսանալուն պես նրան կուզմարկենք. հետը ուղեկցորդ պահակներ կդնենք, թեպետ և ավելորդ մարդիկ չունենք: Իսկ ուր և Մաշան»:

— Ակուլինա Պամֆիլովսայի մոտ ե, — պատասխանեց բերդապետի կինը: — Նա իրեն վատ դգաց, հենց վոր իմացավ Նիժնեողերնի բերդի առումը. վախենամ թե հիվանդանա: Տեր իմ, աստված, այս ինչ որի հասանք:

Վասիլիսա Յեկորավսան գնաց հոգալու աղջկա մեկնումի մասին: Բերդապետի մոտ խոսակցությունը շարունակվեց, բայց յես այլևս չեյի մասնակցում և վոչինչ չլսեցի: Մարիա իվանովսան յերևացը ընթրիքին՝ գունատ ու լացակումած դեմքով: Մենք լուր ընթրեցինք և սեղանից վեր կացանք սովորականից շուտ. հրաժեշտ տալով ամբողջ ընտանիքին, ամեն մարդ իր տունը գնաց: Բայց յես դիտմամբ մոռացա սուսերս և հետ դարձա այն վերցնելու. յես նախազգում եյի, վոր Մարիա իվանովսային մենակ կգտնեմ: Իրոք, նա ինձ դիմավորեց դռների մոտ և տվեց սուսերս: «Մնաք բարով, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա արցունքն աչքերին. — ինձ Որենբուրգ են ուղարկում: Վողջ կենաք և բախտավոր լինեք. մի գուցե աստված հաջողի մեղ նորից տեսնել միմյանց, իսկ յեթե վոչ...» Այս ասելով նա հեկեկաց: Յես գրկեցի նրան: — Ճնաս բարով, իմ հրեշտակ, — ասացի յես, — գնաս բարով, իմ սիրելի, իմ ցանկալի: Ինչ ել վոր ինձ պատահի, հավատա, վոր իմ վերջին միտքը և վերջին աղոթքը քո մասին կլինի: Մաշան լաց յեղավ, փարվելով իմ կրծքին: Զերմ համբուրեցի նրան և շտապ դուրս յեկա սենյակից:

Գ Հ Ա Խ Խ VII

Հ Ր Ո Ս Ո Ւ Ւ Ը

ԱՌ, գլուխ իմ, գլուխ իմ,
Ծառայողի գլուխ իմ.
Ծառայեց, զլուխս ուղիղ
Յերեսւնյերեք տարիս:
Չունեցավ խինդ, վոչ ել շահ,
Վոչ իր մասին խոռք բայի,
Վոչ ել բարձր ոգտակար
Մի աստիճան իր համար,
Գլուխն իմ լոկ ծառայեց,
Բարձր գույր պուն վաստակեց,
Վրան՝ թղկի միջնափայտ,
Մեկ ել՝ մետաքս մի ողակ:

Ժողովրդական յերգ

Այդ զիշեր յես չքնեցի և չհանվեցի: Յես մտադիր եյի լուսաբացին գնալ բերդի դարպասների մոտ, վորտեղից պետք և ճանապարհեր Մարիա Իվանովնան, և այնտեղ վերջին անգամ հրաժեշտ տալ նրան: Յես մեծ փոփոխություն եյի զգում իմ մեջ. հոգուս տագնապն ինձ համար ավելի դյուրին եր, քան այն վճառությունը, վորի մեջ յես վերջերս ընկրմած եյի: Բաժանման թախծի հետ իմ մեջ միախառնվում եյին և՝ անորոշ, սակայն քաղցր հույսերը, և վտանգների անհամբեր սպասումը, և՝ աղնիվ պատվասիրության զգացումը: Գիշերն աննկատելի անցավ: Յես այն ե, ուղում եյի դուրս գալ անից, յերբ իմ դուռը բացվեց և ինձ ներկայացավ կապրալը, տեղեկացնելով, վոր մեր կազակները գիշերը գուրս են յեկել բերդից, իրենց հետ զոռով տանելով Յուլյային և վոր բերդի մոտերքն անհայտ ձիավորներ են շրջում: Այն միտքը, վոր Մարիա Իվանովնան չի կարողանա ճանապարհել, սարսա-

փեցրեց ինձ. հապճեպ մի քանի կարգադրություններ արի կապրալին և իսկույն շտապեցի բերդապետի մոտ:

Արդեն լուսանում եր: Յես սլանում եյի փողոցով, յերբ լսեցի, վոր կանչում են ինձ: Յես կանդ առա: «Ո՞ւր եք գնում, — ասաց Իվան Իգնատիչը ինձ հասնելով: — Իվան Կուզմիչը հողապատճեցի վրա յե և ինձ ուղարկեց ձեղ կանչելու: Պուգաչն յեկավ: — «Մարիա Իվանովնան գնաց», — հարցրի յես սրտատրով: — «Զհացրեց, — պատասխանեց Իվան Իգնատիչը. — Որենքուրդի ճանապարհը կտրված է, բերդը պաշարված: Լավ չե, Պյոտր Անդրեյիչ»:

Մենք գնացինք դեպի հողապատճեցը, վոր մի բնական բարձրություն եր, ցանկապատով ամրացված: Այնտեղ արդեն խոնված եյին բերդի բոլոր բնակիչները: Բերդապահ զորքը կանգնած եր հրացաններով: Թնդանոթը յերեկվանից այդտեղ եյին բերել: Բերդապահետք գնում գալիս եր իր սակավաթիվ զորքի առջև: Վատանգի մոտիկությունը ծեր ուղմիկին վոգերում եր արտասովոր արիությամբ: Տափաստանի վրա, բերդից վոչ հեռու, քսանի չափ ձիավորներ եյին շրջում: Թվում եր, թե կազակներ են, սակայն նրանց մեջ կային և բաշկիրներ, վորոնց հեշտ կարելի յեր ճանաչել իրենց բուսանի մորթու գդակներից և կապարձներից: Բերդապետն իր զորքի առաջն անցավ, զինվորներին ասելով. «Դեհ, իմ տղաներ, այսոր պաշտպան կանգնենք մեր մայր թագուհուն և ցույց տանք ամբողջ աշխարհին, վոր մենք տղամարդ ենք և մեր յերդումին հաստատու: Զինվորները բարձր ձայնով պատրաստակամություն հայտնեցին: Շվաբրինը կանգնել եր ինձ մոտ և սեռուն աչերով նայում եր թշնամուն: Տափաստանի վրա դես ու դեն ընթացող ձիավորները բերդի մեջ շարժում նկատելով, խմբվեցին մի տեղ և սկսեցին խորհրդակցել: Բերդապետը Իվան Իգնատիչին հրամայեց թնդանոթն ուղղել այդ ամրութիւ վրա և ինքը դրեց պատրույզը: Ռումբը զզալով թռավ նրանց վրայով, առանց մի վնաս պատճառելու: Զինվորները ցըվելով իսկույն և եթ աչքից կորան ու տափաստանն ամայացավ:

Այդ միջոցին հողապատճեց բարձրացավ Վասիլիսա Յեղորովնան, նրա հետ և Մաշան, վորը չեր ուղեցել հետ մնալ նրանից: — «Հը, վհնց ե, — ասաց բերդապետի կինը: — Բատալիան ինչպես ե

¹ Աղճատլած՝ ֆրանսերեն բառու բառից — կոկիվ, ճակատամարտ:

գնում: Հապա թշնամին ուր ես: — «Թշնամին հեռու չե, — պատասխանեց Իվան Կուզմիչը: — Հույս աստված, ամեն ինչ լավ կլինի: Ի՞նչ ե, Մաշա, վախենում ես: — «Վո՞չ, հայրիկ, — պատասխանեց Մարիա Իվանովսան. — տանը մենակ ավելի յեմ վախենում: Այդ խոսքերի հետ նա ինձ նայեց և ույժ գործ դնելով ժպտաց: Յես ակամա սեղմեցի իմ սուսերի դաստապանը, հիշելով, վոր նախորյակին այն ստացել եմ նրա ձեռքից, կարծես թե իմ սիրելուն պաշտպանելու համար: Միրտս այրվում եր: Ինքս ինձ պատկերացրի նրա ասպետը: Յես ծարավի եյի ապացուցելու, վոր արժանի եյի նրա վստահությանը և անհամբեր սկսեցի սպասել վճռական բոպեյին:

Այդ ժամանակ բերդից կես վերստի վրա գտնվող բարձունքի յետեր ձիավոր նոր խմբեր յերեացին և շուտով տափաստանը ծածկվեց նիզակներով ու նետաղեղներով զինված բազմաթիվ մարդկանցով: Նրանց մեջ սպիտակ ձի նստած դալիս եր մի մարդ, կարմիր կաֆտանը հագին, մերկացրած թուրը ձեռքին. դա ինքը Պուգաչովը եր: Նա կանգ առավ. նրան շրջապատեցին և ըստ յերեւույթին նրա հրամանով չորս ձիավորներ առանձնացան և ամբողջ թափով քեցին մինչև բերդը: Մենք ճանաչեցինք նրանց. մեր դավաճաններն եյին: Նրանցից մեկը զլիսարկի վրա բռնած պահում եր մի թերթ թուրթ, մյուսի նիզակի ծայրին հազցված եր Յուլայի գլուխը, վոր նա թափ ձգելով զեպի մեղ շպրտեց անկապատի վրայով: Դժբախտ կալմիկի գլուխն ընկավ բերդապետի վոտքերի մոտ: Դավաճանները զուռում եյին. «Մի կրակեք, դնւրս յեկեք թագավորի առաջ. թագավորն այստեղ ես:

«Հիմա յես ձեր... — գոռաց Իվան Կուզմիչը: — Տղերք, կրակեցք: Մեր զինվորները համազարկ տվին: Նամակը բռնող կազակը յերեաց և ձիուց ընկավ. մյուսները հետ շրջեցին ձիերի գլուխը: Յես նայեցի Մարիա Իվանովսային. Յուլայի արյունաթաթախ գլխի տեսքից ցնցված և համազարկից խլացած, նա, թվում եր թե ուշաթափ ե: Բերդապետը կապրալին մոտ կանչեց և հրամայեց սպանված կազակի ձեռքից վերցնել թուղթը: Կապրալը դաշտ դուրս յեկավ և վերդադավ, իր հետերց քարշ տալով սպանվածի ձին: Նա բերդապետին հանձնեց նամակը: Իվան Կուզմիչը ինքն իրեն կարդաց այն և ապա պատառուեց: Այնինչ՝ խոռվարարները, յերմում ե, վոր հարձակման եյին պատրաստվում: Շուտով գնդակ-

ներն սկսեցին սվավալ մեր ականջների տակ և մի քանի նետեր խրվեցին մեզ մոտիկ գետնի ու ցանկապատի մեջ: «Վասիլիսա Յեգորովսա, — ասաց բերդապետը: — Այստեղ կնկա գործ չկա. Մաշային տար, տեսնում ես աղջիկը վոչ կենդանի յե, վոչ՝ մեռած»:

Գնդակների տարափի տակ խեղճացած Վասիլիսա Յեգորովսան աչք ձգեց տափաստանի վրա, ուր մեծ շարժում եր նկատվում, հետո դարձավ ամուսնուն և ասաց նրան. «Իվան Կուզմիչ, մեր կյանքն ու մահը աստծու ձեռքն ե. որհնիր Մաշային: Մաշա, մոտեցիր հայրիկիդ»:

Պունատ ու դողոջուն Մաշան մոտեցավ Իվան Կուզմիչին, ծունկ չոգեց և գետին խոնարհվեց նրա առաջ: Ծեր բերդապետը յերեք անգամ խաչակնքեց նրան, հետո բարձրացրեց և համրուրելով, ասաց նրան փոխված ձայնով. «Ի՞ն, Մաշա. բախտավոր յեղիր. աղոթիր աստծուն, նա քեզ չի լիի: Յեթե մի լավ մարդ պատահի՝ աստված ձեզ սեր ու համաձայնություն տա: Ապրեցեք այնպես, ինչպես մենք ենք ապրել Վասիլիսա Յեգորովսայի հետ: Դին, մնաս բարով, Մաշա: Վասիլիսա Յեգորովսա, շուտ արա, տար նրանց: (Մաշան ընկավ նրա վզովը և բարձրաձայն լաց յեղավ): — «Յեկ, մենք ել համբուրվենք, — ասաց բերդապետի կինը արտաշվելով: — Մնաս բարով, իմ Իվան Կուզմիչ. թողություն տուր ինձ, յեթե յես վորեե բանով վշտացրել եմ քեզ: «Դնաս բարով, գնաս բարով, մայր իմ, — ասաց բերդապետը, գրկելով իր պառավ կնոջը: Դին, հերիք ե, գնացեք, ասում եմ՝ տուն գնացեք: Հա, յեթե հասցնես, Մաշային սարաֆան¹ հազցրու:»: Բերդապետի կինը հեռացավ իր աղջկա հետ: Յես նայում եյի Մարիա Իվանովսայի հետեւցից. նա յետ նայեց և գլխով արեց ինձ: Այդ բոպեյին Իվան Կուզմիչը գեպի մեղ դարձավ և նրա ամրող ուշադրությունը կենաբռնացավ թշնամու վրա: Խոռվարարները հազարվեցին իրենց առաջնորդի մոտ և հանկարծ սկսեցին ձիերից իջնել: «Հիմա պինդ կացեք, — ասաց բերդապետը, — հրոսում կլինի...»: Այդ բոպեյին սոսկալի ձիչ ու աղաղակ լավեց խոռվարարները թափով վազեցին դեպի բերդը: Մեր թնդանոթը լցված եր կարտեչով: Բերդապետը սպասեց այնքան, մինչև նրանք բռլորովին մոտեցան և հանկարծ նորից կրակեց: Կարտեչը զարկեց

¹ Մարաֆան — ոռոսական կանացի յերկար զգեստ

5 Վասիլիսանի աղջիկը

ամբոխի հենց մեջտեղը: Խոռվարաները յերկու կողմի վրա շրջվեցին և հետ դարձան: Նրանց առաջնորդը մենակ մնաց առջևում... Նա թափահարում եր իր թուրը և կարծես յեռանդուն կերպով հորդորում եր նրանց... Մի ըոսե դադարած ճիշն ու աղաղակն խւկույն նորոգվեց վերստին: «Դեհ, տղերք,— ասաց բերդապետը, — հիմա դարպաները բացեք և թմբուկը զարկեք: Առաջ, տղերք, գրոհի, իմ հետեւից»:

Բերդապետը, իվան իգնատիչը և յես մի ակնթարթում նետվեցինք ամրոցի պատճեղի այն կողմը, սակայն ահարեկված կայազորը տեղից չշարժվեց: «Տղերք, ել ինչու յեք կանգնել, — բղավեց իվան կուզմիչը: — Մեռնելու յեւ մեռնենք, ծառայության դործ ե...»: Այդ ըոսեյին խոռվարաները վազեցին մեղ վրա և ներս խուժեցին բերդը: Թմբուկը լոեց, բերդապահ զորքը հրացանները ձգեց. քիչ մնաց, վոր ինձ վայր գլորեյին, բայց յես վեր կացա և խոռվարաների հետ միասին մտա բերդը: Բերդապետը գլխից վիրավորված կանգնած եր մի խումբ չարագործների մեջ, վորոնք նրանից պահանջում եյին բանալիները: Յես այն եռ ուզում եյի նրան ոգնության նետվել, յերբ մի քանի ուժեղ կաղակներ բռնեցին և գոտիներով կապկալեցին ինձ, ասելով. «Ե՞յ թե ձեզ հախատաստան կանենք, հա, թագավորին անլսուկ հաղատակներ»: Մեզ քարշ տվին փողոցներով. բնակիչները աներից դուրս եյին զալիս աղ ու հացով: Լսվեց զանգահարության ձայնը: Հանկարծ ամբոխի մեջ գոռացին, վոր թագավորը հրապարակի վրա սպասում ե գերիներին և յերդում ե ընդունում: Ժողովուրդը միանդամեց շրջվեց գեպի հրապարակը: Մեզ ևս այն կողմը քշեցին:

Պուգաչովը նստել եր բաղկաթոոի վրա, բերդապետի տան դռանը: Նա հագել եր կաղակի գեղեցիկ կաֆտան, շուրջանակի յերիզած: Վոսկե փնջիկներով սամուրի բարձր գլխարկը թերքած եր նրա փայլատակող աչքերի վրա: Նրա դեմքն ինձ ծանոթ թվաց: Ավագանի կաղակները շրջապատել եյին նրան: Հայր Գերասիմը, գունատ և դողդոջուն, խաչը ձեռքին կանգնել եր տան դռանը և կարծես լուռ պաղատում եր նրան՝ առաջիկա զոհերի համար: Հրապարակի վրա շտապով կախաղան եյին սարքում: Յերբ մենք մոտեցանք, բաշկերները ցրեցին ամբոխը և մեղ ներկայացրին Պուգաչովին: Զանգակների ձայնը հանդարաւց. աիրեց խորին լուռթյուն: «Բերդապետը վ՞ո՞ն ե», — հարցրեց ինքնակոչը: Մեր

ուրյադնիկը գուրս յեկավ ամբոխից և ցույց տվեց իվան կուզմիչին: Պուգաչովն անեղ նայեց ծերունուն և ասաց նրան. «Դու բնչպես համարձակվեցիր ընդիմանալ քո թագավորին»: Բերդապետը, տանջվելով վերքի ցավից, հավաքեց իր վերջին ուժերը և պատասխանեց հաստատուն ձայնով. «Դու իմ թագավորը չես, դու մի գոյ ես և ինքնակոչ, լսում ես»: Պուգաչովը մոայլ հանքերը կիսեց և սպիտակ թաշկինակով նշան արեց: Մի քանի կազակներ բռնեցին ծերունի կապիտանին և քարշ տվին գեպի կախաղանը: Նրա միջնափայտի վրա արդեն նստել եր խեղանդամ բաշկերը, վորին մենք նախորյակին հարցաքննել եյինք: Զեռքում նա բռնել եր պարանը և մի քանի ըռպեյից հետո խեղճ իվան կուզմիչին յես տեսա ողում վեր քաշած: Սյուն ժամանակ Պուգաչովի մոտ բերին Իվան իգնատիչին: «Ճերդվիր, — ասաց նրան Պուգաչովը, — թագավոր Պյոտր Ֆեոդորովիչին»: «Դու մեր թագավորը չես, — պատասխանեց Իվան իգնատիչը, կրկնելով իր կապիտանի խոսքերը: «Դու, քենիս, գոյ ես և ինքնակոչ մեկը»: Պուգաչովը նորից նշան արեց թաշկինակով և արիասիրտ պորուչիկը կախվեց իր ծերունի պետի կողքին:

Ճերթը իմն եր: Յես համարձակ նայում եյի Պուգաչովին, պատրաստվելով կրկնել իմ վեհանձն ընկերների պատասխանը: Այդ ըոսեյին աննկարագրելի զարմանքով խոռվար ավագների մեջ յես տեսա Շվարբինին, մազերը բոլորակ խուզած, հագին կազակի կաֆտան: Նա մատեցավ Պուգաչովին և ականջին մի քանի բառ ասաց: «Կաթել գրան», — ասաց Պուգաչովը առանց ինձ նայելու: Թոկի ողակը ձեղեցին վիզս: Յես սկսեցի ինքս ինձ աղոթք մըմնջալ, անկեղծ զղջում հայտնելով առ աստված՝ իմ բոլոր մեղքերի համար, պաղատելով նրան — փրկել իմ սրտի բոլոր մերձագորներին: Ինձ քարշ տվին դեպի կախաղանը: «Մի վախենա, մի վախենա», — կրկնում եյին ինձ կործանողները, յերեկի իսկապես կամենալով խրախուսել ինձ: Հանկարծ յես մի աղաղակ լսեցի. «Կացեք, անիծյալներ, սպասեցեք...» Դահճճները կանգ առան: Տեսնեմ՝ Սավկեիչն ընկել ե Պուգաչովի վոտները: «Հարազատ հայր, — ասում եր խեղճ դաստիարակւս: — Ի՞նչ շահ ունես մեծատան յերեխայի մահից: Բաց թող նրան, նրա համար քեզ գլխագին կտան, իսկ ուրիշներին որինակ տալու և վախեցնելու նպատակով հրամայիր թեկուղ ինձ՝ ծերունուս կախեն»: Պուգաչովը

նշան արեց և ինձ իսկույն և եթ արձակեցին պարանից ու բաց թողին: «Մեր տերը քեզ ներում ե», — ասացին ինձ: Չեմ կարող ասել, թե այդ բովելին յես ուրախացա իմ փրկության համար, սակայն չեմ ել ասի, վոր այդ մասին յես ափսոսացի: Իմ զգացումներն անչափ խառն եյին: Ինձ նորից տարան ինքնակոչի մոտ և նրա առաջ ծունկ չոգեցրին: Պուգաչովն ինձ յերկարացրեց իր ջղուտ ձեռքը: «Համբուրի ձեռքը, համբուրի ձեռքը», — ասում եյին ականջիս տակ: Բայց յես ամենադաժան մահը կգերադասելի նման անարդ ստորացման: «Տեր իմ Պյոտր Անդրեյիչ, — շնչում եր Սավելիչն իմ յետև կանգնած և հրելով ինձ: — Մի համարի: Ի՞նչ մի դժվար բան ե վոր. թքիր ու համբուրի չարագոր... (թն), համբուրի նրա ձեռքը»: Յես չեյի շարժվում: Պուգաչովը ձեռքը թողեց, քմծիծաղով ասելով. «Յերևի թե նորին բարեհնազությունը շշմել ե ուրախությունից: Բարձրացրեք սրան»: Ինձ բարձրացրին և աղատ թողին: Յես սկսեցի դիտել սոսկալի կատակերդության շարունակությունը:

Բնակիչներն սկսեցին յերդում տալ: Մեկը մյուսի յետերից նրանք մոտենում եյին, համբուրում խաչելությունը և գլուխ տալիս ինքնակոչին: Եերդապահ զինվորները կանգնած եյին հենց այդտեղ: Վաշտի դերձակը, զինված իր բութ՝ մկրատով, կտրում եր նրանց ծամերը: Նրանք մազերը թափ տալով մոտենում եյին առնելու աջը Պուգաչովի, վորը նրանց ներումն եր շնորհում և ընդունում իր հրոսակի մեջ: Այս բոլորը շարունակվեց մոտ յերեք ժամ: Վերջապես Պուգաչովը վեր կացավ բազկաթոռից և իր ավագանիների հետ վայր իջավ տան դռան աստիճաններից: Նրան մոտեցրին մի սպիտակ նժույզ, ճոխ սարքով զարդարված: Յերկու կազակ մտան նրա թեերը և նստեցրին թամբի վրա: Նա հայտնեց հայր Գերասիմին, վոր նրա մոտ և ճաշելու: Այդ բովելին կանացի մի ձայն լսվեց: Մի քանի ավագակներ դեպի տան դուռը քարշ տվին զգզղված և բոլորովին մերկ Վասիլիսա Յեղորօվսային: Նրանցից մեկն արդեն զուգվել եր նրա քաթիպայով: Մյուսները կրում եյին բմբուլե ներքնակները, սնդուկները, թեյի ամանեղենը, սպիտակեղենը և ամեն տեսակ տնային իրեր: «Վճի, աստված իմ, — բղավում եր խեղճ պառավը: — Թողեք, հոգիս ապաշխարեմ: Զեր վոտքին մեռնեմ, ինձ իվան կուզմիչի մոտ տարեք»: Հանկարծ նա նայեց կախաղանին և ճանաչեց իր ամուսնուն:



«Չարագործներ,—կանչեց նա մոլեզին:—Այդ լնչ եք արել նրան: Իմ աչքի լույս իվան կուզմիչ, զինվորի դու կտրիճ գլուխ, վհչ պրուսական սլինները ձեռք տվին քեզ, վհչ թուրքական գնդակ՝ ները. աղնիվ կովում չե, վոր դու զոհեցիր կյանքդ, այլ ընկար փախստական տաժանակը ձեռքից»:—«Կարեցեք եդ պառակ ջադուկի ձայնը», — ասաց Պուգաչովը: Մի յերիտասարդ կազակ սրով խփեց նրա զլսին և նա ընկավ դրսի սանդուխքի վրա: Պուգաչովը մեկնեց. ժողովուրդը հետեւց նրան:



լովեց և պահարանի հետևեց դուրս յեկավ Պալաշան՝ գունատ և դողդոջուն:

«Ա՛խ, Պյոտր Սնդրեյիչ, — ասաց նա ձեռքերն իրար զարկելով: — Ես ինչ սարսափելի որ եր...»:

— Իսկ Մարիա Իվանովսան, — հարցրի յես անհամբեր: — Ի՞նչ յեղավ Մարիա Իվանովսան:

«Որիորդը կենդանի յե, — պատասխանեց Պալաշան: — Նա թագնված և Ակուլինա Պամֆիլովսայի տանը»:

— Յերեցկնո՞յ, — բղավեցի յես սարսափով: — Աստված իմ, չեղոր Պուգաչովս այնտեղ ե...

Յես դուրս նետվեցի սենյակից, մի ակնթարթում ընկա փողոց և գլխապատճ վազեցի գեպի քահանայի տունը, ճանապարհին վոչինչ չտեսնելով և վոչինչ չզգալով: Այնտեղից աղաղակներ եյին լովում, հոհոց ու յերգեր: Պուգաչովը քեֆ եր անում իր ընկերների հետ: Պալաշան իմ հետեւց այնտեղ վազեց: Յես նրան ուղարկեցի, վոր կամացուկ կանչի Ակուլինա Պամֆիլովսային: Մի բոպեյից յերեցկինը դուրս յեկավ հաշտը, դատարկ շտոփը ձեռքին:

— Ի սեր աստծո, մուր և Մարիա Իվանովսան, — հարցրի յես անհարազրելի հուզմունքով:

«Իմ աղավայիշակը պառկած և մահակալիս վրա, այնտեղ՝ միջնորմի հետեւ, — պատասխանեց յերեցկինը: — Ա՛խ, Պյոտր Սնդրեյիչ, քիչ մնաց փորձանք պատահեր, բայց փառք աստծո, ամեն ինչ լավ անցավ: Զարագործը նոր եր նստել ճաշի, յերբ խեղճաղիկն ուշքի յեկավ ու հառաչեց... Են ե՝ լեղիս ճաքեց: Նա ձայնն առավ: — «Են մո և քո տանը հառաչում, այ պառավ»: Յես մինչեւ գետին գլուխ եմ տալիս ավազակին. իմ ազգականուհին ե, տեր իմ. հիվանդացել ե, յերկրորդ շաբաթն ե, ինչ պառկած ե: — «Իսկ քո պագականուհին ջանել ե»: — Զահել ե, տեր իմ: — «Հապա մի ցույց տուր ինձ, պառավ, քո ազգականուհուն»: — Սիրտս մի դողը ընկավ վոր, բայց թե ճարս ինչ: — Համեցիր, տեր իմ. միայն աղջիկը դեռ չի կարող վեր կենա և դա քո վողորմածության մոտ»: — «Վոչինչ, պառավ. յես ինքս կդնամ, կտեսնեմ»: Հապա, անիծյալը գնաց միջնորմի այն կողմը, ինչ ես կարծում, բա, վարագույրը հետ քաշեց, իր բազեյի աչքերով նայեց և վոչինչ... աստված պահեց: Բայց հիավատամ, յես ու տերտերս են ե, պատրաստվել եյինք նահատակի մահով մեռնելու: Բարեբախտաբար, նա՝ իմ

Գ Լ Ո Ւ Խ VIII

Ա Ն Կ Ո Զ Հ Յ Ո Ւ Բ Ը

Անկոչ հյուրը թաթարից ել վատթար եւ¹

Առած

Հրապարակը դատարկվեց: Յես դեռ կանգնած եյի մի տեղում և չեյի կարողանում կարգի բերել մտքերս՝ շփոթված այդքան սարսափելի տպավորություններով:

Ամենից շատ ինձ տանջում եր Մարիա Իվանովսայի դրության անորոշությունը: Ո՞ւր ե նա, ի՞նչ վիճակի յե, արդյոք կարողացավ թագնվել, հուսալի՞յ յե նրա թագստոցը... Տագնապալի մտքերով յես մտա բերգապետի տունը... Ամեն տեղ դատարկություն եր — աթոռները, սեղանները, սնդուկները ջարդ ու փշուր եյին արված, ամանեղենը կոտրատված եր, ամեն ինչ կողոպտված: Յես ներս վազեցի փոքրիկ սանդուխքով, վոր գեպի վերնատունն եր տանում և իմ կյանքում առաջին անգամ մտա Մարիա Իվանովնայի սենյակը: Յես տեսա նրա անկողինը, վոր տակն ու վրա եյին արել ավազակները. պահարանը ջարդված եր և կողոպտված. կանթեղը դեռևս լույս եր տալիս դատարկ տապանակի առջեւ: Չեր կոտրված փոքրիկ հայելին, վոր կախված եր միջապատից: Ո՞ւր եր այդ համեստ, կուսական խուցի տիրուհին: Սոսկալի մի միտք անցավ իմ զլխով. յես նրան պատկերացրի ավազակների ձեռքին... իմ սիրտը ձմլվեց... Յես դառն լաց յեղա և բարձր ձայնով արտասանեցի իմ սիրելու անունը... Այդ բոպեյին մի թեթև աղմուկ

¹ Հավանաբար թաթարական գերլշիանության ժամանակից մնացած տուած, վոր հետադայում արտացոլել ե ցարիզմի վարած աղքահալած քաղաքականությունը մասնավորապես թաթար ժողովրդի նկատմամբ:

աղավնյակը չճանաչեց նրան։ Տեր իմ աստված, յերեխ ես ել պիտի տեսնեյինք, ինչ եմ ասում, հա։ Խեղճ իվան Կուզմիչ, մվ կարող եր մտածել... Հապա Վասիլիսա Յեղորովշամն, հապա Իվան Իգնատիչը։ Ախր նրան ինչո՞ւ համար... Այդ թնջպես յեղավ, վոր ձեզ ինայեցին։ Տես, թե ինչ պառւղն ե Շվաբրինը, Ալեքսեյ Իվանիչը։ Հապա մի տեսնես, մաղերը բոլորակ խուզել ե և հիմա այստեղ՝ մեր տանը քեֆ ե անում նրանց հետ։ Ճարպիկ ե, ինչ եմ ասում։ Իսկ յերբ յես ասացի իմ հիվանդ ազգականուհու մասին, հավատում ես, նա ենպես մի նայեց ինձ, վոր ասես դանակով ծալեցին։ բայց չմատնեց, շնորհակալ եմ գոնե դրա համար։ — Այդ ըոպեցին լսվեցին հարբած հյուրերի աղաղակները և հայր Գերասիմի ձայնը։ Հյուրերը գինի եյին պահանջում, տանտերը կանչում եր կողակցին։ Յերեցկինը ձեռվոտի ընկավ։ «Գինացեք տուն, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա. — հիմա ձեզ հարցնողն մվ ե. չարագործները քեֆ են անում։ Վայ թե ընկնեք հարբածների ձեռքը։ Մնաք բարով, Պյոտր Անդրեյիչ։ Ինչ վոր լինելու յե՝ կլինի. յերեխ աստված այսպես չթողնի։»

Յերեցկինը գնաց։ Փոքր ինչ հանդասացած, յես ուղղվեցի դեպի իմ բնակարանը։ Հրապարակի մոտով անցնելիս, յես տեսա մի քանի բաշկիրներ, վորոնք խոնված եյին կախաղանի մոտ և կախվածների վոտքերից հանում եյին կոշիկները. յես դժվարությամբ զսպեցի դայրույթի բռնկումը, դդալով միջամտության անոգուտ լինելը։ Բերդում վխտում եյին ավաղակները, թալանելով սպաների տները։ Ամեն տեղ լսվում եյին հարբած խոռվարարների ձայները։ Յեկա տուն։ Սավելիչը դիմավորեց ինձ տան շեմքին։ «Փառք աստծո, — կանչեց նա ինձ տեսնելով։ — Ասի՞ վայ թե քեզ նորից բռնեցին։ Ե՞ն, տեր իմ Պյոտր Անդրեյիչ. հավատնում ես, սրիկաները մեր ամեն ինչը թալանեցին. շորերը, սպիտակեղենը, իրերը, ամանեղենը — վոչինչ չթողին։ Համա ինչ արած... Աստծուն փառք, վոր քեզ կենդանի բաց են թողել.. Իսկ դու, տեր իմ, ճանաչեցիր ատամանին։»

— Զե, չճանաչեցի. իսկ նա մվ ե վոր։

«Ի՞նչպես թե, տեր իմ։ Միթե դու մոռացել ես են հարբեցովին, վոր գլուխոդ յուղելով առավ քո մուշտակը իջևանատան բակում։ Նապաստակի մորթուց կարած մուշտակը բոլորովին նոր եր, իսկ նա՝ են գաղանն իր վրա քաշելիս պատառապատառ արեց։»

Յես ապշեցի։ Իսկապես, Պուգաչովի նմանությունն իմ առաջնորդի հետ ապշեցուցիչ եր։ Յես հավաստիացա, վոր Պուգաչովը և նա միենույն անձնավորությունն եյին և նող միայն հասկացա ինձ խնայելու պատճառը։ Յես չեյի կարող չզարմանալ հանգամանքների տարորինակ կապակցության վրա — շրջմոլիկին նվիրած մուշտակն ինձ փրկում ե կախաղանի պարանից և իջևանատներում շրջող հարբեցողը բերգեր ե պաշարում ու ցնցում պետությունը։

«Ուտել չես ուզում, — հարցրեց իր սովորությունների մեջ անփոփի Սավելիչը։ — Տանը վոչինչ չկա, գնամ, փնտրեմ, մի բան պատրաստեմ քեզ համար։»

Մենակ մնալով յես խորասուզվեցի խորհրդածությունների մեջ։ Ի՞նչ պիտի անեյի յես։ Մնալ չարագործի իշխանության տակ գտնվող բերդում կամ հետեւ նըրա հրօսակին, — անվայել եր սպայի համար։ Պարտականությունն պահանջում եր, վոր յես ներկայանայի այնտեղ, ուր իմ ծառայությունը դեռ կարող եր ոգտակար լինել ներկա դժվարին հանգամանքներում։ Սակայն իմ սերը սաստիկ դրդում եր ինձ մնալ Մարիա Իվանովնայի մոտ և լինել նըրա պաշտպանն ու հովանավորը։ Թեպետ և յես նախատեսում եյի հանգամանքների արագ և աներկրա փոփոխություն, բայց և այնպես չեյի կարող չդողավ, պատկերացնելով նըրա դրության վտանգավորությունը։

Իմ խորհրդածություններն ընդհատվեցին կաղակներից մեկի գալով, վորը վաղելով յեկավ հայտարարելու, «վոր ինքը՝ մեծ թագավորը քեզ իր մոտ ե պահանջում»։ — «Իսկ վհրաեղ ե նա», — հարցրի յես, պատրաստվելով հանգանդվել։

«Եերդապետի տանը, — պատասխանեց կաղակը։ — Ճաշից հետո մեր տերը բաղանիք գնաց, իսկ հիմա հանգստանում ե։ Հա, ձերդ բարեծննդություն, ամեն ինչից յերեւում ե, վոր յերեւելի մարդ ե. ճաշին բարեհաճեց ուտեղ յերկու տապակած խոզի ճուտ, իսկ բաղանիքում այնքան տաք ջրով ե լողացել, վոր Տարաս Կուրոչկինը յեր դիմացել ավելը տվել եր ֆոմկա Բիկրայեվին և ինքը մի կերպ ուշքի յեկել սառը ջրով։ Խոսք չկա, բոլոր շարժուկացը մեծունական ե... իսկ բաղանիքում, ասում են, ցույց ե տվել իր թագավորական նշանները՝ կրծքի վրա. մի կողմը յերկողիսանի արծիվն ե հինգ կոպեկանոցի մեծությամբ, իսկ մյուսը՝ իր պատկերը»։

Յես հարկ չհամարեցի հերքել կազակի կարծիքը և նրա հետ միասին ուղղվեցի դեպի բերդապետի տունը, նախապես յերեակայելով իմ տեսակցությունը Պուգաչովի հետ, ջանալով նախազուշակել, թե այն ինչով կվերջանա: Ընթերցողը հեշտ կարող է պատկերացնել, վոր յես բնավ սառնարյուն չեր:

Սկսում եր մթնել, յերբ յես յեկա բերդապետի տունը: Կախազանն իր զոհերով սկին եր տալիս: Խեղճ բերդապետուհու մարմինը դեռևս ընկած մնացել եր տան դռների մոտ, ուր յերկու կազակներ պահապան եյին կանգնած: Ինձ ուղեկցող կազակը գնաց իմ մասին զեկուցելու և իսկույն և եթ վերադառնալով, ինձ ներս տարավ այն սենյակը, ուր նախորյակին յես այնպես քնքույց հրաժեշտ տվի Մարիա Իվանովսային:

Իմ աչքի առաջ բացվեց արտասովոր մի պատկեր: Մփոցով ծածկված և վրան շտոֆներ ու բաժակներ դրած սեղանի շուրջը նստած եյին Պուգաչովը և տասի չափ կազակ ավագներ, գդակները գլխաներին և գունազեղ շապիկներ հազած, զինուց տաքացած, կարմրած քիթ ու մոռութով և փայլատակող աչքերով: Նրանց մեջ չկար վոչ Շվարբինը, վոչ ել մեր ուրյադնիկը՝ նորակոչ դավաճանները: «Ա», ձերդ բարեծնուղություն, — ասաց Պուգաչովն ինձ տեսնելով: — Բարով յեկաք, տեղ ու պատիվ ձեզ, համեցեք»: Զրուցակիցներն ինձ տեղ տվին: Յես լուռ նստեցի սեղանի ծայրին: Կողքիս նստած յերիտասարդ կազակը՝ բարեկազմ և գեղեցիկ, ինձ համար մի բաժակ հասարակ զինի լցրեց, վորին յես ձեռք չտվի: Հետաքրքրությամբ սկսեցի դիտել այդ հավաքույթը: Պուգաչովը նստած եր ամենից վերև, արմունկները սեղանին հենած, ու մոռուքի տակ պահելով իր լայն բռունցքը: Նրա զիմագծերը՝ կանոնավոր և բավական դուրեկան, վոչ մի կատաղի արտահայտություն չունեյին: Նա ստեպատեպ զիմում եր հիսուն տարեկան մի մարդու, մերթ գրափանվանելով նրան, մերթ՝ Տիմոֆեյիչ, իսկ յերբեմն ել նրան մեծարելով վորպես իր քեռուն: Բոլորը միմյանց հետ վարվում եյին ինչպես ընկերներ և առանձնապես վոչ մի գերապատվություն չեյին տալիս իրենց առաջնորդին: Խոսակցությունը առավատվա հարձակման, խոռվության հաջողության և առաջիկա գործողությունների շուրջն եւ: Ամեն մեկը պարճենում եր, առաջարկում իր կարծիքները և համարձակ կերպով առարկում Պուգաչովին: Յեվ հենց այս արտասովոր ուղմական խորհրդում վու-

րոշվեց գնալ Որենբուրգի վրա, հանդուգն մի շարժում, վոր քիչ մնաց պատկվեր աղետալի հաջողությամբ: Արշավանքը հայտարարված եր վաղը: «Դեհ, յեղայրներ, — ասաց Պուգաչովը, — յեկեք, քնից առաջ յերգենք իմ սիրելի յերգը: Չումակնվ¹, սկսիր»: — Իմ հարեանը բարակ ձայնով սկսեց բուռլակների² մելամաղձոտ յերգը և բոլորը միասին ձայնակցեցին.

Մի առսափիր, կանաչ, մայր կաղնու անտառ, Մի խանգարից քաջիս իր միտքն անելու, չարցման պիտ կանգնեմ վաղ առավոտյան, Ահեղ արքայի գեմ ու հանդման: Տիրակալ արքան ինձ հարցեր կտա — Ասա, գեղջուկի տղա, այ ջահել, Ի՞նչպես, ում հետ ես գողություն արել, Յելել թալանի, քեզ հետ շատ մարդ կար: Կասեմ քեզ մեր հույս, արքա ուղղափառ, Ճշմարտությունը ահա կասեմ քեզ, Վոր ունեցել եմ լոկ չորս ընկեր յես: Առաջին ընկերն եր գիշերը մութ, Յերկրորդը՝ դանակ պողպատից շինած, Յերրորդ ընկերն իմ՝ նժույզս եր հմուտ, Զորրորդ ընկերը՝ աղեղն եր ձգված, Մունետիկները՝ նետերը շաշուն: Խորեց աղավին արքան ուղղափառ, Պատիվ քեզ, գեղջուկի զավակ, Վոր իմացել ես զողանալու հետ և պատասխան տալ, Հենց դրա համար նվեր քեզ, տղա, Դաշտումը փայտակերտ բարձր մի գզյակ, Վոր ունի զույդ այուն ու մի միջնափայտ:

Անհնար և նկարագրել, թե ինչ աղղեցություն թողեց ինձ վրա կախաղանի մասին հյուսած հասարակ ժողովրդական յերգը, վոր յերգում եյին կախաղանի դատապարտված մարդիկ: Նրանց

¹ Զումար և կողի, Ֆեղոր — Յաիցկի կազակներից, Պուգաչովի բանակի հրետանապետը: Հետապայում դավաճանեց Պուգաչովին և նրան հանձնեց կառավարության ձեռքը: Վերջինս խոստացված պարզեների փոխարեն Չումակովին զրկեց կազակի կոչումից և աքորեց Ռիգայի նահանգապետի հսկողության տակ:

² Այսպես եյին կոչվում Վոլգա գետի և նրա նավակայաններում աշխատող բանվորները, վորոնք ընդհանուր մի պարանից կամ փոկից լծված, ափով՝ հոսանքն ի վեր քաշում եյին բնանատար նավերը:

ահավոր դեմքերը, ներդաշնակ ձայները, թախծոտ արտահայտությունը, վոր նրանք տալիս եյին առանց այդ ել արտահայտիչ բառերին — այդ բոլորն ինձ ցնցեցին մի ինչ վոր պիտիքական¹ սարսափով:

Հյուրերն ելի մի-մի բաժակ խմեցին, սեղանից վեր կացան. Ահքաժեշտ տվին Պուգաչովին: Յես ուզում եյի հետեւ նըանց, սաւ կայն Պուգաչովն ասաց ինձ. «Նստիր, յես ուզում եմ քեզ հետ մի քիչ խոսելու»: — ՄԵՆՔ ԹԱՐԳԻՆՔ յերես առ յերես:

Մի քանի ըոպէ տեսց մեր՝ յերկուստեք տիրող լոռոթյունը:
Պուգաչովն անթարթ ինձ եր նայում, խարեբայության և ծաղ-
բանքի զարմանալի արտահայտությամբ, յերբեմն կկոցելով իր
ձախ աչքը: Վերջապես նա քմծիծաղ տվեց այնպիսի մի սրտա-
բուղիս խիճդով, վոր յես, նրան նայելով սկսեցի ծիծաղել, ինքս
ել չիմանալով թե ինչու:

«Ի՞նչ ե, ձերդ բարեծննդություն, — ասաց նա ինձ: — Խոստովանվիր, վախեցմը, յերբ իմ տղերքը թոկը վիզդ ձգեցին: Յերեկ՝ վախից լեզիդ պատռվեց... Իսկ միջնափայտի վրա կճոճվեյիր, յեթե չլիներ քո ծառան: Յես իսկույն և եթ ճանաչեցի ձեր քափթափին: Հը, արդյոք մտքովդ կանցներ, ձերդ բարեծննդություն, վոր քեզ ումետ բերողհասցնող մարդն ինքը մեծ թագավորն եր: (Այդ խոսքերի հետ նա վեճ և խորհրդավոր տեսք ընդունեց): Դու իմ առաջ շատ մեղավոր ես, — շարունակեց նա. — բայց յես քեզ ներումն շնորհեցի քո բարերարության համար, նրա համար, վոր դու ինձ ոգնություն ցույց տվիր, յերբ յես հարկադրված եյի թաքնվել իմ թշնամիներից: Ե՛, դեռ ինչեր կտեսնես: Այսպես կպարզմատրեմ քեզ, յերբ ստանամ իմ թագավորությունը: Խոստանմամբ ես ինձ հոգով-սրտով ծառայել»:

Սրիկայի տված հարցը և նրա հանդգնությունն ինձ այնպես դլարձալի թվաց, վոր յես չկարողացա քմծիծաղ չտալ:

«Ինչի՞ վրա ես ծիծառում, — հարցրեց նա դեմքը խոժոռելով: — Զլինի՞ թե չես հավատում, վոր յես մեծ թագավոր եմ: Ուղիղն ասա՞»:

Յես շփոթվեցի: Յես անկարող եյի շրջմոլիկին թագավոր ճանաչել. դա ինձ թվաղ աններելի փոքրություն: Յերես առ յերես

խաբերա անվանել նրան — կոչանակեր ինձ կործանման յենթար-
կել. և այս, ինչին յես պատրաստ եյի կախաղանի տակ բոլոր
ժողովրդի ներկայությամբ և զայրույթից կրակ կարած միջոցին,
հիմա ինձ թվում եր անոգուտ պարծենկոտություն։ Յես տա-
տանկում եյի։ Պուգաչովը մոայլ սպասում եր իմ պատրասխանին։
Վերջապես (գեռ հիմա յել ինքնագոհությամբ եմ հիշում այդ
ըսպեն) պարագի զգացումն իմ մեջ գերազանցեց մարդկային թու-
լությունը։ Յես պատասխանեցի Պուգաչովին. «Լիսիր. բոլոր ճշմար-
տությունը կասեմ քեզ։ Ինքդ դատիր, արդյոք յես կարո՞ղ եմ քեզ
թագավոր ճանաչել։ Դու բանիմաց մարդ ես. դու ինքդ կտես-
նեյիր, վոր յես խորամանկություն եմ բանացնում»։

«Հապա ով եմ յես քո կարծիքով»

— Աստված գիտե քեզ. բայց ով ել վոր լինես, դու վտանգավոր խաղ ես խաղում:

Պուգաչովը արագ ինձ նայեց: «Ասել ե, թե դու չե՞ս հավատում, — ասաց նա, — վոր յես Պյոտրովիչ թագավորն եմ: Իե, լավ: Իսկ միթե կտրիմի համար հաջողություն չկա: Միթե հին ժամանակները Գրիշկա Ոտրեպյեվը¹ չի՞ թագավորել: Ինչ ուզում ես մտածիր իմ մասին, բայց ինձնից ձեռք մի քաշի: Քո ինչ գործն ե, թե այսպես ե, կամ՝ այնպես: Ցերկումն ել մի հաշվիլ ե: Հավատարիմ ու ճշմարտությամբ ծառայիր ինձ և յես քեզ ֆերդմարշալի ու իշխանի աստիճան կտամ: Խելքդ ինչ ե կտրում»:

— Վաչ, — պատասխանեցի յես հաստատ: — Յես ծագումով աղ-
նվական եմ. յես յերդում եմ տվել թագուհի-կայսրուհուն. քեզ
ծառայել չեմ կարող: Թե վոր դու իսկապես լավություն ես կա-
մենում ինձ, ապա թող գնամ Որենքուրդ:

¹ Մոսկվյան Ռուս'ի (Русь) թագավոր 1605—1606 թ.: Հին պատմագրության մեջ այսպես կոչված «Խառնակ տարիների ժամանակաշրջանում» («Смута») Դրէշկա Ոտքեալյեվը հանդես յեկավ վորպես Իոնան Ահեղի կրտսեր վորդի Դմիտրից, վորը մինչ այդ իրոք մահացած եր կամ սպանած զահակալ Բորիս Գորդոնիի մարդկանց ձեռքով: Խոշոր ազնվականությունը և քաղաքային բուրժուացիանց մականունն են տվել նրան: Պատմական աշխատությունների մեջ նա կոչվում են նաև Կեղծ-Դմիտրիյ և նույնացվում փախտական վանական վոմին Գրէշկա Ոտքեալյեվի հետ: Իրականում թէ Կեղծ-Դմիտրիյ I-ը և թէ II-ը գործիք են յեղել լին աղնվականության ձեռքին և տիրող կարգերից դժուն գյուղացիության ապստամբությունները փորձել են ոդտագործել հոգուտ իրենց ուսակցին նպատակների:

Պուգաչովը միտք արեց: «Իսկ թե վոր թողնեմ, — ասաց նա, — խոսք կտաս իմ դեմ դուրս չգալ»:

— Ի՞նչպես կարող եմ այդպիսի խոստում տալ, — պատասխանեցի յես: — Ինքդ գիտես, վոր իմ կամքով չե. կհրամայենք դում դուրս գալ՝ կդամ, ճարս ինչ: Հիմա զու ինքդ ես մեծավոր, ինքդ ես հնագանդություն պահանջում քո մարդկանցից: Ինչի՞նման կլինի, յեթե յես ծառայությունից հրաժարվեմ, յերբ իմ ծառայությունը պետք գա: Կյանքս քո ձեռքումն ե. թե բաց կթողնես — շնորհակալ եմ, թե մահապատիժ կտաս — աստված քեզ դատավոր, իսկ յես քեզ ճշմարիտն ասացի:

Իմ անկեղծությունը ամշակցրեց Պուգաչովին: «Թող այդպիս լինի, — ասաց նա ուսիս խփելով: — Մահապատիժն իր տեղը, ներումն իր տեղը: Գնա՝ ուր ուղում ես, արա՝ ինչ քեփդ տա: Վաղը յեկ ինձ մնաս-բարովի, իսկ հիմա գնա քնելու, իմ քունն ել և տանում»:

Յես թողի Պուգաչովին և փողոց դուրս յեկա: Խաղաղ և ցուրտ գիշեր եր: Լուսինն ու աստղերը պայծառ փայլում եյին, լուսավորելով հրապարակն ու կախաղանը: Բերդում ամեն տեղ հանդիսաւ եր և մութ: Միայն կարակում կրակի լույս եր յերեսում և լսում եյին ուշացած դվարձացողների աղաղակները: Յես հայցքս դարձրի քահանայի տան կողմը: Պատուհանի փեղկերն ու դարպասը փակ եյին: Թվում եր, թե այնտեղ ամեն ինչ պապանձվել ե:

Յես տուն յեկա և Սավելիչին տեսա իմ բացակայությունը վողբալիս: Նրան անասելի ուրախացրեց իմ աղատության լուրը: «Փառք քեղ, տեր, — ասաց նա յերեսը խաչակնքելով: — Լույսը բացվելուն պես զուրս կզանք բերդից և կզնանք ուր վոր աստված հաջողի: Քեզ համար բանման եմ պատրաստել, անուշ արա, տեր իմ, և մինչեւ առավոտ քնիր հանգիստ, վոնց վոր թրիստոսի գոգում»:

Յես հետեւցի նրա խորհրդին և միծ ախորժակով ընթրելով, քնեցի մերկ հատակի վրա, հողեպես և ֆիզիքապես սաստիկ հոգնած:

Գ Է Ր Ի Խ Խ Խ

Հ Մ Ա Ժ Ե Շ Տ

Ծանոթանալը քաղցր եր շատ,
Գեղեցկուհի, մ, այնպես,
Անջատումը՝ տիտուր, վհատ,
Հոգուց եմ զատվում կարծես:
Խորասկով¹

Վաղ առավոտյան թմբուկն ինձ արթնացրեց: Գնացի հավաքավայրը: Այնտեղ արդեն շարքի եյին կանգնում Պուգաչովի հրապակները կախաղանի մոտ, վորից դեռևս կախված եյին յերեկվագոները: Կաղակները ձիավորված եյին, զինվորները՝ հրացաններն ուսերին: Դրոշակները փողփողում եյին: Մի քանի թնդանոթներ, վորոնց մեջ յես ճանաչեցի և մերը, դրված եյին ուղմական հրետասայլերի վրա: Բնակիչները բոլորն ել այդտեղ եյին, սպասելով ինքնակոչին: Բերդապետի տան առաջ մի կաղակ բռնած պահում եր կիրգիզական գեղեցիկ, սպիտակ ձիու սանձը: Յես աչքերով վորոնում եյի բերդապետի կնոջ դիակը: Նա փոքր ինչ մի կողմ եր տարված և ծածկված եր ճիլոպով: Վերջապես Պուգաչովը դուրս յեկավ տան հաշտից: Ժողովուրդը գդակները հանեց: Պուգաչովը կանգ առավ դրանը և վողջունեց բոլորին: Ավանդներից մեկը նրան տվեց մի պարկ՝ լի պղնձե դրամներով, և սկսեց բռով շաղ տալ: Ժողովուրդն աղաղակներով վրա ընկավ հավաքելու և շատերի կողն ու կուշտը ջարդվեց: Պուգաչովին շըշապատեցին նրա համախոհներից ամենապլիսավորները: Նրանց մեջ կանգնել եր և Շվաբրինը: Մեր հայցքները հանդիպեցին. իմ հայցքի մեջ նա կարող եր կարդալ արհամարհանք. նա յերեսը շուր տվեց անկեղծ

զայրույթի և շինծու հեղնանքի արտահայտությամբ: Ինձ ամբոխի մեջ տեսնելով՝ Պուգաչովը դիմով արեց և մոտ կանչեց: «Լսիր, — ասաց նա ինձ: — Հենց այս ժամին կդնաս Որենքուրդ և իմ անունից նահանգապետին և բոլոր գեներալներին կհայտարարես, վորմի շարաթից հետո ինձ սպասեն: Դու նրանց խորհուրդ տուր մանկական սիրով ու հնագանդությամբ դիմավորել ինձ, թե չե՞ ամենադան մահից չեն պրօնի: Բարի ճանապարհ, ձերդ բարեծնդություն, Հետո նա ժողովրդին դարձավ և ասաց, ցույց տաւով՝ Շվարբինին: «Անձ ձեզ, իմ յերեխաներ, նոր բերդապետը: Ամեն բանում լսեցեք նրան, իսկ նա իմ առջև պատասխանառու յեծեզ և բերդի համար: Այս խոսքերը յես սարսափով լսեցի: Շվարբինը դարձավ բերդապետ. Մարիա իդանովնան մնում է նրա իշխանության տակ: Աստված իմ, ի՞նչ կլինի նրա վիճակը: Պուգաչովը ցած իջավ դռան աստիճաններից: Զին մոտեցրին նրան: Նա ճարպկությամբ թռավ թամբի վրա, չսպասելով կաղակներին, վորոնք այն ե՝ ուղում եյին նստեցնել նրան:

Այդ ժամանակ ամբոխի միջից տեսնեմ դուրս յեկավ իմ Սավելիչը, մոտեցավ Պուգաչովին և նրան տվեց մի թերթ թուղթ: Խելքու բան չեր կտրում, թե դրանից ինչ դուրս կդա: «Այս ի՞նչ ե», գոռող հարցրեց Պուգաչովը:

Կարդա և հրամանքդ կիմանա, — պատասխանեց Սավելիչը: Պուգաչովը թուղթը վերցրեց և յերկար նայեց նշանակալից տեսաքով: «Ի՞նչ դժար ես գրում, — ասաց նա վերջապես: — Եստեղ մեր պայծառ աչքերը վոչինչ չեն կարում ջոկել: Ո՞ւր է իմ որերդարսուղարք:¹

Յերիտասարդի մեկը արագ մոտ վաղեց Պուգաչովին: «Բարձր կարդա», — ասաց ինքնակոչը, թուղթը նրան տալով: Յես անչափ հետաքրքրվում եյի իմանալու, թե ինչի մասին կարող եր իմ դաստիարակի խելքին փչել Պուգաչովին թուղթ գրելու: Որերդարտուղարն սկսեց բարձրաձայն, վանկ առ վանկ կարդալ հետեւյալը.

«Յերկու խալաթ, միտկալի և մետաքսե՝ զոլավոր — վեց մանեթ»:

— Այս ի՞նչ բան ե, — ասաց Պուգաչովը հոնքերը կիտելով:

¹ Քլիսավոր քարտուղար:

«Հրամայիր՝ մնացածը կարդան», — անվրդով պատասխանեց Սավելիչը:

Ոքեր-քարտուղարը շարունակեց:

«Մի մունդիր բարակ, կանաչ մահուդից — յոթ մանեթ:

«Մի սպիտակ մահուդի շալվար — հինգ մանեթ:

«Բաթանե տասներկու հոլանդական շապիկներ, մանժետներով — տաս մանեթ:

«Ճանապարհի փոքրիկ մի սնդուկ, թեյամաններով — յերկու մանեթ ու կես...»

— Այս ի՞նչ վչոց ե, — ընդհատեց Պուգաչովը: — Յես ի՞նչ գործ ունեմ սնդուկների և մանժետներով շալվարների հետ:

Սավելիչը խեղդված հազար և սկսեց լացարություններ տալ: «Ես վոր գրած ե, հրամանքդ կտեսնի, վոր իմ տիրոջ գույքի ցուցակն ե, չարագործներն են թալանել...»

— Ի՞նչ չարագործներ, — ահեղ հարցրեց Պուգաչովը:

«Ներողություն, բերանիցս թռավ, — պատասխանեց Սավելիչը: — Զարագործները չարագործներ չեն, բայց քո տղերքը մեր տունը մի քիչ մաղել են ու բանաման են տարել: Մի զայրանա: Ճին վոր ձի յե, չորս վատքով ելի սայթաքում ե: Հրամայի, թող կարդա պլծնիք:»

— Կարդա, — ասաց Պուգաչովը: Քարտուղարը շարունակեց:

«Մի չմի վերմակ, մյուսը տափտայից¹, բամբկուն — չորս մանեթ:

«Մի քուրք աղվեսի մորթուց, վրան կարմիր ոատին² քաշած — 40 մանեթ:

«Մեկ ել նապաստակի մուշտակը, վոր իմ տերը ձեր վողումածության բախչեց իշխանատանը — 15 մանեթ»:

— Այդ ի՞նչ բան ե, — գոռաց Պուգաչովը հրացայտ աչքերը փայլեցնելով:

Խսոսովանում եմ, վոր յես սաստիկ վախեցա իմ խեղճ դաստիարակի համար: Նա այն ե՝ ուղում եր նորից բացարություններ տալ սակայն Պուգաչովը նրան ընդհատեց. «Ի՞նչպես դու

¹ Տա Փտա — պարոկական մետաքսե գործվածք, վոր լայն գործածություն ուներ հին Ռուսաստանում՝ արտոնյալ գաների մեջ

² Թա Թին — յերեսը խոպողավոր բրդե գործվածք

³ Կապիտանի աղջիկը

համարձակվեցիր եստեսակ դատարկ բաներով յերևալ իմ աչքին, — զոռաց նա թուղթը քարտուղարի ձեռքից խելեռվ և այն Սավելիչի յերեսին շպրտելով: — Հիմար ծերուկ, նրանց թալանել են — ինչ մի մեծ դժբախտություն ե յեղել: Լավ իմացիր, քավթառ, վոր դու պետք ե հավիտյանս աղոթք անես իմ և իմ տղաների համար, վոր քեզ և քո բարինին այստեղ չեն կախել ինձ չհնարանդվողների հետ միասին... Նապաստակի մուշտակը: Յես քեզ նաշպաստակի մուշտակ ցույց կտամ: Իսկ դու գիտե՞ս, վոր յես կհրամայեմ կենդանի-կենդանի քո կաշին քերթել մուշտակի համար»:

— Ինչպես կհրամայես, — պատասխանեց Սավելիչը. — համայն ձորտ մարդ եմ և իմ տիրոջ գույքի համար պետք ե պատասխան տամ:

Յերեւում եր, վոր Պուգաչովը մեծահոգության եր յեկել: Նա շրջեց ձիու գլուխը և հեռացավ այլևս վոչ մի խոսք չասելով: Շվաբրինը և ավագանին հետեւցին նրան: Հրոսակը բերդից դուրս յեկավ շարք կանգնած: Ժողովուրդը գնաց Պուգաչովին ճանապարհ դնելու: Հրապարակի վրա յես մենակ մնացի Սավելիչի հետ: Իմ վերակացուն ձեռքին բռնել եր իր ցուցակը և խորին ափսուանքով գննում եր այն:

Տեսնելով իմ բարեի համաձայնությունը Պուգաչովի հետ, նա կարծել եր, թե կարելի յե դա գործադրել հոգուտ մեզ, բայց այդ խելոք դիտավորությունը նրան չհաջողվեց: Յես քիչ եր մնում՝ նախատեյի նրան իր անտեղի յեռանդի համար և չկարողացած ծիծառ պահել: «Ծիծառիր, տեր իմ, — պատասխանեց Սավելիչը. — ծիծառիր... իսկ յերբ ստիպված կլինենք նորից-նոր ձեռք բերել մեր ամբողջ տնտեսությունը, են ժամանակ կտեսնենք՝ ծիծառելի կլինի, թե վոչ»:

Յես շտապեցի քահանայի տունը՝ Մարիա իվանովայի հետ տեսնվելու համար: Յերեցինը մեզ դիմավորեց տիսուր տեղեկությամբ: Գիշերը Մարիա իվանովան հիվանդացել եր սաստիկ ջերմախտով: Նա պառկած եր գիտակցությունը կորցրած և զառանցանքների մեջ: Յերեցինն ինձ տարավ նրա սենյակը: Յես հուշելու հոտեցաց նրա մահակալին: Նրա գեմքի փոփոխությունն ինձ ապշեցրեց: Հիվանդն ինձ չճանաչեց: Յերկար յես կանգնած եյի նրա առջև, չլսելով վոչ հայր Դերասիմին, վոչ ել նրա բարի կնոջը, վորոնք կարծես թե միթարում եյին ինձ: Մոայլ մտքերն ալե-

կոծում եյին ինձ: Չարանենդ խոռվարաների մեջ մնացած խեղճ, անողնական վորքուհու վիճակը և իմ անձնական անզորությունը սարսափեցնում եր ինձ: Շվաբրինը, ամենից շատ Շվաբրինն եր այրում իմ յերևակայությունը: Ինքնակոչից իշխանություն ստանալով և զեկավար լինելով բերդի մեջ, ուր մնացել եր դժբախտ աղջիկը՝ նրա ատելության անմեղ առարկան, — նա ամեն ինչ կարող եր անել: Ի՞նչ պիտի անեյի յես: Ի՞նչպես ոգնություն ցույց տալ նրան: Ի՞նչպես աղատել չարագործի ձեռքից: Մնում եր մի միջոց. վճռեցի հենց նույն ժամին մեկնել Որենքուրդ, վորպեսզի շտապեցնեմ Բելոգորսկի բերդն աղատելը և ըստ հնարավորության աշակեց այդ բանին: Յես հրաժեշտ տվի քահանային և Ակուլինա Պամֆիլովսային, թախանձադին հանձնարարելով նրան այն աղջկան, վորին յես արդեն իմ կինն եյի համարում: Յես քոնեցի խեղճ աղջկա ձեռքը և համբուրեցի այն, արցունքով վողելութ: «Գնաք բարով, — ասում ե յերեցկինը, ինձ ճանապարհելով. — գնաք բարով, Պյոտր Սնդրեյիչ: Գուցե ավելի լավ ժամանակ հանդիպենք: Մի մոռանաք մեզ և զուտշուտ նամակ գրեք: Խեղճ Մարիա իվանովային հիմա ձեղանից բացի վոչ մեխիթարով ունի, վոչ հովանավոր»:

Հրապարակ դուրս զալով յես մի բոպե կանգ առա, նայեցի կախազանին, զլուխ խոնարհեցի նրան, բերդից դուրս յեկա և Որենքուրդի ճանապարհով քայլեցի Սավելիչի ուղեկցությամբ, վորը ինձնից հետ չեր ընկնում:

Մտքերով տարված գնում եյի, յերբ հանկարծ իմ հետեւից ձիու դոփյուն լսեցի: Հետ նայեցի. տեսնեմ՝ բերդից մի կազակ և արշավում բաշկիրական ձին հետեւից քարշ տալով և հեռվից ինձ նշաններ անելով: Յես կանգ առա և շուտով ճանաչեցի մեր ուրյադնիկին: Հասնելով մեզ, նա իջավ իր ձիուց և մյուսի սանձն ինձ տալով, ասաց. «Զերդ բարեհնողություն. մեր տերը ձեզ մի ձի յե ընծայում և իր վրայից հանած մուշտակը (թամբին կապած եր վոչխարի մորթուց կարած մի քուրք): Մեկ ել, — կապ ընկնելով ասաց ուրյադնիկը, — նա ձեզ ընծայում ե... կես մահեթ... բայց յես ճանապարհին կորցրի. վեհանձնաբար ներեք ինձ: Սավելիչը խեթ-խեթ նայեց նրան և մրթմրթաց. «Ճանապարհին կորցրի: Հապա են ինչ ե ծոցիդ մեջ գնողն զում, անթիգնձ»: — «Ինչ ե գնողն զում իմ ծոցիւմ, — առարկեց ուրյադնիկը բնավ

չշփոթվելով: — Աստված ունես, ծերուկ: Եղ սանձն և զնգվնդում, վոչ թե կես-մանեթանոցը: — Լավ, — ասացի յես վեճն ընդհատելով: — Իմ կողմից շնորհակալություն արա նրան, ով քեզ ուղարկել ե. իսկ կորցրած կես-մանեթանոցը հետ դառնալիս աշխատիր գտնել և վերցրու քեզ՝ արազի փող: «Շատ շնորհակալ եմ, ձերդ բարեծննդություն, — պատասխանեց նա, ձիու գլուխը շրջելով: — Հավիտյան պետք ե աստծուն աղոթեմ ձեզ համար»: Այս ասելով նա քշեց ձին, մի ճեռքով ծոցը բռնած, և մի բռպեյից կորավ մեր աչքից:

Յես հազա քուրքը և հեծա ձին, իմ գավակին նստեցնելով Սավելիչին: «Այ, տեսնում ես, տեր իմ, — ասաց ծերունին, — իղուր չեր, վոր յես եղ սրիկային խնդրագիր տվի. գողի խըղճամտանքը բռնել ե, բայ. թեև բաշկիրական ցոկցոկ յաբուն ու վոչխարի քուրքը չարժեն կեսը են բոլորի, ինչ վոր նրանք՝ սրիկաները մեղնից գողացել են և ինչ վոր դու ինքդ բարեհաճեցիր նրան բախչել, համա ելի պետք կգա. քոսոտ շնից մի մաղ պոկելն ել բան ե»:

ԳՂՈՒԽ X

Ք Ա Ղ Ա Ք Ի Պ Ա Շ Ա Ր Ո Ւ Մ Ը

Տիրելով յարդ ու լեռներ, նա քաղաքին, արծվի պես, բարձրից նետեց հայացքներ, Բանակատեղի յետև պատվար շինել տվեց նա, Ուր շանթարկները¹ պահելով, բերեց քաղաքի վրա Նրանց մի մութ գիշերով: Խերասկով

Որենքուրզին մոտենալիս մենք տեսանք կոճղավորների ամբոխը — ածելած գլուխներով, դահճի ունելիներով այլանդակված գեմքերով: Նրանք աշխատում եյին ամրությունների մոտ, կայազորի ինվալիդների հսկողության տակ: Վասմանք փոքրիկ սայլակներով գուրս եյին կրում խրամատը լցված աղը, մյուսները բաներով փորում եյին հողը. պատնեշի վրա վորմաղիրները աղյուս եյին կրում և նորոգում քաղաքի պարիսպը: Դարպասների մոտ ժամապահները մեզ կանգնեցրին և պահանջեցին մեր անցագրերը: Հենց վոր սերժանտը լսեց, թե յես Բելոգորսկի բերդից եմ գալիս, իսկույն և եթ ինձ տարավ ուղիղ գեներալի տունը:

Յես նրան տեսա այգում: Նա զննում եր աշնան շնչից մեր կացած խնձորենիներն ու ծեր այգեպաննի հետ բները խնամքով փաթաթում տաք ծղոտով: Նրա գեմքը հանգստություն եր արտահայտում, առողջություն և բարեհոգություն: Իմ գալուն նա ուրախացավ և սկսեց հարց ու փորձ անել սարսափելի անցքերի մասին, վորոնց յես ականատես եյի յեղել: Յես ամեն ինչ պատմեցի նրան: Ծերունին ուշադրությամբ լսում եր ինձ և մերթ ընդ մերթ կարատում չորացած ճյուղերը: «Խեղճ Միրոնով, — ասաց նա, յերբ յես վերջացրի իմ տխուր պատմությունը: — Ափ-

¹ Շանթարկներ (պատվար) — Բնականոթներ:

սոս, լավ սպա յեր: Տիկին Միքոնովն ել լավ կին եր և լուսպիսի ֆարպետն եր սունկերը թթու դնելում: Խոկ Մաշան ինչ յեղավակապիտանի աղջիկը: Յես պատասխանեցի, վոր նա մնացել բերգում, յերեցինոց ձեռքին: «Ա՛յ, այ, այ, — նկատեց գեներալը: — Դա վատ ե, շատ վատ: Ավաղակների դիսցիպլինայի վրա յերբեք չի կարելի վատահանալ: Ի՞նչ կլինի խեղճ աղջկա վիճակը: Յես պատասխանեցի, վոր Բելոգորսկի բերդը հեռու չե և վոր հավանորեն նորին գերազանցությունը չի հապաղի զորք ուղարկել նրա դժբախտ բնակիչներին ազատելու համար: Գեներալը գուլխը ճոճեց անվատահությամբ: «Կտեսնենք, կտեսնենք, — ասաց նա: — Այդ մասին մենք դեռ ժամանակ կունենանք խոսելու: Խնդրեմ՝ ինձ մոտ համեցեք մի բաժակ թեյ խմելու. այսոր իմ տանը ռադական խորհուրդ կլինի: Դու կարող ես մեզ ճիշտ տեղեկություններ տալ այդ անպիտան Պուգաչովի և նրա զորքի մասին: Հիմա, առայժմ դու գնա հանգստացի:

Յես գնացի ինձ հատկացված բնակարանը, ուր Սավելիչն արշեն տանտերություն եր անում, և անհամբեր սկսեցի սպասել նշանակված ժամանակին: Ընթերցողը հեշտ կպատկերացնի, վոր յես փութացի ներկայանալ այդ խորհրդակցությանը, վորն այնպիսի աղդեցություն պիտի ունենար իմ ճակատագրի վրա: Նշանակված ժամին յես արդեն գեներալի մոտ եյի:

Նրա տանը յես տեսա քաղաքային չինովնիկներից մեկին, հիշում եմ՝ մաքսատան գիրեկտորին — մի հաստ ու կարմրերես ծերուկի, գլազետից¹ կարած կաֆտանը² հագին: Նա սկսեց հարցու փորձ անել իվան կուզմիչի մասին, վորին սանահայր եր անվանում, և հաճախակի իմ խոսքը կտրում եր լրացուցիչ հարցերով և խրատական նկատողություններով, վորոնք թեպետ և չեյին վկայում, վոր նա ռազմական արվեստին տեղյակ մարդ ե, ապա համենայն դեպս յերեան եյին հանում նրա ուշիմությունն ու բնական խելքը: Մինչ այս, մինչ այն՝ հավաքվեցին և մյուս հրավիրվածները: Յերբ ամենքը նստեցին և բոլորին մի-մի բաժակ թեյ տվին, գեներալը միանգամայն պարզ և մանրամասն բացատրեց բանի եյությունը. «Հիմա, պարոնայք, — շարունակեց նա,

¹ Գլազետ — զործվածք, վորի հենքը մետաքս և, իսկ շարք՝ վոսկու կամ արձաթի թելեր — մեծ մասմաք կեղծ:

² Կապա ան — տղամարդու գերնաշոր լայն փեշերով:

պետք ե վճռել, թե մենք ինչպես պետք ե գործենք խոռվարների դեմ: Հարձակողական թե՝ պաշտպանողական: Սույն յեղանակներից յուրաքանչյուրն ունի իր սգուտն ու վնասը: Հարձակողական գործողությունն ավելի հուսալի յե թշնամուն շուտափույթ վոչնչացնելու համար. պաշտպանողական գործողությունն ավելի հաստատ և և անվանագ... Յեվ այսպես, սկսենք ձայներ հավաքել որինական կարգով, այսինքն՝ սկսած աստիճանով կրտսերներից: Պ. պրապորչիկ¹, — շարունակեց նա ինձ դառնալով: — Հաճեցեք մեղ պարզել ձեր կարծիքը:

Յես կանգնեցի և համառոտակի նկարագրելով նախ Պուգաչովին և նրա հրոսակը, հաստատապես ասացի, վոր ինքնակոչը հնար չունի կանոնավոր զորքի դիմադրելու:

Իմ կարծիքը չինովնիկների կողմից ընդունվեց ակնհայտ անբարեհածությամբ: Դրանում նրանք տեսնում եյին խուճապայնություն և յերիտասարդի հանդինություն: Լսվեցին արտունջի ձայներ և յես վորոշակի լսեցի ծծեր բառը, կիսաճայն արտասանված մեկի կողմից: Դեներալը ինձ դարձավ և ժպիտով ասաց. «Պ. պլրապորչիկ. ուղմական խորհրդակցությունների ժամանակ առաջին ձայները սովորաբար տրվում են հոգուտ հարձակողական շարժումների. որինական կարգն այդ ե: Հիմա սկսենք շարունակել ձայներ հավաքելը: Պ. կուեժսկի խորհրդական², ասացեք ձեր կարծիքը»:

Դլաղեաի կաֆտան հագած ծերունին շտապով խմեց յերրորդ բաժակ թեյը, վարի մեջ բավականաչափ ոռմ եր խառնած, և պատասխանեց զեներալին: «Յես կարծում եմ, ձերդ գերազանցություն, վոր չպետք ե գործենք վհչ հարձակողական, վոչ ել պաշտպանողական»:

«Այդ ինչպես թե, պարոն կուեժսկի խորհրդական, — զարմացած առարկեց զեներալը: — Տակտիկան³ ուրիշ յեղանակներ չունի. պաշտպանողական կամ հարձակողական...»

¹ Պարզություն չէ կամ ցարական բանակի կրտսեր սպայական աստիճան:

² Կուեժսկի կի խոր հ բ դ ա կ ա ն — բաղաքացիական աստիճաններից մեկը, վոր ցարական Ռուսաստանում կրում եյին պետական բոլոր ծառայողները՝ չինովնիկները (աստիճանակորները):

³ Տակտիկա (հուն.) — գիտություն, վոր ուսումնասիրում և մարտավարության հիմունքները, զորաշարժերի կազմակերպումը և զորամասերը դասավորելու յեղանակները:

— Զերդ գերազանցություն, շարժվեց կը կաշառողական:

«Եսէ, ձեր կարծիքը հույժ վողջամիտ է: Տակարկան թույլ ետալիս կաշառողական շարժում անել և մենք կոդտվենք ձեր խորհրդից: Կարելի կլինի անպիտանի զլսի համար խոստանալ... յոթանասուն կամ մինչև իսկ հարյուր ոռւբլի... գաղտնի գումարից...»

— Յեվ այն ժամանակ, — ընդհատեց մաքսատան վերատեսուչը, — թող յես կիրգիզական վոշտար լինեմ և վոչ թէ կուեժսկի խորհրդական, յեթե այդ գողերը մեղ չհանձնեն իրենց ատամանին վստք ու ձեռքը կապած:

«Այդ մասին մենք դեռ կմտածենք ու կխոսենք, — պատասխանեց գեներալը: — Սակայն համենայն դեպս պետք ե ձեռնարկել նաև ուղղմական միջոցներ: Պարոնայք, տվեք ձեր ձայներն ըստ որինական կարգի»:

Բոլոր կարծիքները հակառակ եյին իմին: Չինովսիկներն ամենքն ել խոսում եյին զորքի անհուսալիության, հաջողության անվստահելիության, դղուշության և այլ նման բաների մասին: Բոլորն ել այն կարծիքին եյին, վոր ավելի խոհեմ կլինի մնալ թնդանոթների պաշտպանության տակ քարե հաստատուն պարփակ ներսում, քան թէ բաց դաշտում փորձել գենքի բախտը: Վերջապես գեներալը բոլոր կարծիքները լսելուց հետո իր ծխամորճից թափ տվեց մոխիրը և հետեյալ ճառն արտասանեց:

«Ճարք իմ. յես պետք ե ձեզ հայտարարեմ, վոր յես իմ կողմից միանգամայն համամիտ եմ պարոն պրապորչիկի կարծիքին, քանի վոր սույն կարծիքը հիմնված ե առողջ տակտիկայի բոլոր կանոնների վրա, վոր համարյա միշտ գերազասում ե հարձակողական շարժումները պաշտպանողականից»:

Այս խոսքի վրա նա դադար առավ և սկսեց լցնել ծխամորճը: Իմ ինքնասիրությունը ցնծում եր: Յես հպարտությամբ նայեցի չինովսիկներին, վորոնք միմյանց հետ փափսում եյին անբավարկան ու անհանգիստ տեսքով:

«Սակայն, տյարք իմ, — շարունակեց նա խորհրդությունը մի թանձը քուլա թողնելով, — յես չեմ համարձակում այդքան մեծ պատասխանատվություն վերցնել յերբ հարցը վերաբերում ե նորին արքայական մեծություն, իմ ամենավողորմած թագուհու՝

¹ Ա. տ ա մ ա ն — այս տիտղոսն եյին կըում կազակների զորապետները, փոխարքար՝ առաջնորդ, հրոսակապետ:

յնձ հավատացած գալառների ապահովությանը: Յեվ այսպէս, յես համաձայնվում եմ ձայների մեծամասնության հետ, վորը վճռեց, թե ավելի խոհեմ և անվտանգ կլինի քաղաքի ներսում սպասել պաշարման, իսկ թշնամու հարձակումները հրետանու ույժով և (յեթե հնարավոր լինի) արտելքներով հետ մղել»:

Չինովսիկներն իրենց հերթին ծաղրանքով նայեցին ինձ: Խորհրդակցությունը վերջացավ: Յես չեյի կարող չափսոսալ թուլությունը հարգելի զորականի, վորը հակառակ սեփական համոզման, վճռեց հետեւ անտեղյակ ու անփորձ մարդկանց կարծիքներին:

Այս նշանավոր խորհրդակցությունից մի քանի որ հետո մենք իմացանք, վոր Պուգաչովը հավատարիմ իր խոստման, մոտենում ե Որենքուրզին: Խոռվարաների զորքը յես տեսա քաղաքի պարսպի գլխից: Ինձ թվաց, վոր նրանց թիվը տասնապատիկ ավելացել ե վերջին հարձակումից հետո, վորին յես ներկա եյի: Նրանք ունեցին նաև հրետանի, վոր Պուգաչովը զրավել եր իր՝ արգեն իսկ նվաճած փոքրիկ բերդերում: Հիշելով խորհրդակցության վորոշումը, յես նախատեսում եյի յերկարատև արգելափակում Որենքուրզի պարիսպների մեջ և սրտնեղումից քիչ մնաց, վոր լաց լինեյի:

Յես չեմ նկարագրի Որենքուրզի պաշարումը, վոր պատմությանն ե պատկանում և վոչ թէ ընտանեկան հուշագրություններին: Կարճ կասեմ, վոր սույն պաշարումը տեղական իշխանության անզգուշության պատճառով կործանարար յեղավ բնակիչների համար, վորոնք սովոր և ամեն տեսակ աղետներ կրեցին: Հեշտ ե պատկերացնել, վոր կյանքը Որենքուրզում ամենատանելին եր: Ամենքը վհատությամբ եյին սպասում իրենց բախտի վորոշմանը, ամենքն ալ ու վախ եյին քաշում թանգությունից, վոր իրոք սոսկալի յեր: Բնակիչները սովորեցին թնդանոթի ոռութերին, վոր ընկնում եյին նրանց տան բակերը: Մինչև իսկ Պուգաչովի հրոսումները այլևս չեյին գրավում ընդհանուր հետաքրքրություն: Յես մեռնում եյի ձանձրույթից: Ժամանակն անցանում եր, Բելոգորսկի բերդից նամակներ չեյի ստանում: Բոլոր ձանապարհները կտրված եյին: Մարիա Խվանովսյայից հեռու լինելն անտանելի յեր գառնում ինձ համար: Նրա վիճակի անհայտությունն ինձ տանջում եր: Իմ միակ բավականությունը ձի հատելն եր, Պուգաչովի վողորմածությամբ: յես մի լավ ձի ունեյի,

վորի հետ բաժանում եյի իմ աղքատիկ սնունդը և վորը նստած, ամեն որ դուրս եյի գալիս քաղաքից՝ Պուգաչովի ձիավորների հետ հրացանաձգության բռնվելու համար։ Այս հրացանաձգությունների մեջ գերակռությունը սովորաբար չարագործների կողմն եր, վորոնք կուշտ եյին, քեֆները տեղը և լավ ձիեր նստած։ Քաղաքի վտիտ այրուծին չեր կարողանում հաղթել նրանց։ Յերբեմ դաշտ եր դուրս գալիս և մեր սոված հետևակազորը, սակայն ձյան խորությունը նրան խանգարում եր հաջողակ գործել ցաք ու ցրիլ ձիավորների գեմ։ Հրետանին պարզուն դղրդում եր պատճեղի վրայից, իսկ գաշտում ձիերի ուժասպառության պատճառով խրվում եր ձյան մեջ ու չեր շարժվում։ Այս պատկերն ունեյին մեր ուղմական գործողությունները։ Ահա թե Որենքուրզի չինո՞վիկներն ինչն եյին անվանում դգուշություն և վողջամտություն։

Մի անգամ, յերբ ինչպես յեղավ մեղ հաջողվեց ցրել ու քշել խոռվարների բավական մի ստվար ամրոխ, յես ձիս քշեցի մի կազակի վրա, վոր հետ եր մնացել իր ընկերներից։ Յես արդեն պատրաստ եյի իմ թուրքական թրով հարվածել նրան, յերբ նա հանկարծ գլխարկը հանեց ու բղավեց։ «Բարե՛ ձեզ, Պյոտր Ռեյիչ։ Աստծով ի՞նչ հալի յեք»։

Յես նայեցի նրան և ճանաչեցի մեր ուրյադնիկին։ Անասելի ուրախացա նրան հանդիպելուս համար։ «Բարե՛, Մակսիմիչ, — ասացի նրան։ — Վաղմւց ե վոր դուրս ես յեկել Բելագորսկից»։

«Վաղուց չի, տեր իմ Պյոտր Անդրեյիչ։ հենց յերեկ եմ վերադարձել այնտեղից։ Նամակ ունեմ ձեզ տալու։

— Ո՞ւր ե, — կանչեցի յես, ամրողովին կրակ կտրելով։

«Մոտս ե, — պատասխանեց Մակսիմիչը ձեռքը ծոցը դնելով։ — Յես խոստացա Պալաշյին մի կերպ հնար գտնել նամակը ձեզ հանձնելու։ Այս ասելով նա ինձ հանձնեց ծալծած թղթի մի կտոր ու իսկույն և եթ ձին քշեց հեռացավ։ Յես թուղթը բաց արի և սրտի թրթումով կարդացի հետեյալ տողերը։

«Աստծուն հաճելի յեր ինձ հանկարծ զրկել հորից ու մորից. աշխարհիս յերեսին վոչ հարազատներ ունեմ, վոչ ել հովանավորներ։ Դիմում եմ ձեզ, գիտենալով, վոր դուք միշտ ել իմ բարին եք կամեցել և վոր դուք պատրաստ եք ամեն մեկին ոգնելու։ Աղոթում եմ աստծուն, վոր այս նամակը մի կերպ հասնի ձեր

ձեռքը։ Մակսիմիչն ինձ խոստացավ այն հասցնել ձեզ։ Պալաշան Մակսիմիչից լսել եր նույնական, վոր նա հաճախ հեռվից ձեզ տեսնում ե արտելքների ժամանակ և վոր դուք բոլորովին չեք պահպանում ձեզ և չեք մտածում նրանց մասին, վորոնք արտասուրքն աշքերին ձեզ համար աղոթք են անում աստծուն։¹ Յերկար ժամանակ յես հիվանդ եյի, իսկ յերբ առողջացա, Ալեքսեյ Իվանովիչը, վորը մեզանում իշխանավոր ե դարձել հանգուցյալ հայրիկի փոխարեն, հայր Գերասիմին հարկադրեց ինձ իրեն հանձնել սպառնալով Պուգաչովի անունից։ Ապրում եմ մեր տանը, հսկության տակ։ Ալեքսեյ Իվանովիչն ինձ հարկադրում ե իր հետ ամուսնանալ։ Նա ասում ե, վոր փրկել ե իմ կյանքը, վորովհետեւ ծածկել ե Ակուլինա Պամֆիլովսայի խարեբայությունը, վորը չարագործներին ասել ե, թե իրը յես նրա բարեկամուհին եմ։ Իսկ ինձ համար ավելի հեշտ ե մեռնել, քան թե կին լինել այնպիսի մի մարդու, ինչպիսին Ալեքսեյ Իվանովիչն ե։ Նա ինձ հետ շատ գառան ե վարփում և սպառնում ե, վոր յեթե խելքս զլուխս չհաշվաքեմ և չհամաձայնվեմ, ապա ինձ կտանի բանակատեղ՝ չարագործի մոտ և վորպես թե ինձ հետ ել նույնը կլինի, ինչ յեղավ կիզավետա Խարլովայի¹ հետ։ Յես լինգրեցի Ալեքսեյ Իվանովիչին, վոր ինձ ժամանակ տա մտածելու։ Նա համաձայնվեց սպասել նորից յերեք որ, իսկ յեթե յերեք որից հետո յես նրան մարդու չգնամ, այն ժամանակ այլևս վոչ մի փրկություն չի լինի ինձ։ Սիրելի Պյոտր Անդրեյիչ։ Դուք եք իմ միակ հովանավորը, պաշտպանեցեք խեղճիս։ Խողովակ գեներալին և բոլոր հրամանատարներին՝ շուտով սիկուրս ուղարկել մեղ, ինքներդ ել յեկեք, յեթե կարող եք։ Մնամ խոնարհաբար ձեր խեղճ վորքուհի

Մարիա Միլոնովաց։

Այս նամակը կարդալով քիչ մնաց, վոր խելքս թոցնեյի։ Յես գեպի քաղաք սլացա, անողոքաբար խթանելով իմ խեղճ ձիուն։ Ճանապարհին ել ինչ ասես, վոր չեյի ծրագրում դժբախտ աղջկան

¹ Տատիշչեսկայա բերդի պարետի աղջիկը, վորը նիմնե՛-Ողերնայա կոչված ամբության պետի կինն եր։ Այս բերդերը գրավելուց հետո Պուգաչովը մահապատճի յեր յենթարկել Խարլովայի հորը, մորը և ամուսնուն, իսկ նրան, վոր պես գեղատեսիլ կնոջ, դարձել եր հարճ։ Մի վորոշ ժամանակ անց այս կինը ևս սպանվեց։

փրկելու համար և վոչ մի հնար չկարողացա մտածել։ Քաղաք հասնելով, յես ուղիղ գեներալի մոտ գնացի և շտապով ներս վաղեցի։

Գեներալը հետ ու առաջ եր գնում իր սենյակում, ծխելով կոճակախտից պատրաստած իր ծխամորձը։ Ինձ տեսնելով նա կանգ առավ։ Հավանորեն իմ տեսքը նրան ապշեցրեց։ Նա հոգատարությամբ հարց ու փորձ արեց իմ շտապ դալու պատճառի մասին։ «Զերդ գերազանցություն, — ասացի յես նրան, — դիմում եմ ձեզ ինչպես հարազատ հորս։ Ի սեր ասածու, մի մերժեք իմ խնդիրը։ Հարցը իմ ամրող կյանքի յերջանկությանն ե վերաբերում»։

«Ի՞նչ ե պատահել, սիրելիս, — հարցրեց ապշած ծերունին։ — Ի՞նչ կարող եմ անել քեզ համար։ Ասան։»

— Զերդ գերազանցություն, հրամայեցեք, վոր ինձ մի վաշտ զինվոր և մի հիսնյակ կաղակներ տան և թույլ տվեք Բելոգորսկի բերդը մաքրեմ։

Գեներալը աչքերը սևեռեց ինձ վրա, յերեկ կարծելով, վոր յես գժվել եմ (վորում նա համարյա թե չսխալվեց)։

«Այդ ինչպես, Մաքրել Բելոգորսկի բերդը», — ասաց նա վերշապես։

— Հաջողության համար յերաշխավորում եմ, — յեռանդով պատասխանեցի յես։ — Միայն թե՝ ինձ թողեք։

«Վհաչ, յերիտասարդ, — ասաց նա գլուխը ձոճելով։ — Այդպիսի մեծ տարածության վրա թշնամին ձեզ հեշտությամբ կկարի գլխավոր ուղարկետի կոմունիկացիայից¹ և կատարյալ հաղթություն կտանի ձեր գեմ։ Կտրված կոմունիկացիան...»

Ես վախեցա, տեսնելով վոր նա տարվում ե ուազմական դաշտողություններով և շտապեցի ընդհատել նրան։ «Կապիտան Միրոնովի աղջիկը, — ասացի յես նրան, — ինձ նամակ ե գրել։ Նա ոգնություն ե խնդրել Շվաբրինը նրան հարկադրում ե իր հետ ամուսնանալ։»

«Ի՞նչ եք ասում։ Ո՛, այդ Շվաբրինը ամենամեծ Schelms² ե և յեթե ձեռքս ընկնի, յես կհրամայեմ 24 ժամվա ընթացքում

¹ Կոմունիկացիա (լտ.) — կոմունիկացիոն ուղիները հաղորդակցության այն ձանապարհներն են, գորոնք կապում են բանակի գրաված վայրը երաժառակարման հենակետի հետ։

² Schelm — եւլմ (գերմ.) — չարաձձի, ստահակ մարդ։

դատել և մենք նրան կզնդակահարենք բերդի պարապետի¹ վրա։ Իսկ առայժմ պետք ե համբերություն ունենալ...»

— Համբերություն ունենամ, — գոռացի յես ինձ կորցրած։ Իսկ մինչ այդ կամուսնանա Մաքրիա Խվանովնայի հետ...»

«Ո՛, — առարկեց գեներալը։ — Դա դեռ դժբախտություն չե։ Նրա համար ավելի լավ կլինի առայժմ լինել Շվաբրինի կինը։ Նա հիմա կարող ե հովանավորել այդ աղջկան, իսկ յերբ մենք նրան կզնդակահարենք, այն ժամանակ, աստված վողորմած ե, կգտնվեն և լավ փեսացուներ։ Գեղեցիկ և յերիտասարդ այրիները տանը չեն մնում, այսինքն յես ուղարկում եյլ ասել, վոր յերիտասարդ այրին ավելի շուտ կդանի իրեն ամուսին, քան թե աղջիկը։»

— Ավելի շուտ կհամաձայնվեմ մեռնել, — ասացի յես կատաղած, — քան թե նրան զիջել Շվաբրինին։

«Բայց, բա, բա, բա, — ասաց ծերունին։ — Հիմա յես հասկանում եմ, վոր դու սիրահարված ես Մաքրիա Խվանովնայի վրա։ Ո՛, դա ուրիշ բան ե։ Խեղճ տղա։ Բայց այնուամենայնիվ յես չեմ կարող քեզ մի վաշտ զինվոր և մի հիսնյակ կաղակ տալ։ Այդ արշավանքն անմիտ բան կլիներ։ յես չեմ կարող դա վերցնել իմ պատասխանափության վրա։»

Յես մնացի գլխիկոր. հուսահատությունն ինձ պատեց։ Հանկարծ մի միտք անցավ իմ գլխով. թե ինչ եր դա, ընթերցողն այն կտեսնի հետեւյալ գլխում, ինչպես ասում են հնամենի վիպագիրները։

¹ Պարապետ (ֆր.) — պարիսպ, պատնեշ, պատվար (մեծ մասմբ բերդի ամրոցի), հողաթումբ։

Գ Հ ՈՒ Խ Խ I

Խ Մ Ո Վ Ա Ր Ա Ր Ա Վ Ա Ն Ը

Կուշտ եր առյօւծն այդ պահին, թեև ի ծնե կատաղի.
«Իմ քարանձավը, ասա, ինչնու շնորհ բերեցիր» —
Հարցրեց նա սիրալիբ:

Ա. Սուսարոկով

Յես թողի գեներալին և շատապեցի դեպի իմ բնակարանը: Սավելիչն ինձ զիմավորեց իր սովորական հորդորանքով: «Դու յել բան ես գտել, տեր իմ, հաշիվ պահանջել հարբած ավազակներից: Բոյարին¹ վայել ե դա: Ո՞վ գիտե՞ ինչ կդա զլիներիս — ժամանակը չար ե. վոտքով-գլխով կկորչես: Են ել մի բան եր, թե ասենք թուրքերի կամ շվեդների դեմ կովի գնայիր. թե չե, ասելն ել ամոթ ե՝ ախր հւմ վրա յես քշում»:

Յես նրա խոսքը կտրեցի հարցով. ընդամենն ինչքան փող ունեմ: «Քեզ հերիք կանի, — պատասխանեց նա ինքնագոն տեսքով: — Սրիկաններն ինչքան ուշադիր տնտեղեցին ամեն քունջ ու պուճախ, յես ելի կարողացա թաքցնել»: Այդ խոսքերի հետ նա զրպանից հանեց մի յերկար, զործված քսակ՝ լի արծաթով: «Սավելիչ, — ասացի յես նրան, — տուր ինձ հիմա դրա կեսը, իսկ մնացածը վերցրու քեզ: Յես գնում եմ բելոզորսկի բերդը»:

«Տեր իմ, Պյոտր Անդրեյիչ, — ասաց բարի դաստիարակս դողդուն ձայնով: — Աստծուց վախեցիր. դու ի՞նչպես պիտի ձանապարհ ընկնես հիմա, յերբ ավազակների ձեռքից վոչ մի տեղ գնալ չի կարելի: Գոնք ծնողներիդ խղճա, թե վոր ինքդ քեզ չես մեղքանում: Ո՞ւր պիտի գնաս: Ինչնու: Մի քիչ սպասիր, զորքերը կգան, բոլոր ավազակներին կբռնոտեն, են ժամանակ գնա հւր վոր ուղում եսք:»

1 Եօյրին — խոշոր ազնվական հին Ռուսաստանում:

Բայց իմ դիտավորությունը հաստատ եր: «Այլես ուշ ե խորհուրդներ տալ, — պատասխանեցի յես ծերունուն: — Յես պետք ե գնամ, յես չեմ կարող չգնալ: Հոգ մի անի, Սավելիչ. աստված վողորմած ե, յերեխ կտեսնվենք: Բայց տես՝ չլինի ափսոսաս ու ժլատություն անես: Քեզ համար ինչ վոր պետք լինի, կդնես՝ թեկուղ թանգ գնով: Այդ փողերը յես քեզ եմ նվիրում: Յեթե յերեք որից չվերադառնամ...»

«Եղ ի՞նչ ես ասում, տեր իմ, — ընդհատեց ինձ Սավելիչը: — Լինելու բան ե, վոր քեզ մենակ թողնեմ: Եղ մեկը դու յերազից ել չես կարող ինձնից խնդրել: Համա վոր դու արդեն վճռել ես գնալ, են ժամանակ յես, թեկուղ վոտքվ, կգամ քո հետեւց և քեզ մենակ չեմ թողնի: Լինելու բան ե, վոր յես առանց քեզ նստեմ պարսպի ներսում: Ի՞նչ ե, գծվել եմ, հա: Քո կամքն ե, տեր իմ, բայց յես քեզնից ձեռք չեմ քաշի»:

Յես զիտեյի, վոր իզուր ե վիճել Սավելիչի հետ և թույլ տվի նրան ձանապարհի պատրաստություն տեսնել: Կես ժամից յես նստեցի իմ լավ նժույզը, իսկ Սավելիչը՝ մի վտիտ ու կաղ ձի, վոր նրան ձրի տվեց քաղաքի բնակիչներից մեկը, միջոցներ չունենալով կերակրելու նրան: Մենք ուղղվեցինք դեպի քաղաքի գարպանները. պահապանները մեղ բաց թողին. մենք դուրս յեկանք Որենքուրգից:

Սկսում եր մթնել: Ճանապարհս գնում եր Բերդսկ կոչված ավանով, վորը Պուդաչովի հանգրվանն եր: Ուղիղ ձանապարհը ծածկված եր ձյունով, սակայն տափաստանի վրա ամենուր նկատելի եյին ձիավորների ամեն որ նորոգվող հետքերը: Զիս ընթանում եր խոշոր վարգով: Սավելիչը հազիվ եր կարողանում հեռվից հետեւն և ամեն ըստե ձայն եր տալիս ինձ. «Կամաց, տեր իմ, ի սեր աստծոն՝ կամաց. իմ անիծյալ քոստալ հազիվ ե հասնում քո յերկար-վոտնանի դկի հետեւից: Այլր հւր ես շտապում: Լավ եր, թե քեֆի եյինք կանչվել, թե չե, արի տես, վոր կորսայան անդունդն ենք քշում... Պյոտր Անդրեյիչ, տեր իմ, Պյոտր Անդրեյիչ... Մի սպանի... Աստված իմ, տերունական յերկան ձեռից գնաց»:

Շուտով առկայծեցին Բերդսկի կրակները: Մենք մոտեցանք խրավանդներին՝ ավանի բնական ամրություններին: Սավելիչն ինձնից հետ չեր մնում, ընդհատելով իր աղերսալից պաղատանքը:

Յես հույս ունեցի ավանի կողքով ապահով անցնել, յերբ հանկարծ կիսախավարի մեջ, ուղիղ իմ առջև տեսա հինգ գեղջուկների, մահակներով զինված. դա Պուգաչովի հանգրվանի առաջավոր պահակախումբն եր: Մեղ ձայն տվին: Նշանաբանը չիմանալով, յես ուղում եյի լուելյայն անցնել նրանց մոտով, բայց նրանք իսկույն և եթ շրջապատեցին ինձ և նրանցից մեկը ճանկեց ձիուս սանձը: Յես սուրս հանեցի և խփեցի գեղջուկի գլխին. գդակը փրկեց նրան, սակայն նա յերերաց ու սանձը ձեռքից թողեց. Մյուսները շփոթվեցին և փոքր ինչ հեռու փախան. յես ոգտվեցի այդ բոպելից, խթանեցի ձիս ու սրացա:

Վերահաս գիշերվա մուլթը կարող եր ինձ փրկել ամեն տեսակ վտանգից, յերբ հանկարծ, հետ նայելով տեսա, վոր Սավելիչն ինձ հետ չե: Խեղճ ծերունին իր կաղ ձիով չեր կարողացել պերծնել ավաղակների ձեռքից: Ճարս ինչ եր: Մի քանի բոպե նրան սպասելուց հետո և հավաստիանալով, վոր նա բռնված ե, յես շրջեցի ձիուս գլուխը և հետ դարձա նրան աղատելու:

Նրավանդին մոտենալով, հեռվից յես լսեցի աղմուկ, աղաղակներ և իմ Սավելիչի ձայնը: Յես ավելի արագացրի ձիուս ընթացքը և շուտով նորից ընկա պահակող գեղջուկների մեջ, պարոնք մի քանի բոպե առաջ ինձ կանգնեցրել եյին: Սավելիչը նրանց մեջն եր: Նրանք ծերունուն իջեցրել եյին ձիուց և պատրաստվում եյին նրան կապտել: Իմ մոտենալը նրանց ուրախացրեց: Աղաղակներով հարձակվեցին ինձ վրա և մի ակնթարթում քարշ տվին ձիուս վրայից: Նրանցից մեկը, ըստ յերեսոյթին գլխավորը, հայտնեց մեղ, վոր նա իսկույն և եթ մեղ կտանի թագավորի մոտ: «Իսկ մեր տեղը, — ավելացրեց նա, — իրավունք ունի հրամայելու ձեղ հիմա կախեն, թե — սպասենք առավոտ լուսին»: Յես չընդդիմացա. Սավելիչը հետեւց իմ որինակին և պահակները հանդիսավոր կերպով մեղ տարան:

Մենք կտրեցինք խրավանդը և մտանք ավանը: Բոլոր խրճիթներում կրակներ եյին վառվում: Աղմուկն ու աղաղակները լսվում եյին ամենուր: Փողոցում յես բազմաթիվ մարդիկ տեսա, բայց մթության մեջ վոչ վոք մեղ չնկատեց և հանձինս ինձ չնկատեց Որենքուրզի սպային: Մեղ ուղիղ տարան տնկյունի խրճիթը, վոր գտնվում եր յերկու փողոցների հատման կետում: Դարպասի մոտ կային գինու մի քանի տակառներ և յերկու թնդանոթ: «Ահա և

պալատը, — ասաց գեղջուկներից մեկը. — իսկույն կտեղեկացնենք ձեր մասին»: Նա մտավ խրճիթը: Յես նայեցի Սավելիչին. ձեռունին խաչակնքում եր, քթի տակ աղոթք մրմնջալով: Յերկար սպասեցի յես. վերջապես գեղջուկը վերադարձավ և ասաց ինձ. «Դնա. մեր տերը հրամայեց ներս թողնել սպային»:

Յես մտա խրճիթը կամ պալատը, ինչպես անվանում եյին գեղջուկները: Ներսը լուսավորված եր յերկու ճարպամոմով, խելպատերը պատառել եյին վոսկեղոծ թղթով. սակայն, յերկար նստարանները, սեղանը, թոկից կախած լվացարանը, մեխից քարշ յերեսարքիչը, անկյունում դրված ունելին և լայն թարեքը՝ վրան կհուճներ, — ամեն ինչ այնպես եր, ինչպես սովորական խրճիթում: Պուգաչովը նստած եր սրբերի պատկերների տակ, կարմիր կաֆանը հագին, յերկարավուն գդակը գլխին և ձեռքերը հանդիսավոր կերպով մեջքին դրած: Շինծու քննության տեսքով նրա մոտ կանգնած եյին մի քանիսն իր գլխավոր ընկերներից: Յերեվում եր, վոր Որենքուրզից սպա զալու լուրը խոռվարանների մեջ մեծ հետաքրքրություն եր զարթեցրել և, վոր նրանք պատրաստվել եյին ինձ հանդիսավորությամբ գիմավորելու: Պուգաչովի ինձ ճանաչեց առաջին խել հայացքից: Նրա կեղծ հանդիսավորությունը հանկարծ չքացավ: «Ամ, ձերդ բարեձննդություն, — ասաց նա ինձ աշխուժությամբ: — Ի՞նչպես եք: Բարի լինի. ինչի՞ յեկելո: Յես պատասխանեցի, վոր գնում եյի իմ գործով և վոր նրա մարդիկ ինձ կանգնեցրին: «Իսկ ինչ գործով», — հարցրեց նա ինձ: Յես չգիտեյի՝ ինչ պատասխանել: Պուգաչովը յենթագրելով, վոր յես չեմ ուղում բացարություն տալ վկաների ներկայությամբ, դարձավ իր ընկերներին և նրանց հրամայեց գուրս գնալ: Բոլորը հնագանդվեցին, բացի յերկուսից, վորոնք տեղերից չշարժվեցին: «Խոսիր համարձակ, — ասաց ինձ Պուգաչովը. — նրանցից յես վոչինչ չեմ թաքցնում»: Յես նայեցի ինքնակոչի մտերիմներին: Նրանցից մեկը վտիտ ու կուղիկ մի ծերուկ — ձերմակ մորուքով, աչքի ընկնող վոչինչ չուներ, բացի կապտագույն մապավենից, վոր պատել եր ուսովը, գորշ արմայիկ վրայից: Բայց յես հավատանս չեմ մոռանա նրա ընկերոջը: Նա բարձրահասակ եր, մարմնեղ ու լայնաթիկունք, և ինձ թվաց մոտ քառասունհինդ տարեկան: Թավ, շեկ մորուքը, գորշ պապղուն աչքերը, քիթը՝ առանց քթածակերի և ճակատի ու այտերի վրայի կարմրավուն քծերը

անմեկնելի մի արտահայտություն եյին տալիս նրա չեշոտ, լայն դեմքին: Նա կարմիր շապիկ եր հագել, կիրդիղական խալաթ և կաղակի շալվար: Առաջինը (ինչպես հետո իմացա) փախստական կապրալ Բելոբորդովնել եր. յերկրորդը՝ Աֆանասիյ Սոկոլովը (Խոպուշա² կոչեցյալ) աքսորական մի հանցավոր, վորը յերեք անգամ փախել եր Սիրիլի հանքահորերից: Զնայած այն զգացումներին, վոր սաստիկ հուզում եյին ինձ, իմ յերեակայությունը խիստ զրադեցնում եյին այս մարդիկ, վորոնց մեջ այսպես անսպասելի ընկել ելի յես: Սակայն Պուգաչովն ինձ ուշը բերեց իր հարցով: «Ասա, Բնչ գործով ես գու Որենքուրդից գուրս յեկել»:

Արտասովոր մի միտք ծագեց իմ զլխում: Ինձ թվաց, թե նախախնամությունը, վոր սրանով յերկրորդ անգամն եր ինձ բերում Պուգաչովի մոտ, առիթ եր տալիս իմ դիտավորությունն իրագործելու: Յես վճռեցի ոգտվել զրանից և դեռևս անելիք չմտածած, պատասխանեցի Պուգաչովի հարցին:

— Յես գնում եյի Բելոգորսկի բերդը մի վորբուհու փրկելու, վորին այնտեղ նեղացնում են:

Պուգաչովի աչքերը փայլատակեցին: «Իմ մարդկանցից ով և համարձակվում վորբուհուն նեղացնել, — զոռաց նա: — Հազար զլուխ ել վոր նա ունենա, իմ դատաստանից չի կարող փախչել: Ասա, ով և հանցավորը»:

— Շվարբինն ե հանցավորը, — պատասխանեցի յես: — Նա բանատարկած պահում ե այն աղջկան, վորին դու յերեցկնոջ մոտ հիվանդ տեսար, և զոռով ուզում ե հետք ամուսնալ:

«Յես Շվարբինն իմելքի կրերեմ, — ահավոր ձայնով ասաց Պուգաչովը: — Նա կիմանա, թե իմ որոք ինչպես կարելի յերսնություն բանեցնել և ժողովրդին նեղացնել: Յես կկախեմ նրան»:

1 ի. Ն. Բ ե լ ո բ ո ր ո գ ո վ — նախկին հրետավոր՝ շարքային հասարակ զին-գոր ե յեղել ցարական բանակում, պուգաչովյան շարժման աչքի ընկնող մասնակիցներից, վոր ապստամբեցրեց Պերմի շրջանի գործարաններում աշխատող ճորտ-բանվորներին:

2 Խ լ ո պ ո ւ շ ա — զյուղացի, ապստամբության ամենաականավոր զեկուագանքի մեջը վոր Ուրալի գործարաններում ճորտ-բանվոր եր: Գործարանից քանից կատարած փախուստների համար կառավարությունը խեղանդամ եր քարձել նրան: Առաջնորդել ե Ուրալի ապստամբ բանվորների գործամբերը: Դիմաստված ե 1775 թ.:

«Թույլ տուր մի խոսք ասեմ, — ասաց Խլոպուշան խոպոտ ձայշնով: — Դու շտապեցիր Շվարբինին բերդապետ նշանակել, իսկ հիմա շտապում ես նրան կախել: Դու կաղակներին արդեն վիրավորել ես, աղնվականին նրանց պետ նշանակելով: Ել մի վախեցնի աղնվականներին — առաջին չարախոսության հիման վրա նրանց կախաղան հանելով»:

«Զպետք ե նրանց վնչ նղմալ, վոչ ել շնորհ անել, — ասաց կապույտ ժապավենավոր ծերուկը: — Շվարբինին կախելը ցավ չե, համա թե վատ չի լինի և՝ պարոն սպային մի լավ հարցաքննել, թե ինչո՞ւ յե բարեհաճել շնորհ բերել մեղ մոտ: Յեթե նա քեզ թագավոր չի ձանաչում, ապա հարկավոր չի քեզ մոտ դատաստան փնտրել. իսկ թե վոր ձանաչում ե, ինչո՞ւ նա մինչև այսօր նստել ե Որենքուրդում քո թշնամիների հետ միասին: Աբդյոք չես հբամայի զբան դատաստանատուն տանել և այնտեղ կըակը մի լավ թեժացնել. ինձ այնպես ե յերեւմ, վոր նորին վողորմածությունը մեղ մոտ ուղարկված ե Որենքուրդի հրամանատարների կողմբց»:

Ծեր չարագործի տրամարանությունն ինձ բավական համոզիչ թվաց: Իմ ամբողջ մարմնով մի դող անցավ այն մտքից, թե յես աւմ ձեռքումն եմ: Պուգաչովը նկատեց իմ հուզմունքը: «Հը, ձերդ բարեհնագություն, — ասաց նա ինձ հետ մարդկությունը, կասենաս՝ խելոք բան ե առաջարկում: Քո ինելքն Բնչ ե կտրում»:

Պուգաչովի ծաղրանքը վերադարձրեց իմ աշխուժությունը: Յես հանգիստ պատասխանեցի, վոր գտնվում եմ նրա իշխանության տակ և վոր նա աղատ ե ինձ հետ վարվելու, ինչպես ինքը կկամենա:

«Բարի, — ասաց Պուգաչովը: — Հիմա ինձ ասա, թե Բնչ դրության մեջ ե ձեր քաղաքը»:

— Փառք աստուծո, — պատասխանեցի յես: — ամեն ինչ լավ ե: «Լավ ե, — կրկնեց Պուգաչովը: — Համա ժողովուրդը սովից կոտորվում ե»:

Ինքնակոչը ճիշտ եր ասում, բայց յես ըստ յերդման պարտականության սկսեցի հավատացնել վոր այդ բոլորը դատարկ լուրեր են և վոր Որենքուրդում ամեն տեսակի բավականաչափ պաշար կա:

«Ճեսնիւմ ես, — մեջ ընկավ ծերուկը, — վոր նա քեզ յերես առ յերես խարում ե: Բոլոր փախստականները միարեցան պատմում

աանայի քեզ շնորհակալություն հայտնել ձիու և քուրքի համար։ Առանց քեզ յես քաղաք չեյի հասնի և կսառչեյի ճանապարհին։ Խորամանկությունս անցավ։ Պուգաչովի դեմքը բացվեց։ «Պարտքը տալով մեղքը լալով, — ասաց նա աչքով անելով և կոպերը կկոցելով։ — Հիմա մի պատմի ինձ, թե դու ի՞նչ գործ ունես այն աղջկա հետ, վորին Շվաբրինը նեղացնում ե։ Չլինի՝ ջահել սրտիդ սիրեկանն ե, հը»։

— Նա իմ հարսնացուն ե, — պատասխանեցի յես Պուգաչովին, տեսնելով վոր արամդրությունը գեղի լավը գնաց և կարիք չկա իսկությունը թաքցնելու։

«Բո հարսնացուն, — գոռաց Պուգաչովը։ — Ինչու դու առաջուց չասացիր։ Դե մենք քեզ կնշանենք և քո հարսանիքին քեֆ կանենք։ Հետո դառնալով Բելորորդովին։ «Լուր, Փելդմարշալ։ Մենք նորին բարեձննդության հետ հին բարեկամներ ենք. նստենք ընթրիք անենք. առավոտվա չարը իրիկվա բարուց լավ ե։ Վաղը կտեսնենք, թե ինչ կանենք նրա հետ։

Յես ուրախությամբ կհրաժարվեյի նրա առաջարկած պատվից, բայց ճարս ի՞նչ եր։ Յերկու յերիտասարդ կազակուհիներ՝ խրձիթի տիրոջ աղջիկները, սեղանը ծածկեցին սպիտակ սփոռով, հաց բերին, ուրիսու և մի քանի շտոփ գինի ու գարեջուր, և յես յերկորդ անգամ սեղան նստեցի Պուգաչովի և նրա սարսափելի ընկերների հետ։

Խրախնանքը, վորին յես ակամա ականատես յեղա, տեսեց մինչեւ խոր գիշեր։ Վերջապես գինովությունն սկսեց պատել զրուցակից հերիս։ Պուգաչովը նիրհեց իր տեղում նստած. նրա ընկերները վեր կացան և ինձ նշան արին՝ մենակ թողնել նրան։ Յես գուրս յեկա նրանց հետ միասին։ Խլոպուշայի կարգադրությամբ պահակն ինձ տարավ դատական խրձիթը, ուր և յես գտա Սավելիչին և վորտեղ ինձ նրա հետ թողին, դուռը դրակ կողակելով։ Դաստիարակս այնպիսի ապշության մեջ եր՝ տեսնելով այս բոլորը, վոր ինձ վոչ մի հարց չտվեց։ Նա պառկեց մութի մեջ և յերկար ախու ու վախ եր անում. վերջապես նա խոմփաց և յես ընկա խորհրդածությունների մեջ, վոր ամբողջ գիշեր վոչ մի բոպե ինձ թույլ չտվին նիրհելու։

են, վոր Որենքուրզում սով ու համաձարակ ե, վոր այնտեղ լեզ են ուտում, այն ել փառք՝ յեթե ճարում են, իսկ նորին վողորմածությունը հավատացնում ե մեզ, վոր ամեն ինչ առատ ե այնտեղ. Յեթե դու ուզում ես Շվաբրինին կախել, ապա լավ կանես նույն այդ կախաղանից կախես և այս կարիճին, վորպեսզի վոչ վոք չնախանձի»։

Անիջալ ծերունու խոսքերը կարծես թե յերերացին Պուգաչովին։ Բարեբախտաբար Խլոպուշան սկսեց հակառակել իր ընկերով։ «Հերիք, Նահամիչ, — ասաց նա։ — Քեզ վոր մեն ինչ կիսեղես ու կմորթես։ Ի՞նչ մի աժդահան ես։ Տեսնում եմ, հրեն հոգիդ տալիս ես։ Մի վոաքդ գերեզմանումն ե, բայց ուրիշների տունն ես քանդում։ Քիչ արյուն կա խղճիդ վրա»։

— Ի՞նչ ե, դու սուրբ ես, ելի, — առարկեց Բելոբորոդովի։ — Քեզ վորտեղից խղճմտանք։

«Ինարկե, — պատասխանեց Խլոպուշան, — յես ել եմ մեղապարտ և այս ձեռքը (այդ խոսքերի հետ նա սեղմեց իր վոսկրոտ պոստուցիքը և թեքերը հետ ծալելով մերկացրեց մազոտ թեր), այս ձեռքն ել ե մեղապար թափած քրիստոնեական արյան համար։ Բայց յես հակառակորդիս եմ սպանել և վոչ թե հյուրիս. բայց ճանապարհի վրա և մութ անտառում և վոչ թե տանը, վառարանի վրա վեր ընկած. լախտով ու կոթակով, և վոչ թե կնկաչարախոսությամբ»։

Ծերունին յերեսը շուռ տվեց և քթի տակ մրթմրթաց. «Ճոթուած քթածակեր»...

— Ի՞նչ ես քչփշում, պառավ! — գոռաց Խլոպուշան։ — Յես քեզ ցույց կտամ ճոթուած քթածակեր. սպասիր, քո ժամանակն ել կոա, աստծմով դու յել կտեսնես քալփաթինների համը... Համա՞ուշդ վրադ պահի, քանի չեմ պոկել քո պստիկ մորուքը»։

«Պարոն յենարախներ, — հանդիսավոր ճայնով խոսեց Պուգաչովը չովը։ — Հերիք ե վիճեք։ Յավ չե, յեթե Որենքուրզի բոլոր շները մի միջնափայտից կախվելին ու վոտքերը ձգելին. ցավն այն ե, յերբ մեր շներն են իրար զգում։ Դե, հաշտվեցեք»։

Խլոպուշան և Բելոբորոդովի վոչ մի բառ չասացին և մռայլ նայեցին իրար. Յես անհրաժեշտ համարեցի խոսակցությունը չփոխել, վոր ինձ համար շնէ գատ վատ կարող եր վերջանաւ, և դառնալով Պուգաչովին, ասացի ուրախ գեմքով։ «Ե՞ս, քիչ մնաց մուալով»

Առավոտյան յեկան, Պուգաչովի անունից կանչեցին ինձ: Յես զնացի նրա մոտ: Նրա տան դռների առաջ մի կիրիտկա յեր կանգնած, թաթարական յերեք ձի լծած: Ժողովուրդը խռնվել եր փողոցում: Հաշտում յես հանդիպեցի Պուգաչովին. նա ճանապարհի շորեր եր հագել, մուշտակը վրան, կիրգիզական գդակը զլիին: Յերեկվա լասակիցները շրջապատեցին նրան, դեմքերին ստորագարշության արտահայտություն տալով, վոր անչափ հակասում եր այն ամենին, ինչին յես ականատես յեղա նախորյակին: Պուգաչովը ուրախուրախ բարեեց ինձ, և հրամայեց, վոր նրա հետ նստեմ կիրիտկայի մեջ:

Մենք տեղավորվեցինք: «Դեպի Բելոգորսկի բերդը», — ասաց Պուգաչովը լայնաթիկունք թաթարին, վորը կանգնած կառավարում եր յեռածի կիրիտկան: Միրսու սաստիկ խփեց: Զիերը շարժվեցին, զանգակը կարկաչեց, կիրիտկան սլացան...

«Կաց, կաց», — լսվեց ինձ շատ ծանոթ մի ձայն և յես տեսա Սավելիչին, վորը մեղ դեմ եր վազում: Պուգաչովը հրամայեց կանգ առնել: «Տեր իմ Պյոտր Անդրեյիչ, — բղավեց դաստիարակու: — Ես ծեր հասակիս մի ձգիր ինձ սրիկանե...» — Ամ, քավթառ, — ասաց նրան Պուգաչովը: — Աստված տվեց նորից տեսնվեցինք: Արի, նստիր այստեղ՝ առջնում:

«Շնորհակալ եմ, տեր իմ, շնորհակալ եմ, հարադատ հայրս, — ասաց Սավելիչը իր տեղը նստելով: — Աստված քեզ հարյուր տարի կյանք տա, վոր ինձ ծերունուս մեղքացար և հանգստացըիր: Հաշվիտյան քեզ համար աղոթք պիտի անեմ աստծուն, իսկ նապաստակի մորթուց կարած մուշտակի մասին ել ձայն չեմ հանիր:»

Այդ նապաստակի մուշտակը վերջապես կարող եր սաստիկ զայրացնել Պուգաչովին: Բարեբախտաբար ինքնակոչը կամ լավ չլսեց, կամ ուշք չդարձրեց այդ անտեղի ակնարկին: Զիերը վազեցին. փողոցում ժողովուրդը կանգ եր առնում և մարդիկ մինչև գետին լառնարկելով, վողջունում եյին: Պուգաչովը զլիով եր անում աջ ու ձախ: Մի ըոպեյից մենք դուրս յեկանք ավանից և սլացանք հարթ ճանապարհով:

Հեշտ ե պատկերացնել թե յես ինչ զգացի այդ ըոպեյին: Մի քանի ժամից յես պետք ե տեսնեյի նրան, վորին այլևս կորած եյի համարում ինձ համար: Յես յերեակայում եյի իմ հանդիպման ըոպեն... Նմանապես մտածում եյի և այն մարդու մասին, վորի

ձեռքումն եր իմ բախտը, և վորը հանդամանքների տարօրինակ դասավորությամբ խորհրդավոր կերպով կապված եր ինձ հետ: Յես հիշեցի փութկոտ դաժանությունն ու արյունուշա սովորույթներն այն մարդու, վորը պատրաստակամություն հայտնեց իմ սիրելիի փրկարարը լինելու: Պուգաչովը չգիտեր, վոր նա կապիտան Միրոնովի աղջիկն ե. կատաղած Շվարրինը՝ կարող եր նրան պարզել ամեն ինչ. Պուգաչովը կարող եր ճշմարտությունն իմանալ և այլ կերպ... Ի՞նչ կլիներ այն ժամանակ Մարիա Իվանովնայի վիճակը: Մարմնովս գող եր անցնում և մազերս բիզըբիդ եյին կանգնում...

Հանկարծ Պուգաչովն ընդհատեց իմ խորհրդածությունները, դառնալով ինձ այսպիսի հարցով.

«Ձերդ բարեծննդությունն ինչի՞ մասին ե հաճում մտածել: — Ի՞նչպես չմտածես, — պատասխանեցի յես նրան: — Յես սպայեմ և ազնվական. գեռես յերեկ յես կովում եյի քո դեմ, իսկ այսոր քեզ հետ տեղ եմ գնում միենույն կիրիտկայով և իմ ամբողջ կյանքի յերջանկությունը քեզնից ե կախված:

«Ի՞նչ ե, — հարցընց Պուգաչովը: — Չլինի վախենում ես:»

Յես պատասխանեցի, վոր արդեն մի անգամ նրանից ներում ստանալով, յես հույս ունեյի, վոր նա վոչ միայն կինայի ինձ, այլ մինչև իսկ կոզնի:

«Յեվ դու իրավ ես, աստված վկա՝ իրավացի յես, — ասաց ինքնակոչը: — Դու տեսամբ, վոր իմ աղաները քեզ խեթիսեթ եյին նայում, իսկ ծերունին դեռ այսոր ել պնդում եր, վոր դու լրտես ես և վոր պետք ե քեզ տանջել ու կախել, բայց յես չհամաձայնվեցի, — ավելացրեց նա ձայնն իշեցնելով, վորպեսզի Սավելիչը և թաթարը չկարողանան իրեն լսել, — հիշելով քո մի բաժակ ողին, ու նապաստակի մուշտակը: Դու տեսնեմ ես, վոր յես դեռ այնպիսի արնախումը չեմ, ինչպես իմ մասին պատմում են ձեր մարդիկ:»

Յես հիշեցի Բելոգորսկի բերդի առումը, բայց հարկ չհամարեցի առարկել նրան և վոչ մի բառով չպատասխանեցի:

«Որենքուրդում ինչ են ասում իմ մասին», — հարցընց Պուգաչովը քիչ լոելուց հետո:

— Դե ասում են, վոր քեզ հետ դժվար ե գլուխ դնել. լուսք չկա, դու քեզ ցույց տվիր:

Պուգաչովի դեմքին զոհ ինքնասիրություն յերևաց: «Հա,— ասաց նա ուրախ տեսքով: — թուրս կտրուկ ե, բայ Զեր Որեն- բուրգում զիտե՞ն արդյոք Յուղելոյի¹ կովի մասին: Քառասոնտն յենարալ ե սպանված, չորս բանակ ե գերի վերցված: Ի՞նչ ես կարծում, պրուսական թագավորը կարող ե ինձ հետ չափվել»:

Ավագակի սնապարծությունն ինձ զվարճալի թվաց: — Ի՞նք ի՞նչպես ես կարծում, — ասացի յես նրան: — կարող ես Ֆրիդերիկի² հախից գաս:

«Ձյուդոր Ֆյոդորովիչի³: Ի՞նչպես չե: Զեր յենարալների հախից հո գալիս եմ, իսկ սրանք քանի անդամ են նրան ջարդել: Մինչև հիմա վոր թուրս կտրուկ ե: Ժամանակ տուր, դեռ ինչեր կլինի, յերբ կշարժվեմ Մոսկվայի վրա»:

— Իսկ դու միտք ունես Մոսկվայի վրա գնալու:

Ինքնակոչը մի քիչ մտածեց ու կիսաձայն ասաց. «Աստված զիտե: Տեղս նեղվածք ե. ձեռքս՝ կարճ: Իմ տղերքը խելքներին շատ են զոր տալիս: Նրանք գողեր են: Յես պետք ե ականջս կախ պահեմ. առաջին անհաջողության դեպքում նրանք իրենց շլինքը կպրծացնեն իմ զլիսի գնով»:

— Այ, տեսնում ես, — ասացի յես Պուգաչովին: — Լավ չի լինի, վոր ինքո որ առաջ ձեռք քաշես նրանցից ու դիմես թագուհու վողորմածությանը:

Պուգաչովը գառնորեն քմծիծաղ տվեց: «Վհչ, — պատասխանեց նա, — այլևս ուշ ե ապաշխարել: Ինձ համար ներում չի լինի: Եշարունակեմ, ինչպես սկսել եմ: Ի՞նչ իմանաս: Մի գուցե և կհա- ջողվի: Գրիշկա Ռոտեպյեվը հո կարճ ժամանակ թագավորել ե Մոսկ- վայում»:

— Իսկ դու գիտես, թե նա ինչով վերջացրեց: Նրան դուրս նետեցին պատուհանից, մորթեցին, այրեցին, նրա մոխիրը լցրին թնդանոթի բերանը և արձակեցին:

¹ Յուղելոյ — գյուղ, վորի մոտ 1773 թվի նոյեմբերի 9-ին Պուգաչովը գլխովին ջախջախեց կառավարական մի սովոր գորամաս, վոր գեներալ Կառի հրամանատարությամբ ուղարկված եր Որենբուրգի պաշտումը վերացնելու նպատակով:

² Ֆրիդերիկ — Ֆյուդոր Ֆյուդորովիչ, ինչպես նրան անվանում ե Պուգա- չովը — պրուսական թագավոր Ֆրիդերիխ Մեծն և (1712—1786), վոր նշանակոր գորապետի համբար ուներ XVIII դարում:

«Լսիր, — ասաց Պուգաչովը մի ինչ վոր վայրագ վոգերու- թյամբ: — Քեզ մի հեքիաթ կասեմ, վոր տղա յամանակս ինձ պատմել ե մի ծեր կալմիկունի: Մի անգամ արծիվը հարցնում է ազուավին. ասա, ազուավթոչուն, այդ ինչիցն ե, վոր դու աշխարհ- քում ապրում ես յերեք հարյուր տարի, իսկ յես՝ ընդամենը յերե- սուն ու յերեք տարի: — Այդ նրանից ե, տեր իմ, պատասխա- նում ե ազուավը, վոր դու տաք արյուն ես խմում, իսկ յես՝ լեշով եմ սնվում: Արծիվը մտածեց. յեկ փորձենք, մենք ել դրանով սնվենք: Լավ: Թուան միասին արծիվն ու ազուավը: Ահա նրանք տեսան մի սատկած ձի: Ազուավը սկսեց կտցել ու գովել: Արծիվը կտցեց մի անգամ, կտցեց մեկ ել, թեմին զարկեց և ասաց ագրա- վին. վհչ, ազուավ յեղբայր. քան թե յերեք հարյուր տարի լեշով սնվել, ավելի լավ ե մի անդամ տաք արյուն խմել, հետո՝ աստ- ված վողորմած ե: — Վհնոց ե կալմիկների հեքիաթը»:

— Սրամիտ ե, — պատասխանեցի յես նրան: — Բայց սպանու- թյամբ ու կողոպուտով ապրել, իմ խելքով, ասել ե թե՝ լեշ կտցել:

Պուգաչովը նայեց ինձ զարմանքով և վոչինչ չպատասխանեց: Մենք յերկուս ել լոեցինք, յուրաքանչյուրս իր մտքերի մեջ ընկդմած: Թաթարը մի տխուր յերդ սկսեց: Մավելիչը, նիրհելով ձոճկում եր իր տեղում: Կիրիտկան սլանում եր ձմեռային հարթ ձանապարհով... Հանկարծ Յահիկ գետի դարափին յես տեսա մի փոքրիկ զյուղ՝ ցանկալատով և զանգակատնով — և քառորդ ժա- մից մենք մտանք Բելոգորսկի բերդը:

Գ Լ Ո Ւ Խ XII

Վ Ո Բ Բ Ը

Ինչպես մեր տան ինձորենին,
Վոր վոչ շյուղեր ունի, վոչ՝ գագաթ,
Ենպես և մեր լշխանուհին —
Վոչ հայրունի, վոչ մայր դթառատ:
Ո՛վ կզուքի արդյոք նրան,
Ո՛վ որհնություն կտա նրան:
Հարսանելան յերգ

Կիբիտկան մոտեցավ բերդապետի տան դռանը: Ժողովուրդը ճանաչեց Պուգաչովի զանգակի ձայնը և խոնված վագեց նրա հետեւից: Շվաբրինն ինքնակոչին դիմավորեց դռների մոտ: Նա կազակի զգեստ եր հազել և մորուք թողել: Դավաճանը Պուգաչովին ոգնեց կիբիտկայից դուրս զաւ ստոր խոսքերով իր ուրախությունն ու ջանասիրությունն արտահայտելով: Ինձ տեսնելով նա շփոթվեց, բայց շուտով հավաքեց իրեն, ձեռքը պարզեց, ասելով: «Դու յել մերն ես: Վազուց պետք ե այդպես անելիր»: — Յես յերես շուռ տվի նրանից և վոչինչ չպատասխանեցի:

Սիրտ կսկսաց, յերբ մենք մտանք վաղուց ծանոթ սենյակը, ուր պատից գեռ կախված եր հանգուցյալ բերդապետի վկայագիրը, վորպես անցած ժամանակի տխուր դամբանագիր: Պուգաչովը նստեց այն բազկաթոռի վրա, ուր յերբեմն նիրհում եր իվան Կուզմիչը, իր ամուսնու քրթմնջոցի տակ քուն մտած: Շվաբրինն իր ձեռքով նրան ողի մատուցեց: Պուգաչովը խմեց մի թաս և ինձ ցույց տալով, ասաց նրան: «Նորին բարեծնդությանն ել հյուրասիրի»: Շվաբրինը մոտեցավ ինձ իր մատուցարանով, բայց յես յերկրորդ անգամ շուռ յեկա նրանից: Յերեսում եր, վոր նա զլուխը կորցրել եւ իր սովորական զգաստությամբ նա, իհարկե զլիի ըն-

կավ, վոր Պուգաչովը անբավական է իրենից: Շվաբրինը վախենում եր նրանից, իսկ ինձ անվստահությամբ եր նայում: Պուգաչովը տեղեկացավ բերդի գրության, թշնամու զորքերի վերաբերյալ պտավող լուրերի և նման բաների մասին, և հանկարծանպասելի հարցընեց նրան. «Ասա, սիրելի յեղայր, այդ ի՞նչ աղմիկ ե, վորին քեզ մոտ պահում ես հսկողության տակ: Հապա մի ցույց տուր ինձ»:

Շվաբրինը մեռելի պես գունատվեց: — Տեր իմ, — ասաց նա դողդոջուն ձայնով... — Տեր իմ, նա հսկողության տակ չե... նա հիվանդ ե... նա լուսավոր սենյակումն ե պառկած:

«Դե տար ինձ նրա մոտ», — ասաց ինքնակոչը տեղից վեր կենաւալով: Հրաժարվել անհնար եր: Շվաբրինը Պուգաչովին տարավ Մարիա իվանովնայի սենյակը: Յես հետեւցի նրանց:

Շվաբրինը կանգ առավ սանդուխքի վրա: «Տեր իմ, — ասաց նա: — Դուք իրավազոր եք ինձնից պահանջնելու ամեն բան, ինչ վոր կամենաք, բայց մի հրամայեք կողմնակի մարդուն մտնել մի կնոջ ննջարանը»:

Յես ցնցվեցի: «Ուրեմն դու ամուսնացած ես», — ասացի յետ Շվաբրինին, պատրաստվելով կտոր-կտոր անել նրան:

«Հանգիստ, — ընդհատեց ինձ Պուգաչովը: — Դա իմ գործն ե: Իսկ դու, — շարունակեց նա, Շվաբրինին դառնալով, — իւելքիդ զոր մի տա և մի կոտրատվիր. նա քո կինն ե, թե կինդ չե, յես նրա մոտ տանում եմ ում կամենամ: Զերդ բարեծնդություն, իւել իմ հետեւից»:

Սենյակի դռների մոտ Շվաբրինը նորից կանգ առավ և ասաց ընդհատ ձայնով. «Տեր իմ, նախազգուշացնում եմ ձեզ, վոր նա զառանցանքի մեջ ե և յերկրորդ որն ե, վոր անդադար խոսում ես: — Բաց, — ասաց Պուգաչովը:

Շվաբրինն սկսեց տնտղել իր գրավանները և ասաց, վոր բանալին հետեւ չի վեցըրել: Պուգաչովը վոտքով խփեց դռանը, կողմեքը թռավ. դուռը բացվեց և մենք ներս մտանք:

Յես նայեցի և քարացա: Հատակին, գեղջկական պատառոտված զգեստով նստած եր Մարիա իվանովնան — գունատ, նիհար, զըզգ զգված մազերով: Նրա առաջ գրված եր մի կուժ ջուր, վրան հացի պատառ: Ինձ տեսնելով նա ցնցվեց ու աղաղակեց: Թե ինձ հետ ի՞նչ յեղավ այն ժամանակ՝ չեմ հիշում:

Պուգաչովը նայեց Շվաբրինին և ասաց դառն քմծիծաղով.
«Լավ հիվանդանոց ես ունեցելու: Հետո, մոտենալով Մարիա իվանովսային. «Ասա ինձ, աղավնյակս, ինչու համար ե քո ամուսինը քեզ պատժում: Ի՞նչով ես դու մեղավոր նրա առաջ»:

— Իմ ամուսինը, — կրկնեց նա: — Իմ ամուսինը չե՞նա: Յես յերեք նրա կինը չեմ դառնա: Յես վճռել եմ՝ լավ և մեռնել և կմեռնեմ, յեթե ինձ չաղատեն:

Պուգաչովը ահավոր նայեց Շվաբրինին. «Յեվ դու համարձակվեցիր ինձ խարել, — ասաց նա: — Իսկ դու զիտե՞ս, անպիտան, թե ինչի՞ յես արժանի»:

Շվաբրինը ծունկ չոքեց... Այդ ըոպեյին արհամարհանքն իմ մեջ խեղդեց ատելության և զայրույթի ամեն մի զգացում: Յես նողկանքով եյի նայում աղնվականին, վոր ընկել եր փախստական կազակի վոտքերը: Պուգաչովը մեղմացավ: «Այս անգամ ներում եմ քեզ, — ասաց նա Շվաբրինին. — բայց իմացած լինես, վոր առաջին իսկ հանցանքիդ հետ այս ել կիշշիլի»: Հետո նա մոտեցավ Մարիա իվանովսային և սիրալիր ասաց նրան. «Դուրս յեկ, սիրուն աղջիկ աղատություն եմ պարզեռում քեզ: Յես թագավորն եմ»:

Մարիա իվանովսան արագ նայեց նրան և զիմի ընկավ, վոր առջևը կանգնած ե իր ծնողներին սպանողը: Նա դեմքը ծածկեց գույգ ձեռքերով և ուշաթափվեց: Յես վրա հասա. բայց այդ ըոպեյին շատ համարձակ սենյակ մտավ իմ վաղեմի ծանոթ Պալաշան և սկսեց հոգ տանել իր որիորդի համար: Պուգաչովը դուրս յեկավ սենյակից, և մենք յերեքս իջանք հյուրատուն:

«Հը, ձերդ բարեծննդություն, — ծիծաղելով ասաց Պուգաչովը: — Դեղեցկունուն փրկեցինք: Ի՞նչ ես կարծում, մարդ չուզարկեմ տերտերի հետեւից և չստիպեմ, վոր նա պսակի իր բարեկամունուն: Ի՞նչ լավ կլինի — յես կդառնամ հարսանեհայրը, Շվաբրինը՝ հարսանիքի կառավարիչը: Տունդուռ ծածկենք, խմենք ու մի լավ քեփ անենք»:

Ինչից վոր յերկյուղում եյի, այն ել կատարվեց: Շվաբրինը, լսելով Պուգաչովի առաջարկությունը, ինքն իրեն կորցրեց: «Ճեր իմ, — կանչեց նա կատաղած: — Յես մեղավոր եմ, յես խարեցի ձեզ, բայց դրինյով ել ե ձեզ խարում: Այս աղջիկը տերտերի բարեկամունին չե. Նա իվան Միրոնովի աղջիկն ե, բերդապետի, վորին կախեցինք այս բերդը վերցնելիս»:



Պուգաչովը ինձ հառեց իր կրակոտ աչքերը: «Այս ինչ բան ե»—
հարցրեց նա տարակուսանքով:

— Շվաբրինը քեզ ճիշտ ասաց, — պատասխանեցի յես հաստատ: «Դու ինձ այդ բանը չասացիր», — նկատեց Պուգաչովը, վորի դեմքը մոայլվեց:

— Ինքդ դատիր, — պատասխանեցի յես նրան, — արդյոք կարելի՞ յեր քո մարդկանց մոտ հայտնել, վոր Միլոնովի աղջիկը կենդանի յե: Չե՞ վոր նրանք կրզկտելին: Վոչի՞նչ չեր փրկի նրան: «Այդ ել ճիշտ ե, — ծիծաղելով ասաց Պուգաչովը: — Իմ հարրեցողները չեյին լենայի խեղճ աղջկան: Լավ ե արել սանամերյերեց կինը, վոր խարել ե նրանց»:

— Լսիր, — շարունակեցի յես, տեսնելով նրա բարյացակամվերաբերմունքը: — Ի՞նչ անունով կանչեմ քեզ՝ չզիտեմ ու չեմ ել ուզում իմանալ... Բայց տեսնում ե աստված, վոր յես ուրախ կլինեցի իմ կյանքով յերախտահատույց լինել քեզ այն ամենի համար, ինչ դու արեցիր ինձ համար: Միայն՝ մի պահանջիր այն, ինչ հակառակ ե իմ պատվին ու քրիստոնեական խղճին: Դու իմ բարերարն ես: Ավարտիր ինչպես վոր սկսել ես. բաց թող ինձ խեղճ վորբունու հետ՝ զնանք, ուր վոր աստված մեզ ճանապարհ ցույց կտա: Իսկ մենք, ուր ել վոր դու լինես, ինչ ել վոր քեզ հետ պատահելու լինի; ամեն որ աստծուն աղոթք կանենք քո մեղապարտ հոգու համար...

Կարծես թե Պուգաչովի անողոք սիրաը զզացվեց: «Ե՞ն, թող քո ասածը լինի, — ասաց նա: — Մահապատիժո՞ւ մահապատիժ ե, չնորհս՝ չնորհ: Այդպես ե իմ սովորությունը: Ա՛ռ քո գեղեցկունուն, տար ուր վոր կուզես և թող աստված ձեզ սեր ու համաձայնություն շնորհիս:

Այդ խոսքերի հետ նա դարձավ Շվաբրինին և հրամայեց, վոր նա անցաթուղթ տա ինձ, իր իշխանության տակ գտնվող ըուլոր ուղեփակերով ու բերդերով անցնելու համար: Շվաբրինը միանգամայն խորտակված, կանգնել եր ինչպես քարացած: Պուգաչովը գնաց բերդը դիտելու: Շվաբրինը նրան ուղեկցում եր, իսկ յես մնացի ճանապարհի պատրաստություններ տեսնելու պատրվակով:

Թես վազեցի զեպի սենյակը: Դոները փակված եյին: Յես բաղխեցի: «Ո՞վ ն», — հարցրեց Պալաշան: Յես ասացի անունս: Դոների այն կողմից լսվեց Մարիա Խվանովսայի անուշ՝ ձայնը: «Քիչ սպա-

աեցեք, Պյոտր Անդրեյիչ։ Յես շորերս եմ փոխում։ Գնացեք Ակուլինա Պամֆիլովսայի մոտ։ յես իսկույն այնտեղ կգամ։

Յես հնազանդվեցի և գնացի հայր Գերասիմի տունը։ Նա յել, յերեցկինն ել դեմ վաղեցին։ Սավելիչն արդեն նախաղգուշացրել եր նրանց։ «Բարե՛ ձեղ, Պյոտր Անդրեևիչ, — ասաց յերեցկինը։ — Աստված ելի արժանացրեց միմյանց տեսության։ Ի՞նչպես եք։ Իսկ մենք, դե են ե, ամեն որ հիշում ենք ձեղ, Բայց Մարիա Իվանովսան՝ իմ աղունակս, ել ի՞նչ ասես, վոր չքաշեց առանց ձեր... Մի ասացեք տեսնեմ, սիրելիս։ գուք ի՞նչպես սարքեցիք գործը Պուգաչովի հետ։ Ի՞նչպես յեղավ, վոր նա ձեղ չսպանեց։ Բարի կամենանք և շնորհակալ ենք չարագործից դոնե դրա համար։ — Հերիք խոսես, պառավ, — ընդհատեց հայր Գերասիմը։ — Ի՞նչ վոր գիտես՝ դուրս մի տա։ Զիք փրկություն ի բաղում բարբառեն։ Տեր իմ, Պյոտր Անդրեևիչ, համեցեք ներս, խնդրում ենք։ Վաղճւց, շատ վաղուց ե չենք տեսնիլի։

Յերեցկինն սկսեց ինձ հյուրասիրել — աստված ինչ վոր տվել եր և միաժամանակ անդադար խոսում եր։ Նա ինձ պատմեց, թե Շվարրինն ինչպես ե իրենց հարկադրել նրան հանձնել Մարիա Իվանովսային։ ինչպես Մարիա Իվանովսան լաց ե յեղել և չի կամեցել նրանցից բաժանվել։ ինչպես Մարիա Իվանովսան իր հետ մշտական կապ ե ունեցել Պալաշայի միջոցով (մի ժիր աղջկա, վորը ուրյադնիկին ել հարկադրում ե իր խոսքով շարժվել)։ ինչպես նա խորհուրդ ե տվել Մարիա Իվանովսային ինձ նամակ գրել և այլն։ Իմ հերթին յես կարճառոտ պատմեցի իմ պատմությունը։ Տերեւըն ու յերեցկինը յերեսներին խաչ եյին հանում, լսելով, վոր Պուգաչովին հայտնի յե նրանց խարեյությունը։ «Մեզ հետ ե խաչի զորությունը, — ասում եր Ակուլինա Պամֆիլովսան։ — Տեր աստված, դռն փրկես։ Ի՞նչ եմ ասել, Ալեքսեյ Իվանիչը, խոսք չկա, պտուղ ե, հա՞։ — Հենց այդ բովելին դուռը բացվեց և ներս մտավ Մարիա Իվանովսան՝ ժպիտը գունատ յերեսին։ Նա հանել եր իր գեղջկական զգեստը և հագնված եր առաջվա նման՝ պարզ ու դուրեկան։

Յես արագ բռնեցի նրա ձեռքը և յերկար ժամանակ վոչ մի քառ չկարողացա արտասահել։ Մենք յերկուսս ել լուռ եյինք բռնուն հուզմունքից։ Մեր հյուրընկալներն զգացին, վոր իրենք բռնուրդ են և դուրս դնացին։ Մնացինք մենակ։ Ամեն ինչ մու-

ուցված եր։ Մենք զրուցում եյինք և չեյինք հազենում խոսելուց։ Մարիա Իվանովսան ինձ պատմեց ամեն ինչ, վոր նրան պատահել ել բերդի առման որից։ Նա նկարագրեց իր վիճակի բոլոր սարսափը, բոլոր տանջանքները, վոր ինքը կրել եր գարշելի Շվարրինից։ Մենք հիշեցինք և նախկին յերջանիկ ժամանակը... Յերկուսս ել լաց յեղանք... Վերջապես յես սկսեցի պատմել իմ դիտավորությունները։ Նրա համար այլևս անհնար եր մնալ մի բերդում, վոր գտնվում եր Պուգաչովի իշխանության տակ և կառավարվում Շվարրինի ձեռքով։ Չեր կարելի մտածել նույնպես և Որենբուրգի մասին, վոր կրում եր պաշարման բոլոր աղետները։ Սշխարհում նա չուներ և վոչ մի հարազատ մարդ։ Յես նրան առաջարկեցի գնալ զյուղ՝ իմ ծնողների մոտ։ Ակզբում նա տատանվեց։ Նրան հայտնի յեր հորս անբարյացակամությունը և դա վախեցնում եր։ Յես հանգստացրի նրան։ Յես գիտեյի, վոր հայրս իր համար յերջանկություն կհամարի և իր պարտականությունը կհաշվի ընդունել հայրենիքի համար ընկած վաստակավոր սաղմիկի աղջկանը։ — Սիրելի Մարիա Իվանովսան, — ասացի յես վերջապես։ — Յես քեզ իմ կինն եմ համարում։ Զարմանալի հանգամանքներն անխօնելի կերպով կապել են մեզ. աշխարհում վոչ մի բան չի կարող մեզ անջատել։ — Մարիա Իվանովսան ինձ լուսում եր պարզ, առանց շինծու ամոթխածության, առանց խորամանկ առարկումների։ Նա զգում եր, վոր իր բախտը կապված է իմի հետ։ Սակայն նա կրկնեց, վոր այլ կերպ, քան իմ ծնողների համաձայնությամբ, նա չի լինի իմ կինը։ Յես ընալ չառարկեցի նրան։ Մենք համբուրգեցինք ջերմ, անկեղծ — և այսպիսով ամեն ինչ վճռված եր։

Մի ժամից ուրյադնիկն ինձ մի անցաթուղթ բերեց, ստորագրված Պուգաչովի խզբագրով և նրա անունից ինձ նրա մոտ կանչեց։ Յես Պուգաչովին տեսա ձանապարհ ընկնելու պատրաստ։ Զեմ կարող ասել, թե յես ինչ զգացի, յերբ հրաժեշտ տվի այդ սոսկալի մարդուն, վորը հրեշ եր ու չարագործ բոլորի համար, բացի միայն ինձնից։ Ի՞նչու ձիշտը չասել։ Այդ բոպեյին մի ուժգին ցավակցություն ինձ դեպի նա ձեց... Յես սաստիկ ցանկանում եյի նրան դուրս կորզել չարագործների շրջանից, վորոնց նա զեկավարում եր և փրկել նրա գլուխը՝ քանի դեռ ժամանակ կար։ Շվարրինը և ժողովուրդը, վորոնք խոնված եյին

մեզ մոտ, խանգարեցին ինձ ասել այն բոլորը, ինչով լի յեր իմ սիրտը:

Մենք բարեկամաբար բաժանվեցինք: Պուգաչովը ամբոխի մեջ տեսնելով Ակուլինա Պամֆիլովային, մատով սպառնաց նրան և խորիմաստ կերպով աչքով արեց. հետո նստեց կիրիտկան, հրամայեց քշել դեպի Բերդա և յերբ ձիերը վոտք վերցրին, այն ժամանակ նա մեկ ել դուրս շրջվեց կիրիտկայից և կանչեց ինձ. «Մնաս բարով, ձերդ բարեծննդություն. գուցե՞ մեկ ել տեսնվենք»: — իրոք մենք տեսնվեցինք, սակայն ինչ պարագաներում...

Պուգաչովը մեկնեց: Յերկար յես նայեցի սպիտակ տափաստանին, վորով ընթանում եր նրա յեռաձին: Ժողովուրդը ցրվեց: Շվարբինը ծլկվեց: Յես վերադարձա քահանայի տունը: Ամեն ինչ պատրաստ եր մեր ուղևորման համար. յես չեյի ուզում այլևս դանդաղել: Մեր բոլոր ունեցած-չունեցած տեղավորված եր բերդապետի հին սայլակի վրա: Կառապանները մի ակնթարթում լծեցին ձիերը: Մարիա Իվանովսան գնաց իր ծնողների գերեզմանին հրաժեշտ տալու. նրանք թաղված եյին յեկեղեցու յետել: Յես ուզում եյի գնալ նրա հետ, բայց նա խնդրեց իրեն մենակ թողնել: Մի քանի բոպեյից նա վերադարձավ, լուս ու խաղաղ արտասվելով: Սայլակը պատրաստ եր: Հայր Գերասիմը և նրա կինը դուրս յելան տան շեմքը: Մենք յերեքով նստեցինք կիրիտկան. Մարիա Իվանովսան Պալաշայի հետ և յես: Սավելիչը բարձրացավ, նստեց կառապանի կողքին: «Գնաք բարով, Մարիա Իվանովսա, աղունակս. գնաք բարով, Պյոտր Անդրեյիչ, մեր աչքի լույս, — ասում եր բարի յերեցկինք: — Բարի ճանապարհ, աստված ձեզ յերկուսիդ ել յերջանկացնիք: Մենք շարժվեցինք: Բերդապետի տան պատուհանի մոտ տեսս կանգնած Շվարբինին: Նրա գեմքը մոռայլ չարություն եր արտահայտում: Յես չեյի կամենում ցնծալ ջախջախված թշնամուս հանդեպ և աչքերս ուրիշ կողմ դարձրի: Վերջապես մենք դուրս յեկանք բերդի գարպասներից և հավիտյան թողինք բելոգորսկի բերդը:

Գ Լ Ո Ւ Խ XIII

Զ Ե Ր Բ Ա Կ Ա Լ Ո Ւ Թ Յ Ո Ւ Խ Ն

Մի գայլանաք, տեր իմ. իմ պարտքըն ե, վոր յես Ուղարկեմ ձեզ բանտը, հմա անմիջապես — Խնդրեմ, յես պատրաստ եմ, սակայն յես հույս ունեմ, Վոր նախ թույլ կտաք ինձ գործը պարզաբանեմ: Կնյաժնին

Այդպես անակնկալ կապվելով սիրած աղջկա հետ, — վորի մասին դեռևս առավոտյան այնպես ցավագին անհանգիստ եյի, — յես չեյի հավատում ինքս ինձ և կարծում եյի, թե ինձ հետ պատահած ամեն ինչ դատարկ յերազ եր: Մարիա Իվանովսան մտագրադ նայում եր մերթ ինձ, մերթ՝ ճանապարհին և թվում եր, թե զեռ ուշքի չի յեկել ու չի հավաքել իրեն: Մենք լուս եյինք: Մեր սրտերը չափից դուրս խոնջ եյին: Աննկատելի կերպով յերկու ժամից մենք հասանք մերձակա մի բերդ, վոր նույնպես Պուգաչովի իշխանության տակ եր: Այստեղ մենք փոխեցինք ձիերը: Տեսնելով, թե ինչ արագությամբ են լծում ձիերին, թե ինչ փութեա պատրաստակամություն ե ցույց տալիս մորուքավոր կազակը, վորին Պուգաչովը պարետ եր կարգել, — յես հասկացա, վոր շնորհիվ մեղ բերող կառապանի շատախոսության, ինձ ընդունում են վորպես բախտի պատահմունքով արքունիքում շնորհ գտած մի մարդու:

Շարունակեցինք մեր ճանապարհը: Սկսեց մթնել: Մենք մոտենում եյինք մի փոքրիկ քաղաքի, ուր, մորուքավոր կազակի ասելով մի ուժեղ զորախումբ և գտնվում, վոր գնում եր ինքնակոչին միանալու: Պահակները մեզ կանգնեցրին: Այս հարցին, թե մի և գալիս, կառապանը բարձրաձայն պատասխանեց. «Թագավորի խնամին իր տիկնոջ հետո: Հանկարծ, հուսարների բազմու-

թյունը մեղ շրջապատեց սարսափելի հայհոյանքով: «Թուրս արի, գեի խնամի, — ասաց ինձ բեխավոր վախմիստը^{1:} — Ե՞յ թե բուրդդ բարերար կհանենք — քոնն ել, քո տիկնոջն ել»:

Յես դուրս յեկա կիրիտկայից և պահանջեցի, վոր ինձ տանեն իրենց պետի մոտ: Տեսնելով, վոր յես սպա յեմ, զինվորնելը դաշտարցին հայհոյանքը: Վախմիստը ինձ տարավ մայորի մոտ: Սավելիչն ինձնից հետ չեր մնում, քթի տակ քրթմնջալով: «Ե՞ս ել քու թագավորի խնամին: Մրից յելանք՝ մըջուրն ընկանք... Տե՞ր աստված, արդյոք ինչով կվերջանա ես բոլորը»: Կիրիտկան դանդաղ հետեւմ եր մեղ:

Հինգ ըռպեյից մենք մոտեցանք պայծառ լուսավորված մի տնակի: Վախմիստը ինձ թողեց պահակի հետ և դնաց իմ մասին հայտնելու: Նա իսկույն և եթ վերադարձավ, հայտարարելով ինձ, վոր նորին բարձր բարեծննդությունը ժամանակ չունի ինձ ընդունելու և, վոր նա հրամայել երանտ տանել ինձ, իսկ տիկնոջն իր մոտ բերել:

— Սա ի՞նչ են նշանակում, — բղավեցի յես կատաղած: — Միթե նա գժվել ե, ի՞նչ ե:

«Զեմ կարող իմանալ, ձերդ բարեծննդություն, — պատասխանեց վախմիստը: — Միայն թե նորին բարձր բարեծննդությունը հրամայեց ձերդ բարեծննդության բանտ տանել իսկ նորին բարեծննդությանը հրամայված ե նորին բարձր բարեծննդության մոտ տանել, ձերդ բարեծննդություն»:

Յես նետվեցի դեպի մուտքը: Պահակները չփորձեցին ինձ բռնել և յես ուղղակի ներս ընկա մի սենյակ, ուր վեց հոգի հուսարական սպաներ բանկ եյին խաղում: Թուղթ բաժանողը մայորն եր: Մեծ եր իմ զարմանքը, յերբ նրան նայելուն պես ճանաչեցի իվան իվանովիչ Զուրինին, վորը ժամանակով թղթախաղի մեջ տարավ ինձ Սիմբիրսկի պանդոկում:

— Միթե կարելի բան ե, — կանչեցի յես, — իվան իվանովիչ, արդյոք դժւ ես:

«Բա, բա, բա, Պյոտր Անդրեյիչ: Այս վրա քամին բերեց քեզ: Վերտեղից ես գալիս: Բարե, յեղայր, բարե: Զես ուղում թուղթ դնել»:

¹ Վախմիստը — հեծյալ զորախմբի ավագ:

— Շնորհակալ եմ: Ավելի լավ ե հրամայիր, վոր ինձ բնակարան տան:

«Ի՞նչի՞դ ե պետք բնակարանը: Մնա ինձ մոտա:

— Զեմ կարող յես մենակ չեմ:

«Դե ընկերոջդ ել այստեղ բեր»:

— Յես ընկերոջ հետ չեմ. յես... տիկնոջ հետ եմ:

«Տիկին: Այդ վնրտեղից ես դու նրան ճանկել: Եհե, յեղայր»: (Այս խոսքերի հետ Զուրինն այնպես նշանակալից սուլեց, վոր ամենքը հրհնացին, իսկ յես բոլորովին շփոթվեցի):

«Դե, — շարունակեց Զուրինը, — թող այդպես լինի: Բնակարան կստանաս: Բայց ափսոս... Մենք մի լավ քեֆ կանեյինք, ինչպես անցյալ անգամ... Հեյ, տղա: Հապա ինչու այստեղ չեն բերում Պուգաչովի պատվական սանամորը. չինի՝ համառում ե: Ասեք նրան, վոր չվախենա. բարինը գեղեցիկ ե, վոչնչով չի վիրավորի նրան: Ու մի լավ զարկեք շնչին»:

— Ի՞նչ բանի ես, — ասացի յես Զուրինին: — Ի՞նչ Պուգաչովի սանամոյր, ի՞նչ բան: Հանգուցյալ կապիտան Միրոնովի աղջիկն ե: Յես նրան դուրս բերի գերությունից և հիմա ուղեկցում եմ մինչև հորս գյուղը, ուր և կթողնեմ նրան:

«Ի՞նչպես: Ասել ե թե հիմա քո մասին ինձ դեկուցեցին: Ասոված սիրես, այս ի՞նչ ե նշանակում»:

— Հետո կպատմեմ ամեն ինչ: Իսկ հիմա, իսկ աստծո, հանդպատագուռ խեղճ աղջկան, վորին քո հուսարները սրտաճաք արին:

Զուրինն իսկույն կարգադրություն արեց: Նա ինքը դուրս յեկավ փողոց ներդություն խնդրելու Մարիա Խվանովսյայից՝ ակամա թյուրիմացության համար և վախմիստը ին հրամայեց քաղաքում ամենալավ բնակարանը նրան հատկացնել: Յես մնացի Զուրինի մոտ գիշերելու:

Մենք ընթրեցինք և, յերբ յերկուսով մնացինք, յես նրան պատմեցի իմ արկածները: Զուրինն ինձ լսում եր մեծ հետաքրքրությամբ: Յերբ յես վերջացրի, նա գլուխը շարժեց և ասաց: «Յեղայր, այս բոլորը՝ լավ. մի բան ե վատը. վեր սատանան ե դրդում քեզ ամուսնանալու: Յես, վորպես աղնիվ սպա, չեմ ուղում քեզ իսարել. ուրեմն հավատա ինձ, վոր ամուսնությունը խելառություն ե: Ասա մի, ի՞նչ զործ ունես կնոջ դարդ քաշելու և յերեխաներ խնամելու: Ե՞յ, թուք ու անցիր: Ինձ լսիր. ձեռք քաշի

կապիտանի աղջկանից: Սիմբիլսկի ճանապարհը յես մաքրել եմ և անվտանգ եւ: Վազն և եթ նրան մենակ ուղարկիր քո ծնողների մոտ, իսկ ինքդ մնա իմ ջոկատում: Կարիք չկա, վոր որու վերադառնաս Որենբուրգ: Նորից կընկնես խոռվարաների ձեռքը և այլս դժվար թե մեկ ել գլուխդ պրծացնես: Այսպիսով, սիրային հիմարությունն ինքն իրեն կանցնի և ամեն ինչ լավ կլինի»:

Թեպետ և յես լիովին համաձայն չեյի նրա հետ, սակայն զգացի, վոր պատվո պարագս պահանջում և իմ ներկայությունը թագուհու գորքի մեջ: Յես վճռեցի հետեւ Զուրինի խորհրդին՝ Մարիա Իվանովնային ուղարկել գյուղ և մալ նրա ջոկատում:

Սավելիչն յեկավ շորերս հանելու. յես հայտնեցի նրան, վոր մյուս որն և եթ պատրաստ լինի ճանապարհ ընկնելու Մարիա Իվանովնայի հետ: Նա ուղում եր համառել:

«Ի՞նչ ես ասում, տեր իմ: Յես ինչպես թողնեմ քեզ: Ո՞վ պիտի հոգ տանի քո մասին: Ի՞նչ կասեն քո ծնողները»:

Գիտենալով իմ վերակացուի համառությունը, յես մտքում դրի փաղաքանքով ու անկեղծությամբ համոզել նրան. — Իմ բարեկամ, Արխիպ Սավելիչ, — ասացի յես: — Մի մերժի, յեղիր իմ բարերարը. այստեղ յես ծառայի պետք չեմ ունենա, մինչդեռ հանգիստ չեմ լինի, յեթե Մարիա Իվանովնան ճանապարհ ընկնի առանց քեզ: Ծառայելով նրան, դու և՛ ինձ ես ծառայում, վորով հետեւ հաստատ վորոշել եմ՝ յերբ շուտով ճանգամանքներն ինձ թույլ տան, ամուսնանալ նրա հետ:

Այստեղ Սավելիչը ձեռքերն իրար տվեց աննկարագրելի զարմանքով: «Ամուսնանմալ, — կրկնեց նա: — Յերեխան ամուսնանալ եռ ուղում: Հապա ի՞նչ կասի հայրիկդ, իսկ մայրիկդ ի՞նչ կմտածի»: — Կամաձայնվեն, իրավ, կամաձայնվեն, — պատստիսանեցի յես, — յերբ կճանաչեն Մարիա Իվանովնային: Քեզ վրա յել յես հույս ունեմ: Հայրիկս ու մայրիկս քեզ կհավատան. դու մեր միջնորդը կլինես, այնպես չե»:

Ծերունին զգացված եր: «Ո՞հ, տեր իմ Պյոտր Անդրեյիչ, — պատստիսանեց նա: — Թեև վազ ես մտածել ամուսնանալ, բայց դե Մարիա Իվանովնան ենպես լավ աղջիկ ե, վոր մեղք ե ես պատահմունքը ձեռքից բաց թողնել: Թո՞ղ քո ասածը լինի: Աստծու հրեշտակի հետ ճանապարհ կընկնեմ և խո՞արհարար կասեմ քո ծնողներին, վոր եղ տեսակ հարսնացուն ոժիտի պետք ել չունի»:

Յես շնորհակալություն հայտնեցի Սավելիչին և պառկեցի քնելու միենույն սենյակում Զուրինի հետ: Տաքացած և հուզված լինելով, յես ամեն ինչ պատմեցի նրան: Զուրինն սկզբում հաճույքով եղ զրուցում, բայց կամաց-կամաց նրա բառերը սակավ և անկապ դարձան: Վերջապես, ի պատասխան իմ՝ մի ինչ վոր հարցի, նա խոռվացրեց ու քթով սուլեց: Յես լոեցի և շուտով հետեւցի նրա որինակին:

Հետեւյալ որն առավոտյան յես գնացի Մարիա Իվանովնայի մոտ: Յես նրան հաղորդեցի իմ մտագրությունները: Նա խելացի գտավ այդ ամենը և իսկույն համաձայնվեց ինձ հետ: Զուրինի ջոկատը քաղաքից դուրս պիտի գար հենց նույն որը: Զպետք եր դանդաղել: Յես հենց այդտեղ բաժանվեցի Մարիա Իվանովնայից, նրան Սավելիչին հանձնարարելով և հետը մի նամակ տալով՝ ուղղված իմ ծնողներին: Մարիա Իվանովնան լաց յեղավ: «Մնաք բարով, Պյոտր Անդրեյիչ, — ասաց նա կամացուկ: — Կտեսնվենք արդյոք թե վոչ միայն աստված զիտե. բայց յես հավիայան չեմ մոռանա ձեզ. մինչեւ գերեզման իմ սրտում միայն դու կմնաս: Յես վոչինչ չկարողաց պատասխանել: Մարդիկ շրջապատեցին մեղ: Յես չեյի ուղում նրանց մոտ անձնատուր լինել ինձ հուզող զգացմունքներին: Վերջապես նա մեկնեց: Յես վերադարձ Զուրինի մոտ՝ տիսուր ու լուռ: Նա կամեցավ ինձ ուրախացնել: Յես ուղեցի ցրել մտքերս. այդ որը մենք անցկացրինք աղմուկով ու մոլեգին և յերեկոյան ուղմյերթի յելանք:

Փերվարի վերջն եր: Ռազմական կարգադրությունները դժվարացնող ձմեռն անցնում եր և մեր գեներալները պատրաստվում եյին միահամուռ գործակցության: Պուզաչովը դեռևս կանգնած եր Որենբուրգի մոտ: Այնինչ, հետզհետե նրա շուրջն եյին հավաքվում խմբերը և բոլոր կողմերից մոտենում եյին չարագործների բույնին: Ապստամբող զյուղերը մեր զորքերը տեսնելուն պես հնազանդություն եյին հայտնում. ավաղակախմբերն ամենուրեք փախչում եյին մեր առջեից և ամեն ինչ նախագուշակում եր արագ և բարեհաջող վախճան:

Զուտով իշխան Գոլիցինը Տատիշչևա բերդի մոտ ջարդեց Պուզաչովին, ցրեց նրա խառնիճաղանձ զորքերը, աղատեց Որենբուրգը ու թվում եր թե խոռվությանը հասցրեց վերջին և վճռական հարվածը: Այդ ժամանակ Զուրինին ուղարկեցին խոռվարար բաշկիր-

ների մի հրասալիմբի դեմ, վորոնք ցրվում եյին ավելի շուտ, քան մենք տեսնում եյինք նրանց: Դարունը մեզ կաշկանդեց թաթաշրական մի գյուղում: Գետակները վարաբել եյին և ճանապարհներն անանցանելի դարձել. մեր անգործության մեջ մենք մեզ միմիթարում եյինք ավաղակների ու վայրենիների դեմ մզվող ձանձրալի ու չնչին պատերազմի շուտափույթ ավարտման մտքով:

Սակայն Պուգաչովը չեր բռնված: Նա հայտնվեց սիրիբյան գործարաններում, այնտեղ նորանոր խմբեր հավաքեց և վերստին սկսեց չարագործություններ անել: Նրա հաջողությունների լուրը նորից տարածվեց: Մենք իմացանք սիրիբյան բերդերի ավերման մասին: Շուտով Ղաղանի գրավման և ինքնակոչի դեպի Մոսկվա արշավելու լուրն անհանգստացրեց զորապետներին, վորոնք անհոգ քնած եյին, հույսերը դրած արհամարհնելի խոռվարաբի անշղորության վրա: Զուրինը հրաման ստացավ անցնել Վոլգան:

Չեմ պատմի մեր արշավանքներն ու պատերազմի վախճանը: Կարձ կասեմ, վոր աղետը ծայրահեղության եր հասնում: Ամենուրեք խափանվել եր վարչությունը. կալվածատերներն անտառներում եյին թագնվում: Ավաղակախմբերը չարագործություններ եյին անում ամեն տեղ. առանձին զորամասերի պետեր ինքնակամ կերպով պատժում եյին և ներումն շնորհում. սարսափելի յեր լայնարձակ յերկրի վիճակը, ուր այդ հրդեհն եր մոլեզնում... Աստված մի արացե տեսնել ոռւսական բունտը՝ անմիտ ու անողոք:

Պուգաչովը փախչում եր, Իվան Իվանովիչ Միխելսոնի¹ գորքերից հետամուտ: Շուտով մենք լսեցինք նրա կատարյալ ջախշախման մասին: Վերջապես Զուրինը տեղեկություն ստացավ, վոր ինքնակոչը բռնված ե, դրա հետ միասին և հրաման՝ վոր կանգ առնենք: Պատերազմն ավարտվեց: Վերջապես յես կարող եյի ճանապարհների մոտ: Այն միտքը, վոր նրանց կզրկեմ, կտեսնեմ Մարիա Իվանովսային, վորից յես վոչ մի լուր չունեյի — վոգերում եր ինձ ցնծությամբ: Զուրինը ծիծաղում եր և ուսերը թոթափում: «Չե, քո բանը պրծած ե: Կամունանաս — իդաւը տեղը կկորչես»:

¹ Ի. Ի. Միխելսոն (1740—1807) — գեներալ վորը վճռական պարտություն հասցրեց Պուգաչովին:

Բայց և այնպես, տարորինակ մի զգացում թունավորում եր իմ ուրախությունը. ակամա միտք եյի անում այնքան անմեղ զոհերի արցունքով թաթախված չարագործի, նրան սպասող մահապատճի մասին և անհանգստանում եյի. Յեմելյա, Յեմելյա, — մտածում եյի յես սրանեղված. — ինչո՞ւ դու սվինի չհանդիպեցիր, կարտեչի տակ չընկար: Դրանից լավ ինչ կարող եր լինել քեզ համար: Ի՞նչ ուղղում եք ասացեք. նրան մասին ունեցած մտածմունքն իմ մեջ անբաժան եր փրկության՝ վոր նա տվեց ինձ իր կյանքի ամենասոսկալի բողեներից մեկում և իմ հարսնացուն զպրելի Շվաբըինի ձեռքից աղատելու մտքի հետ:

Զուրինն ինձ արձակություն տվեց: Մի քանի որից յես վերստին պետք ե գանվեյի իմ ընտանիքում, նորից տեսնեյի Մարիա Իվանովնեային... Հանկարծ անսպասելի մի փոթորիկ ինձ տապալեց:

Մեկնումի որը, հենց այն բողեյին, յերբ յես պատրաստվում եյի ճանապարհ ընկնելու, Զուրինը խրճիթ մտավ՝ ձեռքին մի թուղթ բռնած, արտակարդ մտահոգ գեմքով: Ասես մի բան սիրառ խայթեց: Յես վախեցա, ինքս ել չիմանալով թե ինչից: Նա գուրս արեց իմ սպասյակ զինվորին և հայտնեց, վոր հետս գործ ունի: «Ի՞նչ կա», — հարցը ի յես անհանգստանթյամբ: — «Մի փոքրիկ անախորժություն, — պատասխանեց նա թուղթը ինձ տալով: — Կարդա թե հիմա յես ինչ ստացա: Յես սկսեցի կարդալ թուղթը, վոր մի գաղտնի հրաման եր, ուղղված բոլոր առանձին զորապետերին՝ ձերբակալել ինձ, ուր ել վոր նրանց ձեռքն ընկնեմ, և պահակների հսկողությամբ անհապաղ ուղարկել Ղաղան — քննիչ հանձնաժողովին, վոր հիմնված եր Պուգաչովի գործով:

Քիչ մնաց, վոր թուղթը ձեռքից ընկնել: «Ճար չկա, — ասաց Զուրինը: — Իմ պարտքն և հնազանդվել հրամանին: Հավանական ե, վոր Պուգաչովի հետ ունեցած քո բարեկամական հարաբերությունների լուրը մի վորեե կերպ հասել ե կառավարության: Հուսով իմ, վոր զործը վոչ մի հետեանք չի ունենա և վոր դու կարդարանաս հանձնաժողովի առաջ: Մի ընկճվի և ուղեվորվիր: Խիզճ հանգիստ եր, դատաստանից յես չեյի վախենում, բայց քաղցը տեսակցության բողեն թերես նորից մի քանի ամսով հետաձգելու միտքը սարսափեցնում եր ինձ: Սայլակը պատրաստ եր: Զուրինը մտերմաքար ինձ հրաժեշտ տվեց: Ինձ նստեցրին սայլակը: Հետս նստեցին յերկու ուսւերամերկ հուսարներ և յես ուղերդվեցի մեծ ճանապարհով:

Գ Լ Ա Խ Խ XIV

Գ Ա Տ Բ

Աշխարհի խոսք, առելիք —
Ծովի բազմազան ալիք:
Առած

Յես հավատացած եյի, վոր ամեն ինչի պատճառն իմ ինքնաւկամ բացակայությունն եր Որենքութից: Յես հեշտությամբ կարող եյի արդարանալ. ասպատականությունը վոչ միայն յերբեք չեր արգելված, այլ մինչև իսկ ամեն կերպ խրախուսվում եր: Յես կարող եյի մեղադրվել ավելորդ տաքարյունության և վոչ թե անհնագանդության մեջ: Սակայն բաղմաթիվ վկաներ կարող եյին ապացուցել Պուգաչովի հետ ունեցած իմ բարեկամական հարաբերությունները և վարոնք համենայն զեպս սբեաք և թվային խիստ կասկածելի: Ամբողջ ճանապարհին յես մտածում եյի ինձ սպասող հարցաքննությունների մասին, կշռում եյի իմ պատասխանները և վճռել եյի դատարանի առաջ հայտնել զուտ ճշմարտությունը, արդարացման այս յեղանակը ճանաչելով վորպես ամենապարզը, միաժամանակ և ամենահուսալին:

Հասա Ղազան. քաղաքն ամայի յեր և հրաճարակ: Փողոցներում, աների տեղ ածուխի շեղջեր եյին մնացել և մրուած պատերը ցցված եյին առանց կտուքի ու պատուհանների: Այդպիս եր Պուգաչովի թողած հետքը: Ինձ տարան բերդը, վոր անվթարմացել եր այրված քաղաքի մեջտեղում: Հուսարներն ինձ հանձնեցին պահակասպային: Նա հրամայեց, վոր դարբնին կանչեն: Վոտքերիս շղթա հագցրին և պինդ ամբացրին: Հետո ինձ բանտ տարան և մենակ թողին նեղիկ ու մութ սենյակում, վորի պատերը բռլորովին մերկ եյին և մի փոքրիկ պատուհան ուներ, խափանված յերկաթե վանդակով:

Եյսպիսի սկիզբը վոչինչ լավ բան չեր գուշակում ինձ համար: Սակայն յես չեյի կորցնում վոչ արիությունս, վոչ ել հույսս: Յես դիմեցի բուրը վշտացողների միաթարության և առաջին անգամ ճաշակելով քաղցրությունն աղոթքի՝ ղեղված հստակ, սակայն խոցոտված սրտից, խաղաղ ննջեցի, չմտածելով այն մասին, թե ինչ և սպասում ինձ:

Մյուս որը բանտային պահապանն արթնացրեց ինձ, հայտնելով, վոր հանձնածողովն ինձ պահանջում ե: Յերկու զինվորներ բակի միջով ինձ տարան բերդապետի տունը, նախասենյակում իրենք կանդ առան և ինձ մենակ ներս թողին ներքին սենյակները:

Յես մտա բավական ընդարձակ մի դահլիճ: Թղթերով ծածկված սեղանի շուրջը նստած եյին յերկու մարդ. հասակավոր գեներալը, տեսքով խիստ ու սառն, և յերիտասարդ գվարդիական կապիտանը՝ քսանութ տարեկան, շատ հաճելի արտաքինով, շարժումների մեջ ճարպիկ ու աղատ: Պատուհանի մոտ, հատուկ մի սեղանի առջև նստած եր քարտուղարը դիմու ականջի յետներ, թղթի վրա թեքված, պատրաստ՝ իմ ցուցմունքները գրելու: Հարցաքննությունն սկսվեց: Հարցըին անունս և կոչումս: Գեներալը տեղեկացավ, թե Անդրեյ Պետրովիչ Դրինյովի վորդին չեմ արդյոք: Յեվ իմ պատասխանին առարկեց խստությամբ. «Ավասոս, վոր այդպիսի պատվավոր մարդն այս տեսակ անարժան վորդի ունի»: Յես պատասխանեցի, թե ինչպիսին ել վոր լինի ինձ վրա ծանրացած մեղադրանքը, յես հույս ունեմ այդ ամենը ցրել, առանց կեղծելու բացատրելով ճշմարտությունը: Իմ ինքնավստահությունը նրան դուռ չեկավ: «Սուլ լեզու ունես, մեր տղա, — ասաց նա դեմքը խոժոռելով. — բայց մենք քեզնից պակասներին չենք տեսել»:

Այն ժամանակ յերիտասարդը հարցրեց ինձ, թե ինչ առիթով և ինչ ժամանակ եմ յես ծառայության մտել Պուգաչովի մոտ և ինչ հանձնարություններով ե նա ոգտագործել ինձ:

Յես վրդովմունքով պատասխանեցի, թե յես վորպես սպա և ազնվական, Պուգաչովի մոտ վոչ մի ծառայության մտնել չեյի կարող և վոչ մի հանձնարություն նրանից ընդունել չեյի կարող:

«Հապա այդ ինչպիս ե, — առարկեց ինձ հարցաքննողը, — վոր միայն ազնվականն ու սպան և խնայված ինքնակոչի կողմից,

մինչդեռ նրա բոլոր ընկերները չարաշար մահացված են: Ի՞նչպես ե, վոր այդ սպան ու աղնվականը մտերմարար խնձույթ ե անում խոռվարարների հետ, գլխավոր չարագործից նվերներ և ընդունում՝ մուշտակ, ձի և կես մանեթ փող: Ինչից ե առաջացել այդ տեսակ տարրինակ բարեկամությունը և ինչիք վրա յեւ այն հիմնված, յեթե վոչ դավաճանության, կամ առնվազը՝ զարդելի և հանցավոր փոքրողության վրա»:

Յես խորապես վիրավորված եյի դվարդիական սպայի խոսքերից և յեռանդով սկսեցի ինձ արդարացնել: Յես պատմեցի, թե ինչպես սկսվեց իմ ծանոթությունը Պուգաչովի հետ տափաստանում, բքի ժամանակ. ինչպես Բելոգորսկի բերդի առման ժամանակ նա ինձ ճանաչեց և խնայեց: Ասացի, վոր մուշտակը և ձին, ճիշտ ե, չեմ ամաչել ընդունել ինքնակոչից, բայց թե՝ մինչև վերջին ճնարավորություն պաշտպանել եմ Բելոգորսկի բերդը չարագործից: Վերջապես յես մատնացույց արի նաև իմ գեներալին, վորը կարող եր վկայել իմ ջանքն ու ճիզը Որենբուրգի աղետալի պաշարման միջոցին:

Խրոխտ ծերունին սեղանի վրայից վերցրեց բացած մի նամակ և սկսեց բարձր ձայնով կարդալ այն.

«Չերդ գերազանցության հարցմունքին՝ պրապորչիկ Գրինյովի վերաբերյալ, վորը իրեւ թե խառն և ներկա խոռվության և հարաբերության մեջ և մտել չարագործի հետ, վորպիսի քայլ հակառակ և ծառայության և յերդման պարտավորության, — պատիվ ունեմ հայտնելու, վոր հիշյալ պրապորչիկ Գրինյովը Որենբուրգում ծառայության մեջ գտնվել ե անցյալ 1773 թվի հոկտեմբերի սկզբից մինչև սույն տարվա փետրվարի 24-ը, յերբ նա քաղաքից բացակայեց և այն ժամանակվանից այլևս չի ներկայացել իմ զուրախումբը: Մինչդեռ, մեր կողմն անցած զորականներից լսել ենք, վոր նա յեղել և Պուգաչովի մոտ ավանում և նրա հետ միասին գնացել ե Բելոգորսկի բերդը, վորտեղ նա առաջ յության մեջ. ինչ վերաբերում ե նրա վարք ու բարքին, ապա յես կարող եմ...» Այդտեղ նա իր ընթերցումն ընդհատեց և խստությամբ ասաց ինձ. «Հիմա ի՞նչ կասես քո արդարացման համար»:

Յես այն ե, ուզում եյի շարունակել, ինչպես սկսել եյի և բացատրել իմ կապը Մարիա Իվանովնայի հետ նույնքան անկեղծ, ինչպես և մնացած բոլորը, սակայն հանկարծ զգացի մի անհաղ-

թելի նողկանք: Մի միտք անցավ իմ գլխով, վոր յեթե յես նրա անունը տամ, ապա հանձնաժողովը նրան ևս հարցաքննության կկանչի. և այն միտքը, թե նրա անունը կհյուսեմ չարագործների զարդելի զրպարտություններին և նրան յերես առ յերես կհանեմ սրանց գեմ՝ այդ սոսկալի միտքն այնպիս հարվածեց ինձ, վոր լեզուս բռնվեց և յես շփոթվեցի:

Դատավորներս, վորոնք, թվում եր թե ոկտել եյին վորոց բարյացակամությամբ լսել իմ պատասխանները, վերստին լարվեցին իմ դեմ՝ տեսնելով իմ շփոթմունքը: Գվարդիական սպան պահանջեց, վոր ինձ գեմհանդիման կանգնեցնեն գլխավոր մատնիչին: Գեներալը հրամայեց կանչել յերեկ կվածագործին: Յես աբագ շրջվեցի գետի դռները, սպասելով ինձ մեղադրողի յերեաւլուն: Մի քանի ըստելից շղթաներն աղմկեցին, դռները բացվեցին և մտավ՝ Շվարլինը: Յես զարմացա, տեսնելով, թե վհրաքան փոխվել ե: Նա սաստիկ նիհար եր և դունատ: Նրա մազերը, վոր գեռ վերջերս կուսպրի նման սե եյին, բոլորովին սպիտակել եյին. յերշաբ մորուքը խճճված եր: Մեղադրանքը նա կրկնեց իր թույլ սակայն համարձակ ձայնով: Նրա ասելով յես՝ վորպես լրտես, Պուգաչովի կողմից ուղարկված եմ յեղել Որենբուրգ. ամեն որ հրացանաձգության եմ գուրս յեկել, վորպեսովի դրավոր տեղեկություններ տամ այն բոլորի մասին, ինչ կատարվում եր քաղաքում. վոր, վերջապես, ակնհայտնի կերպով հանձնվել եմ ինքնակաչին, նրա հետ միասին բերդից բերդ եմ անցել, աշխատելով ամեն կերպ կարծանել իմ դավաճան-ընկերներին, վորպեսովի գրավեմ նրանց տեղերը և ոգտվեմ ինքնակոչի բաշխած պարզեներից: — Յես լուռ լսեցի նրան և գոհ եյի մի բանով. զաղըելի չարագործը չարտասանեց Մարիա Իվանովնայի անունը, արդյոք այն պատճառով, վոր նրա ինքնասիրությունը խոցվում եր՝ միտք անելով այն աղջկա մասին, վորը իրեն արհամարհանքով մերժեց, թե՝ այն պատճառով, վոր նրա սրտում մի կայծ եր թագնված նույն այն զգացմունքից, վոր և ինձ հարկադրեց լոելու, — ինչպես ել վոր լիներ, հանձնաժողովի ներկայությամբ չարտասանվեց Բելորուսկի բերդապետի գտեր անունը: Յես ել ավելի հաստատ մնացի իմ դիտավորության մեջ և յերբ դատավորները հարցըին, թե ինչով կարող եմ հերքել Շվարլինի ցուցմունքները, յես պատասխանեցի, վոր պնդում եմ իմ առաջին բացատրությունը և ուրիշ վո-

չինչ չեմ կարող ասել իմ արդարացման համար: Գեներալը հրաշմայեց, վոր մեղ տանեն: Մենք միասին դուրս յեկանք: Յես հանգիստ նայեցի Շվաբրինին, սակայն վոչ մի խոսք չասացի նրան: Նա չարախինդ քմծիծաղ տվեց և իր շղթաները փոքր ինչ բարձրացնելով առաջ ընկավ ու քայլերն արագացրեց: Ինձ նորից բանտ տարան և այդ ժամանակից այլևս հարցաքննության չպահանջեցին:

Յես ներկա չեմ յեղել այն բոլորին, ինչ պետք է տեղեկացնեմ ընթերցողին. սակայն այնքան հաճախ եմ այդ մասին պատմություններ լսել, վոր ամենափոքր մանրամասնություններն անգամ մեխվել են իմ հիշողության մեջ, և ինձ թվում ե, թե յես անտեսանելի կերպով տեղնուտեղը ներկա յեմ յեղել:

Մարիա Խվանովնային իմ ծնողներն ընդունում են այն անկեղծ սիրալիբությամբ, վորով այնպես հայտնի եյին հին դարի մարդիկ: Նրանք աստուծո շնորհ են համարել, վոր առիթ են ունեցել պատմարելու և փայփայելու խեղճ վորունուն: Շուտով նրանք սրտանց մաերմանում են նրան, վորովինետև չեր կարելի նրան ձանաչել ու չսիրել: Հորս այլևս դատարկ քմահաճություն չեր թվում իմ սերը, իսկ մայրիկիս ուզածն ել հենց այն եր, վոր իր Պետրուշան ամուսնանա կապիտանի սիրուն աղջկա հետ:

Իմ ձերբակալման լուրը շամեցնում ե մեր ամբողջ ընտանիքին: Մարիա Խվանովնան իմ ծնողներին այնպիսի պարզությամբ ե պատմում Պուգաչովի հետ ունեցած իմ ծանոթության մասին, վոր դա վոչ միայն նրանց չի անհանդապացնում, այլև հարկադրում ե հաճախ անկեղծ սրտով ծիծաղել: Հայրս չի ուզում հավատալ, վոր յես կարող եմ խառն լինել զազրելի բռնտին, վորի նպատակն եր գահի տապալումը և աղնվական տոհմի վոչնչացումը: Նա խիստ հարցաքննության ե յենթարկում Մավելիչին: Դաստիարակս չի թաքցնում, վոր բարինը քանիցու հյուր ե յեղել Յեմել'կա Պուգաչովին և վոր չարագործը վորպես թե նրան շնորհներ ե արել. բայց նա յերդվում ե, վոր վոչ մի դավաճանության մասին ինքը չի յել լսել: Ծերերը հանգստանում են և անհամբեր սպասում բարեհաջող լուրերի: Մարիա Խվանովնան սաստիկ տաղնապահ ե ամլրում, սակայն՝ լուրմ ե, քանի վոր վերին աստիճանի սժութած եր համեստությամբ ու զգուշությամբ:

Անցնում ե մի քանի շաբաթ... Հանկարծ հայրս մի նամակ ե ստանում Պետերբուրգից, մեր ազգական իշխան Բ.-ից: Իշխանն իմ մասին ե գրում նրան: Սովորական նախարանից հետո նա հայտնում ե, վոր խոռվարաների դիտավորությունների մեջ իմ ունեցած մասնակցության մասին յեղած կասկածները դժբախտաբար չափից գուրս հիմնավոր են յեղել, վոր ուրիշներին որինակ հանդիսացող մահապատիժը պետք ե իջներ իմ գլխին, սակայն թագուհին հարգելով հորս արժանիքներն ու տարիքը, վճռել ե ներումն շնորհել հանցավոր վորդուն և նրան խայտառակ մահապատժից ազատելով, հրամայել և աքսորել Սիրիոի մի հեռավոր վայր՝ ցմահ բնակության:

Այս անսպասելի հարվածը քիչ ե մնում հորս սպանի: Նա կորցնում ե իր սովորական արիությունը և նրա վիշտը (սովորաբար՝ համբ) թափվում ե դառն արտօնչներով. «Ի՞նչպես, — կրկնում ե նա զայրացած: — Վորդիս մասնակցել ե Պուգաչովի դիտավորություններին: Աստված ճշմարիտ, այս ի՞նչ լսայտառակության հասայիս: Թագուհին նրան ազատում ե մահապատժից: Միթե դա հեշտ ե ինձ համար: Սարսափելին մահապատիժը չե. իմ մեծ պապի հայրը կառափենատեղումն ե մեռել, պաշտպանելով այն, ինչ իր սրտի սրբության սրբոցն ե համարել. հայրս առուժել ե Վոլինսկու և Խրուշչովի² հետ միասին, բայց աղնվականը դրժի իր յերդումը, միանա ավաղակների, մարդասպանների, փախստական ճորտերի հետ... Ամոնթ և խայտառակություն մեր տոհմին...» Ահաբեկված նրա հուսահատությունից, մայրս սիրտ չի անում նրա մոտ լաց լինել և աշխատում ե վերադարձնել նրա նախկին յեռանդը, ասելով, վոր լուրը սիրակի կիրակի, մարդկանց կարծիքը՝ խախուտ: Հորս միթարել չի լինում:

1 Կ առաջնատեղ — «Լօբնոե մեсто» — կողը և հարթ մի բարձրություն Մոսկվայի Կարմիր հրապարակի վրա, վոր, ըստ աղնագության, շինված ե 16-րդ դարում: Այսօղից եյին հայտարարվում թագավորական ամենակարեռ երամանները, հաճախ և մահապատիժները, գրանից վոչ հեռու կատարվում եյին նշանագործ քաղաքական հանցավորների մահապատիժը, ինչպես և վորոշ կրոնական ծիսակատարություններ:

2 Վ ու ի հոգի — ոռու աղնվատոնմ իշխան 18 դարի կեսերին, վոր մահապատժի յենթարկվեց թագուհի Աննա Իոանովնայի զեմ դուրս գալու և նրատեղ Պետրոս Լի աղջկան՝ Յիհիզավետային գան նստեցնելու փորձի համար:

Խը ու շուզը — Վոլինսկու համախոններից մելք:

Ամենից շատ տանջվում եւ Մարիա Իվանովսան։ Հավատացած լինելով, վոր յես՝ յերբ ասես կարող եյի արդարանալ յեթե միայն կամենայի, նա գլխի յե ընկնում, թե ինչումն եւ ձշմարտությունը և իրեն համարում եւ իմ դժբախտության պատճառը։ Նա ամենքից թաքցնում եւ իր արցունքները և տանջանքները, մինչդեռ անդադար մտածում եւ միջոցների մասին, թե ինչ կերպ ինձ փրկի։

Մի անգամ հայրս բաղկաթոսի վրա նստած թերթում եւ Պալատական Ողացույցը, բայց նրա մաքերը հեռուն եյին և ընթերցումը նրա վրա չի թողնում իր սովորական ազդեցությունը։ Նա սկսում եւ սուլել մի հին մարզ։ Մայրս լուռ զործում եւ բրդե բաճկոնը և արտասուքները մեկմեկ կաթում են նրա ձեռագործի վրա։ Հանկարծ Մարիա Իվանովսան, վոր այդտեղ նստած աշխատելիս ելինում, հայտնում ե, վոր անհրաժեշտությունը նրան հարկադրում ե գնալ Պետերբուրգ և վոր նա խնդրում ե իրեն միջոց տալ մեկնելու։ Մայրս սաստիկ տրտմում ե։ «Քո ինչին ե պետք Պետերբուրգը, — ասում ե նա։ — Միթե, Մարիա Իվանովսա, դու ել ես ուզում մեզ թողնել։» Մարիա Իվանովսան պատասխանում ե, վոր ապագա նրա ամբողջ բախտը կախված ե այդ ճանապարհորդությունից, վոր նա գնում ե փնտրելու հզոր մարդկանց հովանավորությունը, վորպես դուստրը մի մարդու, վոր տուժել ե իր հավատարմության համար։

Հայրս գլուխը կախում ե. իր վորդու կարծեցյալ հանցանքը հիշեցնող ամեն մի խոսք ծանր եր նրա համար և թվում ե սուր կշտամբանք։ «Դնա, սիրելիս, — ասում ե նա հառաչելով։ — Մենք չենք ուզում արգելք լինել քո բախտին։ Աստված տա, վոր քո փեսացուն լինի մի լավ մարդ և վոչ թե անարդված դավաճանը։ Նա վեր ե կենում և դուրս գալիս սենյակից։

Մորս հետ մենակ մնալով, Մարիա Իվանովսան մասամբ պարզում ե նրան իր դիտավորությունները։ Մայրս արտասուքն աչքերին զրկում ե նրան և աստծուն աղոթում, վոր մտադրված գործը բարեհաջող վերջանա։ Մարիա Իվանովսայի համար ճանապարհի պատրաստություն են տեսնում և մի քանի որից նա մեկնում ե հավատարիմ Պալաշյան և հավատարիմ Մավելչի հետ, վորը բռնությամբ ինձնից բաժանված լինելով, միխթարվելիս ե յեղել գոնե այն մտքով, վոր ծառայում ե իմ հարսնացուին։

Մարիա Իվանովսան բարեհաջող հասնում է Սոֆիա¹ և տեղեկանալով, վոր այդ ժամանակ արքունիքը Յարսկոյե Սելյումն ե, վճռում ե իջևանել այդտեղ։ Նրան մի անկյուն են հատկացնում միջնորմի մյուս կողմը։ Վերակացուի կինը իսկույն և եթ խոսքի յե բռնվում նրա հետ, հազորդում, վոր ինքը պալատական հնոցպանի բարեկամուհին և և հայտնում ե պալատական կյանքի բոլոր գաղտնիքները։ Նա պատմում ե, թե թագուհին սովորաբար վոր ժամին ե արթնանում, յերբ ե սուրճ խմում, զրոսնում բնակիսի ազնվատոհմ իշխաններ են յեղել նրա մոտ այդ ժամանակ, ինչ ե հաճել նա խոսել յերեկ ճաշին, ում ե ընդունել յերեկոյան, — մի խոսքով, Աննա Վլասենայի խոսակցությունն արժեր պատմական հիշատակարանների մի քանի եցը և թանգ կլիններ հետագա սերնդի համար։ Մարիա Իվանովսան ուշադրությամբ լսում ե նրան։ Գնում են այդի։ Աննա Վլասենան պատմում ե ամեն մի ծառուղու և ամեն մի կամքջակի պատմությունը և մի լավ զրոսնելուց հետո նրանք վերադառնում են կյայան, անչափ գոն միմյանցից։

Մյուս որը վաղ առավոտյան Մարիա Իվանովսան արթնանում ե, հագնվում և կամացուկ դուրս զալիս այդի։ Գեղեցիկ առավոտ եր, արեւը լուսավորում եր լորենինների զագաթները, վոր արդեն դեղնել եյին աշնան զով շնչից։ Լայն փոված լիճը անշարժ փայլում եր։ Արթնացած կարապները հանդիսավոր դուրս ելին լողում ափը ստվերող թփերի տակից։ Մարիա Իվանովսան քայլում ե գեղատեսիլ մարգագետնի մոտով, ուր հենց այդ ժամանակները մի հուշարձան եր դրված, ի պատիվ գրաք Պյուտր Ալեքսանդրովիչ Ռումյանցեվի² վերջերս տարած հաղթությունների։ Հանկարծ անգլիական ցեղի մի փոքրիկ շնիկ հաջում ե և վաղում նրա դեմ։ Մարիա Իվանովսան վախենում ե և կանգ առնում։ Հենց այդ բովելին լսվում ե կանացի հաճելի մի ծայն։

¹ Սոֆիա — նախկին Царское Село-ի (Յարսկան գյուղի) արվարձաններից մեկը։

² Պ. Առ ու մ յ ա ն ց ե զ (1725—1796) — աչքի ընկնող ոռու աղջկատոհմիկ վարչական և ռազմական դորժիչ, վորը Յեկատերինա II-ի ժամանակ ջատագով եր ճորտատեր ազնվականների զատային քաղաքականության։ 1769—1774 թթ. տեղող ոռու տաճկական պատերազմին Բ. նշանակվում ե բանակի գերագույն հրամանատար, նրա դեկաֆարությամբ ոռու զորքը տարավ մի շարք հաղթություններ և կնքեց Քյուչուկ-Կայնարջիի հաշտությունը, վորով Մեծ ծովի ափերը մշացան Ռուսաստանին։

«Մի վախեք, նա չի կծի: Յեվ Մարիա Իվանովսան տեսնում է մի տիկնոջ, վոր նստած եր յերկար նստարանի վրա՝ հուշարձանի դիմաց: Մարիա Իվանովսան տեղավորվում է նստարանի մյուս ծայրին: Տիկինը շեշտակի նայում է նրան, իսկ Մարիա Իվանովսան իր կողմից ձգելով մի քանի շեղակի հայացքներ, կարողանում է նրան դիտել վոտքից զլուխ: Տիկինն առավոտյան ճերմակ շորերով եր, գիշերային գլխանոց գրած, հազին՝ քաթիպա: Կլիներ մոտ քառասուն տարեկան: Նրա լիքը և վարդագույն դեմքը վեհություն և խաղաղություն եր արտահայտում, իսկ կապույտ աչքերն ու թեթև ժպիտը անասելի հրապույր ունեյին: Տիկինը առաջինն ե խզում լոռությունը:

«Դուք անշուշտ այստեղացի չեք», — ասում ե նա:

— Իսկ և իսկ այդպես ե: յես հենց յերեկ եմ յեկել գավառից:

«Դուք ճեր ծնողների հետ եք յեկել»:

— Ամենամին վոչ: Յես մենակ եմ յեկել:

«Մենակ: Բայց դուք դեռ այնքան յերիտասարդ եք»:

— Յես վոչ հայր ունեմ, վոչ՝ մայր:

«Դուք, ի հարկե, վորևէ գործով եք այստեղ»:

— Իսկ և իսկ այդպես ե: Յես յեկել եմ թագուհուն խնդիրք տալու:

«Դուք վորբ եք. հավանորեն գանգատվում եք անարդարությունից և վիրավորանքից»:

— Ամենամին վոչ: Յես յեկել եմ վողորմածություն խնդրելու, և վոչ թե արդարադատություն:

«Թույլ տվեք հարցնելու՝ մի եք դուք»:

— Յես կապիտան Միրոնովի աղջիկն եմ:

«Կապիտան Միրոնովի. նրա, վորը որենբուրգյան բերդերից մեկի պետն եր»:

— Իսկ և իսկ:

Թվում եր, թե տիկինը զգացված ե: «Ներեցեք ինձ, — ասում ե նա ավելի փաղաքշական ձայնով, — յեթե յես խառնվում եմ ձեր գործերին. բայց յես լինում եմ արքունիքում. պարզեցեք ինձ, թե ինչումն ե ձեր խնդիրը և մի գուցե ինձ կհաջողվի ոգնել ձեղ»:

Մարիա Իվանովսան վեր և կենում տեղից և հարգանքով շնորհակալություն հայտնում: Ահհայտ տիկնոջ ամեն ինչը սաստիկ գրավում է աղջկա սիրտը և հավատ ներշնչում նրան: Մարիա





Իվանովսան գրտանից հանում ե ծալած թուղթը և տալիս իր անձանոթ պաշտպանին, վորն սկսում ե ինքն իրեն կարդալ:

Սկզբում նա կարդում ե ուշադիր և բարյացակամ տեսքով, բայց հանկարծ նրա դեմքը այլայլվում ե, — և Մարիա Եվանովնան, վորը աչքերով հետեւում եր նրա բոլոր շարժումներին, վախենում ե այդ դեմքի խիստ արտահայտությունից՝ մի բոլե առաջ այնքան հաճելի ու խաղաղ:

«Դուք խնդրում եք Դրինյովի համար, — ասում ե տիկինը սառը դեմքով: — Թագուհիս չի կարող նրան ներեւ նա միացել եր ինքնակոյին վոչ թե անզիտությամբ և զյուրահակամությամբ, այլ վորպես անբարոյական ու վնասակար մի անպիտան»:

— Այս, սուտ ե, — բացականշում ե Մարիա Եվանովսան:

«Ի՞նչպես թե սուտ ե», — առարկում ե տիկինը զայրույթից կրակ կտրած:

— Սուտ ե, ասոված վկա, սուտ ե: Յես ամեն ինչ գիտեմ, յես ամեն ինչ կպատճեմ ձեզ: Միմիայն իմ պատճառով ե նա յենթարկվել այն բոլորին, ինչ յեկավ նրա զլիսին: Յեվ յեթե նա չարդարացավ դատարանի առաջ, ապա միայն նրա համար, վոր չի ուզեցել ինձ ևս խառնել գործին: — Այդ ասելով նա հուզված պատմում ե այն բոլորը, ինչ արդեն հայտնի յե իմ ընթերցողին:

Տիկինը նրան լսում ե ուշադրությամբ: — «Դուք մուր եք իջեվանել, — հարցնում ե նա հետո և լսելով, վոր՝ Աննա Վլասինայի մոտ, ասում ե ժպիտով: — Ամ, զիտեմ: Մնաք բարով. վոչ վորի չասեք մեր հանդիպման մասին: Յես հույս ունեմ, վոր դուք յերկար չեք սպասի ձեր համակի պատասխանին»:

Այդ խոսքից հետո նա վեր ե կենում և գուրս գալիս փակ ծառուղին, իսկ Մարիա Եվանովսան՝ ուբախ հույսերով լի, վերադառնում ե Աննա Վլասինայի մոտ:

Տանտիրուհին հանդիմանում ե նրան՝ վաղ աշնանային զրուանքի համար, վոր, նրա ասելով, վնասակար ե յերիտասարդ աղջկա առողջությանը: Նա ներս ե բերում ինքնայեռը և մի զավաթթեյի շուրջը հազիվ ինչ սկսում ե անվերջ պատմություններ անել արքունիքի մասին, յերբ հանկարծ պալատական կառեթը կանգ ե առնում տան մուտքի առաջ և կամեր-լակեյը¹ ներս ե մտնում

¹ Կ ա մ ե ր - լ ա կ ե յ — պալատական սենյակի սպասավոր:

հայտարարելով, վոր թագուհին բարեհաճում է իր մոտ հրավիրել որիորդ Միրոնովային:

Աննա Վլասունան զարմանում է և իրար անցնում: «Տեր իմ աստված, — կանչում ե նա: — Թագուհին ձեղ արքունիք ե պահանջում: Այդ ինչպես նա իմացավ ձեր մասին: Հապա, դուք, սիրելիս, ինչպես պիտի ներկայանաք թագուհուն: Դուք, յես կարծում եմ, վոր չեք ել իմանում պալատում շարժվելու կերպը... Ի՞նչ եք ասում: հետաքրդ չգտն, հը: Ինչ ել վոր լինի, գոնս մի վորեկ բանով յես կարսդ եմ դուզացնել ձեզ: Յեկ դուք ինչպես պիտի գնաք ճանապարհի շորերով: Մարդ չուզարկեմ արդյոք տատմոր մոտ, վոր բերի նրա գեղին ոռըրոնը¹: — Կամեր-լակեյը հայտարարում ե, թե թագուհուն համելի յե, վոր Մարիա Իվանովնան մենակ գնա և այն շորերով, ինչ վոր հազին ե: Ճար չկար. Մարիա Իվանովնան նստում ե կառեթը և գնում պալատ, հետք տանելով Աննա Վլասունայի խորհուրդներն ու որհնությունները:

Մարիա Իվանովնան նախազգում ե, վոր մոտ ե մեր բախտի լուծումը. սաստիկ բարախում ե նրա սիրտը և նվազում: Մի քանի քոպեյից կառեթը կանդ ե առնում պալատի առջե: Մարիա Իվանովնան սրտի տրոփյունով բարձրանում ե սանդուխքը: Դոները լայն բացվում են նրա առջե: Նա անցնում ե մի շարք դատարկ և հոյակապ սենյակների միջով. կամեր-լակեյը ցույց ե տալիս ճանապարհը: Վերջապես, մոտենալով փակ դռներին, նա հայտարարում ե, վոր հիմա կղեկուցի նրա մասին, և նրան մենակ ե թողնում:

Թագուհուն յերես առ յերես տեսնելու միտքն այնպես ե սարսափեցնում նրան, վոր նա դժվարությամբ ե կարողանում պահանջել վոտի վրա: Մի բոպեյից դոները բացվում են, և նա մտնում է թագուհու դպեցարանը:

Թագուհին զբաղված եր իրեն հարդարելով: Մի քանի պալատականներ շրջապատել եյին նրան և հարգանքով ճանապարհ են տալիս Մարիա Իվանովնային: Թագուհին սիրալիր նայում է նրան և — Մարիա Իվանովնան ճանաշում ե այն տիկնոջը, վորի հետ այնպես անկեղծ նա խոսել եր մի քանի բոպե առաջ: Թագուհին իր մոտ ե կանչում նրան և ժպտալով ասում: «Յես ուրախ եմ

¹ Բոքա, ոռքը ոնդա (Փր.) — հին ձեղ կանացի վերնադիսուտ:

վոր կարողացա ձեղ տված խոսքս պահել և կատարել ձեր ինդիրքը. ձեր գործն ավարտված ե: Յես համոզված եմ, վոր ձեր փեսացուն անմեղ ե: Ահա մի նամակ, վոր ինքներդ նեղություն կրեք հանձնելու ձեր ապագա սկեսրայրին»:

Դողդոջուն ձեռքով Մարիա Իվանովնան ընդունում ե նամակը և արտավելով ընկնում թագուհու վատները, վորը նրան բարձրացնում ե և համբուրում: Ապա թագուհին զրուցում ե նրա հետ. «Գիտեմ, վոր դուք հարուստ չեք, — ասում ե նա: — սակայն յես պարտական եմ կապիտան Միրոնովի աղջկան: Ապագայի համար մի անհանգստանաք: Ինձ վրա յեմ վերցնում կարգավորել ձեր վիճակը»:

Փայփայելով խեղճ վորբուհուն, թագուհին նրան արձակում ե: Մարիա Իվանովնան վերադառնում ե պալատական նույն կառեթով: Աննա Վլասունան, վորը անհամբեր սպասում եր նրա վերադրձին, հարցեր ե, վոր տեղում ե նրա զլիխին, վորոնց մի կերպ պատասխանում ե Մարիա Իվանովնան: Թեպետ և Աննա Վլասունան անբավական ե մնում նրա մոռացկությունից, սակայն դա վերագրում ե նրա զավառական ամոթիսածությանը և մեծահոգաբար ներում: Նույն որն ե եթ Մարիա Իվանովնան, չհետաքրքրվելով աչք ձգել Պետերբուրգի վրա, ճանապարհ ե ընկնում հետ՝ դեպի զյուդ...

Այստեղ ընդհատվում են Պյոտր Անդրեևիչ Գրինյովի հուշերը: Ընտանեկան ավանդություններից հայտնի յե, վոր նա բանտից աղատվել ե 1774 թվի վերջին, բարձրագույն հրամանով, վոր նա ներկա յե յեղել Պուդաչովի մահապատճին. վերջինս ճանաչել ե նրան ամրոխի մեջ և զլխով արել վորը մի բոպեյից հետք մենած և արյունաթաթախ, ցույց եյին տվել ժողովրդին: Ապա շուտով Պյոտր Անդրեևիչն ամուսնանում ե Մարիա Իվանովնայի հետ: Նրանց սերունդը յերջանիկ ապրում ե Սիմբիրսկի նահանգում: — ***-ից յերեսուն վերստի վրա գտնվում ե մի զյուդ, վոր պատկանում ե տասը կալվածատերերի: Տերունական տան ֆլիշելներից¹ մեկում կարելի յե տեսնել Յեկատերինա Ա-ի ինքնա-

¹ Ֆլիշել (գերմ.) — (բառացի՝ թհ) — տան կից կամ մեծ շենքի բակում առանձնակի կանգնած փոքրիկ տուն:

ձեռագիր նամակը՝ շրջանակի մեջ, ապակու տակ: Նամակն ուղղված է Պյոտր Անդրեևիչի հորը և բովանդակում են նրա վորդու արդարացումը և գովեստներ՝ կապիտան Միքոնովի աղջկա խելքին ու սրտին: Պյոտր Անդրեևիչ Գրիբոյեվի ձեռագիրը մեզ հասցեց նրա թոռներից մեկը, վորը լսել եր, թե մենք զբաղված ենք նրա պապի նկարագրած ժամանակի վերաբերյալ աշխատանքով: Մենք վճռեցինք, աղջկակիցների թույլտվությամբ, այդ ձեռագիրը հրատարակել առանձին, յուրաքանչյուր գլուխի համար վորոնելով վայելուչ եպիգրաֆ¹ և մեզ թույլ տալով փոփոխել վորոշ համուկանուներ:

ՀՐԱՄԱՔԱՂԻԾ

19 Σεπτ. 1836 Ε.

¹ Ե պ ի գ ր ա ֆ (հուն.) — հատված, ասույթ, վոր զրպում է յերկի կամ նրա առանձին մասերի սկզբում, վորպեսզի ակնարկվի նրա բովանդակությունը, շեշտվի հեղինակի հիմնական միտքը: — Ի մաստագիր, նշանաբան:

ՀԱՎԵԼՎԱԾ

«Կապլիտանի աղջիկը» վեպակի վերջնական խմբագրության ժամանակ այս մասը հանված ե յեղել հեղինակի կողմից: Նրա թղթերի մեջ այն ուղարկում ե վորպես սոսկ սեագրություն և իր խակ Պուշկինի ձեռքով խորագրված ե — «Բաց թողած զլուխը»: Տասնյակ տարիներ գրողի թղթերի մեջ մնալուց հետո այս հատվածը առաջին անգամ լույս ե տեսնում «Ռուսական արխիվ» պարբերականի յերբորդ գրքում, 1880 թվին: Նույն այդ տարում և նա գետեղվում ե Պ. Ա. Յեֆրեմովի խմբագրությամբ լույս տեսնող «Պուշկինի յերկերի ժողովածույթ» 4-րդ հատորում:

Այս հարցին, թե ինքը հեղինակը ինչնու յե գուըս թողել այդ գլուխը, պուշկինագետներն այլևայլ մեկնություններ են տվել: Նրանցից վոմանք (այդ թվում և վերևում հիշված Յեֆրեմովը) այս պարագան բացատրել են անցյալ դարի 30-ական թվականների ցենուրային խստ պայմաններով և, ինչպես խմբագրի Յեֆրեմովն ե արել, նպատակահարմար են դտել այդ հատվածը մտցնել յերկի XIII դիմի վերջին մասում, վորպես թե նույնը կաներ Պուշկինը, յեթե անկառակնդ զդար իրեն: Ուրիշները սակայն բոլորովին այլ հիմնավորում են տալիս խնդրին: Խորանարով վիպակի մեջ տեղի ունեցող գեպքերի հաջորդականության, ինչպես և գործող անձանց բնութագրերի մեջ, նրանք յեզրակացնում են, վոր այդ գլուխը հեղինակը բաց ե թողել ավելի առաջ, քան վերջնականապես ավարտել ե յերկը, ինչու և այն մեղ հասել ե համեմատաբար անմշակ վիճակում: Վորպես ապացույց նրանք մատնանշում են մի շարք ակնրախ հակառակություններ, վոր կան այդ հատվածում և թե ամբողջ գործի ու նրա այդ մասի համաձայնության մեջ:

Վորքան մեղ հաջողվեց ստուգել, սկսած այդ թվից (1880) հիշյալ գլուխը (մեծ մասամբ վորպես հավելված) տեղ ե գտել համարյա բոլոր հրատարակությունների մեջ: Թե՛ պուշկինագետների, թե՛ հրատարակիչների ու բանասերների համար կասկածից դուրս յեղել վոր Պուշկինի ստորագրության լուրջ ուսումնական տեսակետից այդ հատվածը ինքնին խոշորագույն հետաքրքրություն և ներկայացնում վորպես մի աշխատանք, վոր անկախ ընդհանուր ներդաշնակությունը խախտող վորոշ անհամաձայնություններից, անպայման բացառիկ գրական-գեղարվեստական արժեքներ ունի: Այս իսկ նկատառումով և գետեղում ենք XIII դիմից դուրս մնացած հատվածի թարգմանությունը, գնելով այն վիպակի վերջում՝ իբրև հավելված, — սկզբունք, վոր ընդունված և Պուշկինի յերկերի արդի լավագույն հրատարակությունների մեջ:

Անհրաժեշտ ե նաև նկատել, վոր նույն այդ սկզբունքով փոփոխել ենք ձեռագրի մեջ հիշվող գործող անձանց անունները — Գրինյովը այստեղ (ձեռագրում) հանդես ե գալիս Բուլանին աղքանունով, իսկ Զուրինը՝ Գրինյովը: Համաձայնեցնելով վիպակի վերջում (պուշկինյան) խմբագրության հետ

Ման. թարգմ.

ԲԱՅ ԹՈՂԱԾ ԳԼՈՒԽԸ

Մենք մոտենում եյինք Վոլգայի ափերին. մեր գունդը մտական գյուղը և կանգ առավ այնտեղ գիշերելու: Գյուղակետն ինձ հայտնեց, վոր գետի այն կողմի բոլոր գյուղերը ապստամբվել են, ամեն տեղ զլում են Պուղաչովի խմբերը: Այս տեղեկությունն ինձ սաստիկ վշացրեց: Մյուս որն առավոտյան մենք պետք ե անցնեյնք գետը:

Անհամբերությունն ինձ պատեց և հանգիստ չեր առլիս: Հորւ գյուղը գտնվում եր յերեսուն վերստի վրա՝ գետի այն կողմը: Յես հարցրի՝ չի՞ կարելի արդյոք գտնել մեկին, վորն ինձ անց կացներ գետով: Գյուղացիները բոլորն ել ձկնորսներ եյին: Նաև վակներ շատ կային: Յես գնացի Զուրինի մոտ և հայտնեցի իմ գիտավորությունը:

— Զգույշ կաց, — ասաց նա ինձ: — Մենակ վահագուր և գնալ: Սպասիր առավոտվան: Առաջինը մենք կանցնենք գետը և քո ծնողներին հյուր կտանենք համենայն գեպս 50 հուսար:

Յես կանցնեցի իմ ասածին: Նավակը պատրաստ եր: Նատեցի յերկու թիավարների հետ: Նրանք նավակը ափից ջուրը մղեցին և սկսեցին թիավարել:

Յերկինքը պարզ եր: Լուսինը փայլում եր: Յեղանակը խաղաղ եր: Հարթ ու հանդարտ հոսում եր Վոլգան: Նավակը սահուն ձումով արագ սուրաց մութ ալիքների վրայով: Յես խորասուղղեցի յերկակայության ցնորքների մեջ¹. բնության անդորրությունը և քաղաքական սարսափները, սեր ետ²: Անցակ մոտ կես

¹ Միջակետից հետո յեկող բառերը Գրինյովի «ցնորքների» բովանդակության համառա նշումներն են, վոր Պուշկինը գրել ե իր համար, նպատակ ունելով հետագայում մշակել գրանք:

² etc — և այն:

ժամ: Մենք հասանք գետի մեջտեղը... հանկարծ թիավարներն սկսեցին փսփսալ միմյանց հետ:

— Ի՞նչ կա, — հարցրի յես զգաստանալով:

«Զենք իմանում, աստված դիտե», — պատասխանեցին թիավարները մի կողմ նայելով:

Աչքերս նույն այդ ուղղությամբ դարձրի և մթնշաղի մեջ տեսա մի ինչ վոր բան, վոր լողում եր Վոլգայով ցած: Անծանոթ առարկան մոտենում եր: Յես հրամայեցի թիավարներին կանգնել և սպասել դրան:


Լուսինն անցավ ամպերի յետեւը: Լողացող տեսիլն ավելի խավարեց: Նա արդեն մոտ եր ինձ և յես գեռ չեյի կարողանում վորոշել այն:

— Տեսնես՝ ի՞նչ բան ե, — ասացին թիավարները: — Առագաստ ասես՝ առաղաստ չի, կայմ ասես՝ կայմ չի...

Հանկարծ ամպերի հետեւից յերեաց լուսինը և լուսավորեց մի սոսկալի պատկեր: Մեր դեմհանողիման լողում եր մի կախաղան՝ լաստի վրա հաստատված: — միջնափայտից յերեք մարմիններ եյին կախված: Հիվանդագին հետաքրքրությունն ինձ պատեց: Յես ցանկացա նայել կախվածների գեմքերին:

Իմ հրամանով թիավարները կեռաձողով ճանկեցին լաստը՝ նավակս դիպավ լողացող կախաղանին: Յես դուրս ցատկեցի և հայտնվեցի սարսափելի սյուների միջև: Լիալուսինը լուսավորեց գժրախտների այլանդակված դեմքերը: Նրանցից մեկը մի ծեր չուվաշ եր, մյուսը — ոռու¹ գեղջուկ, ուժեղ ու հաղթանամ մի յերիտասարդ՝ քսան տարեկան: Սակայն, յերրորդի վրա նայելիս, յես սաստիկ զարմացա և չկարողացա պահել իմ աղիողորմ ճիչը: դա՝ վան'կան եր, իմ խեղճ վան'կան, վոր իր հիմարությունից միացել եր Պուգաչովին: Նրանց զլիավերեւը խփած եր մի սետախտակ, վորի վրա սպիտակ խոշոր տառերով գրված եր. Գողեր և բունտարարներ: Թիավարները նայում եյին անտարբեր և ինձ սպասում, լաստը կեռաձողով պահելով: Յես նորից նստեցի նավակը: Լաստը լողաց գետի հոսանքով ցած: Կախաղանը յերկար

¹ Զեռագրի մեջ այս բառի փոխարեն ակրում գրված ե յեղել «Заводской» բառը — անկասկած ե, վոր հեղինակը կամեցել ե շետել այն դերը, վոր պուգաչովյան շարժման մեջ խաղացել են «գործարանական գյուղացիները», այսինքն՝ Ռւբալի ճորտ-բանվորները:





ժամանակ սեին եր տալիս խավարի մեջ: Վերջապես նա անհեռ ացավ — և իմ նավակը մոտեցավ քարձր ու գահավեժ ափին...

Յես առատաձեռն վճարեցի թիվավաներին: Նրանցից մեկը ինձ տարավ գետանցից վոչ հեռու գտնվող զյուղի ավագի մոտ: Յես նրա հետ խրճիթ մտա: Ավագը, լսելով, վոր յես ձիեր ևմ աւզում, սկզբում ինձ բավական կոպիտ ընդունեց, սակայն իմ առաջնորդը կամացուկ նրան մի քանի խոսք ասաց, և նրա կոպտությունն իսկույն և եթ փոխվեց փութկոտ պատրաստակամության: Մի բռպեյում յեռածի սայլակը պատրաստ եր: Յես նստեցի և հրամայեցի ինձ տանել մեր զյուղը:

Յես արշավում եյի մեծ ճանապարհով, քնած զյուղերի մոտով: Յես միայն մի բանից եյի վախենում՝ վոր ճանապարհին չկանգնեցնեն: Յեթե Վոլգայի վրա իմ ունեցած հանդիպումը ապացուցում եր խոռվարների ներկայությունը, ապա դա նաև ապացույց եր կառավարության ուժեղ ընդդիմադրության: Համենայն գեպս գրպանումս յես ունեյի Պուդաչովի ինձ տված անցաթուղթը և գնդապետ Զուրինի հրամանը: Սակայն վոչ վոք չհանդիպեց ինձ և առավոտյան յես նշմարեցի գետը և յեղենու պուրակը, վորի այն կողմը մեր գյուղն եր: Կառապանը մտրակեց ձիերին և քառորդ ժամից յես մտա **:

Տերունական տունը գտնվում եր զյուղի մյուս ծայրին: Ձիերը սլանում եյին ամբողջ թափով: Հանկարծ՝ փողոցի կիսում — կառապանն սկսեց զսպել նրանց:

«Ի՞նչ պատահեց», — հարցրի յես անհամբերությամբ:

— Ճանապարհը փակ է, տեր իմ, — պատասխանեց կառապանը, դժվարությամբ պահելով իր տաքացած ձիերին:

Իրոք՝ յես տեսա ուղեկապ գերանը և մի պահակ, փայտը ձեռքին: Գեղջուկը մոտեցավ ինձ, զլխարկը հանեց՝ անցագիր հարցնելով:

«Սա ի՞նչ և նշանակում, — հարցրի յես նրան, — ինչու յեն այս տեղ ուղեկապ քցել: Ո՞ւմն ես հսկում»:

— Բունտ ենք անում ե, տեր իմ, — պատասխանեց նա զլուխը քորելով:

«Հապա մեր են ձեր տերերը», — հարցրի յես նվազած սրտով...

— Ասում ես մեր են մեր տերերը, — կրկնեց զեղջուկը: — Մեր տերերը հացի ամբարումն են:

«Ի՞նչպես թե ամբարում»:

— Իմանում ես, գեմսկին Անդրյուխան նրանց վոտքերը կոճղի մեջ և զրել և ուղում և մեր տեր-թագավորի մոտ տանի:

«Աստված իմ: Դարձրիւ, հիմար, ուղեկապը: Զիս լում»:

Պահակը դանդաղում եր: Յես դուրս թռա սայլակից, նրա ականցին մի ուժեղ հարված տվի (ներողություն) — և ինքս հետ քաշեցի ուղեկապը: Գեղջուկն ինձ նայեց անմիտ տարակուսանքով: Յես վերստին նստեցի սայլակը, հրամայեցի քշել դեպի տերունական տունը: Հացի շտեմարանը բակումն եր գտնվում: Նրա փակ դռների մոտ կանգնած եյին յերկու գեղջուկ, նույնպես մահակները ձեռքերին: Սայլակը կանգ առավ ուղիղ նրանց առջև: Յես դուրս թռա և ուղղակի հարձակվեցի նրանց վրա:

— Բացէք դռները, — ասացի յես նրանց:

Հավանորեն իմ տեսքը սոսկալի յեր: Համենայն դեպս յերկուսն ել փախան, մահակները ցած ցցելով: Յես փորձեցի կողպեքը դռան վրայից պոկել, կոտրել. բայց դռները կաղնուց եյին և ահապին կողպեքն անխորտակելի յեր: Այդ ըոպեյին մի յերիտասարդ գեղջուկ դուրս յեկավ ծառայանոցից և անբարտավան տեսքով հարցեց ինձ, թե ինչպես եմ համարձակվում աղմկել:

«Ո՞ւր ե զեմսկին՝ Անդրյուշան, — գոռացի յես նրա յերեսին: — Ինձ մոտ կանչել նրան»:

— Յես ինքս Անդրեյ Աֆանասևիչն եմ և վոչ թե Անդրյուշան, — ալատասխանեց նա ինձ, հպարտ-հպարտ ձեռքերը մեջքին դնելով: — Ի՞նչ ե հարկավոր:

Պատասխանի տեղ յես բռնեցի նրա վզից և, քարշ տալով դեպի շտեմարանի դռները, հրամայեցի, վոր բաց անի: Քիչ եր մնում, թե զեմսկին համառեր, սակայն հայր ական պատիժը աղդեց և նրա վրա: Նա բանալին հանեց և բացեց դուռը. — յես շեմքից ներս նետվեցի և մութ անկյունում, վոր թույլ լուսավորված եր առաստաղի մեջ կտրած անցքով, տեսա հորս և մորս: Նրանց ձեռքերը կապված եյին, վոտքերին կոճղեր եյին հաղցրել: Յես վրա ընկանքանց զրկելու և բառ անգամ չկարողացա արտասանել: Յերկուսն ել զարմանքով եյին նայում ինձ, — զինվորական կյանքի յերեք տարիներն այնպես եյին փոխել ինձ, վոր նրանք չկարողացան ճանաչել:

ՀԵՄԾԿԻ ԱԿԱՊԱՏԱՄ ՎՐԱԳԵՐ:

Հանկարծ յես լսեցի սիրալիր, ծանոթ մի ձայն:

— Պյատր Անդրեյիչ: Այդ դժւաք եք...

Հետ նայեցի և մյուս անկյունում տեսա Մարիա Իվանովնային, նույնպես կապուտած: Յես քար կտրեցի...

Մայրս հառաչեց և առատ արցունք թափեց:

Հայրս լուռ ինձ եր նայում, չամարձակվելով հավատալ ինքնիրեն: Աւրախությունը զողում եր նրա գեմքի վրա:

Յես շտապեցի իմ թրով կտրատել նրանց կապանքները:

— Բարե քեզ, բարե, Պետրուշա, — ասում եր հայրս, ինձ իրսրաին սեղմելով, — փառք աստծու, արժանացանք քո տեսության...

— Պետրուշա, հոգյակս, — ասում եր մայրս: — Աստված ի՞նչպես հասցրեց քեզ: Արդյոք առնդի ես:

Յես շտապեցի նրանց գուրս բերել կալանքից, — սակայն, մուտենալով դռանը՝ վերստին փակված գտա այն:

«Անդրյուշա, — ձայն տվի յես, — բաց արա»:

— Ի՞նչպես չե, կբացեմ, — պատասխանեց զեմսկին դռան հետեւից: — Հայս մի դու յել նստիր եղանակ, մենք քեզ ցույց կտանք աղմկել և թագավորի ծառայողների ոճիքից բռնել ու քարշ տալ:

Յես սկսեցի տնտեղել շտեմարանը, վնատելով թե չկմ արդյոք վորեն հնար այնտեղից դուրս պրծնելու:

— Մի չարչարվի, — ասաց ինձ հայրս, — յես այնպիսի տնտեր չեմ, վոր կարելի լինի իմ ամբարները մտնել ու դուրս գալ գողի սողանցքներով:

Մայրս, վոր մի բռուպե ուրախացել եր իմ հայտնությամբ, հուսահատության մեջ ընկավ, տեսնելով, վոր ինձ ել վիճակվեց բաժանել ամբողջ ընտանիքի կործանումը: Բայց յես ավելի հանգիստ եյի այն ժամանակից, ինչ գտնվում եյի նրանց և Մարիա Իվանովնայի հետ: Հետո մի զույգ պիստոլետ կար և թուրս — յես գետս կարող եյի դիմանալ պաշարման: Զուրինը պետք ե վրա հասներ յերեկոյան և աղատեր: Այս բոլորը յես հայտնեցի իմ ծնողներին և կարողացա հանգստացնել մորս: Նրանք ամբողջապես անձնատուր յեղան հանդիպման հրճվանքին:

— Դե, Պյատր, — ասաց հայրս. — հերիք ե, ինչքան դու խելառություններ արիր, յես ել՝ կարգին բարկացած եյի քեզ վրա: Բայց կարիք չկա անցածը մտարերելու: Հուսով եմ, վոր դու հիմա ուղղվել ես և խելքդ գլուխդ ես հավաքել: Գիտեմ, վոր դու

ծառայել ես այնպես, ինչպես վայել ե աղնիվ սպային: Ծնորհակալ եմ, միսիթարեցիր ծերունուս: Յեթե իմ փրկությամբ քեզ պարտական լինեմ, ապա կյանքը կրկնակի քաղցր կլինի ինձ համար:

Յես արտասվելով համրուրեցի նրա ձեռքը և նայեցի Մարիա Իվանովնային, վորն այնպես եր ուրախացել իմ ներկայությամբ, վոր թվում եր միանգամայն յերջանիկ ու հանգիստ:

Կեսորի մոտ մենք լսեցինք արտասովոր աղմուկ և աղաղակներ:

— Այս ի՞նչ բան ե, — ասաց հայրս, — չի՞նչ թե քո գնդապեաը հասավ:

— Անկարելի յե, — պատասխանեցի յես: — Յերեկոյից շուտ նա այստեղ չի լինի:

Աղմուկը սաստկանում եր: Ահազանգ տվին: Բակի միջով ձիավորներ եյին արշավում: Այդ բոպեյին պատի մեջ կտրած նեղիկ անցքում յերևաց Սավելիչի ալեհեր գլուխը և խեղճ դաստիարակս աղիողորմ ձայնով արտասանեց.

— Անդրեյ Պետրովիչ, Ավդոտյա Վասիլենա, տեր իմ Պյատր Անդրեյիչ, աղիղ Մարիա Իվանովնա. բաններս բուրդ ե, անիրավները զյուղ մտան: Յեկ գիտես, Պյոտր Անդրեյիչ, թե ով բերեց նրանց: Շվաբրինը՝ Ալեքսեյ Իվանիչը. գրάզը տանի նրան:

Ատելի անունը լսելուն պես Մարիա Իվանովնան ձեռքերն իրար տվեց ու մնաց անշարժ:

— Լսիր, — ասացի յես Սավելիչին, — մի ձիավոր ուղարկիր * գետանցի տեղը, հուսարական գնդին ընդտուած, և հրամայի, վոր գնդապետին հայտնի մեզ սպառնացող վտանգի մասին:

— Ո՞ւմ ուղարկեմ, ե, տեր իմ: Յերեխեքն ամենքն ել բունտ են արել, իսկ բոլոր ձիերը խլված են: Վահ, նրանք արդեն բակում են — արդեն ամբարին են մոտենում:

Այդ ժամանակ դռան առջև լսվեցին մի քանի ձայներ: Յես նշան արի մորս ու Մարիա Իվանովնային, վոր քաշվեն մի անկյուն, սուրս մերկացրի և հենվեցի պատին՝ հենց դռան մոտ: Հայրս վերցրեց պիստոլետները և յերկուսի հրահաններն ել բարձրացրեց ու կանգնեց կողքիս: Կողպեքը աղմկեց, դուռը բացվեց և յերեաց զեմսկու գլուխը: Յես թրովս հարվածեցի և նա ընկալ, փակելով մուտքը: Հենց նույն բոպեյին հայրս կրակեց պիստոռքիտը: Մեղ պաշարող ամբոխը հետ փախալ անեծքներ տան մարդիկ պաշտում են: մորս, հորս, չնաշ-

բավորին շեմքից ներս քաշեցի և դուռը կողպեցի ներսի փականով: Բակը լի յեր զինված մարդկանցով: Նրանց մեջ յես ճանաչեցի Շվաբրինին:

— Մի վախենաք, — ասացի յես կանանց: — Հույս կա: Իսկ դուք, հայրիկ, այլևս չկրակեք: Խնայենք վառողի վերջին լիցը:

Մայրս լուռ աղոթում եր աստծուն: Մարիա Իվանովնան կանգնեց ինձ մոտ, հրեշտակային անդորրությամբ սպասելով մեր ճակատագրի լուծման: Դոան այն կողմից սպառնալիքներ եյին լսվում, հայհոյանք և անեծքներ: Յես կանգնած եյի իմ տեղը, պատրաստ կտոր-կտոր անելու առաջին համարձակին: Հանկարծ չարագործները լուցին: Յես լսեցի Շվաբրինի ձայնը, վոր կանչում եր ինձ անունս տալով:

— Յես այստեղ եմ, ի՞նչ ես ուզում:

— Անձնատեւր յեղիր, Գրինյով. գիմադրելն ապարդյուն ե: Խղճա քո ծնողներին: Համառությամբ քեզ չես փրկի: Իմ ձեռքը կընկնեք դուքք...

— Փորձիր, զավաճան:

— Վոչ ինքս կփորձեմ իզուր տեղը գլուխս խոթել, վոչ ել իմ մարդկանց կկորցնեմ, այլ կհրամայեմ ամբարը վառել և այն ժամանակ կտեսնենք, թե դու ի՞նչ կանես, Բելոգորսկի Դոն Քիշոտ¹... Հիմա ճաշի ժամանակ ե: Սույժմ նստիր ու մտածիր, քանի դեռ աղատ միջոց կա: Յտեսություն: Մարիա Իվանովնա, ձեզնից ներողություն չեմ խնդրում. դուք, յերեխ, մութի մեջ չեք ճանձրանում ձեր ասպետի հետ:

Շվաբրինը հեռացավ, շտեմարանի մոտ պահակներ թողնելով: Մենք լուռ եյինք: Մեղնից յուրաքանչյուրը մտածում եր. ինքն իրեն, չհամարձակվելով մյուսին հաղորդել իր մտքերը: Յես պատկերացնում եյի ամեն ինչ, վոր կարող եր անել զազազած Շվաբրինը: Իմ մասին յես համարյա թե չեյի մտածում: Խոստովանեմ արդյոք. ծնողներիս վիճակն ել այնքան չեր սարսափեցնում ինձ, վորքան Մարիա Իվանովնայի ճակատագիրը: Յես գիտեյի, վոր գյուղացիները և մեր տան մարդիկ պաշտում են: մորս, հորս, չնաշ-

¹ Դոն Քիշոտ (Դոն Կիխոտ) — իսպ. հոչ, գրող Միգուել գե Սերվանտես Սամբուրյան (1547—1616) համանուն յերկի հերոսը: Փոխարերաբ' վեն ձրգտումներով տողորված, սակայն ցնորամիտ ու յերազող մարդ վորը շատ հաճախ ծիծաղելի դրության մեջ և ընկնում:

յելով նրա խստության, նույնպես սիրում եյին, քանի վոր արդարադատ եր և զիտեր իրեն յենթակա մարդկանց իսկական կարիքները: Նրանց բունաը մոլորություն եր, վայրկենական հարցեցություն և վոչ թե նրանց ցասման արտահայտություն: Այնպես վոր հավանական եր, թե նրանց կիսնայեն: Բայց Մարիա Խվանովինն: Նրա համար արդյոք ի՞նչ վիճակ եր պատրաստել այդ անխիղճ և անբարոյական մարդը: Յես չեյի համարձակվում կանգ առնել այդ սոսկալի մտքի վրա և պատրաստվում եյի (մեղմ քեզ, տեր) ավելի շուտ մեղնել նրան, քան թե յերկրորդ անգամ տեսնել դաժան վոսոխիս ձեռքում:

Նորից անցավ մոտ մի ժամ: Գյուղում հնչում եյին հարբածների յերգերը: Մեր պահակները նախանձում եյին նրանց և մեզ վրա զայրանալով, հայնոյում եյին և մեղ վախեցնում տանջանքներով ու մահով: Մենք սպասում եյինք Շվաբրինի սպասնալիքների հետեանքին: Վերջապես, բակում մեծ շարժում յեղավ և մենք նորից լսեցինք Շվաբրինի ձայնը:

— Ի՞նչ մտածեցիք: Հոժարակամ հանձնվում եք իմ ձեռքը թե վոչ:

Վոչ վոք չպատասխանեց նրան:

Քիչ սպասելուց հետո Շվաբրինը հրամայեց, վոր հարդ բերեն: Մի քանի բոպեյից կրակը բռնկվեց և լուսավորեց խավար շտեմարանը ու ծուխն սկսեց դուրս գալ շեմքի ձեռքերից: Այն ժամանակ Մարիա Խվանովինն մոտեցավ ինձ և կամաց՝ ձեռքս բռնելով, ասաց:

— Հերիք ե, Պյոտր Անդրեյիչ: Իմ պատճառով մի կործանեք և՛ ձեզ, և՛ ձեր ծնողներին: Ինձ դուրս թողեք: Շվաբրինն ինձ կլսի:

— Վոչ մի դեպքում, — բացականչեցի յես սրտիս խորքից: — Գիտեք արդյոք, թե ձեզ ի՞նչ և սպասում:

— Անպատվության դեպքում կենդանի չեմ մնա, — պատասխանեց նա հանդիսատ: — Սակայն, կարելի յե, թե յես փրկեմ իմ ազատարարին և մի ընտանիք, վոր այնպես մեծահոգի պատապարել ե խեղճ վորբիս: Մնաք բարով, Անդրեյ Պետրովիչ: մնաք բարով, Ավգուստ Վասիլենա: Դուք ինձ համար բարեբարից ել ավելին եք յեղել — որհնեցեք ինձ: Յեվ դուք ներեցեք ինձ, Պյոտր Անդրեեիչ: Հավատացած յեղեք, վոր... վոր... — այս խոսքերի հետ նալաց յեղավ և յերեսը ծածկեց ձեռքերով... Յես խելագարի պես եյի: Մայրս լալիս եր:

— Հերիք դուրս տաս, — ասաց հայրս: — Քեզ մենակ ով կթողնի ավագակների մոտ: Նստիր այստեղ ու լոիր: Թե մեռնելու յե՝ միասին կմեռնենք:

— Լսիր, ել լինչ են ասում այնտեղ:

— Անձնատուր լինսմ եք թե վոչ, — գոռում եր Շվաբրինը: — Ե՛յ, կտեսնեք, հինգ բոպեյից ձեզ կենդանի-կենդանի կլորովեն:

— Անձնատուր չենք լինսմ, չարագնրծ, — պատասխանեց նրան հայրս հաստատ ձայնով:

Կոճիռներով ծածկված նրա գեմքը կենդանացել եր մի զարմանալի աշխուժությամբ, աչքերը փայլատակում եյին ալեհեք հոնքերի տակից: Յեկ դառնալով ինձ ասաց. «Հիմա ժամանակն ե»:

Նա դուռը բացեց, կրակը ներս խորժեց և գալարապտույտ վեր բարձրացավ չոր մամոռվ խծծած գերաններով: Հայրս կրակեց պիստոլետը, քայլեց այրվող շեմքով և աղաղակեց. «Բոլորդ իմ հետեկից: —

Յես բռնեցի մորս և Մարիա Խվանովինի ձեռքերն ու արագ դուրս բերի նրանց: Շեմքի վրա ընկած եր Շվաբրինը, վիրավորված հորս զառամյալ ձեռքով. ավագակների բազմությունը, վոր փախել եր մեր անսպասելի արտելքից, խկույն սիրտ առավ և սկսեց մեղ շրջապատել: Յես կարողացա նորից մի քանի հարված հասցնել, սակայն հաջող նետած ալյուստ դիպավ ուղիղ իմ կրծքին: Յես ընկած և մի բոպե գիտակցությունս կորցրի: Ուշքի գալով յես տեսա Շվաբրինին, վոր նստել եր արյունոտ խոտերի վրա և նրա առջև՝ մեր ամբողջ ընտանիքը:

Թեերս ընկած պահում եյին ինձ: Գյուղացիների, կազակների և բաշկիրների բազմությունը շրջապատել եր մեզ: Շվաբրինը սոսկալի գունատ եր: Մի ձեռքով նա բռնել եր իր վիրավոր կողքը: Նրա գեմքը տանջանք ու չարություն եր արտահայտում: Նա գանդաղ գուլսը բարձրացրեց, նայեց ինձ և արտասանեց թույլ ու հաղիվ լսելի ձայնով.

— Կախել սրան... և բոլորին... բացի՝ նրանից...

Ամբոխն խկույն և եթ շրջապատեց մեզ և քարշ գեպի գարպասը: Բայց հանկարծ նրանք մեզ թողին ու փախան գանազան կողմեր. դարպասով ձիով ներս մտավ Զուրինը և նրա հետեկից մի ամբողջ հեծելակաշ՝ թրերը պատրաստ:

— Այ թե լավ ժամանակին վրա հասա, — ասաց նա մեզ: — Ահա և քո հարսնացուն:

Խոռվարաները ցիր ու ցան յեղան: Հուսարները հետապնդում եյին նրանց, կոտորում ու գերի բռնում: Զուրինը ցած թռավ ձիուց, վողջունեց հորս ու մորս և պիհու սեղմեց ձեռքս:

Մարիա Իվանովնան կարմրեց մինչեւ ականջները: Հայրս մոտ յեկավ և շնորհակալություն հայտնեց՝ հանգստա, թեպետ և զգացված տեսպով: Մայրս գրկեց նրան, անվանելով մեր փրկիչ հրեշտակը:

— Շնորհ արեք մեղ մոտ, — ասաց հայրս և նրան մեր տունը տարավ:

Շվարբինի մոտով անցնելիս Զուրինը կանգ առավ:

— Սա ո՞վ ե, — հարցրեց նա վիրավորին նայելով:

— Սա ի՞նքը նրանց առաջնորդն ե՝ հրոսակապետը, — պատասխանեց հայրս մի ինչ վոր հպարտությամբ, վոր մատնում եր հին սաղմիկին. — աստված ողնեց իմ թույլ ձեռքով պատճել յերիտասարդ չարագործին և վրիժառու լինել նրանից՝ վորդուս արյան համար:

— Սա Շվարբինն ե, — ասացի յես Զուրինին:

— Շվարբինը: Շատ ուրախ եմ: Հուսարներ, վերցրեք սրան: Մեկ ել ասեք թշկին, վոր կապի նրա վերքը և իր աչքի լույսի պես պահի: Շվարբինին անպայման պետք ե ներկայացնել Ղազանի գաղտնի հանձնաժողովին¹: Նա գլխավոր հանցավորներից մեկն ե նրա ցուցմունքները պետք ե վոր կարեսը լինեն:

Շվարբինը բացեց իր մթագնած աչքերը: Նրա զեմքը վոչինչ չեր արտահայտում, բայց՝ ֆիզիքական տանջանքը: Հուսարները թիկնոցի վրա դրած տարան նրան:

Մենք ներս մտանք սենյակները: Յես հուզմունքով եյի նայում շուրջա, հիշելով իմ մանկական տարիները: Տանը վոշինչ չեր փոխառության մասնական տարիները: Տանը վոշինչ չեր թույլատրել վեր ամեն ինչ իր նախակին տեղն եր: Շվարբինը չեր թույլատրել տունը թալանելու, իր ստորոտւթյան մեջ իսկ պահելով ակամա մի գարշանք դեպի անպատիվ շահասիրությունը:

Ծառաները նախասենյակ մտան: Նրանք չեյին մասնակցել բունտին և անկեղծ սրտով ուրախ եյին, վոր մենք փրկվել ենք:

¹ Գաղտնի հանձնաժողովը նշանակված եր Պուգաչովի ապահովությանը մասնակցողների քննության ու դատի համար:

Սավելիչը ցնծության մեջ եր: Հարկ ե իմանալ, վոր ավագակների հարձակումից առաջացած խուճապի ժամանակ նա վաղել եր ախուսառուն, վորտեղ կապած եր Շվարբինի ձին, թամրել եր, կամաց դուրս քաշել և շնորհիվ իրաբանցման՝ աննկատելի կերպով արշավել գեպի գետանցը: Ուղղմագնդին նա հանդիպել եր Վոլգայի այս կողմը, հանգստի ժամին: Զուրինը, նրանից տեղեկանալով մեր վտանգի մասին, պատվիրել եր նստել ձիերը, հրամայել մարշ, մարշ արշավակով և, վառք աստուծո՞ ժամանակին վրա հասավ: Զուրինը պնդեց, վոր գեմսկու զլուխը ձողի ծայրին հագցված մի քանի ժամով ի ցույց դրվի կարակի մոտ:

Հուսարները վերադարձան հետապնդումից, մի քանի մարդ գերի բռնած: Նրանց փակեցին հենց նույն շտեմարանի մեջ, ուր մենք դիմացանք արժանահիշատակ պաշարմանը:

Մենք ցրվեցինք, ամենքն իր սենյակը քաշվելով: Ծերերին հանգստություն եր պետք: Ամբողջ զիշերը քնած չլինելով, յես ընկա անկողնիս վրա և խոր քնեցի: Զուրինը գնաց իր կարգադրություններն անելու:

Յերեկոյան մենք հավաքվեցինք հյուրասենյակում, ինքնայենի շուրջը, ուրախուրախ խոսելով անցած վտանգի մասին: Մարիա իվանովնան թեյ եր լցնում: յես նստեցի նրա մոտ և բացառապես նրանով եյի զրաղված: Ծնողներս, թվում եր, թե բարյացակամ եյին նայում մեր հարաբերությունների քնքշությանը: Մինչեւ որս ել այդ յերեկոն կենդանի յե իմ հիշողության մեջ: Յես յերջանիկ եյի, կատարյալ յերջանիկ: Իսկ շատ են արդյոք նման ըռպաները մարդկային թշվառ կյանքում:

Մյուս որը հորս հայտնացին, վոր գյուղացիները յեկել են տերունական բակը իրենց մեղայականը հայտնելու: Հայրս դուրս յեկավ տան շեմքը: Հենց վոր նա յերեաց, գեղջուկները ծունկ չոքեցին:

— Հը, ի՞նչ կա, հիմարներ, — ասաց նա, — ինելքներիդ ի՞նչ եր փշել բունտ անել:

— Մեղավոր ենք, մեր տեր, — պատասխանեցին նրանք միաբերան:

— Իհարկե վոր մեղավոր եք: Խելառություն անում են, և իրենք ել գոհ չեն: Ներում եմ ձեզ ի նշան այն ուրախության, վոր աստված արժանացրեց ինձ՝ տեսնվել վորդուս՝ Պյոտր Անդրեյիչի հետ: Դե, լավ. մեղքը խոստովանողը թողություն կստանա:

— Մեղավոր ենք:

— Իհարկե մեղավոր եք: Աստված պայծառ յեղանակ և տվել մեզ, խոտը հավաքելու ժամանակն ե. իսկ դուք, հիմարներ, ամբողջ յերեք որ ի՞նչ եք արել: Ավագ, բոլորին խոտհարքի կքշես. բայց տես, շեկ անասուն, վոր Հովհաննու որը բոլոր խոտը բարդ բարդած լինի: Կորեք աչքիս:

Գյուղացիները խոնարհ գլուխ տվին և գնացին կոռը դատելու, ասես վոչինչ չեր յեղել:

Շվաբը ինի վերքը մահացու չեր: Պահակների հսկողությամբ նրան ուղարկեցին Դաղան: Պատուհանից յես տեսա, թե նրան ինչպես են դնում սայլակի վրա: Մեր հայացքները հանդիպեցին: Նա գլուխը խոնարհեց և յես շատապով հեռացա պատուհանից: Յես վախենում եյի ցույց տալ, թե ցնում եմ, տեսնելով հակառակորդիս դժբախտությունն ու թշվառությունը:

Զուրինը պետք ե հեռուներն անցներ: Յես վճռեցի հետեւ նրան, չսայած ցանկության՝ դարձյալ մի քանի որ մնալ իմ ընտանիքի հետ: Արշավանքի դուրս գալու նախորյակին յես յեկա իմ ծնողների մոտ և այն ժամանակվա սովորության համաձայն, մինչեւ գետին խոնարհ գլուխ տվի նրանց, խնդրելով նրանց որհնությունը՝ Մարիա Խվանովսայի հետ ամուսնանալու: Ծերերն ինձ բարձրացրին և ուրախության արցունքով իրենց համաձայնությունը հայտնեցին: Յես նրանց մոտ տարա Մարիա Խվանովսային՝ գունատ ու դրդոջուն: Մեղ որհնեցին...

Թե ի՞նչ զգացի յես, այդ չեմ նկարագրի: Ով յեղել և իմ վիճակում, նա առանց այդ ել կհասկանա ի՞նձ, — ով չի յեղել այդ մասին յես միայն ափսոսալ կարող եմ և խորհուրդ տալ՝ քանի դեռ ժամանակը չի անցել, սիրահարվել և ծնողներից ստանալ նրանց որհնությունը:

Մյուս որը գունդը գումարվեց: Զուրինը հրաժեշտ տվեց մեր ընտանիքին: Մենք բոլորս հավատացած եյինք, վոր ուղմական գործողությունները շուտով կդադարեն: Յես հույս ունեյի մի ամսից ամուսին լինել: Մարիա Խվանովսան հրաժեշտ տալով, բոլորի ներկայությամբ համբուրեց ի՞նձ: Յես նստեցի ձիս: Մավելիչը նորից հետեւեց ի՞նձ — և գունդը շարժվեց:

Հեռվից յես յերկար նայեցի մեր զյուղական տանը, վոր նորից թողնում եյի: Մի մոայլ նախազգացում անհանգստացնում եր ի՞նձ:

Ասես մեկը շշնջում եր, վոր ի՞նձ համար դեռևս չեն անցել բոլոր դժբախտությունները: Սիրտս նոր փոթորկի եր գուշակում:

Զեմ նկարագրի մեր արշավանքը — և Պուգաչովի պատերազմի վախճանը: Մենք անցնում եյինք զյուղերի միջով, վոր ավերել եր Պուգաչովը, և ստիպած եյինք խեղճ բնակիչներից վերցնել այն, ինչ թողել եյին ավաղակները:

Նրանք չգիտեյին, թե ում յենթարկվեն: Ամենուրեք դադարել եր վարչական կյանքը: Կալվածատերերը անտառներում եյին թաքնվում: Ավաղակախմբերն ամեն տեղ չարազործություններ եյին անում: Այն ժամանակ արդեն դեպի Սատրախան փախչող Պուգաչովին բռնելու համար ուղարկված առանձին զորամասերի պետելն ինքնիշխան պատժում եյին մեղափորներին և անմեղներին... Սոսկալի յեր վիճակն ամրող յերկրի, վորտեղ մոլեզնել եր հրդեհը: Աստված չանի, վոր մարդ տեսնի ոռւսական բունաը — անմիտ ու անողոք: Նրանք, ովքեր մեղանում անկարելի հեղաշրջումներ են նյութում, կամ յերիտասարդ են և չգիտեն մեր ժողովրդին, կամ թե չեն խստափրտ մարդիկ, վորոնց համար ուրիշի գլուխը քառորդ կոպեկ արժե, իրենց վիզն ել՝ հազիվ մի կոպեկ¹:



¹ Հետո գալիս են այն տողերը, վորոնք կան և՝ Պուշկինի ձեռքով վերջնապես խմբագրված բնագրում, «Պուգաչովը փախչում եր իվան Խվանովիչ Միկոլայի, զորքերից հետամուտ...» Տես եջ 118:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

I Գվարդիան Սերժանտ	5
II Առաջնորդ	15
III Բերդ	26
IV Մենասար	33
V Սերլ	43
VI Պուդազովշչին	51
VII Հրոսովի	62
VIII Անկող ՀՅՈՒՐԸ	70
IX ՀՐԱԺԵՏ	79
X ՔԱՂԱՔԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ	85
XI ԽՈԽՎԱՐԱՐ ԱՎԱՆԸ	94
XII ՎՈՐԲԸ	106
XIII ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ	113
XIV ԴԱՏԸ	120

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

ԲԱՑ ԹՈՂԱԾ ԳԼՈՒԽԸ 135

Перевод С. Сукиасяна

Отв. ред. А. Бакум

Портрет и рисунки

засл. худ. М. Арутчян

Тех. ред. И. Карапян

Набор и верстка А. Минасян

А. С. ПУШКИН

КАПИТАНСКАЯ ДОЧКА

(на армянском языке)

Отпечатано в тип. Госиздата ССР Армении
Москва, Армянский пер., 2. Заказ 267.
Главлит № Б—12981. Изд. № 3339. Т. 4000.
Сд. в наб. 2/І-36 г. Подп. к печ. 3/ІІ-36 г.
Печ. лист. 9¹/₄. В п. л. 35.800 печ. зн.

W. H. G.
W. H. G.

W. H. G.
W. H. G.
W. H. G.
W. H. G.
W. H. G.
W. H. G.



ՀՀ Ազգային գրադարան



NL0311740

6

13109